




**USAID**  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



**ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ  
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ**  
հակակոռուպցիոն կենտրոն



# ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2021



Սույն զեկույցում ամփոփված են «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՐԿ) հասարակական կազմակերպության կողմից 2021թ. իրականացված ուսումնասիրության արդյունքները:

Չեկույցը հնարավոր է դարձել Ամերիկայի Ժողովրդի աջակցությամբ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջնորդությամբ: Չեկույցի բովանդակության պատասխանատուն «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄՁԳ-ի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետը:

---

**ՇԱՐԵՐԻ ԲԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ  
ՀՅ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Հանրային կառավարման գծով խորհրդատու՝ Արմեն Խուդավերդյան

---

Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն  
Հասցե՝ Հայաստան, Սարյան 12, 5-րդ հարկ Երևան 0002  
Հեռ.՝ (+374 10) 569589, 569689  
Էլ. փոստ՝ [info@transparency.am](mailto:info@transparency.am)  
Կայքէջ՝ [www.transparency.am](http://www.transparency.am)

**ԵՐԵՎԱՆ 2021**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
<b>I. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՕՐԵՆՍԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ .....</b>	<b>5</b>
1.1 Շահերի բախման սահմանումը և տեսակները.....	5
1.2 Շահերի բախման օրենսդրական կարգավորումները հանրային ծառայության առանձին ոլորտներում.....	16
1.3 Անհամատեղելիության պահանջներ .....	22
1.4 Այլ սահմանափակումներ .....	44
1.5 Նվերներ ընդունելու արգելք.....	65
<b>II. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ .....</b>	<b>70</b>
2.1 Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրումը .....	70
2.2 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող էլեկտրոնային շտեմարաններ .....	84
2.3 Հանրային ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակ.....	96
2.4 Շահերի բախման հայտարարություններ և գրանցամատյաններ .....	101
2.5 Ազդարարներ, անանուն հաղորդումներ կամ «թեժ գծեր», լրատվամիջոցների հրապարակումներ.....	113
<b>III . ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿԸ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.....</b>	<b>120</b>
3.1 Շահերի բախման կառավարման գործիքները.....	120
3.2 Շահերի բախման կառավարման մարմիններ .....	132
<b>IV. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.....</b>	<b>144</b>
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>	<b>161</b>

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԳՐԵԿՈ	Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԱ ՊԵԿ	Կառավարությանն առջև չեղարկված պետական եկամուտների կոմիտե
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԾՀ	Հանրային ծառայության համարանիշ
ՀԾՄ	Հանրային ծառայության մասին օրենք
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԸԿԱԳ	ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության
ARMEPS	ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների էլեկտրոնային գրանցամատյան

## ՆԱԽԱԲԱՆ

Չեկույցի նպատակն է օժանդակել կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ կառույցներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ)՝ ձեռք բերելու համապարփակ գիտելիքներ շահերի բախման քաղաքականության մշակման և գործնականում կիրառման համար:

Սույն զեկույցում վերլուծության են ենթարկվել հանրային ծառայության ոլորտում շահերի բախման ինստիտուտի օրենսդրական կարգավորումները, վեր են հանվել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենքով և հանրային ծառայության առանձին ոլորտների գործունեությունը կանոնակարգող այլ օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով հանրային պաշտոնյաների ու ծառայողների շահերի բախման հարցերի առնչությամբ առկա բացերը, անհամապատասխանությունները, կրկնությունները և մարտահրավերները, մշակվել են առաջարկություններ՝ շահերի բախման կառավարման միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին և ուղեցույցների պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Չեկույցում տեղ գտած առաջարկությունները ուղղված են շահերի բախման քաղաքականության բարեփոխումների մշակմանը և իրականացմանը, օրենսդրության կատարելագործման միջոցով հանրային պաշտոն գբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, իրավիճակային շահերի բախման կանխարգելման նոր կառուցակարգերի ու գործիքակազմերի մշակմանը:

Չեկույցում «պաշտոնյա» կամ «հանրային պաշտոնյա կամ ծառայող» տերմինները սահմանվում են որպես ցանկացած անձ, որն ունի հանրային պաշտոնյային վերապահված գործառույթ կամ հանդես է գալիս հանրային պաշտոնյայի լիազորությամբ: Այն ներառում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված հանրային պաշտոնյաների ու ծառայողների շրջանակը:

Չեկույցի մշակման ժամանակ օգտագործվել են Եվրոպական միության (ԵՄ), Եվրոպայի խորհրդի (ԵԽ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), Եվրոպական խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՈ), Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից շահերի բախման կառավարման նպատակով մշակված ուղեցույցները, գործիքակազմերը, հանձնառությունների պահանջները:

## I. ՀԱՅԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՕՐԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

### 1.1 Հահերի բախման սահմանումը և տեսակները

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ ՅՃՍ) հոդված 33-ի 1-ին և 2-րդ մասերը շահերի բախումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների դեպքում սահմանում են որպես «...իրավիճակ, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել: Պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1. իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.
2. իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.
3. իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.
4. իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը»:

ՅՃՍ օրենքի հոդված 33-ում տրված շահերի բախման վրոնշյալ սահմանումը տարածվում է հանրային ծառայողների և պետական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև համայնքի ղեկավարների, նրանց տեղակալների, վարչական շրջանների ղեկավարների համար: Մինչդեռ, պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների, համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև հայեցողական պաշտոն զբաղեցնող համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց համար ՅՃՍ օրենքի շահերի բախման սահմանումը կիրառելի չէ:

**Պատգամավորների համար** «Աժ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 1-ին մասով սահմանված է, որ շահերի բախումը «Պատգամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագիծ ներկայացնելը, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելը, ինչպես նաև Ազգային ժողովի կամ նրա հանձնաժողովի նիստում ելույթ ունենալը, հարցեր տալը կամ քվեարկությանը մասնակցելը, որը թեև ինքնին օրինական է, սակայն պատգամավորը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել, որ այն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1. իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրույթյան բարելավմանը.
2. իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրույթյան բարելավմանը.
3. իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրույթյան բարելավմանը.
4. իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը.
5. պաշտոնում իր ընտրությանը կամ նշանակմանը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պաշտոնների, ինչպես նաև որպես Ազգային ժողովի կողմից ընտրվող պաշտոնում թեկնածու՝ իր ելույթի»:

**Դատախազների, դատավորների, քննիչների, համայնքի ավագանու անդամ** հանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասով «Դատախազության մասին» օրենքը, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, «Քննչական կոմիտեի մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները շահերի բախման վերաբերյալ սահմանումներ ընդհանրապես չեն պարունակում: Արդյունքում, միայն «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքով է տրված շահերի բախման սահմանումը, իսկ մյուս հանրային պաշտոնյաների մասով շահերի բախման սահմանումը բացակայում է:

**Հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներում** պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների համար շահերի բախման առանձին սահմանումները նույնպես բացակայում են:

ՀԾՄ և «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքներում շահերի բախման սահմանումների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք բովանդակային առումով նույնական են: Այդուհանդերձ, պատգամավորների շահերի բախման սահմանումը խիստ նեղացված է, քանի որ շահերի բախման իրավիճակները պատգամավորների համար դիտարկվում է միայն ԱԺ-ում պատգամավորին օրենսդրորեն վերապահված լիազորությունների իրականացման ժամանակ կամ կոնկրետ գործողության կատարման, կամ էլ որոշումներ ընդունելու գործընթացներում: Մինչդեռ, պատգամավորը իր լիազորությունները կամ գործունեությունը կարող է իրականացնել նաև ԱԺ-ից դուրս, որի պայմաններում նույնպես կարող է հայտնվել այնպիսի իրավիճակներում, որոնք կարող են ազդեցություն ունենալ պատգամավորի հիմնական լիազորությունների կատարման վրա:

Ի դեպ, «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքում շահերի բախման սահմանման մեջ «ԱԺ-ում իր լիազորությունները իրականացնելիս պատգամավորը տեղյակ է կամ պարտավոր էր տեղյակ լինել, որ այն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել իր կամ իր հետ փոխկապակցված անձանց գույքային և իրավական դրույթյան բարելավմանը կամ պաշտոնի նշանակմանը» այս հանգամանքը պարտադրում է, որ պատգամավորի կողմից շահերի բախումը դիտարկվի ոչ թե

իրավիճակ, այլ այն ճանաչվի կանխատեսելի գործողության արդյունք կամ արդեն իսկ գոյություն ունեցող հանգամանք, որը պատգամավորը պետք է պարտադիր հաշվի առնի:

Թե՛ ՅՃՄ և թե՛ «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքներում շահերի բախման սահմանումները ներկայացված են որպես կոռուպցիա երևույթի տեսակ, քանի որ պարտադիր ենթադրում են պաշտոնյայի կամ նրա հետ փոխկապակցված անձանց (ֆիզիկական և իրավաբանական) համար առավելությունների ու օգուտների ստացում հակառակ պարագայում ստեղծված իրավիճակը չի կարող համարվել շահերի բախում: Միջազգային պրակտիկայում շահերի բախման սահմանման նման մոտեցման կողմնակիցները գտնում են, որ «Կոռուպցիան նաև ներառում է այնպիսի երևույթներ, ինչպիսիք են նեպոտիզմը, ֆավորիտիզմը **և շահերի բախումը**, երբ պետական ոլորտի պաշտոնյաները ստանում են օգուտ կամ այլ օգուտները անօրինական կերպով փոխանցվում են ընտանիքի անդամներին, ընկերներին, կամ էլ տրամադրվում է այն անձանց, որոնք պատասխանատու են որոշումների կայացման համար»:<sup>1</sup>

Այդուհանդերձ՝ հարկ է նկատել, որ «շահերի բախումը» անպայմանորեն չի նշանակում կամ ներառում «կոռուպցիա», որն, ըստ էության, քրեական հանցագործություն է: Նույնիսկ բարի մտադրություններ ունեցող պաշտոնատար անձինք կարող են հայտնվել այնպիսի իրավիճակներում, երբ նրանց մասնավոր շահերը բախվում են իրենց պաշտոնական պարտականություններին, որը հաճախ է պատահում: Յետևաբար՝ միանշանակ պնդել, որ շահերի բախումը կոռուպցիայի տեսակ է, խիստ վիճահարույց է: Այս առիթով Քուինթին Ռիդը նշում է, որ «Այսպիսի մեկնաբանությունները արտացոլում են այն սխալ տեսակետը, որ շահերի բախումը ինքն իրենով կոռուպցիա է» և հորդորում է «...որպեսզի պաշտոնատար անձինք և օրենսդիրները ընկալեն և ընդունեն, որ շահերի բախումը դա իրավիճակ է, այլ ոչ թե գործողություն, և ինքն իրենով այն չի հանգեցնում ոչ մի իրավախախտման»:<sup>2</sup>

Օրենսդրական կարգավորումներում շահերի բախումը կոռուպցիայի հետ չնույնականացնելուն են միտված նաև միջազգային մի շարք կազմակերպությունների հայտարարությունները: Այսպես, ՏՀԶԿ «Յանրային ոլորտում շահերի բախման կառավարումը. գործիքակազմ» ուղեցույցը սահմանում է, որ «Շահերի բախումը պարտադիր իրենից չի ներկայացնում կոռուպցիա, որի ներքո հասկացվում է «պաշտոնական դիրքի փաստացի չարաշահում անձնական օգուտներ ստանալու նպատակով»: Միաժամանակ, բախումը իրապես կարող է նախադրյալներ ստեղծել կոռուպցիոն գործողությունների համար»: Նույն տեղում հիշատակվում է, որ «չնայած շահերի բախումը զուտ փաստի ուժով (ipso facto) չի համարվում կոռուպցիա, սակայն ավելի և ավելի է աճում այն գիտակցությունը, որ պաշտոնատար անձանց

---

<sup>1</sup> Morris S., Forms of Corruption, *CESifo DICE Report 2/2011*, page 10, [www.cesifo-group.de](http://www.cesifo-group.de), <https://www.econstor.eu/bitstream/10419/167031/1/ifo-dice-report-v09-y2011-i2-p10-14.pdf>

<sup>2</sup> Reed Q. (2010), *Regulating conflict of interest in challenging environments*, U4 Issue 2010:2, page 4, <https://www.cmi.no/publications/file/3622-regulating-conflicts-of-interest-in-challenging.pdf>



մասնավոր շահերի և պաշտոնական պարտականությունների միջև բախումները, եթե պատշաճ կերպով չկառավարվեն, կարող են հանգեցնել կոռուպցիայի»:<sup>3</sup>

Արևմտյան Ավստրալիայի հանրային ոլորտի շահերի բախման ուղեցույցը նշում է, որ «Շահերի բախման առկայությունը արատավոր կամ հակաբարոյական ոչ մի բան չի պարունակում: Կարևոր է, որպեսզի շահերի բախումը ճանաչվի և պատշաճ կերպով լուծվի կամ չեզոքացվի»:<sup>4</sup>

Միջազգային պրակտիկայում հանրային պաշտոնյաների շահերի բախման համար առավել կիրառելի են ԵԽ-ի և ՏՀԶԿ սահմանումները: ՏՀԶԿ-ի կողմից մշակված «Չանրային ծառայողների շահերի բախման կառավարման ուղեցույց»-ում շահերի բախումը սահմանվում է, որպես «**պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունների և մասնավոր շահերի միջև բախում**, որում պաշտոնատար անձն ունի մասնավոր կարգավիճակից բխող շահեր, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ անձի պաշտոնական պարտականությունների և գործառույթների վրա»: Նույն ուղեցույցի 14-րդ կետում պաշտոնատար անձի մասնավոր շահերի շրջանակը սահմանելիս նշվում է, որ «Այս սահմանման մեջ «մասնավոր շահերը» սահմանափակված չեն միայն ֆինանսական կամ դրամային շահերով, կամ այն շահերով, որոնք պաշտոնատար անձին տալիս են անմիջական անձնական շահ: Շահերի բախումը կարող է կապված լինել այդ պաշտոնատար անձի՝ որպես մասնավոր անձի՝ այլ իրավիճակներում իրավաչափ համարվող գործողությունների հետ, նրա պատկանելիությանը այլ կազմակերպություններին կամ դրանց հետ կապերին, ընտանեկան շահերին, եթե այդ շահերը կարող են ողջամտորեն դիտարկվել որպես անձի պաշտոնական պարտականությունների իրականացման վրա անպատշաճ ազդեցություն ունեցող: Հատուկ դեպք է պաշտոնատար անձի պետական պաշտոնի հեռացումից հետո իրավիճակը: Մինչև զբաղեցրած դիրքից հեռանալը պաշտոնատար անձի կողմից ապագա աշխատանքի մասին բանակցությունները լայնորեն դիտարկվում են որպես շահերի բախման իրավիճակ»:<sup>5</sup>

ԵԽ-ի «Չանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթի հավելված 2-ի հոդված 13-ում սահմանված է, որ «Շահերի բախումն **առաջանում է** այնպիսի իրավիճակում, երբ պետական **պաշտոնյան ունի մասնավոր շահ**, որն ազդում է կամ կարող է ազդել կամ թվում է թե ազդեցություն է գործում իր պաշտոնական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա»: Նույն հոդվածի 2-րդ մասում տրված է պաշտոնատար անձի մասնավոր շահերի շրջանակը, որը բնութագրվում է, որպես «**պաշտոնային մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն, իր ընտանիքին, մերձավոր ազգականներին, ընկերներին և անձանց կամ կազմակերպություններին, որոնց**

---

<sup>3</sup> OECD (2005), Managing Conflict of Interest in the Public Sector: A Toolkit, page 8, [www.oecd.org/gov/ethics/49107986.pdf](http://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf)

<sup>4</sup> Western Australia, Integrity Coordinating Group, *Conflicts of interest – Guidelines for the WA public sector*, <https://icg.wa.gov.au>, <https://www.wa.gov.au/sites/default/files/2020-05/Conflicts%20of%20interest%20-%20Guidelines%20for%20the%20WA%20public%20sector.pdf>

<sup>5</sup> OECD, “Managing Conflict of Interest in the Public Sector. A TOOLKIT”, 2007, p. 97, [https://read.oecd-ilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector\\_9789264018242-en#page33](https://read.oecd-ilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector_9789264018242-en#page33) կամ <https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf>

**հետ ունի նաև գործարար կամ քաղաքական հարաբերություններ:** Այն ներառում է դրա հետ կապված ֆինանսական կամ քաղաքացիական պարտավորությունը»:<sup>6</sup>

ՀԾՄ օրենքի և միջազգայնորեն ընդունված և կիրառվող շահերի բախման վերոնշյալ սահմանումների համադրումը ցույց է տալիս, որ շահերի բախման հայաստանյան սահմանումը իրենից ներկայացնում է փաստացի շահերի բախման դեպք, որի պայմաններում, շահերի բախման հանգամանքները ուղղակիորեն վկայում են պաշտոնյայի ներքաշումը այս կամ այն կոռուպցիոն գործարքներում: Բացի այդ, շահերի բախման ճանաչման գործում պահանջվում է, որ պաշտոնյան կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդում: Արդյունքում, շահերի բախման իրավիճակներ ճանաչվում են միայն այն դեպքերը, երբ արդեն իսկ տեղի է ունեցել հանրային պաշտոնյաների ու ծառայողների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց գույքային և իրավական դրության բարելավում:

### ***Պաշտոնատար անձանց մասնավոր շահերի շրջանակը***

Թիվման Հոպպը, Վալց Կալինշը<sup>7</sup> և մյուսներն առաջարկում են շահերի բախման օրենսդրական կարգավորումներում հիմք ընդունել Եւս հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրքի սահմանումը: Այս տեսանկյունից, Եւս-ի շահերի բախման սահմանման մեջ կարևորվում է «**մասնավոր կամ անձնական շահ**» եզրույթի շրջանակի հստակեցումը և համապատասխանեցումը հայաստանյան օրենսդրությանը: Այսպես, ՀԾՄ օրենքի հոդված 34-ի 9-րդ և 10-րդ մասերում «**Շտանիքի անդամներ**» են համարվում «Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ: Սույն օրենքի իմաստով՝ համատեղ բնակվող է համարվում պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը»: Այստեղ հստակեցման կարիք ունի «համատեղ բնակվող չափահաս անձանց» համատեղ բնակվելու հայտանիշը, քանի որ 183 օր համատեղ ապրելու հանգամանքի հավաստիացումը անորոշ է և իր մեջ մեծ հայեցողություն է պարունակում:

**«Մերձավոր ազգականներ»** եզրույթը սահմանված է ՀԾՄ օրենքի հոդված 39-ի 2-րդ մասով: «Սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր

<sup>6</sup> CoE «Recommendation No. R (2000) 10 of the Committee of Ministers to Member states on codes of conduct for public officials». Appendix to Recommendation No. R (2000) 10. Model code of conduct for public officials. Interpretation and application, <https://rm.coe.int/16805e2e52>

<sup>7</sup> «Legislative Toolkit on Conflict of Interest», Prepared by: Tilman Hoppe, Project Long-Term Adviser with inputs and reviews from: Valts Kalnins, Council of Europe Consultant, Vera Devine, Council of Europe Consultant, José Igreja Matos, Council of Europe Expert, Vice President International Association of Judges Jelena Jolić, Council of Europe Secretariat. CoE/EU Eastern Partnership Programmatic Co-operation Framework (PCF) “Fight against Corruption and Fostering Good Governance/Fight against Money-Laundering” (EaP-2). 2015 էջ-21-23, [http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit\\_REG\\_-2\\_2015.pdf](http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit_REG_-2_2015.pdf)

ազգակցությամբ կամ խնամփութեամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը»: Մերձավոր ազգակցությամբ և խնամփութեամբ կապված անձանց շրջանակը կիրառվում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների համատեղ աշխատանքի և գույքային գործարքների կնքման դեպքերում շահերի բախման իրավիճակները գնահատելու ժամանակ: Միաժամանակ, ՀԾՄ օրենքի հոդված 39-ով մերձավոր ազգակցությամբ և խնամփութեամբ կապված անձանց վերաբերյալ տվյալները ենթակա են հայտարարագրման հայտարարատու պաշտոնատար անձի կողմից:

ՀԾՄ օրենքի հոդված 33-ի 8-րդ մասով, **պաշտոն զբաղեցնող անձի փոխկապակցված անձանց շրջանակը** ներառում է «8. .... պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսիններ»: Այնպես է, որ ՀԾՄ օրենքում շահերի բախման սահմանման մեջ փոխկապակցված անձանց շրջանակը միայն կախվածության մեջ է դրված հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի հետ ազգակցական մինչև 3-րդ աստիճանի արյունակցական կապով կապված անձանց հետ: Մինչդեռ, ինչպես վկայում է ԵԽ-ի «Հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթի հավելված 2-ի հոդված 13-ի 2-րդ մասում տրված պաշտոնատար անձի մասնավոր շահերի շրջանակը՝ հանրային պաշտոնյայի և ծառայողի կողմից առավելություններ ստանալը ներառում է նաև հանրային պաշտոնյայի մասնավոր (ֆինանսական, տնտեսական, քաղաքական) ավելի լայն շահերի շրջանակ, որոնք պարտադիր չէ որ միայն պայմանավորված լինեն նրա հետ ազգակցական կապով կապված անձանց հետ: Օրինակ, բիզնեսի գործընկերը, մանկության, կուսակցական կամ գաղափարակից ընկերը, որոնց հետ հանրային պաշտոնյան հնարավոր է ավելի շատ սերտ հարաբերություններ ու շահեր ունենա, քան ազգակցական կապով կապված հարազատի հետ:

Թիլման Հոպպը, Վալց Կալնինշը և մյուսներն առաջարկում են ԵԽ-ի շահերի բախման սահմանման մեջ **«ընկերներ»** եզրույթը փոխարինել «սերտ անձնական հարաբերություններ»-ով, որի պայմաններում առավել հեշտ ու պարզ կլինի գնահատել անձնական հարաբերությունների բնույթը, քան ընկերականի:<sup>8</sup> Հայաստանյան իրականության պայմաններում, անձնական սերտ հարաբերություններն օրենսդրորեն դժվար կլինի սահմանել, իսկ շահերի բախման իրավիճակների գնահատման տեսանկյունից անձնական հարաբերությունների սերտության աստիճանը որոշելը կամ հիմնավորելը խիստ բարդացված

---

<sup>8</sup> «Legislative Toolkit on Conflict of Interest», Prepared by: Tilman Hoppe, Project Long-Term Adviser with inputs and reviews from: Valts Kalnins, Council of Europe Consultant, Vera Devine, Council of Europe Consultant José Igreja Matos, Council of Europe Expert, Vice President International Association of Judges Jelena Jolić, Council of Europe Secretariat. CoE/EU Eastern Partnership Programmatic Co-operation Framework (PCF) “Fight against Corruption and Fostering Good Governance/Fight against Money-Laundering” (EaP-2). 2015 էջ-21-23, [http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit\\_REG\\_-2\\_2015.pdf](http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit_REG_-2_2015.pdf)

Է կամ անհնար: Այդ իսկ պատճառով, առաջարկվում է «ընկեր» եզրույթը ընդհանրապես չդիտարկել որպես շահերի բախման իրավիճակների գնահատման ցուցիչ:

**«Գործնական հարաբերություններ»** եզրույթի մեկնաբանման տեսանկյունից, շահերի բախման իրավիճակ գնահատելու համար, միայն սովորական առք ու վաճառքի պայմանագրի առկայությունը դեռևս բավարար չէ: Շահերի բախման իրավիճակ ստեղծելու համար անհրաժեշտ է, որ դիտարկվեն պաշտոնյանի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ պաշտոնապես ձևակերպված բոլոր այն գործարքները, որոնց արդյունքում ակնկալվում է համատեղ օգուտների ստացում: Այստեղ, կարևոր է նկատի ունենալ «իրավաբանական անձ», «անհատ ձեռներեց», «մասնակից», ինչպես նաև «ֆիզիկական անձ» և այլ եզրույթների ՀՀ օրենսդրական սահմանումները: Ելնելով վերոնշյալից, շահերի բախման իրավիճակ գնահատելու համար, գործնական հարաբերություններ հայտանիշի ներքո անհրաժեշտություն է առաջանալու օրենսդրորեն կոնկրետացնել այն դեպքերը, որի պայմաններում գործնական հարաբերությունները դիտվելու են որպես շահերի բախման իրավիճակներ: Օրինակ, երբ պաշտոնատար անձը հանդիսանում է առևտրային կազմակերպության մասնակից, որի գործընկերը նույն ոլորտում հանդիսանում է այլ առևտրային կազմակերպության մասնակից՝ մեկ այլ քաղաքացու հետ, ապա նշված պայմաններում եթե պաշտոնատար անձը պետք է որոշումներ կայացնի իր գործընկերոջ մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպության վերաբերյալ, արդյո՞ք պետք է նման դեպքը համարվի կամ գնահատվի որպես շահերի բախման իրավիճակ: Համաձայն շահերի բախման սահմանման սովորական առք ու վաճառքի գործարքները չեն հանդիսանում շահերի բախման իրավիճակ ստեղծող պայմաններ: Սակայն, նույնիսկ, նման պայմաններում պաշտոնյան կարող է հայտնվել շահերի բախման իրավիճակներում: Օրինակ, այն դեպքերում, երբ պաշտոնատար անձը պետք է որոշումներ կայացնի այն քաղաքացու կամ իրավաբանական անձի վերաբերյալ, որի հետ իրականացրել է առք ու վաճառքի գործարք, հատկապես այն պայմաններում, երբ վաճառողը (ու՛մ վերաբերյալ պաշտոնյան պետք է որոշում կայացնի) կարող է միտումնավոր իջեցրել է գործարքի գինը՝ տվյալ պաշտոնատար անձի հետ անձնական հարաբերություններ ստեղծելու՝ ըստ էության, նրան շնորհելով արտոնություն: Այս պայմաններում, պաշտոնատար անձը, գոնե ընկալումների մակարդակում, հայտվում է շահերի բախման իրավիճակում:

**«Քաղաքական հարաբերություններ»**-ը դասվում են պաշտոնյայի անձնական շահերին: Սա շատ զգայուն հարց է, քանի որ պաշտոնատար անձը շահերի բախման իրավիճակում կհայտնվի, երբ պետք է որոշում կայացնի իր քաղաքական կուսակցությանը վերաբերելի հարցի վերաբերյալ: Են «Հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթում չի տրվում «քաղաքական հարաբերություններ» եզրույթի սահմանումը, քանի որ այն որպես էթիկայի կանոնագրք ներկայացնում է միայն վարքագծի սկզբունքային մոտեցումները: Մինչդեռ, երբ խնդիրը վերաբերում է պաշտոնատար անձի համար լուրջ հետևանքներ առաջացնող օրենսդրական կարգավորմանը, ապա «քաղաքական հարաբերություններ» եզրույթի համար պահանջվում է հստակ սահմանում կամ մեկնաբանություն: Պնդել, որ եթե պաշտոնատար անձը կուսակցական է և գործ ունի իր կուսակից մյուս ընկերների հետ (հնարավոր է անձնապես կամ ընդհանրապես չճանաչի այդ մարդկանց) և այդ հայտանիշով արձանագրել, որ պաշտոնատար անձը գտնվում

Է շահերի բախման իրավիճակում, հիմնավոր և տրամաբանական չէ: Հետևաբար, շահերի բախման իրավիճակներ կարող են գնահատվել կուսակից գործընկերների այնպիսի փոխհարաբերությունների արդյունքում, երբ քաղաքական կուսակցության երկու անդամ զբաղեցնում են հանրային պաշտոնների ցանկով սահմանված պաշտոն կամ պետական (համայնքային) մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում զբաղեցնում են պաշտոններ, որոնց հարաբերությունները բնութագրվում են որպես համատեղ գործունեություն: Այստեղ շահերի բախման իրավիճակներ չեն կարող դիտարկվել կամ արձանագրվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց մասով:

Շատ կարևոր է սահմանել շահերի բախում արձանագրելու այն շեմը, որից ներքև անձնական շահերը չեն համարվի բավականաչափ շահերի բախման իրավիճակ սահմանելու համար: Օրինակ, նույն շեմում կամ թաղամասում բնակվող հարևանի շահերը կամ հեռավոր բարեկամի շահերը սովորաբար չեն դիտարկվում որպես պաշտոնատար անձի անձնական շահեր:

Շահերի բախման իրավիճակների գնահատման ժամանակ կարևոր նշանակություն ունի «հանրային պաշտոնատար անձ» և «հանրային ծառայող» եզրույթների շրջանակը: Այս իմաստով, ՀԾՄ օրենքի հոդվածներ 3 և 4-ում դրանց շրջանակը խիստ նեղ է և ամփոփվում է միայն պետական և ՏԻՄ ղեկավար պաշտոնյաների ու աշխատակազմի ծառայողների շրջանակով: Մինչդեռ, հանրային ոլորտի մի շարք կարևոր ծառայություններ, հատկապես պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում պետության անունից և միջոցներով ծառայություններ մատուցող մասնագիտությունների տեր աշխատողներ դուրս են մտնում շահերի բախման օրենսդրական կարգավորումներից:

Այս նպատակով առաջարկվում է «պաշտոնատար անձ» կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձ և հանրային ծառայող եզրույթները համապատասխանեցնել ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի հոդված 2-ի «պաշտոնատար անձ» սահմանման պահանջներին: Այս փոփոխությունը հնարավորություն կտա հանրային ծառայության բոլոր ոլորտներում արձանագրելու շահերի բախման իրավիճակներ և ներկայացնել դրանց լուծման կամ կառավարման գործիքակազմերը:

### ***Շահերի բախման տեսակները***

Միջազգային պրակտիկայում շահերի բախման իրավիճակների առանձին տեսակների վերաբերյալ առավել մանրամասն կարգավորումներ ներկայացված են ՏՀԶԿ-ի կողմից մշակված «Հանրային ծառայողների շահերի բախման կառավարման ուղեցույց»-ում,<sup>9</sup> որտեղ տարբերակվում է շահերի բախման երեք տեսակներ:

---

<sup>9</sup> OECD, “Managing Conflict of Interest in the Public Sector. A TOOLKIT”, 2007, p. 97, [https://read.oecd-ilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector\\_9789264018242-en#page33](https://read.oecd-ilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector_9789264018242-en#page33) կամ <https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf>

**«Փաստացի կամ իրական շահերի բախումը»** շահերի բախման ընթացիկ կամ անցյալում կատարված իրավիճակ է, որում հանրային պաշտոնյայի մասնավոր կամ անձնական շահերը բախման մեջ են նրա պաշտոնական պարտականությունների կատարման հետ: Օրինակ՝ դատավորը քննում է գործ, որում պատասխանատուն նրա կինն է: ՏՀԶԿ ուղեցույցում «փաստացի շահերի բախման» սահմանումը ունի նույն իմաստը ինչ շահերի բախման ընդհանուր սահմանումը: Ուղեցույցը միաժամանակ հուշում է, որ «Այնտեղ, որտեղ մասնավոր շահը փաստացիորեն վնասել է պաշտոնատար անձի պարտականությունների պատշաճ կատարմանը, այդ հատուկ իրավիճակն ավելի լավ է դիտարկել որպես ոչ իրավաչափ վարքագծի կամ «պաշտոնական դիրքի չարաշահման» և կամ նույնիսկ կոռուպցիայի դրսևորում, քան թե «շահերի բախում»:

**«Թվացյալ շահերի բախումը»** շահերի բախման իրավիճակ է, երբ առաջանում է կարծիք, որ պաշտոնատար անձի մասնավոր շահերը կարող են ոչ իրավաչափ կերպով ազդել պաշտոնատար անձի պարտականությունների իրականացման վրա, սակայն իրականության մեջ դա այդպես չէ: Օրինակ՝ պաշտոնյան ընդհանուր հավաքույթի ժամանակ սեղմում է իր վաղեմի դասընկերոջ ձեռքը և գրկախառնվում նրա հետ: Նրանց ճանաչողների մոտ կարող է ստեղծվել տպավորություն կամ ձևավորվել ընկալում, որ այստեղ կան անձնական շահագրգռվածության հանգամանքներ, որոնք պայմանավորում են դասընկերոջ հաջողությունները կյանքում:

**«Պոտենցիալ շահերի բախումը»** շահերի բախման իրավիճակ է, որը առաջանում է, երբ պաշտոնատար անձն ունի շահեր, որոնք այնպիսին են, որ շահերի բախման կարող են հանգեցնել, եթե պաշտոնատար անձն ապագայում իրականացնի համապատասխան պաշտոնական գործառույթներ: Օրինակ, պետական գնումների գործընթացում ներգրավված պաշտոնատար անձը, որը հանդիսանում է մասնավոր ընկերության մասնակից, եթե տվյալ կազմակերպությունը մասնակցի պետական գնումների գործընթացին, որը կազմակերպվում է տվյալ պետական մարմնի կողմից, ապա առևտրային կազմակերպությունում մասնավոր շահերը կարող են հանգեցնել շահերի բախման:

Թվացյալ և պոտենցիալ շահերի բախման տեսակները միմյանց չեն բացառում կամ չեն հանդիսանում միմյանց փոխադարձ բացառող իրավիճակներ: Օրինակ, պաշտոնատար անձի կողմից ընդունված նվերը հաճախ դիտարկվում է որպես թվացյալ շահերի բախման տեսակ, մինչդեռ այն կարող է իր մեջ պարունակել պոտենցիալ շահերի բախման իրավիճակներ: Այսպես, նման իրավիճակում առկա է թվացյալ շահերի բախում, քանի որ «դրսի աչքի» համար թվում է թե պաշտոնատար անձը նվերը ընդունելիս պետք է նվիրատուին ինչ-որ առավելություններ կամ խոստումներ տա, մյուս կողմից այս իրավիճակը կարող է վերածել պոտենցիալ շահերի բախման, քանի որ նվիրատուն կարող է նորից դիմել պաշտոնատար անձին, որի դեպքում պաշտոնատար անձի պարտականությունների իրականացումը բախման մեջ կգտնվի նվիրատուի անձնական կապերի հետ:

Միջազգային պրակտիկայում շահերի բախման վերոնշյալ իրավիճակները ընդունված է ներառել շահերի բախման օրենսդրական սահմանման մեջ: Այն հանձնարարվում է ոչ միայն

Եւ «Յանրային պաշտոնյաների Էթիկայի տիպային կանոնագրքով», այլև ՏՅԶԿ «Յանրային ծառայողների շահերի բախման կառավարման ուղեցույցով»: Վերջինիս նախաբանում այս իմաստով նշվում է, որ «Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է խուսափել թվացյալ շահերի բախումից, որպէսզի նվազագույնի հասցվի կազմակերպության և պետական պաշտոնյաների անձնական հեղինակությանը և բարեվարքությանը ուղղված ցանկացած սպառնալիք: Թվացյալ շահերի բախումը կարող է հավասարապէս վնասակար լինել հանրային որոշումների կայացման համար, այդ իսկ պատճառով, հանրային պաշտոնյաները պետք է նկատի ունենան, թէ ինչպէս են հանրության կողմից ընկալվում այդ որոշումները»:<sup>10</sup> Համանման մոտեցում է կիրառվում Ավստրալիայի «Նյու սաութ Բելս»-ի անկախ հակակոռուպցիոն մարմնի կողմից 2019թ. հաստատած «ՆՍՈւ հանրային ոլորտում շահերի բախման կառավարման» ուղեցույցում, որտեղ նշված է, որ «Շահերի բախում առկա է, երբ մարդը ողջամտորեն կարող է ընկալել կամ նրան թվում է, որ հանրային պաշտոնյան անձնական շահը (շահերը) կարող է գերադասել իր պաշտոնական պարտականությունների նկատմամբ»:<sup>11</sup>

Պոտենցիալ շահերի բախումը հանդիսանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների և սահմանափակումների կիրառման հիմք: Այն դեպքում, երբ օրենսդիրը պոտենցիալ կամ հավանական շահերի բախման ռիսկը համարում են բավականաչափ բարձր, դրանք ձևակերպվում են հանրային պաշտոնյաների նկատմամբ անհամատեղելիության պահանջների, սահմանափակումների ու արգելքների տեսքով:

ՀԾՄ օրենքի հոդված 33-ում շահերի բախման սահմանման մեջ օգտագործվում է «...որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել... » արտահայտությունը, որով փորձ է կատարվել օրենսդրորեն կարգավորել շահերի բախման հնարավոր տեսակները: Մինչդեռ, ՀԾՄ օրենքում շահերի բախման սահմանումը ամբողջությամբ չի արտացոլում շահերի բախման բոլոր հնարավոր իրավիճակները: Մասնավորապէս, վերոնշյալ սահմանումը չի ներառում թվացյալ և պոտենցիալ շահերի բախման տեսակը: Ավելին, ՀԾՄ օրենքի հոդված 34-ի 4-րդ մասով մերժվում է թվացյալ շահերի բախման ինստիտուտը՝ «Շահերի բախում առկա չէ, եթէ անձնական շահը պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների պատշաճ իրականացման վրա ունի թվացյալ ազդեցություն, որը փաստացի բացակայում է»: Արդյունքում, ՀԾՄ օրենքով շահերի բախման սահմանումը հիմնված է փաստացի շահերի բախման իրավիճակների վրա, մինչդեռ, բաց է մնում պոտենցիալ և թվացյալ շահերի բախման իրավիճակները, որոնք ընդհանրապէս ՀԾՄ օրենքում սահմանված չեն և չեն դիտարկվում:

---

<sup>10</sup> OECD, “ Managing Conflict of Interest in the Public Sector. A TOOLKIT”, 2005, p. 8, [https://read.oecd-ilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector\\_9789264018242-en#page33](https://read.oecd-ilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector_9789264018242-en#page33) կամ <https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf>

<sup>11</sup> “Managing conflicts of interest in the nsw public sector” 2019, p. 4, [www.icac.nsw.gov.au](http://www.icac.nsw.gov.au), <https://www.icac.nsw.gov.au/prevention/corruption-prevention-publications>

Այսպիսով, անհրաժեշտ է վերանայել ՀԾՄ ՀՀ օրենքում շահերի բախման սահմանումը, ներառյալ՝ փոխկապակցված անձանց շրջանակը, անձնական և մասնավոր (ֆինանսական, տնտեսական, կուսակցական, այլ) շահերը՝ տարանջատելով շահերի բախման փաստացի, պոտենցիալ և թվացյալ տեսակների դրսևորման ձևերը:

Նկատի ունենալով շահերի բախման իրավիճակների առաջացման հանգամանքները, շահերի բախման համապարփակ, ամբողջական սահմանում ձևակերպել հնարավոր չէ: Որպես կանոն, այդ բացերը լրացվում են պաշտոնյաներին ներկայացվող անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, արգելքների, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ օրենսդրական այլ կարգավորումներով ու մանրամասն ուղեցույցներով:

## **Առաջարկություններ**

- 1.1.1 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 33-ի 1-ին և 2-րդ մասերում շահերի բախման սահմանման համար հիմք ընդունել ԵՄ «Հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնադրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթում տրված սահմանումը՝ հետևյալ խմբագրմամբ «Շահերի բախումը իրավիճակ է, որում հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ ծառայողի անձնական կամ մասնավոր շահերը ազդում են, կարող են ազդել կամ թվում է թե ազդում են իր պաշտոնական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Հանրային պաշտոն զբաղեցնող անձի անձնական կամ մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն, իր ընտանիքին, մերձավոր ազգակցությամբ և ինսամիությամբ կապված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ունի գործարար կամ քաղաքական հարաբերություններ: Անձնական և մասնավոր շահը ներառում է նաև դրա հետ կապված ցանկացած ֆինանսական կամ քաղաքացիական պարտավորությունները»:
- 1.1.2 ՀԾՄ օրենքի հոդված 33-ի 8-րդ մասում փոխկապակցված անձանց շրջանակը սահմանափակել ընտանիքի անդամների և մերձավոր ազգակցությամբ և ինսամիությամբ կապված անձանց շրջանակով:
- 1.1.3 շահերի բախման իրավիճակների գնահատման նպատակով օրենսդրորեն սահմանել «գործարար հարաբերություններ» և «քաղաքական հարաբերություններ» եզրույթների մեկնաբանությունները:
- 1.1.4 պաշտոնատար անձի «գործարար հարաբերություններ» եզրույթի շրջանակներում օրենսդրորեն սահմանել ձեռնարկատիրական գործունեության, առք ու վաճառքի, նվիրատվության, ժառանգության և այլ մասնակցության եղանակներն և պայմանները, որի ժամանակ պաշտոնատար անձի գործարար հարաբերությունները դիտվելու են որպես շահերի բախման իրավիճակներ:
- 1.1.5 պաշտոնատար անձանց «քաղաքական հարաբերություններ»-ի սահմանման շրջանակներում «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով կամ դրանից բխող այլ օրենսդրական ակտով սահմանել կուսակցության ու նրա



տարածքային ստորաբաժանումների և վերահսկողություն իրականացնող մարմիններում ղեկավար և կառավարման պաշտոնների ցանկը.

- 1.1.6 հիմք ընդունելով ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջները, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներում ընդլայնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շրջանակը՝ դրանցում ներառելով պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների պաշտոնատար անձանց, հանրային ոլորտի այլ բնագավառների ծառայողներին.
- 1.1.7 ՀԾՄ օրենքով կամ շահերի բախման կարգավորման առանձին օրենսդրական ակտով սահմանել իրական կամ փաստացի, պոտենցիալ և թվացյալ շահերի բախման եզրույթները, դրանց գնահատման ու կարգավորման շրջանակները.
- 1.1.8 մշակել «Շահերի բախման բացահայտման և կառավարման» ուղեցույց, որում ներկայացնել շահերի բախման սահմանումը պայմանավորող բոլոր բաղադրիչների մեկնաբանությունները՝ հիմնավորելով պրակտիկայից ձևավորված օրինակներով:

## 1.2 Շահերի բախման օրենսդրական կարգավորումները հանրային ծառայության առանձին ոլորտներում

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախման և դրա կիրարկումն ապահովող գործընթացների կանոնակարգումները տրված են ՀԾՄ օրենքի հոդված 33-ում: Հոդվածում սահմանված են շահերի բախման այն իրավիճակները, որոնք չեն համարվում շահերի բախում, այդ թվում՝ թվացյալ շահերի բախման իրավիճակները, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների լիազորությունները շահերի բախման իրավիճակում հայտնվելու ժամանակ, շահերի բախման լուծման կամ կառավարման գործում անմիջական ղեկավարի կամ վերադասի կողմից ձեռնարկվելիք քայլերը, ինչպես նաև պաշտոնյաների առանձին խմբերի համար շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու հետևանքով պատասխանատվության միջոցներ կիրառելու տեսակներն ու եղանակները: Այդուհանդերձ, ՀԾՄ օրենքի հոդված 33-ի 7-րդ մասում արձանագրված է, որ «հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (**բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի**), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև **հանրային ծառայողների վրա**»: Այստեղից՝ ՀԾՄ օրենքը պատգամավորների, դատավորների, բարձրագույն դատական խորհրդի անդամների, դատախազների ու քննիչների, ինչպես նաև ՏԻՄ ավագանու անդամների մասով չի կարգավորում շահերի բախման գործընթացները:

**ԱԺ պատգամավորների** շահերի բախման գործընթացները կարգավորված են «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ում, որտեղ տրված է պատգամավորին առջվող շահերի բախման սահմանումը, շահերի բախում առաջանալու դեպքում պատգամավորի կողմից ձեռնարկվելիք քայլերը, ինչպես նաև ԱԺ-ում

գործունեության այն իրավիճակները, որի ժամանակ պատգամավորի գործունեությունը չի համարվի կամ ճանաչվի շահերի բախման իրավիճակներ: Շահերի բախման իրավիճակներում սահմանված գործողությունների չկատարման համար պատասխանատվության միջոցներ օրենքով նախատեսված չեն:

**«Տեղական ինքնակառավարման մասին»** ՀՀ օրենքում բացակայում են շահերի բախման սահմանման և կառավարման ընդհանրական դրույթները: Համայնքի ավագանու մասով **«Տեղական ինքնակառավարման մասին»** օրենքի հոդված 21-ի 2-րդ մասի 6-րդ կետում նշված է, որ «Համայնքի ավագանու անդամը պարտավոր է՝ 6) չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ ինսամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) շահերին»: Համայնքի ղեկավարի, նրա տեղակալի և վարչական շրջանի ղեկավարի շահերի բախման օրենսդրական կարգավորումները կանոնակարգվում են ՀԾՄ օրենքով, որպես քաղաքական և վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձինք:

**Դատավորի (այդ թվում, Բարձրագույն դատական խորհրդի անդամի)** շահերի բախման սահմանման և օրենսդրական կարգավորումները տրված են «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում: Այդ օրենքի «Դատավորի վարքագծի կանոններն ի պաշտոնե գործելիս» վերնագրով հոդված 70-ի 2-րդ մասի 7-րդ կետը սահմանում է, որ «Ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է՝ 7) թույլ չտալ շահերի բախում, բացառել ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունների՝ իր ի պաշտոնե լիազորությունների իրականացման վրա որևէ ազդեցություն»: Այսինքն՝ դատավորների համար շահերի բախման սահմանումը ձևակերպված է որպես վարքագծի կանոն, որի չպահպանելը առաջացնում է պատասխանատվություն: Այդուհանդերձ, դատական օրենսգիրքը չի անդրադառնում շահերի բախման սահմանմանը և դատավորի դատական գործունեությունից դուրս առկա շահերի կարգավորման հարցերին:

**Դատախազի** շահերի բախման սահմանման և օրենսդրական կարգավորումները տրված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքի «Դատախազի վարքագծի կանոնները» գլխում: Այդ օրենքի «Դատախազի վարքագծի ընդհանուր կանոնները» անվանվող հոդված 72-ի 1-ին մասի 6-րդ կետում նշված է, որ «դատախազը պարտավոր է լինել ինքնուրույն և անաչառ, անկախ լինել օրենսդիր և գործադիր իշխանությունների և այլ պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և քաղաքական կազմակերպությունների, լրատվության միջոցների, **մասնավոր շահերի, հասարակական կարծիքի և այլ կողմնակի ազդեցություններից, ճնշումներից, սպառնալիքներից և այլ միջամտությունից, ազատ լինել քննադատվելու մտավախությունից**»: Միաժամանակ, նույն օրենքի «Դատախազի վարքագծի կանոնները պաշտոնեական հարաբերություններում» վերնագրով հոդված 73-ի 1-ին մասի 10-րդ կետում արձանագրված է, որ «դատախազը պարտավոր է իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, խտրականություն դրսևորելուց կամ նման տպավորություն ստեղծելուց, **գործել այնպես, որ նրա անաչառության և անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի, չառաջնորդվել**

**ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով և այլ կողմնակի ազդեցությամբ,** որը չի խոչընդոտում դատախազին ազատորեն արտահայտելու իր կարծիքը ծառայողական հարցերին առնչվող լուծումների վերաբերյալ»: Շահերի բախման համանման կարգավորում է արձանագրված նաև դատախազի պաշտոնական պարտականություններից դուրս հարաբերություններում, մասնավորապես, նույն օրենքի «Դատախազի վարքագծի կանոնները արտապաշտոնական հարաբերություններում» վերնագրով հոդված 74-ի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ դատախազը պարտավոր է **«թույլ չտալ շահերի բախում, որ իր ընտանեկան, հասարակական կամ այլ բնույթի հարաբերությունները որևէ կերպ ազդեն ի պաշտոնե իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա»:**

**Քննիչների** շահերի բախման օրենսդրական կարգավորման հարցերը «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում բացակայում են: Նշված օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «Քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները»: Հետևաբար, միայն քննիչներին ներկայացվող սահմանափակումների կիրառման մասով «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքը չի ապահովում շահերի բախման սահմանման և իրավիճակային շահերի կարգավորման հարցերը: Համանման կարգավորում է տրված նաև «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում, որի «Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվող սահմանափակումները» վերնագրով հոդված 11-ի 1-ին մասում նշված է, որ «Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները»:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, շահերի բախման օրենսդրական կարգավորումները տարանջատված են հանրային պաշտոն զբաղեցնող առանձին խումբ պաշտոնատար անձանց համար, որոնք ամբողջական չեն և չեն ապահովում շահերի բախման դրույթների համընդհանուր կիրառելիությունը հանրային ծառայության բոլոր պաշտոնատար անձանց համար:

**Հանրային ծառայության առանձին տեսակների** առումով շահերի բախման օրենսդրական կարգավորումների առանձնահատկությունները ունեն հետևյալ պատկերը: **Քաղաքացիական ծառայողների** համար «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի 3-րդ մասով, սահմանված է, որ «Քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների և պարտականությունների, սոցիալական երաշխիքների, բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերությունները, որոնք պարտադիր են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով»: Միաժամանակ, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով կարգավորվում են վարքագծի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պահանջների խախտումների համար կարգապահական պատասխանատվության միջոցները և դրանց կիրարկման ընթացակարգերը:

Համանման կարգավորումներ են կիրառված նաև **հարկային և մաքսային ծառայությունների** մասին օրենքներով: Այսպես, ՅՃՄ օրենքի հոդված 3-ի 1-ին մասով սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքից, սույն օրենքից, «Հանրային ծառայության մասին» օրենքից, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից և այլ իրավական ակտերից», իսկ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի 1-ին մասում սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից, «Հանրային ծառայության մասին» օրենքից, մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերից և մաքսային ծառայության հարցերը կարգավորող իրավական այլ ակտերից»: Դրա հետ մեկտեղ, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ի 2-րդ մասով սահմանվում է, որ «Հարկային ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով»:

«Մաքսային ծառայության մասին» (հոդված 48.2), «Փրկարար ծառայության մասին» (հոդված 60), «Քրեակատարողական ծառայության մասին» (հոդված 55.3), «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (հոդված 3, մաս 3) ՀՀ օրենքներում համապատասխան հղում է տրված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին՝ այն է «(փրկարար, մաքսային, քրեակատարողական, հարկադիր) ծառայողների բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերությունները, որոնք պարտադիր են **հարկադիր, փրկարար, մաքսային, քրեակատարողական ծառայողների** համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով»: Այսպիսով, վերոնշյալ ծառայության ոլորտներում, փրկարար, մաքսային, քրեակատարողական, հարկադիր ծառայողների բարեվարքության կարգավորման դրույթների բացակայության պայմաններում, այդ ոլորտների հանրային ծառայողների համար կիրառելի են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված բարեվարքության համընդհանուր դրույթները՝ ներառյալ շահերի բախման օրենսդրական կարգավորումները:

**Դիվանագիտական ծառայության մասով՝** «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 43-ի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ «Դիվանագետի պարտականություններն են՝ 1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտականությունները»:

Սույն մոտեցումն է կիրառված նաև **«Համայնքային ծառայության մասին»** ՀՀ օրենքում, որի հոդված 23-ի 1-ին մասում սահմանված է, որ «1. Համայնքային ծառայողը կրում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված հիմնական պարտականությունները»:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված է, որ հանրային ծառայողի պարտականություններն են «հանրային ծառայողի

վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին հետևելը»: Արդյունքում, դիվանագիտական և համայնքային ծառայողների համար կիրառելի են դառնում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված բարեվարքության այն բոլոր դրույթները՝ ներառյալ շահերի բախման կարգավորումները, որոնք կարգավորված չեն համայնքային և դիվանագիտական ծառայության մասին օրենքներով:

**«Ոստիկանությունում ծառայության մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Չինվորական ծառայության մասին»** ՀՀ օրենքները համապատասխան ոլորտների ծառայողների շահերի բախման համընդհանուր կարգավորումներ չեն պարունակում, իսկ այդ ծառայողների բարեվարքությանը վերաբերելի հարցերով «Հանրային ծառայության մասին» օրենքին հղումները բացակայում են:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս հանրային ծառայության առանձին ոլորտների օրենսդրական ակտերի վերլուծությունը, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման համընդհանուր կարգավորումը մեկ օրենսդրական ակտի շրջանակներում բացակայում է: Դրա փոխարեն, շահերի բախման առանձին կարգավորումները կամ իրավիճակների լուծումները տրված են հանրային ծառայության ոլորտային առանձին օրենքներում: Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում, շահերի բախման կարգավորումները նախատեսված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց առանձին խմբերի համար, մինչդեռ համայնքի ավագանու անդամների, պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների շահերի բախման կարգավորումները ամբողջական չեն, իսկ շահերի բախման որոշ կարգավորումներ կիրառելի են միայն վարքագծի կանոնագրքերի շրջանակներում:

Արդյունքում, շահերի բախման օրենսդրական կարգավորումները հանրային ծառայության համար շարունակում են մնալ չափազանց մասնատված: Հանրային ծառայության առանձին տեսակների՝ դիվանագիտական, հարկային, մաքսային, փրկարար, քաղաքացիական, քրեակատարողական, հարկադիր կատարման, ոստիկանության, ազգային անվտանգության մարմիններում, զինվորական և համայնքային ծառայություններում շահերի բախման օրենսդրական կարգավորումները կամ ընդհանրապես բացակայում են, կամ էլ անուղղակի կերպով, ընդհանուր դրույթներով հղում է կատարված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին, որը բնականաբար հանգեցնում է շահերի բախման երևույթի ու հասկացության ոչ միատեսակ ընկալմանը, շահերի բախման կառավարման կամ կանխարգելման առանձին մոտեցումների կիրառմանը:

Ինչպես վկայում է միջազգային փորձը, հանրային ծառայության առանձին ոլորտներում շահերի բախման հարաբերությունների կարգավորումները իրականացվում է ինչպես կոնկրետ ոլորտների առանձնահատկությունների հաշվառմամբ, այնպես էլ փոխադարձ համընդհանուր կարգավորող սկզբունքների ու որոշումների հիման վրա: Վերջինս հաճախ անվանվում է

շահերի բախման կարգավորման համընդհանուր մոդել:<sup>12</sup> Այս մոդելի պայմաններում հեշտացվում և պարզեցվում է ընթացողի ու պաշտոնյայի կողմից շահերի բախման երևույթի ընկալումը, դրա կարգավորման ու կառավարման գործիքակազմերի շրջանակում, վերջինիս կողմից կիրառվելիք քայլերի հաջորդականությունը և նպատակը: Բացի այդ, նման մոդելի պայմաններում պարզեցվում է հանրային ծառայության առանձին ոլորտային օրենսդրություններում շահերի բախման առանձնահատուկ իրավիճակների կարգավորումները և հնարավորություն է ընձեռնում խուսափելու կրկնություններից ու իրարամերժ կարգավորումներից և ընկալումների կիրառումից:

Թիլման Յոպան և Վալց Կալնինը<sup>13</sup> գտնում են, որ շահերի բախման հարաբերությունները կոնկրետ ոլորտային օրենքներով կարգավորելու մոտեցումը կենսունակ է և արդյունավետորեն գործում է միայն բարձր զարգացածության օրենսդրական ավանդույթներ ունեցող երկրներում, որտեղ սահմանված ու կիրառվում են պատասխանատվության միջոցներ և առկա են խիստ վերահսկողական համակարգեր (օրինակ՝ Գերմանիան): Այսինքն, դա չի նշանակում, որ այս մոդելը կիրառելի է ընդհանրապես անցումային ժամանակաշրջանում գտնվող երկրների համար, որտեղ բարեվարքության համակարգերի և կոռուպցիայի կանխարգելման գործիքների օրենսդրական կարգավորումները կարիք ունեն իմաստավորման ու կատարելագործման:

Ամեն դեպքում, հանրային ծառայության ոլորտների բոլոր ծառայողների ու պաշտոնատար անձանց համար շահերի բախման օրենսդրական կարգավորման համընդհանուր մոդելը կարող է հնարավորություն ընձեռել մեկ օրենսդրական ակտի շրջանակներում սահմանելու շահերի բախման կառավարման համընդհանուր նորմերը, իսկ ոլորտային օրենքներով՝ կարգավորելու համապատասխան ծառայության ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված շահերի բախման դրույթները:

## Առաջարկություններ

**1.2.1 քննարկել շահերի բախման համընդհանուր մոդելի կիրառման շրջանակներում շահերի բախման օրենսդրական կարգավորման և կառավարման հարցերը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում առանձին գլխով ամբողջականացնելու հարցը, կամ էլ դրանք ամփոփել «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ընդհանուր վերնագրով օրենսդրական առանձին ակտով,**

---

<sup>12</sup> «Legislative Toolkit on Conflict of Interest», Prepared by: Tilman Hoppe, Project Long-Term Adviser with inputs and reviews from: Valts Kalnins, Council of Europe Consultant, Vera Devine, Council of Europe Consultant José Igreja Matos, Council of Europe Expert, Vice President International Association of Judges Jelena Jolić, Council of Europe Secretariat. CoE/EU Eastern Partnership Programmatic Co-operation Framework (PCF) “Fight against Corruption and Fostering Good Governance/Fight against Money-Laundering” (EaP-2). 2015 էջ-19, [http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit\\_REG\\_-2\\_2015.pdf](http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit_REG_-2_2015.pdf)

<sup>13</sup> «Legislative Toolkit on Conflict of Interest», Prepared by: Tilman Hoppe, Project Long-Term Adviser with inputs and reviews from: Valts Kalnins, Council of Europe Consultant, Vera Devine, Council of Europe Consultant José Igreja Matos, Council of Europe Expert, Vice President International Association of Judges Jelena Jolić, Council of Europe Secretariat. CoE/EU Eastern Partnership Programmatic Co-operation Framework (PCF) “Fight against Corruption and Fostering Good Governance/Fight against Money-Laundering” (EaP-2). 2015 էջ-19, [http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit\\_REG\\_-2\\_2015.pdf](http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit_REG_-2_2015.pdf) :

որում կտրվեն նաև կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման և գործունեությանը վերաբերելի դրույթները.

- 1.2.2 շահերի բախման ԵԽ «Հանրային պաշտոնյաների Էթիկայի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթում տրված սահմանումը կիրառելի դարձնել հանրային պաշտոն զբաղեցնող և հանրային ծառայողների բոլոր խմբերի ու տեսակների համար: ՀԾՍ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, բենիչի» բառերը, իսկ նույն կետում «համայնքի ղեկավարների» բառից հետո լրացնել «համայնքի ավագանու անդամների» բառերը.
- 1.2.3 դատավորների, ԱԺ պատգամավորների, համայնքի ավագանու անդամների մասով շահերի բախման նոր սահմանումից բխող առանձնահատուկ կարգավորումները կանոնակարգել համապատասխան ոլորտային օրենքներով.
- 1.2.4 հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով կարգավորել շահերի բախման համընդհանուր դրույթների կիրառումից բխող, տվյալ ծառայության առանձնահատկություններով պայմանավորված նորմերը կամ դրույթները:

### 1.3 Անհամատեղելիության պահանջներ

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները ուղղակիորեն առնչվում են պաշտոնատար անձանց հիմնական գործառույթներին կամ պաշտոնետական գործունեությանը: Այդ գործառույթները իրենց մեջ կրում են շահերի բախման բարձր ռիսկեր, որոնց առկայությունը առաջ է բերում շահերի բախման պոտենցիալ և նույնիսկ փաստացի իրավիճակներ պաշտոնատար անձի հիմնական պարտականությունների հետ, կամ էլ, առնվազն, հանրության մեջ ստեղծում է նման տպավորություն կամ ընկալում: Շահերի բախման անհամատեղելիության պահանջների հնարավոր ռիսկերը այնքան բարձր են, որ սովորաբար օրենսդրորեն դրանք ճանաչվում են պետական ծառայության հետ անհամատեղելի: Այդ իսկ պատճառով անհամատեղելիության պահանջները շատ հաճախ անվանում են «բացարձակ շահերի բախում»:<sup>14</sup>

ՀՀ Սահմանադրությունը անհամատեղելիության պահանջներ է սահմանել սահմանադրական մարմինների ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց համար: Այսպես, ՀՀ Սահմանադրության հոդված 95-ով սահմանված է «Պատգամավորական մանդատի անհամատեղելիությունը»: Այն է, պատգամավորը չի կարող **զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:** ՀՀ Սահմանադրությամբ

<sup>14</sup> EUROSAI (2013), *Survey on the Independence of Supreme Audit Institutions*, page 4, [https://www.eurosai.org/handle/404?exporturi=/export/sites/eurosai/.content/documents/training/training-events/InSem2014/3.-Survey-on-the-Independence-of-SAIs\\_final.pdf](https://www.eurosai.org/handle/404?exporturi=/export/sites/eurosai/.content/documents/training/training-events/InSem2014/3.-Survey-on-the-Independence-of-SAIs_final.pdf)

համանման պահանջներ սահմանված են նաև կառավարության անդամների (հոդված 148, մաս 2), դատավորների (հոդված 148, մաս 6), մարդու իրավունքների պաշտպանի (հոդված 193, մաս 2), կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների (հոդված 195, մաս 4), հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների (հոդված 197, մաս 4), հաշվեթևի պալատի անդամների (հոդված 199, մաս 4), կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի մյուս անդամների (հոդված 201, մաս 3) համար:

ՀԾՄ օրենքում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները սահմանված են հոդված 31-ում: Այն, ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական մարմինների ղեկավարների համար սահմանված անհամատեղելիության պահանջներից՝ այն է «1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից»: Միաժամանակ, ՀԾՄ օրենքի հոդված 31-ում մանրամասնեցված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացվող անհամատեղելիության պահանջների բովանդակությունը, որոշակիորեն բացված են յուրաքանչյուր անհամատեղելիության պահանջի գործողության շրջանակները, իմաստը, կարգավորման որոշ հանգամանքները, դեպքերը, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ձեռնարկվելիք քայլերը:

Միջազգային պրակտիկայում, անհամատեղելիության պահանջների սահմանման ամենաթարմ օրինակը 2019թ.-ին ընդունված Սերբիայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին օրենք»<sup>15</sup> է, որի 4-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է «Հանրային պաշտոնյայի պաշտոնավարման ընթացքում այլ աշխատանքի հետ կապված անհամատեղելիությանը»: Ի դեպ, համաձայն օրենքի «Հանրային պաշտոնյա հանդիսանում է ցանկացած անձ, ով ընտրվել, նշանակվել կամ առաջադրվել է հանրային իշխանության կողմից, բացառությամբ այն անձանց, ովքեր հանդիսանում են մասնավոր կապիտալի ներկայացուցիչներ այն ընկերությունների կառավարման մարմիններում, որոնք հիմնադրվել կամ ստեղծվել են հանրային իշխանությունների մասնակցությամբ»<sup>16</sup> Սերբիայի օրենքի այս գլխում անհամատեղելիության պահանջները սահմանված են առանձին հոդվածներով: Մասնավորապես, հոդված 45-ով կանոնակարգված է «պաշտոնի ստանձնման ժամանակ այլ գործունեությամբ կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասին Սերբիայի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տեղեկացնելը», հոդված 46-ով՝ «այլ աշխատանք կատարելը կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը», հոդված 47-ով՝ «խորհրդատվական գործունեությամբ զբաղվելու արգելքը», հոդված 48-ում՝ «մասնավոր կապիտալի մասնակցությամբ իրավաբանական անձանց կազմակերպություններում

<sup>15</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենք: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

<sup>16</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենք, Հոդված 2: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>



պաշտոններ զբաղեցնելը կամ մասնակցություն ունենալը», հոդված 49-ում՝ «ստոցիացիաների (հասարակական կազմակերպությունների, ոչ առևտրային կազմակերպությունների) կառավարման մարմիններում մասնակցությունը», հոդված 50-ում՝ «բաղաբանական կառույցին անդամակցությունը և գործունեությունը», հոդված 51-ում՝ «կառավարչական իրավունքների փոխանցումը», հոդված 52-ում՝ «կառավարչական իրավունքների փոխանցումից բացառությունը», հոդված 53-ում՝ «պետական գնումներին, մասնավորեցման կամ այլ համանման գործընթացներին մասնակցության մասին հանձնաժողովին տեղեկացնելը, եթե այդ գործընթացների հետևանքը լինելու է պայմանագրի կնքումը հանրային իշխանության հետ», հոդված 54-ում՝ «հանրային պաշտոնյայի հանդեպ ապօրինի ազդեցության գործադրումը», հոդված 55-ում՝ «հանրային պաշտոնի դադարումից հետո ծագող սահմանափակումները»: Ինչպես նկատելի է, Սերբիայի դեպքում փորձ է կատարվել համապարփակ կերպով կարգավորել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների և սահմանափակումների բոլոր ասպեկտները և ենթադրելի հետևանքները:

Հայաստանի ՀԾՄ օրենքի հոդված 31-ի «անհամատեղելիության պահանջներ»-ի հետ համադրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ, հիմնական անհամատեղելիության պահանջները համընկնում են: Այդուհանդերձ, ի տարբերություն հայաստանյան գործող անհամատեղելիության պահանջների ու այլ սահմանափակումների ձևակերպումների՝ Սերբիայի փորձը ուսանելի է այն իմաստով, որ յուրաքանչյուր սահմանափակման կամ անհամատեղելիության պահանջ ձևակերպված է ինքնուրույն հոդվածի շրջանակներում և տրված են դրանց կարգավորման գործիքները: Բացի այդ, անհամատեղելիության պահանջների ներքո տրված այլ սահմանափակումները մանրամասնված են և համապատասխանեցված են պաշտոնատար անձի ներգրավվածությունը շահերի բախման հնարավոր ռիսկեր պարունակող հանրային կառավարման գործընթացներում (խորհրդատվություն, գնումների գործընթաց, կուսակցական և այլ աստցիացիաների կառավարման մարմիններում ներկայացվածություն և այլն), ինչպես նաև դրանք միտված են կոնկրետ պրակտիկայից բխող շահերի բախման հնարավոր և տարածված երևույթների կանխարգելմանը: Եվ վերջապես, Սերբիայի փորձի մյուս առավելությունը այն է, որ ԿԿՀ-ին վերապահված են լիազորություններ ինքնուրույն որոշումներ կայացնելու անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների կարգավորման ուղղությամբ: Մասնավորապես, «եթե հանձնաժողովը որոշի, որ նշված գործունեության տեսակները կասկածի տակ են դնում անկողմնակալ պաշտոնավարումը կամ հանրային պաշտոնի վարկանիշը կամ/և այն ներկայացնում է իրենից շահերի բախում, ապա հանձնաժողովը սահմանում է ժամանակաշրջան, որի ընթացքում հանրային պաշտոնյան պարտավոր կլինի դադարեցնել նման գործունեությամբ զբաղվելը և/կամ ձեռնարկատիրական գործունեությունը»: Շահերի բախման ճկուն կառավարման մեկ այլ օրինակ է երբ «Հանրային պաշտոնյան, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից կարող է նաև ինդրել հանձնաժողովին տալ համաձայնություն զբաղվելու այլ աշխատանքով, որոնք ուղղակիորեն չեն հանդիսանում ձեռնարկատիրական գործունեություն: Նման ինդրանքի ներկայացման դեպքում, հանրային պաշտոնյան պետք է տրամադրի նաև իրեն ընտրած, նշանակած կամ առաջադրած մարմնի դրական կարծիքը: Իսկ եթե հանրային պաշտոնյան

հանդիսանում է քաղաքացիական ծառայող, ապա նա պարտավոր է իր խնդրանքին կցել իր անմիջական ղեկավարի համաձայնությունը: Հանձնաժողովը նման խնդրանքների մասին որոշում կայացնում է խնդրանքի ստացման պահից 15 օրյա ընթացքում, իսկ եթե այդ ընթացքում չի ընդունում որոշում, ապա համարվում է, որ հանձնաժողովը տվել է իր համաձայնությունը»:

Միաժամանակ, Սերբիայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին օրենք»-ը նախատեսում է, որ հանրային ծառայության ոլորտային օրենքներով կամ այլ իրավական ակտերով կարող են սահմանվել տվյալ ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված անհամատեղելիության պահանջներ և այլ սահմանափակումներ:

Նմանօրինակ կարգավորում է առկա մեկ այլ բալկանյան երկրում՝ Սլովենիայում, որի «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 26-ով<sup>17</sup> հանրային պաշտոն զբաղեցնող մասնագիտական անձը չի կարող զբաղվել մասնագիտական կամ այլ գործունեությամբ, որը միտված է եկամտուտի և ակտիվների ստեղծմանը: Այս կանոնից, բացառությունների շարքին են դասվում մանկավարժական գործունեությունը, գիտական, հետազոտական, արվեստի, մշակույթի, սպորտային և հրատարակչական գործունեությունները, ֆերմայի կառավարումը և սեփական ակտիվների կառավարումը: Բացառությամբ սպորտային, հրատարակչական գործունեության և ֆերմային ու սեփական ակտիվների կառավարումից, մնացածի դեպքում պաշտոնյան պետք է 8 աշխատանքային օր առաջ դիմի Սլովենիայի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին և կցի իր գործատուից թույլտվությունը և այն պայմանագիր, որի հիման վրա հենց զբաղվելու է նախատեսվող գործունեությամբ: Եթե հանձնաժողովը գտնի, որ նախատեսվող գործունեությունը ստեղծում է անհամաչափ ռիսկ պաշտոնի նպատակին և պարտականությունների անկողմնակալ կատարմանը կամ կասկածի տակ է դնում այդ պաշտոնյայի բարեվարքությունը, ապա դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում սկսում է վարույթ, որի արդյունքով կարող է ընդունել արգելող որոշում կամ որոշում, որում նշվեն այն պայմաններն, որոնք պետք է պահպանի պաշտոնյան նախատեսվող գործունեությամբ զբաղվելու ընթացքում:

## **Առաջարկություններ**

- 1.3.1 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների յուրաքանչյուր սահմանափակում ձևակերպել ինքնուրույն հոդվածի շրջանակներում՝ ներկայացնելով դրանց կարգավորման գործիքները.**
- 1.3.2 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով, հանձնաժողովի կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության կիրառման գործառույթը համալրել՝ պաշտոնյաների**

---

<sup>17</sup> «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքը, <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>

**կողմից «այլ գործունեությամբ» զբաղվելու դեպքերի վերաբերյալ համաձայնությունների կամ թույլտվությունների տրամադրման գործիքակազմերով:**

***«Պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոնի զբաղեցում» անհամատեղելիության պահանջ***

ՀԾՄ օրենքը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացնում է անհամատեղելիության պահանջ, համաձայն, որի «... (նրանք) չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում»: Անհամատեղելիության այս պահանջից ՀԾՄ օրենքը նախատեսում է երեք ընդհանրական բացառություններ, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության նախագահը չի կարող զբաղեցնել որևէ այլ պաշտոն, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, «Կենտրոնական բանկի նախագահը և խորհրդի մյուս անդամներն իրավունք ունեն առևտրային կազմակերպություններում և հիմնադրամներում զբաղեցնելու իրենց կարգավիճակով պայմանավորված պաշտոններ», իսկ հանրային ծառայողները «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերում կարող են կատարել ընտրական հանձնաժողովի անդամի (բացառությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի) կամ ընտրական հանձնաժողովում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի կարգավիճակից բխող աշխատանք:

**Աժ պատգամավորների** համար «Աժ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի 5-րդ մասով սահմանված է պատգամավորի կարգավիճակով պայմանավորված պաշտոնների ցանկը՝ «5. Պատգամավորի կարգավիճակով պայմանավորված պաշտոններ են Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների, հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների, խմբակցությունների ղեկավարների և քարտուղարների պաշտոնները, ինչպես նաև Ազգային ժողովի կամ նրա մարմինների լիազորությունների կամ գործառույթների իրականացմանն առնչվող այլ պաշտոններ»:

**Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի** համար «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 18-ով սահմանված է ավագանու անդամի կողմից այլ պաշտոններ զբաղեցնելու արգելքը, որով համայնքի ավագանու անդամին արգելվում է միաժամանակ «1) աշխատել նույն աշխատակազմում, համայնքի բյուջետային հիմնարկներում, լինել համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավար, 2) լինել համայնքի ղեկավար, 3) աշխատել իրավապահ, պետական անվտանգության և դատական մարմիններում»:

Նույն օրենքի հոդված 25-ը սահմանում է, որ «Համայնքի ղեկավարը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի ստեղծագործական, գիտական և մանկավարժական աշխատանքից, լինել ավագանու անդամ»: Նշված անհամատեղելիության

պահանջի ձևակերպումը բխում է նախկին օրենսդրական կարգավորումից և համահունչ չէ «Հանրային ծառայության մասին» ՀՀ 2018թ. մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի հոդված 31-ի պահանջներին:

**Դատավորների** համար «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 5-ի 1-ին մասով սահմանված է, որ «Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից»: Այս դրույթը համահունչ է ՀՃՄ օրենքի հոդված 31-ի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոնի զբաղեցմանը ներկայացվող պահանջին: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 3-րդ մասով համանման կարգավորում է կիրառված նաև սահմանադրական դատարանի դատավորների համար: Դատական օրենսգրքի հոդված 5-ի 4-րդ մասով, կանոնակարգված է նաև ոչ առևտրային կազմակերպություններում դատավորի կողմից պաշտոնների զբաղեցման պայմանները: «Դատավորը կարող է զբաղեցնել պաշտոն ոչ առևտրային կազմակերպությունում, եթե՝ 1) իր գործունեությունն այդ պաշտոնում իրականացնում է անհատույց, և 2) այդ պաշտոնը չի ենթադրում ֆինանսական միջոցների տնօրինում, կազմակերպության անունից քաղաքացիաիրավական գործարքների կնքում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կազմակերպության ներկայացուցչության իրականացում»:

**Դատախազների** համար «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 49-ի 1-ին մասով սահմանված է, որ «Դատախազը չի կարող զբաղեցնել **իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում**, որևէ պաշտոն առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից»:

**Քննիչների** համար գործում է «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի 1-ին մասով սահմանված է, որ «Քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները» դրույթը, որի ուժով կիրառելի կարող են դառնալ ՀՃՄ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված «իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոնի զբաղեցումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» անհամատեղելիության պահանջը: Համանման կարգավորում է գործում «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի 1-ին մասով, որով «Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները»:

**Հանրային ծառայության առանձին տեսակների մասով** «իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոնների զբաղեցումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» անհամատեղելիության պահանջների օրենսդրական կարգավորումների առանձնահատկությունները, ըստ ծառայության առանձին տեսակների ունի հետևյալ պատկերը:

**«Քաղաքացիական ծառայության մասին»** ՀՀ օրենքի հոդված 3-ի 3-րդ մասով, սահմանված է, որ «Քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների և պարտականությունների, սոցիալական երաշխիքների, բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով»: Այսինքն, օրենքը քաղաքացիական ծառայողների բարեվարքությանը վերաբերելի բոլոր հիմնական դրույթները կարգավորում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Զետևաբար, ՀԾՄ օրենքի 31-րդ հոդվածի «իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոնի զբաղեցումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» անհամատեղելիության պահանջի կարգավորումները կիրառելի են քաղաքացիական ծառայողների համար:

Համանման մոտեցում է կիրառված նաև **հարկային և մաքսային ծառայությունների** մասին օրենքներով: Այսպես, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի Հոդված 3-ի 1-ին մասով սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետության հարկային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքից, սույն օրենքից, «Հանրային ծառայության մասին» օրենքից, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից և այլ իրավական ակտերից», իսկ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի 1-ին մասում սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության մասին օրենսդրությունը բաղկացած է սույն օրենքից, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքից, «Հանրային ծառայության մասին» օրենքից, մաքսային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերից և մաքսային ծառայության հարցերը կարգավորող իրավական այլ ակտերից»: Դրա հետ մեկտեղ, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ի 2-րդ մասով սահմանվում է, որ «Հարկային ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներով»:

«Մաքսային ծառայության մասին» (հոդված 48.2), «Փրկարար ծառայության մասին» (հոդված 60), «Քրեակատարողական ծառայության մասին» (հոդված 55.3), «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (հոդված 3, մաս 3) ՀՀ օրենքներում համապատասխան հղում է տրված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին՝ այն է **«(փրկարար, մաքսային, քրեակատարողական, հարկադիր) ծառայողների** բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերությունները, որոնք պարտադիր են հարկադիր, փրկարար, մաքսային, քրեակատարողական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով»: Այսպիսով, փրկարար, մաքսային,

քրեակատարողական, հարկադիր ծառայողների համար նույնպես կիրառելի են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոնի զբաղեցումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» անհամատեղելիության պահանջի օրենսդրական կարգավորումները:

**«Դիվանագիտական ծառայության մասին»** ՀՀ օրենքի հոդված 43-ի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ « 1. Դիվանագետի պարտականություններն են՝ 1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտականությունները.»:

Նույն մոտեցումն է կիրառված նաև **«Համայնքային ծառայության մասին»** ՀՀ օրենքում, որի հոդված 23-ի 1-ին մասում սահմանված է, որ «1. Համայնքային ծառայողը կրում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված հիմնական պարտականությունները»: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված են, որ հանրային ծառայողի պարտականություններն են «հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին հետևելը»: Արդյունքում, դիվանագիտական և համայնքային ծառայողների համար կիրառելի են դառնում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոնի զբաղեցումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» անհամատեղելիության պահանջի օրենսդրական կարգավորումները, որոնք կարգավորված չեն համայնքային և դիվանագիտական ծառայության մասին օրենքներով:

**«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին»** ՀՀ օրենքի հոդված 43-ի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ «Ազգային անվտանգության մարմինների ծառայողն իրավունք չունի լինել Ազգային ժողովի պատգամավոր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնել ընտրովի կամ այլ պաշտոններ»: Արդյունքում, Ազգային անվտանգության մարմինների ծառայողների համար պետական և ՏԻՄ պաշտոնների զբաղեցման անհամատեղելիության պահանջը, ըստ էության սահմանված է:

Ինչ վերաբերում է **«Ոստիկանությունում ծառայության մասին»**, **«Զինվորական ծառայության մասին»** ՀՀ օրենքներին, ապա այդ ոլորտների ծառայողների կողմից «իրենց կարգավիճակով չպայմանավորված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնների զբաղեցման» անհամատեղելիության պահանջի առանձին կարգավորումները բացակայում են: Այս պայմաններում պետք է ենթադրել, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 31-ի անհամատեղելիության պահանջների կարգավորումները ամբողջությամբ կիրառելի են ոստիկանների և զինվորական ծառայողների նկատմամբ, քանի որ նրանք «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ի 3-րդ մասի ուժով ճանաչված են որպես պետական ծառայության տեսակ:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական մարմիններում, ինչպես նաև հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրությամբ, հանրային պաշտոն զբաղեցնող

անձանց և ծառայողների կողմից իրենից կարգավիճակով չպայմանավորված պետական և ՏԻՄ պաշտոնների զբաղեցման անհամատեղելիության պահանջի օրենսդրական կարգավորումների համադրումը ցույց է տալիս, որ սահմանադրական մարմինների համար այս անհամատեղելիության կարգավորումները միասնականորեն չեն կիրառվում և այդ մարմիններում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց գործունեության առանձնահատկություններով պայմանավորված սահմանված չեն առանձնահատուկ կարգավորումներ:

### **Առաջարկություններ**

- 1.3.3 «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում համայնքի ղեկավարին ներկայացվող, մասնավորապես «իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոնի զբաղեցումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» անհամատեղելիության պահանջի մասով սահմանել ՏԻՄ կարգավիճակով պայմանավորված պաշտոնների ցանկ.
- 1.3.4 հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենսդրական ակտերում ապահովել տվյալ ոլորտի ծառայողների նկատմամբ ՀԾՄ օրենքի հոդված 31-ով սահմանված «իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոնի զբաղեցումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» անհամատեղելիության պահանջի կիրարկումը ապահովող դրույթները՝ ներառյալ տվյալ ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված համատեղման թույլատրելի պաշտոնների ցանկերի սահմանումը.
- 1.3.5 ԱԺ պատգամավորների, դատախազների, դատավորների, քննիչների, ինչպես նաև պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող այլ անձանց և հանրային ծառայության առանձին տեսակների ղեկավար (բարձրագույն ու գլխավոր) պաշտոնների խմբի ծառայողների համար համապատասխան ոլորտային օրենքներով, ինչպես նաև՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով, սահմանափակել ոչ առևտրային կազմակերպություններում ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման պաշտոնների զբաղեցումը և կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը:

### ***«Առևտրային կազմակերպությունում որևէ պաշտոնի զբաղեցում» անհամատեղելիության պահանջ***

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից «**որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում զբաղեցնելու**» անհամատեղելիության պահանջը միտված է բացառելու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ժամանակ հանրային և մասնավոր շահերի բախման հնարավորությունները: ՀԾՄ օրենքի հոդված 31-ի 6-րդ մասը սահմանում է, որ «Սույն օրենքի իմաստով՝ առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է՝

1. առևտրային կազմակերպության կառավարման մարմնում ընդգրկված լինելը.
2. առևտրային կազմակերպությունում ցանկացած այլ պաշտոն զբաղեցնելը.
3. առևտրային կազմակերպության գույքի հավատարմագրային կառավարիչ լինելը.
4. սույն մասի 1-3-րդ կետերում նշված դեպքերից բացի, որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառնությունների իրականացմանը ներգրավված լինելը:»

ՀԾՄ օրենքը, առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու անհամատեղելիության պահանջի ներքո կանոնակարգել է նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կառավարման գործընթացներին ներգրավվածությունը: Այսպես, «Հանրային պաշտոն զբաղեցնող անձը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության նախագահի, պատգամավորի, Կառավարության անդամի, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի) կամ հանրային ծառայողը կարող է ընդգրկվել 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում, եթե դա ուղղակիորեն առնչվում է իր պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ՝ առանց վարձատրության կամ որևէ այլ ձևով փոխհատուցում ստանալու կամ հանրային պաշտոն չզբաղեցնող անձանց կամ ոչ հանրային ծառայողների համար նախատեսված սոցիալական երաշխիքներից կամ այլ ծառայություններից կամ արտոնություններից օգտվելու իրավունքի»:

**Պատգամավորների համար** «Աժ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքը Աժ պատգամավորին պարտավորեցնում է պատգամավորական մանդատ ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, «2) ազատվել առևտրային կազմակերպություններում զբաղեցրած պաշտոնից, և 4) հրաժարվել առևտրային կազմակերպությունում ուրիշ գույքի հավատարմագրային կառավարումից» (հոդված 2, մաս 2):

**Դատավորների, դատախազների, քննիչների, համայնքի ղեկավարի և ավագանու համար** առևտրային կազմակերպություններում պաշտոնների զբաղեցման արգելքի կամ անհամատեղելիության պահանջի վերաբերյալ առանձնահատուկ օրենսդրական կարգավորումները համապատասխան ոլորտային օրենքներում բացակայում են՝ բացառությամբ դատավորների, որոնց համար «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հոդված 5-ի 5-րդ մասով դատավորին թույլատրում է անհատուց հիմունքներով հանդես գալ որպես կտակարար կամ գույքի հավատարմագրային կառավարիչ: Մասնավորապես, «Դատավորը չի կարող գործել որպես կտակակատար կամ գույքի հավատարմագրային կառավարիչ, բացառությամբ այն դեպքերի, երբ նա անհատուց գործում է իր մերձավոր ազգականի կամ իր ինսամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձի գույքի կապակցությամբ»:

**Հանրային ծառայության առանձին տեսակների մասով** «առևտրային կազմակերպությունում պաշտոնների զբաղեցումը» անհամատեղելիության պահանջի օրենսդրական կարգավորումների առանձնահատկությունները, առանձին ոլորտային օրենքներում, նույնպես



բացակայում են: Յետևաբար, պետք է եզրակացնել, որ բոլոր հանրային ծառայողների համար գործում է ՀԾՄ օրենքի հոդված 31-ով սահմանված առևտրային կազմակերպություններում պաշտոնի զբաղեցման անհամատեղելիության պահանջը՝ իր կարգավորումներով:

Համանման կարգավորում արձանագրված է Սլովենիայի դեպքում, որի «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 27-րդ հոդվածը<sup>18</sup> տարբերակում է 2 սուբյեկտների, որոնց առնչությամբ նախատեսում է, որ «հանրային պաշտոն զբաղեցնող մասնագիտական անձը (հանրային ծառայողը) չի կարող առևտրային ընկերության, տնտեսական հետաքրքրությունների խմբավորման, կոոպերատիվի, հանրային կառույցի, հանրային հիմնադրամի, հանրային գործակալության կամ հանրային կամ մասնավոր իրավունքով կարգավորվող այլ կառույցի անդամ լինել կամ զբաղված լինել դրանց կառավարման, վերահսկման կամ ներկայացման գործունեությամբ, բացառությամբ հասարակական միավորումների, հիմնադրամների և կուսակցությունների: Նույնը վերաբերում է հանրային պաշտոն զբաղեցնող ոչ մասնագիտական անձանց, այն դեպքերում, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնից բխում է այս կառույցների գործունեության հանդեպ անմիջական վերահսկողության իրականացումը:

### **«Ճեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու» անհամատեղելիության պահանջ**

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողներին ներկայացվող անհամատեղելիության հաջորդ պահանջը՝ **«Ճեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու» արգելքն** է: ՀԾՄ օրենքի հոդված 31-ի 7-րդ և 8-րդ մասերը սահմանում են օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն ճանաչելու պայմանները, ինչպես նաև թվարկվում է ձեռնարկատիրական գործունեություն չհամարվող իրավիճակներն ու գործառնությունները: Այսպես, «ՀԾՄ օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝ ա) անհատ ձեռնարկատեր լինելը, բ) առանց պետական գրանցման կամ հաշվառման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, գ) առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման»: Նույն օրենքի իմաստով՝ «ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում՝

1. վստահության վրա հիմնված ընկերակցության մասնակից ավանդատու (կոմանդիտիստ) լինելը.
2. վարկային կամ ինսյուրական միության ավանդատու կամ անդամ լինելը.
3. առևտրային կազմակերպությունից դուրս գալու կամ դրա լուծարվելու դեպքում հասանելի գույքի մասը կամ դրա արժեք ստանալը.
4. բանկում ավանդ, ապահովագրական կազմակերպությունում ապահովագրական պոլիս ունենալը.

---

<sup>18</sup> «բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքը, <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>

5. Հայաստանի Հանրապետության, համայնքի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր ունենալը.
6. սեփականության իրավունքով պատկանող գույքը վաճառելը կամ որոշակի վճարի կամ հատուցման դիմաց վարձակալության հանձնելը.
7. փոխառության դիմաց տոկոսներ և այլ հատուցում ստանալը.
8. գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար հատուցում (ռոյալթի) ստանալը.
9. պատճառված վնասի (կրած կորստի) դիմաց հատուցում ստանալը»:

Պատգամավորների համար «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի 6-րդ մասով սահմանվում է, որ ձեռնարկատիրական գործունեության եզրույթը բնորոշվում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածի իմաստով: Այսպես, «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի իմաստով՝ «ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես նաև գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանք է համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 24-ով սահմանված համապատասխան գործունեությունը կամ աշխատանքը»: Ինչպես երևում է, այս օրենքում հղումը կատարված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ 2011թ. մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի համապատասխան հոդվածին՝ այն դեպքում, երբ 2018թ. մարտի 29-ի թիվ ՀՕ-206-Ն օրենքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները կարգավորված են հոդված 31-ում:

Համանման կարգավորում է սահմանված **դատավորների համար**: «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «Դատավորի նկատմամբ կիրառելի են հանրային ծառայողի համար ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված կարգավորումները»:

**Դատախազների համար** որպես առանձնահատուկ նորմ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 49-ի 3-րդ մասով սահմանված է, որ «Դատախազն իրավունք չունի լինելու տնտեսական ընկերությունների մասնակից կամ վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատու, եթե, բացի ընկերության ընդհանուր ժողովին մասնակցելուց, դատախազը ներգրավվում է նաև այդ կազմակերպության կարգադրիչ կամ կառավարման այլ գործառնությունների իրականացմանը»: Այս սահմանափակումը մի կողմից վերաբերելի է առևտրային կազմակերպություններում պաշտոնների զբաղեցմանը, մյուս կողմից որպես ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկություն՝ սահմանափակում է

մասնակցությունը տնտեսական ընկերություններին կամ վստահության վրա հիմնված ընկերակցությանը:

**Քննիչների համար** «Քննչական կոմիտեի մասին» և «Հատուկ քննչական ծառայության» մասին օրենքները ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասով առանձնահատուկ կարգավորումներ չեն պարունակում:

**Համայնքի ղեկավարի համար** «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ի 1-ին մասը նշում է, որ «համայնքի ղեկավարը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ», իսկ **համայնքի ավագանու համար**<sup>19</sup> նման անհամատեղելիության պահանջ սահմանված չէ:

**Հանրային ծառայության առանձին տեսակների մասով** «ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու» անհամատեղելիության պահանջի օրենսդրական կարգավորումները, ըստ ծառայության առանձին տեսակների էական առանձնահատկություններ չեն պարունակում: Մասնավորապես, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» (հոդված 43, մաս 1), «Ոստիկանությունում ծառայության մասին» (հոդված 39, մաս 1), «Հարկադիր կատարման ծառայության մասին» (հոդված 30, մաս 1) ՀՀ օրենքներում, համապատասխան ծառայողների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակման եզրույթում ներառված է «անձամբ զբաղվել» բառակապակցությունը: **Քաղաքացիական, փրկարար, հարկային, մաքսային ծառայողների** համար ոլորտային օրենքները համապատասխան հղում են կատարում «Հանրային ծառայության մասին» օրենքին: «**Դիվանագիտական ծառայության մասին**» (հոդված 44, մաս 1), «**Համայնքային ծառայության մասին**» (հոդված 24, մաս 1) ՀՀ օրենքներով սահմանված է, որ դիվանագիտական և համայնքային ծառայողը «իրավունք չունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ»:

Ինչպես արդեն վերևում նշվեց, շահերի բախման, այդ թվում անհամատեղելիության պահանջների օրենսդրական կարգավորման ժամանակակից փորձ ունի Սերբիան: Սերբիայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի<sup>19</sup> հոդվածներ 45 և 46-ով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանված են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակում, ինչպես պաշտոնի ստանձնման պահին, այնպես էլ պաշտոնավարման ընթացքում: Այստեղ, ուրույն մոտեցումն այն է, որ ձեռնարկատիրական գործունեությունը համակցված է այլ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու հետ, որը ավելի ամբողջական է դարձնում գործարար հարաբերությունների գործընթացում հանրային պաշտոնյայի կողմից շահերի բախման իրավիճակներում չհայտնվելու հանգամանքները: Բացի այդ, Սերբիայի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ այլ պաշտոն զբաղեցնելու անհամատեղելիության պահանջի խախտման վերաբերյալ ի հայտ եկած հանգամանքներով պայմանավորված՝ զգուշացնում է

---

<sup>19</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

հանրային պաշտոնյային խախտման վերաբերյալ: Եթե 30 օրյա ժամկետում նման զգուշացում հանրային պաշտոնյան չի ստանում, համարվում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու պահանջի խախտում չկա:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու անհամատեղելիության պահանջի կարևորագույն պայմաններից է «առևտրային կազմակերպությանը մասնակցության» հանգամանքը: ՀԾՄ օրենքի հոդված 31-ի 10-րդ մասում նախատեսված է, որ «Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, **այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման**»: Միաժամանակ, նույն հոդվածի 11-րդ մասում սահմանված է, թե որ անձը՝ իրավաբանական թե ֆիզիկական կարող է լինել հավատարմագրային կառավարիչ «Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ **կարող է լինել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող քաղաքացին կամ ոչ առևտրային կազմակերպությունը**»:

Պետք է նկատել, որ առևտրային կազմակերպությունում մասնակցության (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) հավատարմագրային կառավարման հանձնելու դրույթները հիմնականում կարգավորված են «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» «Գույքի հավատարմագրային կառավարում» գլխում, որտեղ միայն անշարժ գույքի մասով է պահանջվում հավատարմագրային կառավարման պայմանագրերը գրանցել: «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից արժեթղթերը հավատարմագրային կառավարման հանձնելու գործընթացը: Այսպես, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 30-ի 6-րդ մասը սահմանում է բացառություններ, որով օրենքի դրույթները չեն տարածվում «այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի վրա, որն իրականացնում է միայն հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարումը»: Հետևաբար, հանրային պաշտոն զբաղեցնող և հանրային ծառայողների գույքի, այդ թվում բաժնեմասի, հավատարմագրային կառավարման հարցերը կարգավորվում են քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ դրույթներով: Մինչդեռ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, գույքի հավատարմագրային կառավարիչ թույլատրում է լինել «նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող քաղաքացուն կամ ոչ առևտրային կազմակերպությանը» (հոդված 31, մաս 11):

Արդյունքում, հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ընտանիքի անդամը կամ նրանց կողմից հիմնադրած ոչ առևտրային կազմակերպությունները կարող են հանդես գալ որպես գույքի հավատարմագրային կառավարիչներ՝ փաստացի առևտրային կազմակերպության մասնակցության կառավարումը թողնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի վրա: Նման օրենսդրական կարգավորման պայմաններում, ԿԿՀ-ի կողմից

հավատարմագրային կառավարման հանձնելու պահանջի նկատմամբ հսկողության և արժանահավատության ստուգման իրականացումը բարդանում է:

### Առաջարկություններ

- 1.3.6 հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների «ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու» վերաբերյալ անհամատեղելիության պահանջի օրենսդրական կարգավորումը ամբողջությամբ իրականացնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, կամ «Հասերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների ու նվերների ընդունման արգելքի» մասին առանձին օրենքով.
- 1.3.7 ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու անհամատեղելիության պահանջի առանձին ոլորտային առանձնահատկությունները սահմանել կոնկրետ ոլորտային օրենքներով՝ իսկ գործող ոլորտային օրենքներում ուժը կորցրած ճանաչել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասին ընդհանրական դրույթները.
- 1.3.8 մշակել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի, առևտրային կազմակերպությունում մասնակցության (բաժնեմասը, բաժնետոմսը, փայր) հավատարմագրային կառավարման հանձնելու օրենսդրական կարգավորում՝ այն հաշվով, որ սահմանափակվեն ընտանիքի անդամներին, ինչպես նաև մերձավոր ազգակցությամբ ու խնամիությամբ կապված անձանց հավատարմագրային կառավարման հանձնելու հնարավորությունները կամ ներդնել «կույր կառավարիչներ»-ի ինստիտուտը.
- 1.3.9 օրենսդրորեն սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրերի գրանցման և հաշվառման ռեեստր կամ կարգ:

### *«Այլ վճարովի աշխատանք» անհամատեղելիության պահանջ*

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի անհամատեղելիության վերջին պահանջը վերաբերում է «**այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից**» սահմանափակմանը: ՀԾՄ օրենքի 31-րդ հոդվածի 12-16 մասերը կարգավորում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, այդ թվում հանրային ծառայողների գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի շրջանակները, սահմանում՝ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի նկատմամբ պաշտոնական պարտականությունների կատարման գերակայության և նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող և պաշտոնատար անձ չհանդիսացող անձին հավասար վճարում ստանալու հանգամանքը:

Այսպես, ՀԾՄ օրենքը սահմանում է, որ «12. **Սույն օրենքի իմաստով՝ գիտական աշխատանք է համարվում** գիտական կազմակերպությունում, հիմնարկում, բարձրագույն ուսումնական հաստատությունում կամ այլ կերպ գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական,

գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակրոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական աշխատանքներ կատարելը:

**13. Սույն օրենքի իմաստով՝ կրթական աշխատանք է համարվում** ուսուցիչ, դասախոս (ասիստենտ) աշխատելը կամ հանրակրթական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող այլ աշխատանք կատարելը:

**14. Սույն օրենքի իմաստով՝ ստեղծագործական աշխատանք է** համարվում մշակույթի և արվեստի երկեր, գեղարվեստական, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ և արհեստներ, բանահյուսություն, բարոյագիտական և գեղագիտական գաղափարատիպեր (հղեալներ), վարվեցողության կանոններ և ձևեր, լեզուներ, բարբառեր և խոսվածքներ, ազգային ավանդույթներ և սովորույթներ, պատմաաշխարհագրական տեղանուններ, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքներ և մեթոդներ, մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ) ստեղծելը կամ մեկնաբանելը:

15. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի հանդեպ:

16. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, պաշտոնատար անձ չհանդիսացող անձը կարող էր հավակնել»:

**ԱԺ պատգամավորի համար** նույնաբովանդակ դրույթներ են արձանագրված «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ում, որտեղ նշված է, որ «Սույն օրենքի իմաստով՝ ..... գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանք է համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով սահմանված համապատասխան գործունեությունը կամ աշխատանքը: Պատգամավորին գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել ողջամիտ չափը, այսինքն՝ այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, բայց պատգամավոր չհամարվող անձը կարող է հավակնել: Պատգամավորական լիազորությունների իրականացման հետ կապված պատգամավորի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի կամ օրենքով չարգելված այլ աշխատանքային գործունեության նկատմամբ»:

**Դատավորների համար** «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հոդված 5-ի 1-ին մասով սահմանված է, որ « Դատավորը չի կարող ... կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից», իսկ հոդված 72-ի 1-ին մասով կարգավորված է, որ «Դատավորին գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել ողջամիտ չափը, այսինքն՝ այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, բայց դատավոր չհանդիսացող անձը կարող էր հավակնել»: Դատական օրենսգիրքը չի սահմանում «գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքների» շրջանակը և այդ մասով չունի հղում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին:

**Դատախազների համար** «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 49-ի 1-ին մասով դատախազը չի կարող «... կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից»: Այս անհամատեղելիության պահանջի կարգավորման մասով նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ «Դատախազի կողմից իրականացվող գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքը չպետք է խոչընդոտի իր պարտականությունների իրականացմանը»: Գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի կարգավորման այլ դրույթներ օրենքը չի սահմանում և հղում չի տալիս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին:

**Քննիչների համար** «Քննչական կոմիտեի մասին» և «Հատուկ քննչական ծառայության» մասին ՀՀ օրենքները այլ վճարովի աշխատանք, բացառությամբ գիտական կրթական և ստեղծագործական աշխատանքի մասով առանձնահատուկ կարգավորումներ չեն պարունակում: Այդ օրենքներով հղում է տրվում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին:

**Համայնքի ղեկավարների համար** «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ի 1-ին մասով սահմանված է, որ համայնքի ղեկավարը չի կարող « ... կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, **մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից**»: Համայնքի ավագանու մասով անհամատեղելիության նման պահանջ սահմանված չէ: Այստեղ պահպանված է անհամատեղելիության պահանջի հին ձևակերպումը, որը փոփոխության է ենթարկվել «Հանրային ծառայության մասին» 2018թ. մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը անհամատեղելիության այս պահանջի մասով այլ կարգավորումներ չի պարունակում և հղում չի տրված ՀԾՍ օրենքին:

**Հանրային ծառայության առանձին տեսակների մասով** «այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից» անհամատեղելիության պահանջը, ըստ ծառայության առանձին տեսակների, առանձնահատուկ օրենսդրական կարգավորումներ չեն պարունակում: Այսպես, «**Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին**» (հոդված 43, մաս 1), «**Ոստիկանությունում ծառայության մասին**» (հոդված 39, մաս 1), «**Հարկադիր կատարման ծառայության մասին**» (հոդված 30, մաս 1), «**Համայնքային ծառայության մասին**» (հոդված 25, մաս 1) ՀՀ օրենքներում, համապատասխան ծառայողների կողմից «վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից» կատարելու սահմանափակման

ձևակերպումը «կրթական» եզրույթի փոխարեն դեռևս պահպանված է «մանկավարժական» բառակապակցությունը, որը փոփոխության է ենթարկվել «Հանրային ծառայության մասին» 2018թ. մարտի 23-ի ՀՕ- 206-Ն օրենքով: **Քաղաքացիական, փրկարար, հարկային, մաքսային ծառայողների** համար ոլորտային օրենքները համապատասխան հղում են կատարում «Հանրային ծառայության մասին» օրենքին:

«**Դիվանագիտական ծառայության մասին**» (հոդված 44, մաս 1) ՀՀ օրենքով սահմանված է, որ դիվանագիտական ծառայողը «իրավունք չունի կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից»:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս հանրային ծառայության ոլորտային օրենսդրության վերլուծությունը, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների «**այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից**» անհամատեղելիության պահանջի համապարփակ կարգավորումները տրված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում, իսկ հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենքները, ինչպես նաև ԱԺ պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների, համայնքի ղեկավարների ու ավագանու անդամների, ինչպես նաև ինքնավար պաշտոն զբաղեցնող այլ պաշտոնների մասով կոնկրետ ոլորտային օրենքներում գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի շրջանակի և այլ վճարովի աշխատանքի մասով առանձնահատուկ կարգավորումները բացակայում են: Դրա հետ մեկտեղ, հանրային ծառայության առանձին խումբ ծառայողների մասով ուղղակի հղում է կատարված ՀԾՄ օրենքին, մյուսների դեպքում՝ դեռևս պահպանված է «գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանք» եզրույթը: ԱԺ պատգամավորների մասով ՀԾՄ օրենքի հոդված 24-ին հղումը հնացած է և կարիք ունի համապատասխանեցման 2018թ. մարտի 29-ին ընդունված ՀԾՄ օրենքի հոդված 31-ի պահանջներին:

Այդուհանդերձ, ՀԾՄ օրենքով, գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի շրջանակի սահմանումը, ինչպես նաև պատգամավորի կողմից նման տեսակի աշխատանքների իրականացման կարգավորումները միանշանակ ու հստակորեն տարանջատված չեն:

Նախ, ինչպես նշվեց «իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոնների զբաղեցումը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում» անհամատեղելիության պահանջի օրենսդրական կարգավորումներ բաժնում, ՀԾՄ օրենքը չի սահմանափակում հանրային պաշտոն զբաղեցնող անձին և հանրային ծառայողներին զբաղեցնել պաշտոն ոչ առևտրային կազմակերպություններում: Որպես կանոն, Հայաստանում, գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքը իրականացվում է ոչ առևտրային կարգավիճակ ունեցող կազմակերպությունների միջոցով և դրանց աշխատակիցները չեն համարվում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով հանրային ծառայողներ կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (ՀԾՄ օրենք հոդված 3 և գլուխ 2): Արդյունքում, հանրային պաշտոն զբաղեցնող անձը և հանրային ծառայողը կարող են, ըստ էության պաշտոն զբաղեցնել ցանկացած ոչ առևտրային կազմակերպությունում, այդ թվում գիտական, կրթական,



ստեղծագործական գործունեություն իրականացնող կազմակերպությունում և դրա դիմաց ստանալ վարձատրություն:

Երկրորդ, ՅՄՄ օրենքում (հոդված 31, մաս 12) գիտական գործունեություն կամ աշխատանք է համարվում գիտական կազմակերպությունում, հիմնարկում, բարձրագույն ուսումնական հաստատությունում **կամ այլ կերպ գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական** աշխատանքներ կատարելը: Այստեղ ինդրահարույց է և միանշանակ չի մեկնաբանվում «**այլ կերպ** գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական աշխատանքներ կատարելը», որը «մեծ դուռ է բացում» գիտական և գիտահետազոտական աշխատանքների եզրույթի շրջանակի որոշման մասով և ԿԿԴ-ին ստիպում յուրաքանչյուր արձանագրված դեպքի մասով կայացնելու «այլ կերպ» դրույթի մեկնաբանություններ: ՅՄՄ օրենքով «գիտական գործունեություն և աշխատանք» եզրույթը չի համապատասխանում «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին: Այսպես, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով (հոդված 1) տարանջատված է «գիտական աշխատող» և «գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություն» հասկացությունների շրջանակները, որոնք ներառում են միայն «գիտական կազմակերպություններում, հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական, հետախուզական աշխատանքներ կատարող անձանց», կազմակերպություն, որը «անկախ իր կազմակերպական-իրավական ձևից, հիմնականում իրականացնում է գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն, զբաղվում է գիտական կադրերի պատրաստմամբ»: Այս համադրությունից պարզվում է, որ **երկրաբանա - հետախուզական աշխատանքները, ինչպես նաև գիտամանկավարժական կադրերի պատրաստում աշխատանքները** չեն ներառվել ՅՄՄ օրենքի գիտական գործունեություն հասկացության ներքո: Անհրաժեշտ է հստակություն մտցնել գիտական աշխատանք իրականացնող կազմակերպությունների ցանկում հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Երրորդ, ՅՄՄ օրենքը **կրթական աշխատանք է համարում** «ուսուցիչ, դասախոս (ասիստենտ) աշխատելը կամ հանրակրթական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, **ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող այլ աշխատանք կատարելը**»: Նման աշխատանքի շրջանակը շատ լայն է եթե հաշվի առնենք, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքը (հոդված 3 կետ 1.1) ուսուցումը դիտում է, որպես «...կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը»: Նման

իրավիճակում ԿԿԶ-ը նույնպես պետք է, յուրաքանչյուր առանձին դեպքում, պարզաբանում ներկայացնի հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ ծառայողին նրա կողմից իրականացված այլ վճարովի աշխատանքը կրթականին համապատասխանության վերաբերյալ:

Չորրորդ, համանման խնդիրներ են առաջանալու հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից «ստեղծագործական աշխատանքով» զբաղվելու իրավիճակների պարզաբանման գործում: Ստեղծագործական աշխատանք եզրույթի սահմանումը «Չանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը (հոդված 31 մաս 14) պատճենել է «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի «մշակութային արժեքներ՝ մշակույթի և արվեստի երկեր, գեղարվեստական ժողովրդական ստեղծագործություններ և արհեստներ, բանահյուսություն, բարոյագիտական և գեղագիտական գաղափարատիպեր (իդեալներ), վարվեցողության կանոններ և ձևեր, լեզուներ, բարբառեր և խոսվածքներ, ազգային ավանդույթներ և սովորույթներ, պատմաաշխարհագրական տեղանուններ, մշակութային գործունեության մասին գիտական հետազոտությունների արդյունքներ և մեթոդներ, մշակութային ժառանգության առարկաներ (օբյեկտներ)» և «ստեղծագործական գործունեություն՝ մշակութային արժեքների ստեղծում և մեկնաբանում» հասկացությունների սահմանումից:

Հինգերորդ, «այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից», անհամատեղելիության պահանջի կարգավորման հարցերի շարքում դեռևս խնդրահարույց է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից **հանրային մի շարք ոլորտներում գործունեության ծավալումը**: Խոսքը, մասնավորապես վերաբերում է առողջապահության ոլորտում բժշկական գործունեության, սպորտի ոլորտում պրոֆեսիոնալ սպորտով զբաղվելու, ինչպես նաև լրագրողական գործունեություն իրականացնելուն: Նշված ոլորտներում այլ վճարովի աշխատանք կատարելու իրավիճակային դեպքերը բավականին տարածված են:<sup>20</sup> Օրինակ՝ նման դեպքերը վերաբերել են պատգամավորի և նախարարի կողմից ոչ ստանդարտ և խիստ մասնագիտական վիրահատությունների իրականացմանը կամ պրոֆեսիոնալ մարզիկի կողմից միջազգային մրցույթներին կամ մրցաշարերին մասնակցությանը կամ աշխարհահռչակ լրատվական գործակալությունների համար նյութերի ու ռեպորտաժների պատրաստմանը և այլն: ՀԾՄ օրենքը այս ոլորտներում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների համար ոչ մի կարգավորումներ չունի, մինչդեռ, առկա են օբյեկտիվ հիմնավորումներ առ այն, որ այդ պաշտոնյաները ոչ թե լրացուցիչ վարձատրություն ստանալու նպատակ են հետապնդում, այլ նրանք չեն ցանկանում կորցնել իրենց մասնագիտական որակները, որոնք ժամանակի ընթացքում, եթե այդ գործունեությամբ չզբաղվեն, ապա հետագայում չեն կարողանա շարունակել նման գործունեությամբ զբաղվել կամ կզրկվեն լիցենզիաներից կամ դուրս կմնան մրցապայթարից: Այս և նման կոնկրետ

---

<sup>20</sup> Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը իր գործունեության ընթացքում մի շարք պարզաբանումներ է տվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից առողջապահության, սպորտի կամ լրագրության ոլորտում իրականացրած վճարովի աշխատանքը գիտական, կրթական կամ ստեղծագործականին դասելու հարցերին:

դեպքերի համար ՀԾՄ և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքները ոչ մի կարգավորումներ չեն պարունակում:

Օրինակ Սերբիայի դեպքում, գիտական, կրթական, ստեղծագործական գործունեության հետ միաժամանակ դիտարկվում են նաև հումանիտար (մարդասիրական ) և սպորտի ոլորտները: Միաժամանակ, Սերբիայի օրենսդիրը կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահում է լիազորություն կասեցնելու կամ սահմանափակելու հանրային պաշտոնյաների կողմից այդ ոլորտներում գործունեություն ծավալելը, եթե այդ գործունեությունը վտանգում է պետական կամ ՏԻ մարմնի անաչառությանը կամ ազդում է հանրային պաշտոնյայի հեղինակության վրա և (կամ) այն իր մեջ պարունակում է շահերի բախում: Մյուս կարգավորման գործիքը, դա հանրային պաշտոնյանին նշանակած, ընտրած կամ առաջադրած մարմնի կողմից հանրային պաշտոնյայի կողմից նման գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ համաձայնության տրամադրումն է և վերոնշյալ համաձայնության հետ Սերբիայի կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համաձայնությունը կամ եզրակացությունը ստանալն է: Եթե հանձնաժողովը չի արձագանքում 15 -օրյա ժամկետում, նշանակում է, որ համաձայնությունը տրված է:<sup>21</sup> Սլովենիան, ունի գրեթե նույնական կամ նվազագույնը համանման կարգավորումներ այս հարցի շուրջ:

Այսպիսով, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ

- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքից զատ, հանրային ծառայության այլ ոլորտային օրենքներով, ըստ էության, ոչ մի լրացուցիչ առանձնահատուկ կարգավորումներ չեն իրականացվում, չեն պարունակում անհամատեղելիության պահանջների մանրամասնեցված մեկնաբանություններ ու պարզաբանումներ: Առկա կամ գործող օրենսդրական կարգավորումները ընդամենը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողներին ներկայացվող սահմանափակումների ընդհանրական ձևակերպումներ են, որոնք պահպանվել են դեռևս 2011թ.-ից և շատ դեպքերում պարունակում են անհամատեղելիության պահանջի սահմանման տարբեր եզրույթներ:
- Հանրային ծառայության առանձին ոլորտներում համայնքային, դիվանագիտական, հարկադիր, ոստիկանական, ազգային անվտանգության և այլ ծառայությունների մասին օրենքներում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մասին, դատախազության մասին, դատական օրենսգիրք սահմանադրական օրենքներում անհամատեղելիության պահանջները ներառված են պաշտոնյաներին և ծառայողներին ներկայացվող ընդհանուր սահմանափակումների հոդվածի ներքո, իսկ ՀԾՄ օրենքը տարանջատել է անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներից և նվերների ընդունման արգելքից:
- Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների միակ առանձնահատկությունը վերաբերելի է համայնքի ավագանուն: ՀԾՄ

---

<sup>21</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը, Հոդված 46: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

օրենքը, հողված 31-ի անհամատեղելիության պահանջների բոլոր դրույթները կիրառելի ու պարտադիր է դարձրել համայնքի ավագանու համար: Մինչդեռ, ավագանին, իր կարգավիճակով և գործունեության շրջանակով լիարժեքորեն չի իրականացնում հանրային պաշտոնյաներին վերապահված լիազորություններ, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի հողված 19-ով օրենսդիրը ավագանու համար միայն նախատեսել է որոշ պաշտոններում համատեղ աշխատելու անհամապատասխանության պահանջ, որի առկայության պայմաններում չի կարող զբաղեցնել ավագանու պաշտոնը: Այս պայմաններում առաջանում է անհամապատասխանություն ՅԾՄ և Տեղական ինքնակառավարման մասին օրենքների միջև:

- ՅԾՄ օրենքով անհամատեղելիության պահանջների օրենսդրական կարգավորումները կարիք ունեն հստակ և կոնկրետ մեկնաբանությունների: Հատկապես, դա կարևորվում է շահերի բախման նոր սահմանման շրջանակներում շահերի բախման իրավիճակները անհամատեղելիության պահանջներին դասելու հանգամանքներն ու պայմանները որոշելու ժամանակ: Այս տեսանկյունից խիստ պահանջված է միջազգային փորձին համահունչ «Շահերի բախման բացահայտման ու կառավարման» ուղեցույցում ունենալ շահերի բախման իրավիճակների գնահատման, անհամատեղելիության պահանջներին վերաբերելի հստակ ու կոնկրետ մեկնաբանություններ և պարզաբանումներ՝ կոնկրետ օրինակներով:

#### **Առաջարկություններ**

- 1.3.10 հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից «այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից», անհամատեղելիության պահանջի օրենսդրական կարգավորումը ամբողջությամբ իրականացնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով կամ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ընդհանրական առանձին օրենքով:
- 1.3.11 «այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից» անհամատեղելիության պահանջի առանձին ոլորտային առանձնահատկությունները սահմանել կոնկրետ ոլորտային օրենքներով, իսկ գործող ոլորտային օրենքներում ուժը կորցրած ճանաչել «այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից» ընդհանրական դրույթները.
- 1.3.12 «Հանրային ծառայության մասին» օրենքի «այլ սահմանափակումներ» հողված 32-ում լրացումներ և փոփոխությունների կատարման միջոցով՝ սահմանափակել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, (հատկապես քաղաքական պաշտոնյաների կողմից) և հանրային ծառայողների ղեկավար (բարձրագույն ու գլխավոր) խմբի ծառայողների կողմից ոչ առևտրային կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման պաշտոնների զբաղեցումը կամ գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը, ինչպես նաև գիտական, կրթական և ստեղծագործական գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում հաստիքով վարձատրություն ստանալը.

- 1.3.13 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 31-ի 12-րդ մասի դրույթները համապատասխանեցնել «Գիտական և գիտահետազոտական գործունեության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին: Միաժամանակ, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ հստակեցնել, կրթական գործունեության և ստեղծագործական աշխատանքի շրջանակները՝ ըստ կրթությունն իրականացնող կազմակերպությունների և ստեղծագործական աշխատանքի ոլորտների՝ սահմանելով նշված գործունեությանը համապատասխանող կազմակերպությունների ցանկեր:
- 1.3.14 հիմք ընդունելով միջազգային փորձը և Հայաստանում ձևավորված պրակտիկան, քննարկել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով առողջապահության, սպորտի և լրագրության, ինչպես նաև համանման այլ ոլորտներում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, ղեկավար ու բարձրագույն խմբի ծառայողների կողմից այլ վճարովի աշխատանք կատարելու կամ համատեղությամբ աշխատելու հնարավորությունները:
- 1.3.15 հիմք ընդունելով միջազգային փորձը՝ հանրային պաշտոնյաների կողմից այլ վճարովի աշխատանք՝ բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքով զբաղվելու անհամատեղելիության պահանջի կարգավորման նպատակով, ներդնել հանրային պաշտոնյային կամ ծառայողին պաշտոնի նշանակողի կամ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող կողմից գիտական, ստեղծագործական և կրթական գործունեության ոլորտներում այլ վճարովի աշխատանքով զբաղվելու համաձայնության, իսկ ԿԿՀ-ի կողմից նման գործունեությամբ զբաղվելու մասին համաձայնության կամ եզրակացության տրամադրման կանոնակարգ:

#### 1.4 Այլ սահմանափակումներ

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հետ սահմանել է նաև «այլ սահմանափակումների» արգելքներ: Այլ սահմանափակումները նույնպես իրենցից ներկայացնում են մի մասով պոտենցիալ, իսկ մյուս մասով հնարավոր փաստացի շահերի բախման իրավիճակներ: Դրանց շարքում առանձնանում են նաև զուտ իրավիճակային շահերի բախման դեպքեր, որոնք սահմանափակումների տեսք են ստացել: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց «Այլ սահմանափակումները» ամփոփված են ՀԾՄ օրենքի հոդված 32-ի 1-ին մասով, որով հանրային պաշտոն զբաղեցնող անձին և ծառայողին արգելում է.

1. «լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկվում է իր կողմից.
2. որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

3. իր պաշտոնական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար.
4. հոնորար ստանալ պաշտոնական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար.
5. ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը.
6. համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ.
7. պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա ընթացքում»:

**Պատգամավորի**, որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքը և «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքը «այլ սահմանափակումներ»-ին վերաբերելի դրույթներ չեն պարունակում և դրանով նրանց վրա չի տարածվում վերոնշյալ սահմանափակումները: Մինչդեռ, «այլ սահմանափակումները» էական նշանակություն ունեն պատգամավորի գործունեության բարեվարքության կարգավորման և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման գործում:

**Դատավորների** մասով «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը դատավորին ներկայացվող սահմանափակումների շարքում դիտարկում է «դատավորի կողմից նվերներ ընդունելու» (հոդված 73), «որևէ կուսակցության անդամ կամ հիմնադիր, կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ելույթներ ունենալ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ» (հոդված 4, մաս 1,2 ), «հանդես չգալ որպես ներկայացուցիչ կամ չտրամադրել խորհրդատվություն, այդ թվում՝ անհատույց հիմունքներով» (հոդված 69, մաս 1), «այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել պաշտոնական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունը» (հոդված 70, մաս 2) սահմանափակումները: ՀԾՄ օրենքով սահմանված մյուս սահմանափակումների՝ «որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքման, համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց հետ, պաշտոնից ազատվելուց հետո այլ պաշտոնների զբաղեցման» սահմանափակումների մասով կարգավորումներ չի պարունակում:

**Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների** մասով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը համայնքի ղեկավարի և ավագանու համար նույնպես այլ սահմանափակումներ չեն սահմանում:

**Դատախազների համար** «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 49-ի մաս 4-ում սահմանված են «լինել երրորդ անձանց ներկայացուցիչ», «իր պաշտոնական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար...», «հոնորար ստանալու պաշտոնական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների համար», «ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու կյուրատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները», «համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ ինսամիությամբ կապված անձանց հետ» սահմանափակումները: ՀԾՄ օրենքով սահմանված «որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքման, պաշտոնից ազատվելուց հետո այլ պաշտոնների զբաղեցման» սահմանափակումների մասով կարգավորումներ չի պարունակում: Միաժամանակ, նույն օրենքի հոդված 7-ում, կանոնակարգված է դատախազի ապաքաղաքականացվածության հարցերը, մասնավորապես դատախազը, «չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ, մասնակցել նախընտրական, ինչպես նաև հանրաքվեի նախապատրաստելիս իրականացվող քարոզչությանը, իրավունք չունի կազմակերպելու այնպիսի հավաքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա քաղաքական չեզոքությունը»:

**Քննիչների համար** «Քննչական կոմիտեի մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքները այլ սահմանափակումների մասով առանձնահատուկ կարգավորումներ չեն պարունակում: Այդ օրենքներով քննիչներին ներկայացվող սահմանափակումների մասով հղում է տրվում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին: Առանձնահատուկ կարգավորումները վերաբերում են քննիչների քաղաքական զսպվածության և չեզոքության ապահովմանը: Այսպես, «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի 2-րդ մասը սահմանում է, որ «Քննչական կոմիտեի ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Քննչական կոմիտեի ծառայողը յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն»: Համանման կարգավորում է պարունակում նաև «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը, որի հոդված 11-ի 2-րդ մասով սահմանված է, որ «Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն»:

**Հանրային ծառայության առանձին տեսակների մասով քաղաքացիական, փրկարար, հարկային, մաքսային, քրեակատարողական ծառայողների** համար «այլ սահմանափակումներ»-ը ամբողջությամբ կարգավորված են ՀԾՄ օրենքի հոդված 32-ի դրույթներով: Ի լրումն դրան, փրկարար, քրեակատարողական, մաքսային, հարկային ծառայողները «իրավունք չունեն լինելու ներկայացուցիչ դատարանում, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի», իսկ փրկարար, ոստիկանական, ազգային անվտանգության մարմիններում ծառայողներին արգելվում է «լինելու որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվելու քաղաքական գործունեությամբ.3) կազմակերպելու գործադուլներ կամ մասնակցելու դրանց»:

«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» (հոդված 43,մաս 3), «Ոստիկանությունում ծառայության մասին» (հոդված 39,մաս 3), «Հարկադիր կատարման ծառայության մասին» (հոդված 30,մաս 3), «Դիվանագիտական ծառայության մասին» (հոդված 44,մաս 2), «Համայնքային ծառայության մասին» (հոդված 24,մաս 3) ՀՀ օրենքներում առանձին հոդվածներով կարգավորված են տվյալ ծառայողներին ներկայացվող սահմանափակումները, որոնք մեծամասամբ կրկնում են ՀՃՄ օրենքով հանրային ծառայողների համար սահմանված այլ սահմանափակումները՝ որոշ դեպքերում բացառելով «պաշտոնից ազատվելուց հետո այլ պաշտոնների զբաղեցման» սահմանափակումը և ներառելով պաշտոնեական պարտականություններով պայմանավորված նվերներ ընդունելու սահմանափակումը:

Ընդհանուր առմամբ, ՀՃՄ օրենքը թվարկում է միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների «այլ սահմանափակումներ»-ը, առանց տրամադրելու դրանց կարգավորման կառուցակարգերը ու գործիքները, առանձին սահմանափակումների առանձնահատուկ եզրույթների, պայմանների ու պահանջների պարզաբանումները: ՀՃՄ օրենքի հոդված 32-ի 2-րդ մասում նշվում է, որ հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով կարող են սահմանվել լրացուցիչ սահմանափակումներ: Այսպիսով, հանրային ծառայության առանձին ոլորտների այլ սահմանափակումների օրենսդրական կարգավորումների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում կրկնում են ՀՃՄ օրենքով սահմանվածներին, չունեն կոնկրետ ոլորտային առանձնահատկություններ, կիրարկման գործիքներ և կառուցակարգեր:

Ինչպես վկայում է Սերբիայի, Սլովենիայի և Լիտվայի կոռուպցիայի կանխարգելման օրենսդրական փորձը՝ «այլ սահմանափակումներ» հասկացությունն առկա չէ: Այսինքն, այդ երկրների օրենսդրությամբ տարանջատված չեն անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներից: Դրանք բոլորը ներկայացված են կոռուպցիայի կանխարգելումը կանոնակարգող օրենսդրության «շահերի բախման» գլխում: Այսպես, Սերբիայի Հանրապետության «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի «շահերի բախում» ընդհանրական բաժնում, Սլովենիայի «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի «շահերի բախում, նվերների ընդունման նկատմամբ վերահսկողություն» գլխում, Լիտվայի «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» օրենքի<sup>22</sup> «պետական և ՏԻՄ պաշտոնյաներին ներկայացվող պահանջներ» բաժնում սահմանված են հանրային պաշտոնյաներին ներկայացվող բոլոր տեսակի պահանջները՝ անհամատեղելիության, այլ սահմանափակումների և նվերների ընդունման արգելքների տեսքով:

---

<sup>22</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը, հոդված 46: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>, «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» Լիտվայի օրենքը: <https://e-seimas.lrs.lt/portal/legalActPrint/lt?fwid=rivwzvpvg&documentId=TAIS.46177&category=TAD>, «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքը: <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>



## Առաջարկություններ

- 1.4.1 Աժ պատգամավորի, դատավարի, դատախազի, համայնքի ղեկավարի, հանրային ծառայողների «այլ սահմանափակումների» պահանջի կարգավորմանը վերաբերելի դրույթների օրենսդրական կարգավորումը իրականացնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով կամ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» նոր մշակվելիք օրենքի նախագծով՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձին և ծառայողներին ներկայացվող սահմանափակումներին համապատասխան, շահերի բախման կարգավորման ընդհանուր դրույթների շրջանակում.
- 1.4.2 հանրային ծառայության առանձին ոլորտների համար սահմանել այլ սահմանափակումների կոնկրետ ոլորտային առանձնահատկությունները ապահովելով՝ ծառայողներին ներկայացվող «այլ սահմանափակումներ»-ի կիրարկման պայմանները, պահանջները, կառուցակարգերը ու սահմանափակման պահանջների նկատմամբ վերահսկողության գործիքները.
- 1.4.3 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով «այլ սահմանափակումներ»-ի յուրաքանչյուր տեսակի համար նախատեսել առանձին հոդված, որով սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կոնկրետ սահմանափակման շրջանակը, կիրառման պահանջները և պայմանները, դրանք կիրառող պաշտոնատար անձանց և մարմինների շրջանակը, պահպանման նկատմամբ վերահսկողության գործիքները և կառուցակարգերը.
- 1.4.4 «Շահերի բախման բացահայտման և կառավարման» մշակվելիք ուղեցույցում կոնկրետ օրինակներով ներկայացնել յուրաքանչյուր սահմանափակման վերաբերյալ մեկնաբանություններ և պարզաբանումներ:

### **«Տվյալ մարմնում երրորդ անձանց ներկայացուցիչ հանդիսանալու» սահմանափակում**

«Լինել երրորդ անձանց ներկայացուցիչն այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկվում է իր կողմից» սահմանափակումը (ՀԾՄ օրենք, հոդված 32, մաս 1) իրենից ներկայացնում է պաշտոնատար անձի կողմից իրեն օրենսդրությամբ վերապահված գործառույթների իրականացման ժամանակ «լոբբիստական գործունեությամբ» զբաղվելու արգելք: Լոբբիստական գործունեությունը սահմանվում է, որպես «անհատի ցանկացած շփում պետական պաշտոնյայի հետ՝ երրորդ կողմի շահերի համար՝ օրենսդրական, վարչական կամ դատական որոշման վրա ազդելու համար, եթե դա չի իրականացվում որպես սահմանված ընթացակարգով պաշտոնական դիրքի ներկայացում կամ իրավաբանական խորհրդատվություն կամ քաղաքական կուսակցությունների գործունեության արդյունք»:<sup>23</sup>

---

<sup>23</sup> Hoppe T. (2014), *A study on the feasibility of a Council of Europe legal instrument on the legal regulation of lobbying activities*, prepared for the Council of Europe's European Committee on Legal Co-operation (CDCJ), at no. B.12/page 37, <https://rm.coe.int/16807095fd>

Հանրային շահերի ներկայացման, ինչպես նաև քաղաքական, վարչական կամ դատական որոշումների կայացման, ձևավորման և օրենսդրության կատարելագործման գործում կարևոր դերակատարում ունի լրբֆիստական գործունեությունը: Սակայն լրբֆիստական գործունեության ապօրինի օգտագործումը ծայրահեղ վտանգավոր է: Լրբֆիստական գործունեության բացասական ազդեցության շարքում նախ առանձնանում է պաշտոնատար անձանց ոչ պատշաճ փոխհարաբերությունները կամ դրանց սերտաճումը լրբֆիստական գործունեություն իրականացնողների հետ՝ հանգեցնելով կոռուպցիոն արտոնությունների տրամադրման կամ կաշառքների փոխանակմանը: Երկրորդ՝ դրանք կարող են պայմանավորված լինել կորպորատիվ և ազդեցիկ տնտեսական խմբերի շահերի դերակատարմամբ, երբ ազդեցությունը քաղաքական, վարչական որոշումների կայացման ժամանակ կարող է գերիշխել: Արդյունքում, հանրության մեջ կաճի անվստահությունը քաղաքական իշխանության նկատմամբ՝ փոխելով հանրության ընկալումները, առ այն, որ քաղաքականության հիմնական որոշումներն ընդունվում են ոչ թափանցիկ և անարդար ձևով, իսկ հանրությանը զրկում մասնակցելու ազգային-քաղաքական օրակարգի ձևավորմանը և իրականացմանը:

Չնայած վերոնշյալ մտահոգություններին և պոտենցիալ կոռուպցիոն ռիսկերին, լրբֆիստական գործունեությունը որոշ երկրներում դարձել է հանրային կյանքի բաղկացուցիչ մասը և միջազգային կազմակերպություններն ու ստանդարտները պահանջում են ապահովել լրբֆիստական գործունեության կարգավորումները բարեվարքության համակարգերում: Աշխարհի առնվազն 20 երկրներում գործում է լրբֆիստական գործունեության կարգավորման հատուկ կանոնակարգեր: Որպես ամենաառաջադեմ համարվում են Կանադայի, Իռլանդիայի և Միացյալ Նահանգների լրբֆիստական գործունեության վերաբերյալ կարգավորումները, իսկ Ավստրալիայի և Իռլանդիայի լրբֆիստական գործունեության վերաբերյալ օրենսդրական կարգավորումները համարվում են, որպես «պարզ սահմանումների լավ օրինակներ»:<sup>24</sup>

ԳՐԵԿՈՒ-ն «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի վերաբերյալ չորրորդ փուլի գնահատման զեկույցում (Հանձնարարական ii.կետ 14) առաջարկել է՝ «i) ընդունել պատգամավորների վարքագծի կանոնագիրք և այն հեշտ հասանելի դարձնել հանրության համար, որով հստակ ուղղորդում կապահովվի շահերի բախման և հարակից ոլորտներին, մասնավորապես՝ նվերների և այլ առավելությունների ընդունմանը, անհամատեղելիության դեպքերին և լրացուցիչ գործունեությանը, ֆինանսական շահերին, տեղեկատվության և պետական ռեսուրսների ոչ իրավաչափ օգտագործմանը և երրորդ կողմերի, օրինակ՝ լրբֆիստների հետ շփումներին առնչվող հարցերում, ii) այն լրացնել դրա իրականացման համար անհրաժեշտ գործնական

---

<sup>24</sup> Legislative Toolkit on Conflict of Interest», Prepared by: Tilman Hoppe, Project Long-Term Adviser with inputs and reviews from: Valts Kalnins, Council of Europe Consultant, Vera Devine, Council of Europe Consultant, José Igreja Matos, Council of Europe Expert, Vice President International Association of Judges Jelena Jolić, Council of Europe Secretariat. CoE/EU Eastern Partnership Programmatic Co-operation Framework (PCF) “Fight against Corruption and Fostering Good Governance/Fight against Money-Laundering” (EaP-2). 2015 էջ-19, [http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit\\_REG\\_-2\\_2015.pdf](http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit_REG_-2_2015.pdf)

միջոցներով, օրինակ՝ մասնագիտական վերապատրաստում, խորհրդատվություն և իրագրվածության մակարդակի բարձրացում» :

ՀՀ կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշման հավելված 2-ի կոռուպցիայի կանխարգելման բաժնի 20-րդ «Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում» միջոցառման շրջանակներում 2020-2021թթ. համար նախատեսում է «Ուսումնասիրել լոբբիստական գործունեության կարգավորման, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման վերաբերյալ միջազգային փորձը: Վեր հանել Հայաստանում տվյալ ոլորտում առկա խնդիրները և ներդրման հեռանկարները»: Իսկ ՀՀ-ում լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման նպատակահարմարության վերաբերյալ հարցը նախատեսվում է քննարկել ՀՀ վարչապետին կից Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում՝ 2020թ. 4-րդ եռամսյակում: Միայն հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում քննարկման արդյունքներով 2021-2022թթ.-ին նախատեսվում է «Առաջարկությունների հիման վրա մշակել և ՀՀ ազգային ժողով ներկայացնել իրավական ակտերի նախագծերի փաթեթ»:

#### **Առաջարկություններ**

**1.4.5 ուսումնասիրել Հայաստանում լոբբիստական գործունեության ինստիտուտի ներդրման նպատակահարմարության հարցը.**

**1.4.6 հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարքագծի տիպային կանոնադրում արտացոլել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների գործունեության իրականացմամբ պայմանավորված երրորդ անձանց հետ հարաբերությունների կամ շփումների թափանցիկության հարցերը:**

#### ***«Որպես պետության ներկայացուցիչ գույքային գործարքների կնքում» սահմանափակում***

«Որպես պետության ներկայացուցիչ՝ գույքային գործարքներ կնքել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ ինսամիությանմբ կապված անձանց հետ...» սահմանափակումը (ՀԾՄ օրենք, հոդված 32, մաս 1) հանդես է գալիս հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների ձեռնարկատիրական գործունեությամբ կամ գործարար հարաբերություններով պայմանավորված շահերի բախման կանխարգելման միջոց: Այն նպատակ է հետապնդում կանխել հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի կողմից անձնական կամ մասնավոր օգուտների ստացումը: Իր եռությամբ այն միտված է կանխելու իրական կամ փաստացի շահերի բախումը, որպես պետության ներկայացուցիչ պետական (համայնքային) գնումների և ծառայությունների մատուցման գործընթացներով պայմանավորված գործարքների մասով: Այս իմաստով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 33-ի 6-րդ և 7-րդ մասերը սահմանում են, որ « 6.Գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել գնահատող հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստին պարզվում է,

որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ»: Եթե «..առկա է սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից: Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հրապարակվում է տեղեկագրում»: «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 49-ի մաս 2-ով, համանման կարգավորումներ է սահմանում բողոքարկող խորհրդի անդամի համար: Միաժամանակ, նույն օրենքով գնահատող հանձնաժողովի ձևավորումն իրականացվում է պատվիրատուի ղեկավարի հրամանով, ինչը գործնականում հնարավոր է դարձնում նաև վերջինիս ազդեցությունը գնահատող հանձնաժողովի անդամների վրա:

Ինչպես վկայում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի 2018թ. իրականացրած պետական գնումների գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ուսումնասիրության արդյունքները,<sup>25</sup> բարձրաստիճան պաշտոնատար անձիք, այդ թվում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք՝ չունենալով ՀՀ անուկից պետական կամ համայնքային գնումների պայմանագրերի ստորագրման լիազորություն, այդ գործընթացների վրա իրենց ազդեցություն են ունենում, այդ մարմինների գնումների գործընթացում ներգրավելով իրենց կամ իրենց ընտանիքների մասնակցությամբ կազմակերպություններին, և որպես կանոն, հաղթում մրցույթում: Իսկ աշխատակազմի ղեկավարները (գլխավոր քարտուղարները) ապահովում են այդ պայմանագրերի կնքման գործընթացները: Այս առումով, օրենսդրորեն առկա չէ որևէ կառուցակարգ, որը կբացառի պետական և ՏԻ մարմնի գնումների գործընթացում գնահատման հայեցողության իրացումը՝ հօգուտ պատվիրատու մարմնում քաղաքական կամ վարչական ազդեցություն ունեցող պաշտոնատար անձանց կամ վերջիններիս հետ փոխկապակցված կազմակերպությունների: Բոլոր դեպքերում, կազմակերպությունների գնումների գործընթացի արդյունքում հաղթող ճանաչվելու պարագայում ռիսկային են դարձնում արդեն իսկ կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ վերահսկողությունը մարմնի ղեկավարի կողմից:

Այսպիսով, «որպես պետության ներկայացուցիչ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից գույքային գործարքների կնքումը մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց հետ» սահմանափակումը, ըստ էության, էական ազդեցություն չի կարող ունենալ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության,

---

<sup>25</sup>«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախումը: Օրենսդրություն և պրակտիկա» ուսումնասիրություն, էջ 16:  
[http://cpcarmenia.am/u\\_files/file/news/11.06.2018.pdf](http://cpcarmenia.am/u_files/file/news/11.06.2018.pdf)

այդ թվում, շահերի բախման իրավիճակների գնահատման և կոռուպցիոն ռիսկերում ներգրավվածության կանխարգելման գործում:

Նույն ուսումնասիրության արդյունքներով՝ հիմք ընդունելով միջազգային փորձը, առաջարկվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամ հանդիսացող անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին օրենսդրորեն սահմանափակել մասնակցելու այն պատվիրատու մարմնի գնման գործընթացին, որտեղ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնավարում է կամ համակարգում է այդ ոլորտի գործունեությունը:

Համանման արգելք է սահմանված արտասահմանյան մի շարք պետությունների օրենսդրությամբ: Այսպես, Սերբիայի դեպքում այս խնդրին տրվում է մանրամասն կարգավորում «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 53-ով: Համաձայն դրա, այն իրավաբանական անձը, որում հանրային պաշտոնյան կամ իր ընտանիքի անդամ ունեն 20 տոկոս բաժնեմաս, և այդ իրավաբանական անձը հանրային պաշտոնյայի պաշտոնավարման ընթացքում և դրա ավարտից 2 տարվա ընթացքում մասնակցում է պետական գնմանը, մասնավորեցման գործընթացի կամ այլ գործընթացի, որը իրականացվելու է հանրային իշխանության հետ կամ բյուջեի մեկ այլ օգտագործողի հետ կամ այնպիսի իրավաբանական անձի հետ պայմանագրի կնքմամբ, որում պետությունը, ինքնավար մարզը, տեղական ինքնակառավարման մարմինը կամ քաղաքապետարանը ունեն 20 տոկոսի չափով կապիտալ, ապա նման իրավաբանական անձը պետք է գործընթացի ավարտից 15 օրվա ընթացքում ծանուցի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:<sup>26</sup>

Սլովենիայում խնդիրը կարգավորվում է «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին»<sup>27</sup> օրենքի հոդված 35-ով, որով սահմանված է, որ «հանրային հատվածի մարմինը կամ կազմակերպությունը, որն իրականացնում է պետական գնում կամ կոնցեսիա է տրամադրում կամ իրականացնում է հանրային-մասնավոր հատվածի այլ տեսակի գործընկերություն չպետք է պատվիրի ապրանքներ, ծառայություններ կամ շինարարական աշխատանքներ, մտնի հանրային-մասնավոր հատվածի գործընկերության մեջ կամ շնորհի հատուկ բացառիկ իրավունքներ այն կառույցներին, որոնցում նույն մարմնում կամ կազմակերպությունում հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ իր ընտանիքի անդամը հանդիսանում են կառավարիչ, կառավարման անդամ կամ իրավաբանական ներկայացուցիչ, կամ ուղղակիորեն կամ միջնորդավորված ունեն 5 տոկոս բաժնեմաս: Նույնը վերաբերվում է եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդես են գալիս, որպես ֆիզիկական անձ: Այս կառույցների մասին հանրային պաշտոն զբաղեցնող անձը պետք է ծանուցի իր պաշտոնավարման մարմնին:

---

<sup>26</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

<sup>27</sup> «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքը: <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>

Լատվիայում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամ հանդիսացող անձանց, ինչպես նաև նրանց մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին արգելվում է ստանալ գնումների պատվերներ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական ֆինանսավորմամբ կառույցներից, օգտվել պետական վարկային աղբյուրներից կամ պետական մասնավորեցման հիմնադրամներից՝ բացառությամբ բաց մրցութային կարգով տրամադրման դեպքերի: Բաց մրցույթով պայմանավորված բացառությունները չեն տարածվում գնումների հանձնաժողովի անդամ հանդիսացող պաշտոնատար անձանց կամ այն դեպքերի վրա, երբ գնումների հանձնաժողովի անդամները աշխատում են պաշտոնատար անձի ենթակայությամբ:<sup>28</sup>

ՅԾՄ օրենքը՝ հիմք ընդունելով նման ուսումնասիրության արդյունքները, «Գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի, «շահերի հայտարարագրի բովանդակությունը» հողվածում (հողված 42, մաս 6) նախատեսել է «Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերի» վերաբերյալ տվյալների հայտարարագրման պարտականություն: Հայտարարագրման ենթակա են «ՀՀ և համայնքների հետ կնքված պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների այն պայմանագրերը, որոնց գինը (արժեքը) գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, պայմանագրի տեսակը, կողմերը, նրանց հասցեները, տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին, պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, ինչպես նաև գինը (արժեքը)» տվյալների հայտարարագրման պարտականություն: Մինչդեռ, ՅԾՄ օրենքի «այլ սահմանափակումներ» 32-րդ հոդվածում բացակայում է տվյալ մարմնում հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների, ինչպես նաև նրանց մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին պետական կամ համայնքային գնումներին մասնակցությունը սահմանափակելու վերաբերյալ օրենսդրական արգելքը:

Ամեն դեպքում, վերոնշյալ սահմանափակումը, միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ընտանիքի անդամների մասնակցությամբ ընկերությունների վրա տարածելը ամբողջությամբ չի ծածկում հնարավոր շահերի բախումները, քանի որ պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամը կարող է չհանդիսանալ ուղղակի մասնակից տվյալ առևտրային կազմակերպությանը, սակայն ստանալ առևտրային ընկերության շահույթից բաժին: Անհրաժեշտ է պետական կամ համայնքային գնումներին մասնակցության սահմանափակման ձևակերպման ժամանակ հաշվի առնել նաև այս հանգամանքը: Երկրորդ, նպատակահարմար է «պետական և համայնքային գնումներին պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնակցության» սահմանափակման

---

<sup>28</sup> «Հանրային պաշտոնյաների գործունեության շահերի բախման կանխարգելման մասին» Լատվիայի օրենքը: <https://likumi.lv/ta/en/en/id/61913-on-prevention-of-conflict-of-interest-in-activities-of-public-officials>

ձևակերպման ժամանակ նկատի ունենալ հանրային պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց ազդեցության շրջանակները: Այսպես, եթե վարչական, ինքնավար և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք օրենսդրությամբ ունեն ազդեցություն միայն այն կազմակերպությունում, որտեղ պաշտոնավարում են, ապա քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնյաների ազդեցությունը առավել լայն է ու ընդգրկուն: Օրինակ, կառավարության անդամները, ոչ միայն ազդեցություն ունեն այն նախարարության շրջանակներում, որտեղ անմիջապես պաշտոնավարում են, այլև տվյալ ոլորտի նկատմամբ ընդհանրապես: Այդ իսկ պատճառով, բարձրաստիճան քաղաքական պաշտոն զբաղեցնողների համար նպատակահարմար է սահմանափակումը տարածել այն պետական և ՏԻՄ-ում իրականացվող գնումների գործընթացների վրա, որոնց նկատմամբ պաշտոնյան ունի ազդեցություն: Երրորդ, հանրային պաշտոն զբաղեցնող անձի շահերի բախման իրավիճակներ կարող են ի հայտ գալ ոչ միայն պետական և համայնքային գնումների գործընթացներում, այլև պետության և համայնքի կողմից սեփականությամբ պատկանող գույքի օտարման (սեփականաշնորհման) կամ համարժեք այլ տնտեսական գործառնությունների իրականացման ժամանակ: Այս պարագայում նույնպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի, նրա ընտանիքի անդամի կամ նրանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ներգրավվածությունը վերոնշյալ գործարքներին պետք է սահմանափակվի: Այլ խոսքով, արգելքի սահմանումը իր մեջ պետք է ներառի նաև պետական և համայնքային գույքի օտարման գործառնությունների գործընթացները: Զորրորդ, հանրային պաշտոն զբաղեցնող անձի գործարար հարաբերություններում շահերի բախման կանխարգելման նպատակով սահմանափակումների կիրառումը ոչ միայն պայմանավորված է պետական և համայնքային գնումների գործընթացով, այլև նրա կողմից իրականացվող սպառողական (առք ու վաճառքի) գործարքներով: Առաջին հայացքից թվում է թե ինչ ազդեցություն պետք է ունենա սովորական սպառողական գործարքները շահերի բախման իրավիճակ առաջացնելու գործում: Այդուհանդերձ, նման գործարքները նույնպես իրենց մեջ պարունակում են շահերի բախման ի հայտ գալու ռիսկեր, որոնք ունակ են վերածվելու կոռուպցիոն ռիսկերի կամ գործարքների: Օրինակ, հանրային պաշտոնյան իրականացնում է սովորական առևտրային գործարք՝ ձեռք է բերում կառուցապատողից բնակարան, որի ժամանակ ստանում է զեղչեր և արդյունքում այդ նույն կառուցապատողը մասնակցում է գնումների գործընթացին և հաղթում է տվյալ պաշտոնատար անձի կազմակերպության կողմից կազմակերպված շինարարական աշխատանքների մրցույթում: Հանրության մոտ ձևավորվում է ընկալում, որ մրցույթին մասնակցությունը ձևական է և պաշտոնյան ունեցել է ազդեցություն առևտրային կազմակերպությանը մրցույթում հաղթող ճանաչելու ժամանակ: Ելնելով վերոնշյալից, նպատակահարմար է պետական և համայնքային գնումների գործընթացում սահմանափակել նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց սպառողական գործարքների արդյունքում կողմ հանդիսացող առևտրային կազմակերպությունների մասնակցությունը տվյալ կազմակերպության գնումների գործընթացին: Հինգերորդ, գործարար հարաբերություններով պայմանավորված շահերի բախման իրավիճակներ են ի հայտ գալիս նաև այն դեպքերում, երբ տվյալ պետական կամ համայնքային մարմնի հետ արդեն իսկ կնքված պետական գնումների պայմանագրերի շրջանակներում առևտրային կազմակերպության մասնակիցը կամ ներկայացուցչական, կառավարման գործառնություններով օժտված անձը ցանկանում է (թեկնածու է) կամ նոր է զբաղեցրել հանրային պաշտոնը, այն նույն պետական կամ համայնքային

մարմնում, որի հետ արդեն իսկ կնքված են եղել գնումների պայմանագրերը: Այս դեպքում, ի հայտ են գալիս փաստացի շահերի բախման իրավիճակներ, որի ժամանակ հանրային պաշտոն զբաղեցնող անձը, որպես առևտրային կազմակերպության մասնակից պետք է հավատարմագրային կառավարման հանձնի բաժնեմասը, իսկ արդեն իսկ կնքված պայմանագրերի մասով ի հայտ եկած շահերի բախումները պետք է կառավարվեն՝ հետագա մրցույթներում բացառելով տվյալ առևտրային կազմակերպության մասնակցությունը կամ տարածակետվեն պաշտոնի զբաղեցումը:

## **Առաջարկություններ**

- 1.4.7 «Չանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 32-ի 1-ին մասի 3-րդ կետը վերաշարադրել այն հաշվով, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայության ղեկավար (բարձրագույն ու գլխավոր) պաշտոնների խմբի ծառայողների համար սահմանափակվեն, նրանց և ընտանիքի անդամների, ինչպես նաև նրանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կամ այն առևտրային կազմակերպությունների, որոնցից ստացել են, ստանում են օգուտներ կամ եկամուտներ կամ պաշտոնավարման ընթացքում ունեցել են գործարար հարաբերություններ, կամ իրենց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունը մինչ պաշտոնավարումը արդեն իսկ հանդիսացել է տվյալ պետական կամ ՏԻ մարմնի պետական գնումների մատակարար՝ արգելվում է մասնակցել տվյալ պետական կամ ՏԻ մարմնի կողմից կազմակերպվող պետական և համայնքային գնումներին, գույքի օտարման կամ սեփականաշնորհման, կամ էլ այլ պայմաններով օգտագործման մրցույթներին: Կառավարության անդամների մասով սահմանափակումը տարածել բոլոր պետական և համայնքային մարմինների վրա.
- 1.4.8 քննարկել «պետական և համայնքային գնումների գործընթացին հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամների մասնակցությամբ կազմակերպությունների մասնակցությունը..» սահմանափակումը պաշտոնատար անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու անհամատեղելիության պահանջում ներառելու հարցը.
- 1.4.9 «Շահերի բախման բացահայտման և կառավարման» ուղեցույցում սահմանել տվյալ սահմանափակման մեկնաբանությունները՝ ներկայացնելով գործնական օրինակներ և պարզաբանումներ:

### ***«Կուսակցությունների, հասարակական և կրոնական կազմակերպությունների օգտին պաշտոնեական (ծառայողական) դիրքի օգտագործում» սահմանափակում***

«Իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար» սահմանափակումը (ՀԾՄ օրենք, հոդված 32, մաս 1) հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասով, հատկապես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար, արտաբուստ թվում է հակասության մեջ է նրանց, որպես



քաղաքական գործիչների, հանրային քաղաքական գործունեություն վարելու հետ: Մինչդեռ, այստեղ խոսքը ոչ թե քաղաքական պաշտոնյաների կողմից իրենց գործունեության ընթացքում քաղաքական զսպվածության և չեզոքության դրսևորման մասին է, այլ արգելքի իմաստն այն է, որպեսզի հանրային պաշտոն զբաղեցնող անձը, իր պաշտոնական դիրքը չօգտագործի հարազատ կուսակցությանը կամ իր անդամակցությամբ հասարակական կազմակերպությանը (ՅԿ) կամ քաղաքացիական հասարակության միավորմանը, կամ էլ իր կրոնական դավանանքները կիսող կազմակերպությունների համար ապահովելու առավելություններ կամ արտոնություններ, որոնք մյուս ՅԿ-ների, կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների համար համընդհանուր բնույթ չեն կրելու: Արգելքը գործնական նշանակություն ունի նաև տվյալ պետական կամ ՏԻ մարմնի վարչական ռեսուրսները կուսակցության կամ հովանավորյալ ՅԿ-ների կարիքներին ծառայեցնելուն միտված հնարավոր քայլերի կանխարգելման գործում: Այլ խոսքով, այս արգելքի իմաստը պաշտոնյային հեռու պահելն է հովանավորչությունից, որը կարող է հանգեցնել կոռուպցիոն ռիսկերի առաջացմանը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կուսակցության հիմնադիր կամ անդամ չեն կարող լինել **դատավորները, դատախազները, քննիչները**: Իսկ «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 13-ի 2-րդ մասով «Չինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումները սահմանվում են առանձին ոլորտային օրենքներով»: ՀՀ Սահմանադրությամբ՝ իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում կուսակցության անդամ չեն կարող լինել Հանրապետության նախագահը, Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները, Հաշվեքննիչ պալատի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները:

Քաղաքական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումներ են նախատեսված **«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով**, որտեղ դատավորին արգելվում է լինել «որևէ կուսակցության անդամ կամ հիմնադիր, կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ելույթներ ունենալ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ» (հոդված 4, մաս 1,2 ), «իր պաշտոնական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար...»: Համանման սահմանափակում է նախատեսված **«Դատախազության մասին»** ՀՀ օրենքով, որտեղ դատախազը «չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ, մասնակցել նախընտրական, ինչպես նաև հանրաքվեի նախապատրաստելիս իրականացվող քարոզչությանը, իրավունք չունի կազմակերպելու այնպիսի հավաքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա քաղաքական չեզոքությունը»:

Առանձնահատուկ կարգավորումները վերաբերում են **քննիչների քաղաքական զսպվածության և չեզոքության ապահովմանը**: Այսպես, «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի 2-րդ մասը սահմանում է, որ «Քննչական կոմիտեի ծառայողը չի կարող

լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Քննչական կոմիտեի ծառայողը յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Նույնանման կարգավորում է պարունակում նաև «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքը, որի հոդված 11-ի 2-րդ մասով սահմանված է, որ «Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն»:

Համանման օրենսդրական կարգավորումներ են նախատեսված նաև **փրկարար, ոստիկանական, ազգային անվտանգության մարմինների ծառայողների, քրեակատարողական, հարկադիր ծառայողների համար**, որոնց արգելվում է «լինելու որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվելու քաղաքական գործունեությամբ.3) կազմակերպելու գործադուլներ կամ մասնակցելու դրանց»:

**Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նկատմամբ** քաղաքական գործունեության, մասնավորապես ընտրությունների ժամանակ քարոզչությամբ զբաղվելու տեսքով, սահմանափակումները ամրագրված են «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հոդված 23-ում, նախընտրական քարոզչության սահմանափակումների տեսքով, որտեղ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողներին արգելվում է «նախընտրական քարոզչություն կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը»: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ «**Ազգային ժողովի պատգամավորին և անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը՝ բացառելով սույն հոդվածի 1-ին մասում նշված վարչական ռեսուրսների օգտագործումը**»: Նույն հոդվածի 3-րդ մասով կոնկրետ սահմանափակումներ են նախատեսված հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուների համար, որոնց արգելվում է «ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար», ինչպես նաև «նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը»:

Միաժամանակ, «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի հոդված 6-ը քաղաքական շահերի բախման կարգավորման նպատակով, արգելում է կուսակցության անդամներին «որոնք Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոններ են զբաղեցնում, իրենց ծառայողական (պաշտոնեական) դիրքն օգտագործելու հոգուտ կուսակցական շահերի: Նշված անձինք իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կաշկանդված չեն կուսակցության որոշումներով»:

Միջազգային պրակտիկայում, «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքի հոդված 50-ը «քաղաքական գործունեություն և անդամակցությունը կուսակցությանը» վերտառությամբ հոդվածի ներքո կարգավորում է ինչպես հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կուսակցություններին անդամակցության, կուսակցական գործունեության սահմանափակումները, այնպես էլ նախընտրական գործընթացում հանրային ռեսուրսները կուսակցության և քաղաքական այլ նպատակներով օգտագործման հնարավորությունները, դրանց կարգավորման մեխանիզմները և պատասխանատու մարմնի հարցերը:

«Հանրային պաշտոնյաների գործունեության շահերի բախման կանխարգելման մասին» Լատվիայի օրենքի հոդված 6-ում սահմանված է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից այլ պաշտոնների համատեղման սահմանափակումը: Նույն օրենքի հոդված 7-ով որոշ քաղաքական և հայեցողական պաշտոնյաների կուսակցությունում պաշտոնների զբաղեցման մասով նախատեսված է պաշտոնների համատեղման սահմանափակման բացառություն:<sup>29</sup>

Այսպիսով, ՀԾՍ օրենքի հոդված 32-ի 1-ին մասով **«Իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար» սահմանափակումը** լիարժեքորեն չի ամփոփում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների քաղաքական գործունեությամբ պայմանավորված շահերի բախման երևույթի ամբողջ պատկերը: Մասնավորապես, ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված նախաընտրական քարոզչության գործընթացի վերաբերյալ դրույթները ներառված չեն վերոնշյալ սահմանափակման մեջ:

Քաղաքական հարաբերություններով պայմանավորված շահերի բախման իրավիճակների բացահայտման ու գնահատման նպատակով ՀԾՍ օրենքի հոդված 42-ի 5-րդ մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձանցից պահանջվում է հայտարարագրել «Անդամակցությունը կուսակցություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում», որտեղ «նշվում են կուսակցության անվանումը, որին

---

<sup>29</sup> «Հանրային պաշտոնյաների գործունեության շահերի բախման կանխարգելման մասին» Լատվիայի օրենքը: <https://likumi.lv/ta/en/en/id/61913-on-prevention-of-conflict-of-interest-in-activities-of-public-officials>

հայտարարատու պաշտոնատար անձն անդամակցում է կամ ներկայացված է դրա կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, կուսակցությունում անձի կարգավիճակը»:

### **«Յոնորարի ստացում» սահմանափակում**

«Յոնորար ստանալ պաշտոնեական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար» սահմանափակումը (ՅՄ օրենք, հոդված 32, մաս 1) իր բովանդակությամբ լրացնում է հանրային պաշտոն զբաղեցնող անձին և ծառայողին ներկայացվող «այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից» անհամատեղելիության պահանջը: Այն նպատակ ունի հանրային պաշտոն զբաղեցնող անձին և ծառայողին զերծ պահել լրացուցիչ վարձատրություն ստանալ իր պաշտոնեական պարտականությունների կատարմամբ պայմանավորված կամ դրանից բխող հրապարակումների կամ ելույթների համար: Յոնորար ստանալը պայմանավորված է հեղինակային իրավունքի օբյեկտների օգտագործման հետ (ՅՅ Քաղաքացիական օրենսգրք, հոդված 1137): Նույն ՅՄ օրենքի հոդված 31-ի մաս 8-ում ձեռնարկատիրական գործունեություն չի ճանաչվում «8) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար **ցանկացած հեղինակային իրավունքից**, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեթոսների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար հատուցում (ռոյալթի) ստանալը»: Այս պայմաններում հոնորար ստանալու արգելքի պահանջների պահպանումը որոշվում է թե որքանով է հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ ծառայողը իր ելույթներում և հրապարակումներում օգտագործում պաշտոնեական պարտականություններով պայմանավորված տեղեկատվությունը և դրա վրա կառուցված գաղափարներն ու մտքերը: Յոնորար ստանալու սահմանափակման մասով միջազգային փորձը հուշում է, որ Սլովենիայում և Լիտվայում այն ընդհանրապես չի դիտարկվում որպես շահերի բախման սահմանափակում, իսկ Սերբիայում այն դիտվում է միայն եկամտի տեսակ:<sup>30</sup>

### **«Նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները ոչ ծառայողական նպատակներով օգտագործման» սահմանափակում**

«Ոչ ծառայողական նպատակներով օգտագործել նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը» սահմանափակման (ՅՄ օրենք, հոդված 32, մաս 1) նպատակն է թույլ չտալ կամ կանխել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից հանրային

---

<sup>30</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը, հոդված 71: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

(վարչական) ռեսուրսների՝ նյութատեխնիկական, ֆինանսական, տեղեկատվական և այլ գույքի, օգտագործումը անձնական նպատակներով կամ անձնական կարիքների կամ այլ անձանց շահերի համար (հանրային միջոցների չարաշահում):

Պետական և համայնքային կազմակերպությունների ռեսուրսները հանդիսանում են հանրային սեփականություն և ձևավորվում են հանրային ֆինանսների, դրամական միջոցների հաշվին՝ հանրության կողմից վճարված հարկերի և այլ վճարումների արդյունքում: Այդ իսկ պատճառով, այդ ռեսուրսները պետական կամ ՏԻ մարմնի, մասնավորապես հանրային պաշտոնյաների ու ծառայողների սեփականությունը չեն հանդիսանում: Հետևաբար, պետական և համայնքային մարմինների նյութատեխնիկական ռեսուրսների, գույքի օգտագործումը կանոնակարգված են առանձին իրավական ակտերով, որոնցով սահմանված է այդ միջոցների հատկացման և օգտագործման եղանակներն ու ձևերը: Մասնավորապես, «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք հոդված 1-ով կարգավորվում են «պետական գույքի նպատակային և ծրագրային կառավարման, ներառյալ՝ հաշվառման, գնահատման, պետության սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների կազմակերպման, պետական գույքի շրջանառության, ինչպես նաև գույքի պահպանվածության ապահովման ու կառավարման նկատմամբ վերահսկողության իրականացման հետ կապված հարաբերությունները»:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության և գործունեության ծախսերի փոխհատուցման հարցերը կարգավորված են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով: Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների ծառայողական գործուղումների հաշվարկման, ծախսերի փոխհատուցման ընթացակարգը: Ծառայողական ավտոմեքենաների օգտագործման հարցերը կանոնակարգված են ՀՀ կառավարության 17 փետրվարի 2005 թվականի N 194-Ն «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» որոշմամբ կանոնակարգված են պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման գործընթացները:

«Ծառայողական տեղեկատվության» օգտագործման պայմանները և սահմանափակումները սահմանված են «Տեղեկատվության ազատության մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով: Այս օրենքների կարգավորման առարկա հանդիսացող տեղեկատվության օգտագործման ու տրամադրման պայմանները ուղղակիորեն առնչվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների գործունեությանը:

Ոչ ծառայողական նպատակներով նյութատեխնիկական, ֆինանսական, գույքի և տեղեկատվության ու տեղեկատվական միջոցների օգտագործման սահմանափակումը Սերբիայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով միայն կիրառվում է քաղաքական

գործունեությամբ պայմանավորված:<sup>31</sup> Նույն օրենքի հոդված 40-ով կարգավորված է հանրային պաշտոնյայի կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռք բերված տեղեկատվության (եթե այդ տեղեկատվությունը հանրության համար հասանելի չէ) օգտագործումը իր կամ այլ անձի համար օգուտ կամ առավելություն ստանալու նպատակով, կամ այլոց վնասելու նպատակով: Սլովենիան նման արգելք կամ սահմանափակում չի կիրառում:

Լիտվայի «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» օրենքի հոդված 3-ով և 13-ով սահմանվում է, որ կենտրոնական և տեղական հանրային ծառայությունում ներգրավված անձինք պետք է ձեռնպահ մնան օգտագործելուց, ինչպես նաև կանխարգելեն այլոց կողմից օգտագործելու պաշտոնական կամ այլ տեղեկատվությունը, որն իրենց հայտնի է դարձել պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում: Բացի այդ նրանք չպետք է օգտագործեն, ինչպես նաև արգելեն այլոց օգտագործելու, (ուղղակի կամ անուղղակի կերպով), պետական սեփականությունը, կամ պետության կողմից վարձակալված ցանկացած գույքը, ոչ ծառայողական նպատակներով:<sup>32</sup>

Այսպիսով, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բնականոն գործունեության ապահովման նպատակով ծառայողական ռեսուրսների տրամադրման օրենսդրական կարգավորումները հիմնականում կանոնակարգում են դրանց տրամադրման պայմաններն ու եղանակները, մինչդեռ դրանք «անձնական նպատակներով» օգտագործելը սահմանափակող դրույթների գործիքակազմերը, ընթացակարգերը ու դրանց վերահսկման կարգավորումները բացակայում են:

## Առաջարկություններ

**1.4.10 վերանայել և «Հանրային ծառայության մասին» կամ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ նոր օրենքի նախագծում առանձին հոդվածով կարգավորել «Իր պաշտոնական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար» սահմանափակումը՝ այն հաշվով, որպեսզի այն ներառի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների քաղաքական գործունեությամբ պայմանավորված շահերի բախման երևույթի ամբողջ պատկերը: Մասնավորապես, «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված նախընտրական քարոզչության և «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքով կուսակցությունների ֆինանսավորմանը վերաբերելի**

<sup>31</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը, հոդված 50 և 40: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

<sup>32</sup> «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» Լիտվայի օրենքը: <https://eseimas.lrs.lt/portal/legalActPrint/lt?jfwid=rivwzvpvg&documentId=TAIS.46177&category=TAD>

գործընթացի վերաբերյալ դրույթները ներառված լինեն վերոնշյալ սահմանափակման մեջ.

1.4.11 «Յնորար ստանալ պաշտոնական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ ելույթների համար» սահմանափակումը, որպես ինքնուրույն սահմանափակման տեսակ հանել ՅՃՄ օրենքի հոդված 32-ից: Այն դիտարկել հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի «այլ վճարովի աշխատանք՝ բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքներից» անհամատեղելիության պահանջի մասնավոր դեպք կամ պայման.

1.4.12 մշակել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական և (կամ) համայնքային այլ գույքը և ծառայողական տեղեկատվությունը ոչ ծառայողական նպատակներով օգտագործման» օրենսդրական կարգավորումները:

***«Մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց հետ համատեղ աշխատանքի» սահմանափակում***

«Համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ» սահմանափակման (ՅՃՄ օրենք, հոդված 32 մաս 1) նպատակն է կանխել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից կոռուպցիոն իրավիճակներում հայտնվելը: Մասնավորապես, այս սահմանափակումը նպատակաուղղված է չեզոքացնելու հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի «իր պաշտոնական դիրքի օգտագործմամբ կամ իրականացմամբ առավելությունների տրամադրումը ընտանիքի անդամներին և մերձավոր ազգականներին (նեպոտիզմ)»: ՅՃՄ օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը» (հոդված 39 մաս 2): Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սահմանափակումը գործում է, երբ հանրային պաշտոնյան կամ ծառայողը «մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց հետ ծառայողական գործունեության ժամանակ գտնվում է «անմիջական ենթակայության կամ վերահսկողության» ներքո: Այստեղ, որոշիչ հանգամանք է դառնում «անմիջական ենթակայություն» կամ «անմիջական վերահսկողություն» եզրույթների հստակեցումը, որը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների առանձին խմբերի համար սահմանվում է տվյալ ծառայության ոլորտային առանձնահատկություններով:

***«Պաշտոնից ազատվելուց հետո հետագա աշխատանքային գործունեության» սահմանափակում***

«Պաշտոնից ազատվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունվել աշխատանքի այն գործատուի մոտ կամ դառնալ այն կազմակերպության աշխատողը, որի նկատմամբ նա անմիջական հսկողություն է իրականացրել իր պաշտոնավարման վերջին մեկ տարվա

ընթացքում» սահմանափակման (ՅԾՄ օրենք, հոդված 32, մաս 1) նպատակն է կարգավորել հանրային պաշտոնյայի «հետագա աշխատանքային գործունեությունը» (post public employment), միաժամանակ կանխելով հանրային պաշտոն զբաղեցնող պաշտոնյային այսպես կոչված « պտտվող դռների» (revolving door) կոռուպցիոն սխեմաներում հայտնվելու վտանգից:<sup>33</sup>

«Պտտվող դռներ» կոռուպցիոն երևույթը ի հայտ է գալիս այն պայմաններում, երբ հանրային պաշտոնյան օգտագործելով իր լիազորությունները, մասնավորապես տնտեսության առանձին ոլորտների գործունեության կարգավորման կամ վերահսկողության գործում որոշումների կայացման հնարավորությունները, առավելություններ կամ առանձնահատուկ վերաբերմունք է տրամադրում իր պետական մարմնի կողմից վերահսկվող մասնավոր ոլորտի կազմակերպություններին և ընկերություններին, որի արդյունքում պաշտոնավարումից հետո այդ ընկերությունները սիրահոժար կերպով պաշտոնյային ընդունում են այդ կազմակերպությունում աշխատանքի:

Մյուս կողմից, այս երևույթը պայմանավորված է լինում նաև հանրային պաշտոնյայի կողմից ոլորտի կարգավորումների վերաբերյալ մեծածավալ և հանգամանալից տեղեկատվության տիրապետման հանգամանքով, որը և ցանկանում են օգտագործել մասնավոր ընկերությունները: Այս հանգամանքով պայմանավորված հանրային պաշտոնյայի «հետագա աշխատանքային գործունեության» կարգավորման սահմանափակումը, որպես կանոն կիրառվում է այն հանրային պաշտոնյաների ու ծառայողների նկատմամբ, որոնք տիրապետում են երկրի անվտանգությանը և ոլորտի զարգացմանը միտված պետական կամ ծառայողական գաղտնիք, ինչպես նաև տիրապետում են այնպիսի տեղեկատվության, որի տրամադրումը միայն այս կամ այն մասնավոր ընկերությանը կապահովի առավելություններ:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ «հետագա աշխատանքային գործունեության» կարգավորման նպատակով կիրառվում է այսպես կոչված «սառեցման ժամանակահատված» (cooling off period) արգելքի միջոցը: Այն նպատակ է հետապնդում, որոշակի ժամանակահատվածում կանխել հանրային պաշտոնյայի ազդեցությունը պետական և ՏԻՄ-ի նկատմամբ և մյուս կողմից չօգտագործել իր կողմից տիրապետվող մասնագիտական բացառիկ տեղեկատվությունը անձնական օգուտներ ստանալու համար:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների հետագա աշխատանքային գործունեության միջազգային փորձը վկայում է, որ օրինակ Սերբիայում այս խնդիրը կարգավորված է հետևյալ ձևակերպմամբ «Հանրային պաշտոնի դադարեցումից 2 տարվա ընթացքում պաշտոնաթող անձը չի կարող աշխատանքային հարաբերություններ ու համագործակցություն ծավալել, ձեռնարկատիրական և/կամ այլ գործողություններ կատարել այն իրավաբանական անձի, ձեռնարկատերի կամ միջազգային կազմակերպության հետ, որոնց գործունեությունը առնչվել է իր նախկին պաշտոնական պարտականությունների կատարմանը

---

<sup>33</sup> Revolving door – movement of public officials and politicians between their public roles and employment in the private sector, in quick succession, creating a number of risks of conflict of interest.



և իրականացվել են իր կողմից: Հետագա աշխատանքային գործունեության սահմանափակումները չեն տարածվում անմիջապես քաղաքացիների կողմից ընտրված հանրային պաշտոնյաների վրա:<sup>34</sup>

Սլովենիայի դեպքում «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 36-րդ հոդվածը սահմանում է, որ «հանրային պաշտոն զբաղեցնող անձը չի կարող հանդես գալ որպես այն ընկերության ներկայացուցիչ, որը պայմանագրային հարաբերությունների մեջ է եղել կամ պատրաստվում է սկսել այդ պայմանագրերի իրականացումը այն մարմնի հետ, որտեղ հանրային պաշտոն զբաղեցնող անձը զբաղեցրել է պաշտոն իր պաշտոնավարման դադարից սկսած 2 տարի ժամանակահատվածում: Իսկ այն մարմինը, որում պաշտոնավարել է տվյալ հանրային պաշտոն զբաղեցնող անձը, վերջինիս պաշտոնավարման դադարից 1 տարվա ընթացքում, չպետք է գործարքներ իրականացնի այն իրավաբանական անձանց հետ, որտեղ տվյալ հանրային պաշտոն զբաղեցնող անձն ուղղակի կամ անուղղակի ունի նվազագույնը 5 տոկոս բաժնեմաս, այսինքն՝ այլ իրավաբանական անձանց միջոցով:<sup>35</sup>

Լիտվայում, «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» օրենքի 5-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է հետագա աշխատանքային գործունեության կարգավորմանը: Օրենքի հոդված 18-ը սահմանում է, որ «կենտրոնական կամ տեղական հանրային ծառայությունում գտնվող անձը, պաշտոնից հեռանալուց հետո 1 տարվա ընթացքում իրավունք չունի աշխատանքի անցնել կառավարման կամ աուդիտի այն կառույցներում ու ընկերություններում, որոնց հանդեպ պաշտոնից հեռանալուց ուղիղ 1 տարվա ընթացքում նա իրականացրել է վերահսկողություն կամ հսկողություն: Նույն օրենքի հոդված 19-ը սահմանափակում է հանրային պաշտոնյային պաշտոնից հեռանալուց հետո անցնել աշխատանքի այն ընկերություններում, որտեղ ինքը կամ ընտանիքի անդամները տիրապետում են ընկերության 10 տոկոս բաժնեմասին կամ աշխատում են կառավարման կամ աուդիտի հաստատություններում, որոնց հետ հարաբերվել է պաշտոնավարման վերջին 1 տարվա ընթացքում: Բացի այդ, նույն օրենքի հոդված 20-ը սահմանափակում է պաշտոնատար անձին պաշտոնի դադարումից 1 տարվա ընթացքում ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական այն անձանց այնպիսի կառույցում, որտեղ նա աշխատել է կամ պաշտոնեական գործառույթների իրականացմամբ պայմանավորված իրականացրել վերահսկողություն: Սրանից բացառություն են կազմում փաստաբանները:<sup>36</sup>

«Հանրային ծառայության մասին» օրենքը հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների «հետագա աշխատանքային գործունեության» սահմանափակման կարգավորման վերաբերյալ ոչ մի կանոնակարգում չի պարունակում: Նույնիսկ սահմանափակման ձևակերպման մեջ բացակայում է «մասնավոր կազմակերպություն»

---

<sup>34</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը, Հոդված 55: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

<sup>35</sup> «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքը: <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>

<sup>36</sup> «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» Լիտվայի օրենքը <https://e-seimas.lrs.lt/portal/legalActPrint/t?ifwid=rivwzvpvg&documentId=TAIS.46177&category=TAD>

եզրույթը, որով սահմանափակումը, կարծես թե, գործում է նաև հանրային պաշտոնների և պետական ու համայնքային մասնակցությամբ կազմակերպությունների մասով: Դրանով իսկ խաթարվում է սահմանափակման բուն էությունը: Սահմանափակումը խիստ ընդհանրական է և հաշվի չի առնում «հետագա աշխատանքային գործունեության» մասով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների առանձին խմբերի գործունեության ոլորտների առանձնահատկությունները: Օրենսդրորեն սահմանված չէ սահմանափակման պահանջների նկատմամբ վերահսկողության գործիքների, դրանց կիրառման պայմանները, որոշում կայացնողների շրջանակը: Այս հարցերի օրենսդրական կարգավորումները կարիք ունեն մշակման ու գործնականում կիրառման:

## **Առաջարկություններ**

**1.4.13 «Շահերի բախման բացահայտման և կառավարման» ուղեցույցում տալ մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված անձանց հետ համատեղ աշխատելու սահմանափակման «անմիջական ենթակայություն կամ վերահսկողություն» եզրույթի մեկնաբանությունները և հիմնավորել գործնական օրինակներով.**

**1.4.14 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով վերանայել հետագա աշխատանքային սահմանափակման սահմանումը, հաշվի առնելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների առանձին խմբերի գործունեության ոլորտները, այդ ոլորտների առանձնահատկություններով պայմանավորված հետագա աշխատանքային գործունեության սառեցման ժամանակահատվածի տևողությունը, որոշում կայացնողների շրջանակը, սահմանափակման պահանջների նկատմամբ վերահսկողության գործիքները, դրանց կիրառման պայմանները, մասնավոր ոլորտում հետագա գործունեությանը վերաբերելի այլ հարցերը:**

## **1.5 Նվերներ ընդունելու արգելք**

Նվերներ ընդունելու արգելքը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար, իր բովանդակությամբ և էությամբ երկակի դերակատարում ունի, քանի որ հանդիսանում է վարքագծի կանոն և միաժամանակ արգելք՝ պաշտոնետական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ընդունման գործում:

ՀԾՄ օրենքի հոդված 21-ի առաջին մասում վարքագծի կանոնների շարքում դիտարկվում է նաև «...վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնետական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքը»։ Նույն օրենքի՝ 2020թ. ապրիլի 29-ին ուժի մեջ մտած փոփոխությունների ու լրացումների արդյունքում, հոդված 29-ից ամբողջությամբ հանվել են «պաշտոնետական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված» բառերը:

ՀԾՄ օրենքի հոդված 29-ը սահմանում է նաև, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չպետք է ընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տան: Նույն հոդվածում տրված է «նվեր» հասկացության սահմանումը, դրա դրսևորման տեսակները, նվերների ստացման «թույլատրելի» դեպքերը:

ՀԾՄ օրենքը նվերների ստացման արգելքի կարգավորման նպատակով նախատեսել է թույլատրելի «նվերների հաշվառման և հանձնման» գործիքները: ՀԾՄ օրենքի հոդված 29-ը սահմանում է, որ «Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված և սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ կետերով նախատեսված նվերն իր արժեքով գերազանցում է 60,000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն և հաշվառվում է որպես այդպիսին: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները Կառավարության սահմանած կարգով պարտավոր են այն հանձնել պետությանը կամ համայնքին», իսկ հոդված 30-ը պահանջում է, որ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են Կառավարության սահմանած կարգով հայտնել սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված թույլատրելի նվերների ստացման մասին: Նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանում է Կառավարությունը»:

Վերոնշյալ կարգավորումները ամբողջությամբ վերաբերելի են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողներին: Այդուհանդերձ, նույն օրենքի հոդված 29-ի 6-րդ մասով՝ օրենսդիրը նախատեսել է հանրային ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ ոլորտային օրենքներով այլ կարգավորումների սահմանման հնարավորություն:

**Պատգամավորի**, որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձի «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքը և «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքը պատգամավորի կողմից նվերների ընդունման արգելքի մասով կարգավորումներ չի պարունակում:

**Ղատավորների** մասով «Ղատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հոդված 73-ը ամբողջությամբ կարգավորում է դատավորի կողմից «նվերներ ընդունելու սահմանափակումը»: Նշված հոդվածում տրված է «նվեր» հասկացության սահմանումը, որը ամբողջությամբ համապատասխանում է ՀԾՄ օրենքում տրված նվեր սահմանման հետ: Միաժամանակ, օրենսգիրքը կոնկրետ կարգավորումներ է սահմանում դատավորի, նրա ընտանիքի անդամների կողմից ծառայողական պարտականություններին վերագրվող նվերների, ինչպես նաև թույլատրելի նվերների ստացման գործընթացի վերաբերյալ: Ղատական օրենսգիրքը սահմանել է դատավորի կողմից ստացվող թույլատրելի համարվող նվերների շեմ՝ 60-240 հազար դրամ, որի գերազանցման կամ միևնույն անձից տարվա ընթացքում ստանալու պայմաններում դատավորը պարտավոր է դիմել դատավորների էթիկայի և կարգապահական հանձնաժողով: Հանձնաժողովի որոշումից հետո, դատավորը նվերը կամ կարող է ընդունել կամ վերադարձնել կամ համարժեք հատուցում վճարել, կամ էլ հանձնել պետությանը կառավարության կողմից սահմանված կարգով: Միաժամանակ, «Ղատական օրենսգրքի» հոդված 73-ի 4-րդ մասում դատավորի համար թույլատրելի

նվերների շարքում նախատեսված է«3) մերձավոր ազգականից ստացված նվերները,ինչպես նաև 4) բարեկամից ստացված նվերները, եթե **նվերն էությանը և չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջև** հարաբերությունների բնույթին»: Դատավորի համար մերձավոր ազգական է համարվում « դատավորի ամուսինը, դատավորի կամ նրա ամուսնու ծնողը, դատավորի կամ նրա ամուսնու զավակը, զավակի ամուսինը, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրը, քույրը, պապը, տատը, թոռը, ծոռը, դատավորի կամ նրա ամուսնու եղբոր կամ քրոջ ամուսինը, զավակը, դատավորի կամ նրա ամուսնու որդեգրողը կամ որդեգրվածը»: Այդուհանդերձ, ինչպես տեսնում ենք դատավորի մերձավոր ազգականների շրջանակը բավականին լայն է, իսկ դրանց կողմից ստացված նվերների ողջամտության աստիճանը պետք է որոշի դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը: Առավել անհասկանալի է «բարեկամ» եզրույթը, որի շրջանակը դատական օրենսգիրքը չի սահմանել: Այս պայմաններում թույլատրելի նվերների ստացման պայմանները դատավորի էթիկայի և կարգապահական հանձնաժողովի համար մնում են խիստ հայեցողական, իսկ դատավորի համար բացակայում են կոնկրետ պայմանները և չափորոշիչները՝ նվերը ծառայողական պարտականություններին դասելու մասով:

**Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների** մասով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը համայնքի ղեկավարի և ավագանու համար նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ կարգավորումներ չի պարունակում: Նրանց համար գործում է ՀԾՄ օրենքով սահմանված նվերներ ընդունելու ընդհանուր արգելքի կարգավորումները:

**Դատախազների համար** «Դատախազության մասին» ՀՀ օրենքի «Դատախազի նկատմամբ կիրառվող սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները» հոդված 49-ի մաս 4-ում սահմանված է, որ դատախազը իրավունք չունի «6) պաշտոնական պարտականությունների կատարման համար այլ անձանցից ստանալու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի»:

**Քննիչների համար** «Քննչական կոմիտեի մասին» և «Հատուկ քննչական ծառայության» մասին ՀՀ օրենքները քննիչների կողմից նվերներ ընդունելու արգելքի կարգավորման վերաբերյալ դրույթներ չեն պարունակում: Սակայն, եթե նվերներ ընդունելու արգելքը դիտվում է, որպես քննիչի նկատմամբ կիրառվող սահմանափակում, ապա այս պարագայում կիրառելի է «քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի, իսկ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի դրույթները, որով հատուկ քննչական ծառայությունում և քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմանափակումները:

**Հանրային ծառայության առանձին տեսակների մասով քաղաքացիական, փրկարար, հարկային, մաքսային, քրեակատարողական ծառայողների** համար նվերեր ընդունելու արգելքի կարգավորումները իրականացվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերին համապատասխան: **Ազգային անվտանգության մարմինների,**

**նստիկանության, հարկադիր կատարման, համայնքային, դիվանագիտական ծառայությունների համապատասխան օրենքներում՝** ծառայողներին ներկայացվող սահմանափակումների շարքում արձանագրված է, որ ծառայողը իրավունք չունի «ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի» սահմանափակումը:

Ինչպես ցույց է տալիս հանրային ծառայության առանձին ոլորտներում նվերների ընդունման արգելքի կամ սահմանափակման օրենսդրական կարգավորումների վերլուծությունը, ըստ ելույթի միայն դատական օրենսգրքում է ամբողջությամբ կիրառված դատավորների գործունեության առանձնահատկություններով պայմանավորված նվերներ ստանալու արգելքի կամ սահմանափակման դրույթները: Մյուս ոլորտային օրենքներում կամ բացակայում են նվերների ընդունման արգելքի կարգավորումները, կամ էլ դրանք ընդամենը սահմանափակման արձանագրումն է՝ առանց կարգավորման գործիքների ու կառուցակարգերի:

ՀԾՄ օրենքում «թույլատրելի նվերների ստացման» գործընթացում առկա են մի շարք անհամապատասխանություններ: Մասնավորապես, կարգավորված չէ հանրային պաշտոնյայի կողմից 60,000-ից ցածր արժեք ունեցող թույլատրելի նվերների ընդունման և հանձնման գործընթացը: Միաժամանակ, կանոնակարգված չէ, թե ի՞նչպես պետք է վարվեն պաշտոնատար անձինք, հատկապես թույլատրելի համարվող նվերների դեպքերին չվերաբերող, սակայն պաշտոնեական պարտականությունների վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող նվերների հետ: Կառավարության «նվերների հաշվառման և հանձնման կարգի» բացակայության պայմաններում լուծված չէ նվերների հաշվառման ու հանձնման գործընթացի իրականացումը ապահովող մարմնի կամ մարմինների հարցը, հստակեցված չէ ԿԿՀ-ի դերակատարումը այս գործընթացում: Նվերների ընդունման արգելքի կարգավորման մասով բացակայում է հանրային պաշտոնյաների ու ծառայողների կողմից պաշտոնեական պարտականություններով պայմանավորված նվերների ընդունման մասին տեղեկատվության հրապարակայնության ապահովման հարցերը:

Նվերների ընդունման արգելքի սահմանման միջազգային փորձը բավականին համահունչ է հայաստանյան օրենսդրական կարգավորումներին: Այսպես, Սերբիայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 6-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է նվերների ընդունման արգելքին: Օրենքի հոդված 57-ով տրված է նվերի սահմանումը, իսկ հոդված 58-ով սահմանված է նվերներ ընդունելու արգելքը, որը վերաբերում է ծառայողական պարտականություններով պայմանավորված նվերներին: «Հանրային պաշտոնյան և նրա ընտանիքի անդամները չպետք է ընդունեն նվերներ կապված հանրային պաշտոնյայի

պաշտոնավարման հետ՝ բացառությամբ արարողակարգային բնույթ կրող նվերներից կամ պատշաճ նվերներից»:<sup>37</sup>

Սլովենիայի «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 30-ում նվերներ ընդունելու արգելքը վերաբերվում է միայն հանրային պաշտոն զբաղեցնողին, կապված պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ: Բացառություն է կազմում արարողակարգային նվերները կամ «փոքր արժեքով» երբեմն տրված նվերները: Փոքր արժեքով նվերներ են համարվում նույն անձի կողմից միևնույն տարվա ընթացքում տրված նվերները, որոնց հանրագումարային արժեքը չի գերազանցում 150 եվրոն, իսկ առանձին կտոր նվերը 75 եվրոն: Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ դրամական միջոցները, արժեթղթերը և թանկարժեք մետաղները չեն կարող ընդունվել որպես «փոքր արժեքով» նվերներ:<sup>38</sup>

Լիտվայի «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» օրենքի հոդված 14-ի կենտրոնական կամ տեղական ծառայությունում գտնվող անձը չի կարող անմիջապես կամ անուղղակի կերպով ընդունել նվերներ կամ ծառայություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են իր պաշտոնեական պարտականությունների կատարման հետ: Բացառություն են կազմում միջազգային արարողակարգային նվերները, որոնք եթե գերազանցում են 500 լիտասը համարվում են պետական սեփականություն:<sup>39</sup>

## **Առաջարկություններ**

- 1.5.1 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի «Նվերներ ընդունելու արգելքը» հոդված 29-ը լրացնել թույլատրելի համարվող նվերների մասով հանրային պաշտոնյայի ու ծառայողի կողմից 60,000-ից ցածր արժեք ունեցող թույլատրելի նվերների ընդունման և հանձնման գործընթացի, թույլատրելի նվերների դեպքերին չվերաբերող, սակայն պաշտոնեական պարտականությունների վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող նվերների մասով կարգավորումները, ինչպես նաև հանրային պաշտոնյաների ու ծառայողների կողմից պաշտոնեական պարտականություններով պայմանավորված նվերների ընդունման մասին տեղեկատվության հրապարակայնության ապահովման հարցերը.**
- 1.5.2 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի «նվերների ընդունման արգելքը» հոդված 29 և 30-ով սահմանված կարգավորումները կիրառելի դարձնել բոլոր հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների համար:**
- 1.5.3 Աժ պատգամավորների, դատավորների, դատախազների, համայնքի ավագանու անդամների համար, գործունեության առանձնահատկություններով**

<sup>37</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը, Հոդված 55: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

<sup>38</sup> «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենք <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>

<sup>39</sup> «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» Լիտվայի օրենքը <https://e-seimas.lrs.lt/portal/legalActPrint/t?ifwid=rivwzvpvg&documentId=TAIS.46177&category=TAD>

պայմանավորված դրույթները սահմանել «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» և «Դատախազության մասին» ՀՀ օրենքներով.

- 1.5.4 «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «դատավորի կողմից «նվերներ ընդունելու սահմանափակումը» հոդվածում սահմանել «բարեկամ» եզրույթի շրջանակը կամ ընդհանրապես հրաժարվել այդ շրջանակի անձանցից նվերների ընդունման կարգավորումներից՝ հիմք ընդունելով պաշտոնական պարտականությունների վրա ազդեցության ունենալու հանգամանքները.
- 1.5.5 Հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներում ուժը կորցրած ճանաչել տվյալ ոլորտի ծառայողների «պաշտոնական պարտականություններով պայմանավորված նվերներ ընդունելու» սահմանափակման ընդհանրական ձևակերպումը և համապատասխան հղում կատարել ՀԾՍ օրենքի հոդված 29-ին և 30-ին:

## II. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՅԱՅՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

### 2.1 Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրումը

Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ստուգման կարևորագույն գործիքներից է, որի միջոցով ի հայտ է բերվում կամ բացահայտվում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների բարեկեցության աստիճանը, նրանց ունեցած անձնական և մասնավոր շահերը՝ նպատակ ունենալով կանխարգելել պաշտոնատար անձանց ապօրինի հարստացման ռիսկերը, իսկ շահերի բացահայտման միջոցով՝ նրանց զերծ պահել օգտագործել պաշտոնական դիրքը, ի շահ սեփական (մասնավոր) կարիքների կամ փոխկապակցված այլ անձանց արտոնություններ շնորհելուն:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգը Հայաստանում ներդրվել է 2011 թ-ից՝ սկզբնական շրջանում միայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար, իսկ 2017թ.-ից այն ամբողջությամբ տարածվեց նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու հանրային ծառայողների առանձին խմբերի վրա:

Հայաստանում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների գույքի, եկամուտների ու շահերի հայտարարագրման համակարգը կառուցված է «մեկ կարգավորում, տարբեր պաշտոնատար անձանց համար» սկզբունքով,<sup>40</sup> որը ելթադրում է, որ հայտարարագրման

---

<sup>40</sup> Fighting Corruption in Eastern Europe and Central Asia. Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption. [Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption](http://www.oecd.org/daf/anti-bribery/47489446.pdf), OECD, 2011 էջ, 13: <http://www.oecd.org/daf/anti-bribery/47489446.pdf>

պարտականություն ունեցող բոլոր պաշտոնատար անձինք հայտարարագրերը լրացնում ու ներկայացնում են պատասխանատու կառույցին ուղղակիորեն՝ առանց միջնորդավորված օղակների, հայտարարագրերի վերլուծությունը, արժանահավատության ստուգումը, սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ հայտարարագրերի լրացմանը ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը կամ հայտարարագրերում անզուգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար պատասխանատվության միջոցների կիրառումը իրականացվում է մեկ մարմնի՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից:

Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգին ներկայացվող պահանջները՝ հայտարարատուների շրջանակի, հայտարարագրերի ներկայացման ժամկետների ու պարբերականության, տեսակների, հրապարակման ու արխիվացման, հայտարարագրերի վերլուծության ու արժանահավատության ստուգման հարցերը սահմանված են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքներով: ՀՃՄ օրենքի 6-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի բովանդակությանը: ՀՃՄ օրենքը սահմանում է հայտարարագրման պարտականություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շրջանակը, հայտարարագրերի ներկայացման պարբերականությունը և ժամկետները (ստանձնման, տարեկան և դադարեցման), պաշտոնատար անձի հայտարարագրման պարտականություն ունեցող ընտանիքի անդամների կազմը, հայտարարագրում փոփոխություն կատարելու, հայտարարագիրը լրացնելու և ներկայացնելու եղանակը, հայտարարագրերի հրապարակման և արխիվացման պայմանները, հայտարարագրի բովանդակությունը:

ՀՃՄ օրենքի «Հայտարարագրի բովանդակության» գլխի հոդված 39-ով սահմանված են հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի ու մերձավոր ազգակցությամբ ու ինսամիությամբ կապված անձանց վերաբերյալ ընդհանուր տվյալները:

«Գույքի հայտարարագրի»՝ հոդված 40-ում, պահանջվում է հայտարարագրել տվյալներ անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների, արժեթղթերի, հանձնված, վերադարձված փոխառությունների, ութ միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքի և դրամական միջոցների վերաբերյալ:

«Եկամուտների հայտարարագրում»՝ հոդված 41, ներառված են տվյալներ ֆիզիկական անձանց եկամտահարկով հարկման ենթակա եկամտի հիմնական հոդվածներով ստացվող եկամտի տեսակները՝ աշխատանքի վարձատրությունը և այլ վճարումները, ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը, ստացված փոխառությունները (վարկերը), տրված փոխառությունների դիմաց ստացված տոկոսը և այլ հատուցումը, շահաբաժինները, խաղատներում կամ շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները), մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները), նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով



ստացված), ժառանգության կարգով ստացված գույքը (նաև դրամական միջոցները), ապահովագրական հատուցումները, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը, գույքը (նաև հայտարարագրման ոչ ենթակա) օտարելուց ստացված եկամուտը, վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցում, միանվագ վճարները, գույքային իրավունքներից ստացված եկամուտը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը, կենսաթոշակը, գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը և այլ եկամուտները:

«Շահերի հայտարարագիրը»՝ հոդված 42, պահանջում է պաշտոն զբաղեցնող անձից հայտարարագրել՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում մասնակցության, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածության, առևտրային կազմակերպության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու, կուսակցություններին անդամակցության և դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածության, իր և իր ընտանիքի անդամների, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ տվյալներ:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի հոդված 25-ը կարգավորում է հայտարարագրերի ստուգման և վերլուծության գործընթացները՝ սահմանելով հայտարարագրերի ստուգման և վերլուծության մեթոդները, հանձնաժողովի իրավասությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, այդ մարմինների էլեկտրոնային տեղեկատվական բազաների հետ փոխգործակցելիության և հայտարարագրման ենթակա տվյալներին ԿԿՀ առցանց հասանելիությունը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց **գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրում ներառվող տվյալների շրջանակը** ինքնանպատակ չէ: Մի կողմից, այն միտված է ապահովելու ԿԿՀ-ին բացահայտել ապօրինի հարստացման երևույթի ռիսկերը, մյուս կողմից, հայտարարագրման ենթակա տվյալների հրապարակման միջոցով՝ հանրությանը տեղեկացնել պաշտոնատար անձի բարեկեցության (կենցաղավարության) մասին: Միաժամանակ, գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրումը, հայտարարագրման ենթակա տվյալների միջոցով, միտված է ապահովելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բացահայտմանը: Այսպես, հայտարարատու պաշտոնատար անձի անձնական տվյալների բաժնում ընտանիքի անդամների ու մերձավոր ազգակցությամբ ու խնամիությամբ կապված անձանց վերաբերյալ տվյալները ցույց են տալիս պաշտոնատար անձի անձնական շահերի շրջանակը:

Գույքի և եկամուտների հայտարարագրերում, գույքի առանձին տեսակների ձեռքբերման ու օտարման գործարքների կողմի, գույքի ձեռքբերման եղանակի, դրամական միջոցների

ծագման աղբյուրների և եկամտի ստացման աղբյուրների (վճարողի) վերաբերյալ տվյալները վկայում են պաշտոնատար անձի ֆինանսական, տնտեսական շահերի մասին:

Շահերի հայտարարագրում, պաշտոնատար անձի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններում պաշտոնների զբաղեցման, կուսակցական պատկանելության և կուսակցությունում պաշտոնների զբաղեցման, առևտրային կազմակերպություններում մասնակցության (գույքը, բաժնեմասը, բաժնետոմսը, փայրը) հավատարմագրային կառավարման հանձնելու, պետական և համայնքային գնումների գործընթացում իր և իր ընտանիքի անդամի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կողմից կնքված պայմանագրերի մասով տվյալները ամբողջությամբ միտված են բացահայտելու հայտարարատու պաշտոնատար անձի անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և նվերներ ընդունելու արգելքի հավանական խախտումները, իսկ որոշ դեպքերում իրավիճակային շահերի բախման հանգամանքները:

Վերջին տարիներին հայտարարագրման համակարգի օրենսդրական փոփոխությունների արդյունքում էապես բարելավվել է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի բովանդակությունը: Այդուհանդերձ, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի բացահայտման տեսանկյունից հայտարարագրում դեռևս առկա չեն բավարար տվյալներ: Մասնավորապես, խնդիրը վերաբերում է հայտարարագրի «անձնական տվյալներ» բաժնին, որտեղ ՅԾՄ օրենքի հոդված 39-ով պահանջվում է հայտարարագրել «3) հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ» տվյալները: ՅԾՄ օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձինք են հայտարարատու պաշտոնատար անձի ամուսինը, ծնողը, զավակը, եղբայրը, քույրը, ամուսնու ծնողը, զավակը, եղբայրը և քույրը»: Անձնական տվյալներ բաժնում մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց վերաբերյալ պահանջվող տվյալների շրջանակը հնարավորություն չի ստեղծում ամբողջապես ի հայտ բերելու, ՅԾՄ օրենքի հոդված 32-ի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված, հայտարարատու պաշտոնատար անձի հետ «մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձանց հետ համատեղ աշխատելու, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ» սահմանափակման պահանջների խախտման բացահայտման հանգամանքը, քանի որ մերձավոր ազգակցությամբ և խնամփութությամբ կապված անձանց մասով հայտարարագրման ենթակա տվյալների շարքում բացակայում են նրանց աշխատանքային գործունեությունը բնութագրող տվյալները՝ աշխատանքի վայրը, զբաղմունքը, կարգավիճակը կամ պաշտոնը:

## **Առաջարկություններ**

**2.1.1 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի «հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալներ» հոդված 39-ի 1-ին մասի 3-րդ կետը լրացնել «անձնագրի**

**տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը) կամ զբաղմունքը» բառերով.**

Հաջորդ խնդիրը վերաբերում է **հանրային պաշտոնյաների ու ծառայողների ծառայողական պարտականություններով չպայմանավորված նվերների հայտարարագրմանը**: ՀԾՄ օրենքի հոդվածներ 40 և 41-ով՝ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի «գույքի բովանդակությունը» բաժնում պահանջվում է հայտարարագրել նվիրատվության եղանակով ստացված անշարժ գույքի, տրանսպորտային միջոցների, արժեթղթերի և թանկարժեք գույքի ստացման և օտարման գործարքները, իսկ «եկամուտների հայտարարագրի բովանդակությունը» բաժնում՝ «նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացված)»-ի: Այսինքն՝ այն նվիրատվությունները, որոնք իրենցից աշխատանք և ծառայություններ չեն ներկայացնում: Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների արդյունքում ստացված նվիրատվությունները, օգնությունները կամ ժառանգության կարգով ստացված գույքը հայտարարագրվում է կրկնակի, մի դեպքում համապատասխան գույքի տեսակի ներքո, մյուս դեպքում որպես եկամտի ինքնուրույն տեսակ: Մինչդեռ, գույքի և դրամական միջոցների տեսքով նվիրատվությունների հայտարարագրման տվյալներում բացակայում են նվիրատվության պայմանների և հանգամանքների, ինչպես նաև պաշտոնատար անձի հետ նվիրատուի ազգակցական կամ այլ կապի վերաբերյալ տվյալները: Վերջինիս առկայությունը շատ կարևոր է հանրային պաշտոնյայի և ծառայողի կողմից նվիրատվության ստացման գործում շահերի նույնականացման, ինչպես նաև պաշտոնյայի վրա կոռուպցիոն ռիսկերի ունեցած ազդեցության գնահատման տեսանկյունից: Բացի այդ, հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի կողմից աշխատանքի և ծառայությունների տեսքով ստացված նվիրատվությունները մնում են հայտարարագրումից դուրս և հիմք չեն հանդիսանում ապօրինի հարստացման երևույթի ռիսկերի բացահայտման համար:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի<sup>41</sup> հոդված 8-ով առաջարկվում է ՀԾՄ օրենքի հոդված 41-ի 6-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2) եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանունը, անունը եւ հայրանունը, հասցեն, **եկամուտ վճարողի եւ նրանց միջեւ առկա կապի բնույթի մասին տեղեկատվություն**»: Այս լրացմամբ լուծում կստանա նվերներ ստանալու արգելքի բացահայտման գործում պաշտոնատար անձի հետ նվիրատուի ազգակցական կամ այլ կապի վերաբերյալ տվյալների հայտարարագրման պահանջը: Սակայն, հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի կողմից աշխատանքի և ծառայությունների տեսքով ստացված նվիրատվությունները կմնան հայտարարագրումից դուրս: Նույնիսկ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով ծախսերի հայտարարագրման

<sup>41</sup> ՀՀ ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի թիվ Կ-696-24.07.2020, 10.09.2020-ՊԻ-01 1/1 նախագիծը, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=59517> : Դիտվել է 22.09.2020թ.-ին:

պարտականությունն սահմանափակելու պայմաններում ծախսերի հայտարարագրում բացակայում են ծառայությունների ու աշխատանքների դիմաց կատարված ծախսերի համար վճարողների վերաբերյալ տվյալները: Օրինակ, որպես սվիրատվություն ստացած հանգստի կամ անշարժ գույքի վերանորոգման կամ գյուղատնտեսական ծառայությունների դիմաց ստացված սվիրատվությունները մնալու են հայտարարագրումից դուրս, քանի որ ՀՃՄ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով հայտարարագրման է ենթակա միայն «8) սվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները **(բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացված)**»: Այսինքն, օրենքի նախագծով միայն դիտարկված են հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների կողմից կատարված ծախսերը, իսկ նրանց փոխարեն այդ ծախսերի դիմաց վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

## **Առաջարկություններ**

- 2.1.2 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի «Հոդված 7-ի Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 40.1-ին հոդվածով «Հոդված 40.1 Ծախսերի հայտարարագրի բովանդակությունը» հոդվածի 4-րդ մասում « 4) Ծախսի արժույթը» բառերից հետո ավելացնել «5). Վճարողի անունը, ազգանունը, հայրանունը, եղանակը, ազգակցական կապի վերաբերյալ տվյալներ» բառերը.
- 2.1.3 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի «Հոդված 8-ի Օրենքի 41-րդ հոդվածում՝ 4-րդ մասի 8)-րդ կետից հանել «(բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացված)» բառերը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 6-ի (ՀՃՄ օրենքի հոդված 40) 3-րդ մասը լրացվել է «նրանց միջև առկա կապի բնույթը» բառակապակցությամբ: Մինչդեռ, գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրում «տրանսպորտային միջոցների» և «թանկարժեք գույքի» տեսակների համար բացակայում է հայտարարատուի և համասեփականատիրոջ միջև «առկա կապի բնույթը» բնութագրող տվյալը: Համանման խնդիր է արձանագրված նաև ՀՃՄ օրենքի հոդված 40-ի 4-րդ մասում, տարեկան հայտարարագրի բաժնում, հայտարարագրման ենթակա՝ «անշարժ գույք, տրանսպորտի միջոց, թանկարժեք գույք ձեռք բերելու կամ օտարելու գործարքները՝ նշելով գույքի տեսակը, ձեռք բերելու կամ օտարելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն» տվյալներում, որի դեպքում նույնպես բացակայում է գործարքի կողմ հանդիսացող անձի հետ «առկա կապի բնույթը» տվյալը:

## **Առաջարկություններ**

- 2.1.4 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի Հոդված 6-ի «Օրենքը լրացնել հետևյալ

բովանդակությամբ՝ 40-րդ հոդվածի «3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ» մասում տրանսպորտային միջոցի և թանկարժեք գույքի դեպքում կետերում ավելացնել «նրանց միջև առկա կապի բնույթը» բառերը:

2.1.5 նույն օրենքի նախագծի հոդված 6-ում (հոդված 40-ի 4-րդ մաս) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Տարեկան հայտարարագրում ներառվում են նաև տվյալ տարվա (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) ընթացքում հայտարարագրման ենթակա անշարժ գույք, տրանսպորտի միջոց, թանկարժեք գույք ձեռք բերելու կամ օտարելու գործարքները՝ նշելով գույքի տեսակը, ձեռք բերելու կամ օտարելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, նրանց միջև առկա կապի բնույթը»:

Շահերի բախման բացահայտման տեսանկյունից, գույքի, եկամուտների, շահերի հայտարարագրման գործիքի կիրառման ժամանակ կարևոր նշանակություն ունի **հայտարարագրման պարտականությունն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի սահմանումը**: ԴՄ օրենքի հոդված 34-ի 2-րդ մասով սահմանված են շահերի հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց ցանկը, այն է «Պետական պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք սույն օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր»: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի Հոդված 3-ի «ԴՄ օրենքի 34-րդ հոդվածում» առաջարկվում է շահերի հայտարարագրման պարտականություն սահմանել նաև ««համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 եւ ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների», «Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երեւան համայնքի ավագանու անդամների» համար: Արդյունքում, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց խմբից, շահերի հայտարարագրման պարտականություն չեն ունենա միայն պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, իսկ համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք ընդհանրապես հայտարարագրման պարտականություն չունեն: Մինչդեռ, ԴՄ օրենքի հոդված 8-ի 3-րդ մասով, պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց շարքում թվարկված են «...Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների պաշտոնները, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոնը, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի պաշտոնը... », որոնք արտաքին քաղաքականության ոլորտում իրենց վերապահված լիազորությունների շրջանակում որոշումների կայացման գործընթացում ճանաչված են պատասխանատուներ, սակայն այդ խումբ պաշտոնյաների շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի բացահայտման գործընթաց չի իրականացվելու:

ինչպես վկայում է միջազգային փորձը,<sup>42</sup> «Ակտիվների հայտարարագրումը պարտադիր չէ, որ կապակցված լինի պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնի աստիճանակարգին, այլ այն պետք է պայմանավորված լինի տվյալ պաշտոնատար անձին վերապահված լիազորությունների իրականացման ժամանակ որոշումների կայացման և կառավարման գործառնություններով և դրանցով պայմանավորված շահերի բախման ռիսկերի ու պաշտոնական դիրքի չարաշահման հնարավորություններով: Ակտիվների հայտարարագրման պարտականությամբ պետք է ներառվեն նաև պետական մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև պետական ծառայություն մատուցող ոչ պետական կազմակերպությունների ղեկավարները»: Միաժամանակ, շահերի բախման և պաշտոնական պարտականություններով պայմանավորված պաշտոնական դիրքի չարաշահման ռիսկերի բացահայտման տեսանկյունից առանձին երկրներ կիրառում են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների առանձին ցանկերի սահմանման մոտեցումը:<sup>43</sup> Այստեղ, երկրների միջև տարբերությունները պայմանավորված են թե տվյալ երկրում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակը որքանով է համապատասխանում օրենսդրորեն սահմանված «հանրային պաշտոնյա» կամ «հանրային ծառայող» եզրույթներին, ինչպես նաև հանրային ծառայության շրջանակին: Երկրների մի մասում հանրային ծառայությունը ներառում է նաև պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված հանրային ծառայությունների մատուցում իրականացնող մասնավոր կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունների ղեկավարներին, ԱԺ պատգամավորների ու ՏԻՄ ավագանու անդամների թեկնածուներին, շատ դեպքերում նաև պետական գնումների գործընթացում ներգրավված հանրային ծառայողներին՝ առանց պաշտոնների աստիճանակարգման: Նման մոտեցում է ժառանգել նաև Հայաստանը, ՀԾՄ օրենքի հոդված 34-ով սահմանելով հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց ցանկեր կամ պաշտոնների կոնկրետ խմբերի անվանումներ: Այդ ցանկերը ամեն տարի կամ պարբերաբար ՀԾՄ օրենքում փոփոխությունների ու լրացումների միջոցով ընդլայնվում են: Այսպես, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի<sup>44</sup> հոդված 3-ով նախատեսվում է հայտարարագրման պարտականություն սահմանել նաև ««համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 եւ ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների, «Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երեւան համայնքի ավագանու անդամների», «հարկային, մաքսային ծառայությունների գլխավոր խմբի ծառայողների, «Ազգային Ժողովի աշխատակազմում պետական ծառայության եւ դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձանց»

<sup>42</sup> Fighting Corruption in Eastern Europe and Central Asia. Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption. [Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption](http://www.oecd.org/daf/anti-bribery/47489446.pdf), OECD, 2011 էջ.14: <http://www.oecd.org/daf/anti-bribery/47489446.pdf>

<sup>43</sup> Fighting Corruption in Eastern Europe and Central Asia. Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption. [Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption](http://www.oecd.org/daf/anti-bribery/47489446.pdf), OECD, 2011 էջ 50-54: <http://www.oecd.org/daf/anti-bribery/47489446.pdf>

<sup>44</sup>ՀՀ ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի թիվ Կ-696-24.07.2020, 10.09.2020-ՊԻ-011/1 նախագիծը, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=59517>: Դիտվել է 22.09.2020թ.

համար: Մինչդեռ, հանրային ծառայության բարձրագույն խմբի կամ քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի ծառայողները, ինչպես նաև քաղաքական որոշումների կայացման գործընթացում մասնակցություն ունեցող հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք ներառված չեն շահերի հայտարարագիր ներկայացնող պաշտոնյաների ցանկում: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն են ունենալու համայնքի աշխատակազմի ղեկավարները, մինչդեռ նույն գործառնություններով օժտված քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ խմբի (գլխավոր քարտուղարներ, նրանց տեղակալներ) ծառայողները շահերի հայտարարագիր չեն ներկայացնելու:

Շահերի բախման բացահայտման տեսանկյունից ՀԾՄ օրենքով շահերի հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց ցանկը կախվածության մեջ է դրված ԿԿՀ-ին վերապահված լիազորության հետ: Մասնավորապես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ով հանձնաժողովը «1) քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ»: Արդյունքում, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող ավագանու անդամների ու համայնքի աշխատակազմի ղեկավարների հայտարարագրերը շահերի բախման ռիսկերի բացահայտման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների մասով մնալու են չուսումնասիրված և չբացահայտված:

Դրա հետ մեկտեղ, ՀԾՄ օրենքը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շրջանակում չի ներառում պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավար կամ կառավարման լիազորություններով օժտված պաշտոն զբաղեցնող անձանց:

## **Առաջարկություններ**

**2.1.6 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով վերանայել շահերի հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց ցանկը՝ դրանում ներառելով Հայաստանի**

Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների պաշտոնները, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոնը, Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի պաշտոնը, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբի պաշտոնները, շահերի բախման ռիսկերի տեսանկյունից առավել խոցելի հանրային ծառայության առանձին տեսակների՝ հարկային, մաքսային, հարկադիր, քրեակատարողական, դիվանագիտական, փրկարար, ոստիկանությունում ծառայությունների բարձրագույն և գլխավորի խմբերի ծառայողներին.

2.1.7 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով հայտարարագրման, այդ թվում շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն սահմանել պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավար, ներկայացուցչական և կառավարման լիազորություններով օժտված պաշտոնատար անձանց նկատմամբ.

2.1.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով հոդված 24-ում լրացում կատարելու միջոցով՝ ԿԿՀ-ին վերապահել շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների հնարավոր խախտումների կամ ռիսկերի բացահայտման լիազորություն:

Հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շահերի բախման բացահայտման գործընթացում կարևոր նշանակություն ունի նրանց **ընտանիքի անդամների շահերի հայտարարագրման** հանգամանքը: ՀԾՄ օրենքի հոդված 34-ի 5-րդ մասով սահմանված է, որ «5. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամները հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրերում ներկայացնում են իրենց **գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ**», իսկ նույն հոդվածի 8-րդ մասում նշվում է, որ «8. Հայտարարատու պաշտոնատար անձի **ընտանիքի չափահաս անդամները** համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց **գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալները**, պատասխանատու են դրանց իսկության համար»: Այսինքն, հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոնատար անձի ընտանիքի անդամները պաշտոնատար անձի հայտարարագրում ներկայացնում են միայն գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ: Մինչդեռ, ՀԾՄ օրենքի «Շահերի հայտարարագրի բովանդակությունը» հոդված 42-ի 1-ին մասի «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում», «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» և «Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերը» բաժիններում պահանջվում է ներկայացնել տվյալներ ոչ միայն



պաշտոնատար անձի շահերի վերաբերյալ, այլև ընտանիքի անդամների:Նկատի ունենալով,որ ընտանիքի անդամների շահերը, ըստ էության նույնական են կամ կարող են ներկայացվել որպես պաշտոնատար անձի ընդհանուր շահեր և հաշվի առնելով, որ հայտարարագրման ենթակա են ընտանիքի անդամների ֆինանսական ու տնտեսական շահերը, ապա նպատակահարմար է շահերի հայտարարագրում բացահայտել նաև ընտանիքի անդամների շահերը՝ ոչ առևտրային կազմակերպությունների, կուսակցություններին մասնակցության, ինչպես նաև դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածության ձևով:

## **Առաջարկություններ**

### **2.1.9 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով հոդված 42-ի 4-րդ և 5-րդ մասերում «պաշտոնատար անձն» բառերից հետո լրացնել «և (կամ) նրա ընտանիքի անդամները» բառերը:**

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման բացահայտման գործում գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման գործիքը կիրառվում է նաև մինչև պաշտոնի ստանձնման ժամանակ, որպես թեկնածու հանդիսանալու կամ առաջադրվելու ժամանակահատվածում: Հայաստանում նման պրակտիկա գործում է Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրություններին ավագանու անդամների թեկնածուների մասով: Այսպես, «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հոդված 8-ի 5-րդ մասով «Գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում, թեկնածուները համապատասխան ընտրական հանձնաժողով են ներկայացնում իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիր:Ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում, ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում կուսակցության (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր:Հայտարարագրում նշվում են սույն օրենսգրքով սահմանված գրանցման համար փաստաթղթերի ներկայացման ամսվա 1-ի դրությամբ գույքի կազմը, ինչպես նաև գրանցման փաստաթղթերի ներկայացման ժամկետի ամսվան նախորդող 12 օրացուցային ամիսների ընթացքում ստացված եկամուտները:Հայտարարագրերի ձևերը (Էլեկտրոնային ձևերը) և ներկայացման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. հունիսի 17-ի N 23-Ն որոշման հավելված 1-ով հաստատվել են «Թեկնածուի գույքի և եկամուտների էլեկտրոնային ձևաթուղթը»<sup>45</sup>, ներառյալ՝ դրա լրացման ուղեցույցը: Հանրային պաշտոն

<sup>45</sup> ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքէջը, <https://www.elections.am/edocuments/>

զբաղեցնող անձանց և ծառայողների գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի հետ համադրության արդյունքում պարզ երևում է, որ ԱԺ պատգամավորների և համամասնական ընտրակարգով ՏԻՄ ավագանու անդամների թեկնածուների գույքի, եկամուտների հայտարարագիրը չի պարունակում տվյալներ պատգամավորի և ավագանու անդամի՝ ներառյալ համայնքի ապագա ղեկավարի ու տեղակալի՝ պոտենցիալ շահերի բախման բացահայտման վերաբերյալ տվյալներ: Թեկնածուների ֆինանսական, անձնական, տնտեսական շահերի շրջանակը պարզելու տեսանկյունից, նույնիսկ գույքի և եկամուտների հայտարարագրում պահանջվող տվյալների շրջանակը բավականին աղքատիկ է: Դրա հետ մեկտեղ, թեկնածուների հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից չեն ենթարկվում վերլուծության, իսկ հրապարակման ժամանակ անձնական և երրորդ կողմի տվյալները պաշտպանված չեն, դրանք ամբողջությամբ հրապարակվում են՝ հակասության մեջ մտնելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների հետ:

## **Առաջարկություններ**

- 2.1.10 Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրություններին ավագանու անդամների թեկնածուների գույքի, եկամուտների հայտարարագրման համակարգը հարմոնացնել կամ համապատասխանեցնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի բովանդակությանը.
- 2.1.11 Հայտարարագրման համակարգը միասնականացնելու տեսանկյունից այդ աշխատանքների կազմակերպումը տեղափոխել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ ապահովելով վերջինիս կազմում կուսակցությունների ֆինանսավորման և թեկնածուների հայտարարագրման կառուցվածքային ստորաբաժանում.
- 2.1.12 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով հայտարարագրման պահանջ սահմանել նաև դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց համար.
- 2.1.13 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանել, որ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների պաշտոնների թեկնածուների կողմից որպես թեկնածու ԿԿՀ-ին ներկայացրած հայտարարագրերը ճանաչվում են որպես պաշտոնի ստանձնման հայտարարագիր և նոր հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չի առաջանում:

Հանրության մոտ կոռուպցիայի ընկալումների ձևավորման և հանրային պաշտոնյաների ու ծառայողների հանդեպ վստահության ձևավորման, շահերի բախման բացահայտման գործում կարևորվում է գույքի, եկամուտների և **շահերի հայտարարագրերի հրապարակայնացման գործընթացը**: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 43-ը հայտարարագրի տվյալների հրապարակայնացման գործընթացի կարգավորման լիազորությունը վերապահել է ՀՀ Կառավարությանը: ՀՀ կառավարության 2020թ. մարտի 12-ի թիվ 306-Ն «Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված՝ հրապարակման

(տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին») որոշմամբ սահմանված են հրապարակման ենթակա տվյալների շրջանակը: Համաձայն վերոնշյալ որոշման, հրապարակման ենթակա չեն հայտարարատու պաշտոնատար անձի և ընտանիքի չափահաս անդամների՝ անձնագրային, բնակության ու հաշվառման հասցեներին և հաղորդակցության միջոցներին վերաբերող, ինչպես նաև մերձավոր ազգակցությամբ և խնամփութությամբ կապված անձանց տվյալները: ՀԾՄ օրենքի հոդված 43-ի 3-րդ մասով հրապարակման ենթակա չեն նաև ընտանիքի անդամ հանդիսացող «անչափահասի հայտարարագրի տվյալները, բացառությամբ նրա անվան, հայրանվան և ազգանվան»:

Շահերի բախման բացահայտման տեսանկյունից, օրենսդրական նոր կարգավորման պայմաններում, ՀՀ կառավարության 2020թ. մարտի 12-ի թիվ 306-Ն որոշման հավելվածով, հրապարակման ենթակա կլինի անշարժ գույքի գտնվելու վայրի՝ երկրի, մարզի, համայնքի անվանումը: ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հայտարարագրում ներառված, հրապարակման ենթակա տվյալների ցանկը ընդլայնվել է նաև այսպես կոչված գործարքի կողմ հանդիսացող սուբյեկտներին վերաբերելի տվյալների մասով: Շահերի հայտարարագրից հրապարակման ենթակա կլինեն, ըստ եռության, բոլոր տվյալները առանց սահմանափակման, որը թե՛ գույքի, թե՛ եկամուտների և թե՛ շահերի հնարավոր բախումների մասով լայն հնարավորություններ կընձեռնի հանրությանը, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և լրագրողների հանրությանը առավել ամբողջական պատկերացում կազմելու հանրային պաշտոն զբաղեցնող անձի ստացվող եկամուտների, գույքի աղբյուրների և շահերի մասին: Բացի այդ, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անմիջական ղեկավարները պետք է հասանելիություն ունենան հայտարարագրերին, որպեսզի կարողանան իրենց ենթակա պաշտոնատար անձանց և ծառայողների պոտենցիալ շահերի բախման վերաբերյալ պահանջվող տեղեկատվություն ստանան:

ՀԾՄ օրենքի հոդված 43-ով հայտարարագրից հրապարակվում է ԿԿՀ պաշտոնական կայքէջի<sup>46</sup> հայտարարագրերի ռեեստրում: Հայտարարագրի հրապարակումը պետք է իրականացվի ինքնաշխատ եղանակով՝ դրա հանձնումից անմիջապես հետո: Սույն կարգավորումը շատ կարևոր է, քանի որ բացառում է հանրության մոտ այն կասկածները, որ ԿԿՀ-ը կարող է միջամտել հայտարարագրերի հրապարակայնացման գործընթացին, հետաձգել կամ մոռանալ հրապարակել հայտարարատու պաշտոնատար անձի սահմանված ժամկետում հանձնած հայտարարագրերը:

Այդուհանդերձ, հայտարարագրերի հրապարակման գործընթացը կարիք ունի բարելավման: Մասնավորապես, ԿԿՀ-ի կայքէջի «Հայտարարագրերի ռեեստր» բաժնում հայտարարագրերի որոնումն իրականացվում է պաշտոնատար անձի «Անուն, Ազգանուն», «Պաշտոն» և «Տարի»

---

<sup>46</sup> Կոռուպցիայի կանախարգելման հանձնաժողովի կայքէջը <http://cpcarmenia.am/hy/declarations-registry/> հղմամբ:

հայտանիշներով: «Հայտարարագրերի ռեեստր» բաժինը օգտվողների համար դեռևս մատչելի չէ հայտարարագրերի համապատասխան տվյալների ընտրությունը այլ հայտանիշով իրականացնելու մասով: Կայքէջում դեռևս շարունակվում է հայտարարագրերի հրապարակումը իրականացվել PDF ձևաչափով, որը հնարավորություն չի տալիս տարբեր տարիների հրապարակված միևնույն պաշտոնյայի հայտարարագրերից պահանջվող տվյալները դուրսբերել ինքնաշխատ եղանակով: Հայտարարագրի հրապարակված տվյալները մեքենայական ընթեռնելի չեն, դրանք չեն հրապարակվում «բաց տվյալների» և «բաց աղբյուրների» ձևաչափով:

Հայտարարագրերի հրապարակման վերոնշյալ խնդիրների լուծումները, ներառված են ՀՀ Կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի N 1130-Լ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիրը հաստատելու մասին» որոշման հավելվածի «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրերում. բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կատարելագործում» ԿԿՀ-ի հանձնառությունում: ՀՀ կառավարության կողմից այս խնդրի լուծման համար սահմանված է ժամկետ՝ մինչև 2021թ. մայիս ամիսը:

## **Առաջարկություններ**

**2.1.14 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով, ՀԾՄ օրենքի հոդված 43-ում սահմանել, որ հայտարարագրերի հրապարակումը իրականացվում է մեքենայական ընթեռնելի «բաց տվյալների» և «բաց աղբյուրների» ձևաչափով:**

Այսպիսով, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման բացահայտման գործում գույքի, եկամուտների ու շահերի հայտարարագրման գործիքը հնարավորություն է տալիս ի հայտ բերել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնի ստանձնման, պաշտոնավարման և պաշտոնի դադարեցման դեպքերում անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների տեսքով փաստացի ու պոտենցիալ շահերի բախման ռիսկերը: Այդուհանդերձ, հայտարարագրման համակարգը գործնականում կիրառելի չէ հայտարարագրման պարտականություն չունեցող հանրային ծառայողների համար, ինչպես նաև հայտարարագրման պարտականություն ունեցող այն հանրային ծառայողների նկատմամբ, որոնք ՀԾՄ օրենքով չունեն շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: Դրա հետ մեկտեղ, գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը կիրառելի չէ քաղաքական և վարչական որոշումների կայացման, պետական և համայնքային գնումների իրականացման, պաշտոնատար անձանց և անձնակազմի թափուր պաշտոններում նշանակման, լիցենզիաների, առանձին թույլտվությունների տրամադրման գործընթացներում, այսպես կոչված «իրավիճակային շահերի բախման» բացահայտման գործում:

## 2.2 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող էլեկտրոնային շտեմարաններ

Հայտարարատու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի միջոցով շահերի բախման բացահայտման գործընթացը պահանջում է հայտարարագրում ներառված կամ հայտարարագրված տվյալների արժանահավատության հավաստում: Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի տվյալների արժանահավատության ստուգումը՝ հայտարարագրերի վերլուծության գործընթացում ԿԿՀ-ի վերապահված լիազորություններից է: Համաձայն, «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ի 2-րդ մասի՝ հայտարարագրի տվյալների արժանահավատության ստուգման նպատակով հանձնաժողովն իրավասու է «պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջելու և ստանալու (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն»:

Բնականաբար, տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության փոխանակման ներկայիս պայմաններում, առանձնահատուկ կարևորվում է ԿԿՀ-ի կողմից տեղեկատվության ստացումը էլեկտրոնային եղանակով: Այդ նպատակով «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքի հոդված 25-ի 4-րդ մասով պետական և ՏԻՄ մարմիններին, Կենտրոնական դեպոզիտարիային, վարկային բյուրոներին և Կենտրոնական Բանկին (ԿԲ) պարտավորեցվում է ապահովել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված տեղեկատվական բազաների հետ Հանձնաժողովի տեղեկատվական բազայի փոխգործակցելիությունը և հայտարարագրման ենթակա տվյալներին Հանձնաժողովի առցանց հասանելիությունը»:

Դեռևս, ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 19-ի N 145-Ն «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին պետական կառավարման առանձին մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված անհատական տվյալների տեղեկատվական բազաներից տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշմամբ, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը հասանելիություն ունեցավ ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող «ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի իրավաբանական անձանց պետական միասնական էլեկտրոնային գրանցամատյանին, քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային գրանցամատյանին, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից վարվող բնակչության պետական ռեգիստրին և ճանապարհային ոստիկանության տրանսպորտային միջոցների հաշվառման համակարգին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից վարվող

անշարժ գույքի գրանցամատյանին: Հետագայում, ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն « Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին» որոշման պահանջներին համապատասխան Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը հասանելիություն ունեցավ նաև պետական այլ մարմինների էլեկտրոնային բազաներին ու գրանցամատյաններին:

ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական **անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային գրանցամատյանին** ԿԿՀ էլեկտրոնային առցանց հասանելիությունը ապահովված է որպես օգտվող, որը նշանակում է, որ սեփական գաղտնաբառով և օգտվողի անվամբ ԿԿՀ-ը տիրապետում է բազայում առկա բոլոր տվյալներին: ԿԿՀ էլեկտրոնային հայտարարագրման համակարգում յուրաքանչյուր հայտարարատուի հանրային ծառայության համարանիշով (ՀԾՀ) իրավաբանական անձանց ռեգիստրից համակարգը դուրս է բերում հայտարարատուի մասնակցությամբ ՀՀ-ում գրանցված բոլոր իրավաբանական անձանց, կցելով համառոտ տեղեկանք իրավաբանական անձի գրանցման, մասնակցի կարգավիճակի, դրանց կատարված փոփոխությունների, գործող պահի դրությամբ մասնաբաժնի, գործադիր մարմնի կազմում որպես տնօրեն հանդես գալու, գրանցված կանոնադրության, ներկայացված տվյալներում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Միաժամանակ, հայտարարագրման էլեկտրոնային համակարգը հնարավորություն է տալիս տեսնելու հայտարարատու պաշտոնատար անձի կողմից բաժնեմասերի օտարման կամ ձեռքբերման գործարքները, դրանց հիմքերը՝ կցված PDF ձևաչափով, որտեղ երևում է նաև գործարքի կողմ հանդիսացող անձանց տվյալները: **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգից**, ԿԿՀ-ն առցանց ստանում է հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց (ամուսին, զավակներ, ծնողներ) անձնական տվյալները՝ «անուն, ազգանուն, հայրանուն (Ա.Ա.Հ.), ՀԾՀ, Սեռը, Ծննդյան տարեթիվը, Ակտի գրանցման համարը և Գրանցման ամսաթիվը»: Հարցումը իրականացվում է հայտարարատու պաշտոնատար անձի ՀԾՀ-ով և ըստ ներկայացրած հայտարարագրի տեսակների: Ընտանիքի անդամ հանդիսացող համատեղ բնակվող չափահաս անդամի վերաբերյալ տվյալները, եթե չի հանդիսանում ծնող, զավակ, ամուսին կարող է ստացվել վերջինիս ՀԾՀ-ի միջոցով: Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված անձանց վերաբերյալ տվյալները և նրանց հետ ազգակցական կապի տեսակը քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգում կարող է որոշվել պաշտոնատար անձի և նրա ամուսնու ՀԾՀ-ի և նրանց ծնողների ՀԾՀ-ի շղթայի միջոցով՝ քույրերին, եղբայրներին և նրանց զավակներին նույնականացնելու միջոցով:

**ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի էլեկտրոնային շտեմարանից** ԿԿՀ-ը ստանում է հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող «անշարժ գույքի, տեսակների, անշարժ գույքի միավորի հասցեի, մակերեսի, գրանցված իրավունքի տեսակի, նպատակային նշանակության, գործարքից ծագող իրավունքների գրանցման ամսաթվի, գույքի ձեռքբերման

կամ օտարման հիմքում ընկած գործարքի տեսակի, գործարքի մյուս կողմի, պայմանագրի գնի և արժույթի» վերաբերյալ տվյալները: Հարցման հիմք է հանդիսանում հայտարարատու պաշտոնատար անձի կամ ընտանիքի անդամի ՀԾՀ-ը, կամ անձնագրի սերիան ու համարը, ինչպես նաև ներկայացրած հայտարարագիրը:

**ՀՀ ԿԱ ոստիկանության տրանսպորտային միջոցների էլեկտրոնային հաշվառման համակարգից** ԿԿՀ-ը ստանում է հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց սեփականության իրավունքով պատկանող «Տրանսպորտային միջոցների տեսակների, Մոդելների, Մակնիշի, Թողարկման տարվա, Գրանցման համարի, իդենտիֆիկացիոն կոդի, Գրանցված իրավունքի տեսակի, Նպատակային նշանակության, Գործարքից ծագող իրավունքների գրանցման ամսաթվի, Տրանսպորտային միջոցի ձեռքբերման կամ օտարման հիմքում ընկած գործարքի տեսակի, Գործարքի մյուս կողմի, Պայմանագրի գնի և արժույթի» վերաբերյալ տվյալները: Հարցման հիմք է հանդիսանում հայտարարատու պաշտոնատար անձի կամ ընտանիքի անդամի ՀԾՀ-ը, կամ անձնագրի սերիան ու համարը, ինչպես նաև ներկայացրած հայտարարագիրը: **Բնակչության պետական ռեգիստրից** ԿԿՀ-ը ստանում է ՀՀ բաղաբացի կամ ռեգիստրում գրանցված՝ ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների անձնական՝ «Անուն, ազգանուն, հայրանուն (Ա.Ա.Հ), Ծննդյան օր, ամիս, տարի, ՀԾՀ, Անձնագրի տվյալների, Հաշվառման հասցեի» վերաբերյալ տվյալները: Յուրաքանչյուր անգամ հաշվառման հասցեի կամ անձնագրային տվյալների փոփոխությունները թարմացվում են էլեկտրոնային հայտարարագրման համակարգում: Հարցման հիմք է հանդիսանում հայտարարատու պաշտոնատար անձի կամ ընտանիքի անդամի ՀԾՀ-ը կամ «Անուն, Ազգանուն, Հայրանուն (Ա.Ա.Հ)» և «Ծննդյան օր, ամիս, տարի» տվյալները:

**ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի «Հարկատու և եկամտային հարկի ու սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին տեղեկատվական բազաներից»** ԿԿՀ-ը ստանում է հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների «Նույնականացման էլեկտրոնային համարի, Ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն, Ծննդյան օր, ամիս, տարի, Եկամտի տեսակը, (Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, Զաղաբացիաիրավական պայմանագրով աշխատանքի (ծառայության) վարձատրություն, Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ, Ռոյալթի, Տոկոս, Շահում, Մրցանակ, Նվիրատվություն, օգնություն, Վարձավճար, Շահաբաժիններ, ֆիզիկական անձի համար ապահովագրավճար, Կամավոր կենսաթոշակներ, Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտ, Ինքնազբաղվածությունից եկամուտ, Այլ եկամուտներ), Ստացված եկամտի վճարման, Գրանցման ամսաթիվը, Ստացված եկամտի չափը (գումարը), Արժույթը, Վճարող կազմակերպության տվյալները: Հարցման հիմք է հանդիսանում հայտարարատու պաշտոնատար անձի կամ ընտանիքի անդամի ՀԾՀ-ը և հայտարարագիրը:

**Հայաստանի Հանրապետության «Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր»-ից** ԿԿՀ-ը առցանց եղանակով կարող է ստանալ «Արժեթղթի տեսակի, Թողարկողի անվանման, Թողարկման սերիան, համարը,

Թողարկման ծավալը, Արժեթղթի և այլ ներդրման նկատմամբ գրանցված իրավունքի տեսակը, Արժեթղթի քանակը, Արժեթղթի (արժեքը) գինը, Արժույթի անվանումը, Իրավունքների գրանցման համարը և ամսաթիվը» վերաբերյալ տվյալներ: Հարցման հիմք է հանդիսանում հայտարարատու պաշտոնատար անձի կամ ընտանիքի անդամի ՀԾՀ-ը և ներկայացված հայտարարագիրը:

**Վարկային բյուրոների կողմից** ԿԿՀ առցանց եղանակով կարող է ստանալ «Որոշակի ամսաթվի դրությամբ և կոնկրետ նշված ժամանակահատվածում հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների «Ընդգրկվածությունը վարկային բյուրոների տեղեկատվական համակարգում, Հարցման համարի, Հարցման սուբյեկտի նույնականացման կոդի, Վարկային գեկույցի համարի, Հայտարարագիրը ներկայացնելու օրը, ամիսը, տարեթիվը, հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի անուն, ազգանուն, հայրանուն, Ծննդյան օր, ամիս, տարի, ՀԾՀ-ի, Վարկի համարը, Վարկատու կազմակերպություն անվանման, Վարկատու կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ), Վարկի կարգավիճակի, Պայմանագրով նախատեսված վարկի գումարի, Արժույթի կոդի, Վարկի փաստացի մայր գումարի մնացորդի» վերաբերյալ տվյալները: Հարցումը իրականացվելու է հայտարարատու պաշտոնատար անձի ՀԾՀ-ով և հայտարարագրով:

**ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության «Ընտանիքների անապահովության գնահատման տեղեկատվական համակարգերի տվյալների շտեմարանից** ԿԿՀ-ը կարող է ստանալ՝ հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամների «նույնականացման էլեկտրոնային համարը (ՀԾՀ), Ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն, Ծննդյան օր, ամիս, տարի, Նշանակված նպաստի տեսակը, Նշանակված նպաստի ենթատեսակը, Նպաստի (իրավունքի ձեռք բերման) նշանակման ամսաթիվը, Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընտանիքի սոցիալական անձնագրի համարը, Վճարման ամսաթիվը, Վճարված նպաստի չափը (գումարը), Արժույթը, Վճարող կազմակերպության տվյալները, իսկ «**Էլեկտրոնային կենսաթոշակ տեղեկատվական համակարգից**»-ից՝ «նույնականացման համարը (ՀԾՀ կամ անձնագրի տվյալներ), Ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն, Ծննդյան օր, ամիս, տարի, Կենսաթոշակ (վճարատեսակների ցանկը), Վճարատեսակի նշանակման սկիզբը, Վճարված վճարատեսակի չափը (գումարը), Արժույթը, Վճարող կազմակերպության» վերաբերյալ տվյալները: Հարցումը իրականացվելու է հայտարարատու պաշտոնատար անձի ՀԾՀ-ով և հայտարարագրով:

Վերոնշյալ տվյալների էլեկտրոնային շտեմարաները (բազաները) հիմք են հանդիսանում հայտարարագրերի վերլուծության գործընթացում բացահայտելու հայտարարատու պաշտոնատար անձանց փաստացի և պոտենցիալ շահերի բախման իրավիճակները՝ անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների տեսքով:

Անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողությունը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով



վերապահված է ԿԿԳ-ին: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ում սահմանված է կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հիմնական գործառնությունները, որի 1-ին մասի 1-ին կետը վերաբերում է անմիջապես անհամատեղելիության պահանջների պահպանմանը հետևելուն: Այն է՝ «պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը»: Միաժամանակ, ԿԿԳ-ը պատասխանատու է օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների կիրառման միասնականության ապահովման համար:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից **առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն** զբաղեցնելու անհամատեղելիության պահանջի վերահսկման հիմնական գործիքն է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման միասնական գրանցամատյանը: «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 40-ը սահմանում է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը «միասնական պետական գրանցամատյանում գրառում է միայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ: Բաժնետիրական ընկերությունների ռեգիստր գործակալությունը չի վարում: Առևտրային կոոպերատիվների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ միասնական պետական գրանցամատյանում չեն գրառվում»: Հետևաբար, ԿԿԳ-ը հայտարարագրերի վերլուծության և տվյալների արժանահավատության ստուգման ժամանակ հնարավորություն կունենա վերահսկողություն իրականացնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից միայն **որոշակի տեսակի իրավակազմակերպչական առևտրային կազմակերպություններում** պաշտոնի զբաղեցման հանգամանքների բացահայտման նկատմամբ:

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 98-ով «1) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում» ԿԿԳ-ը Կենտրոնական դեպոզիտարիայից և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեգիստրի վարման իրավունք ունեցող այլ անձանցից իրավունք ունի ստանալու բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների և տնօրենների վերաբերյալ տեղեկություններ, որի միջոցով կարող է բացահայտել «առևտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելու շահերի բախման հանգամանքները»:

**Առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն** զբաղեցնելու անհամատեղելիության պահանջի պահպանման նկատմամբ վերահսկողության գործիքի կիրառմանը խոչընդոտող հանգամանքներից է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Էլեկտրոնային

գրանցամատյանում **առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ տվյալների նեղ շրջանակը**: Այսպես, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի 1-ին մասով սահմանված է, որ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառման են ենթակա « 21) տեղեկություններ իրավաբանական անձի **գործադիր մարմնի ղեկավարի** կամ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնակատարի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները»: Մինչդեռ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով առևտրային կազմակերպությունում որևէ պաշտոն զբաղեցնելը ենթադրում է ցանկացած պաշտոն, ինչպես նաև «որևէ այլ ձևով առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը»: Այս պայմաններում ԿԿՀ-ը, իրավաբանական անձանց պետական գրանցման էլեկտրոնային գրանցամատյանից ստացված տվյալների հիման վրա հնարավորություն չի ունենալու բացահայտել հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից առևտրային կազմակերպություններում տնօրենի պաշտոնից զատ այլ պաշտոնների զբաղեցման մասին: Այսպիսով, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից վարվող գրանցամատյանը ամբողջական և լիարժեք տվյալներ չի պարունակում, ինչպես առևտրային կազմակերպությունների կազմակերպատիրական բոլոր տեսակների, այնպես էլ առևտրային կազմակերպությունների մասնակիցների ու ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների համար պատասխանատու պաշտոնների վերաբերյալ:

Խնդրահարույց է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից «50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում մասնակցության» արգելքի պահպանմանը հետևելը: Իհարկե, ԿԿՀ-ը հնարավորություն ունի Կենտրոնական դեպոզիտարիայից և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանցից ստանալու բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների և տնօրենների վերաբերյալ տեղեկություններ, սակայն այդ ռեեստրներում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների ցանկում նշվում է, կամ «ՀՀ կառավարություն», կամ «Իշխանության այլ պետական կամ ՏԻՄ» անվանումները, սակայն բացակայում է կառավարման կամ դիտորդ խորհրդի անհատական կազմը: Այս տվյալները կարող են ստացվել համապատասխան պետական կամ ՏԻՄ կամ առևտրային կազմակերպությունից, որը բարդացնում է տեղեկատվության ստացման հավաստիության ստուգման գործընթացը:

Համանման խնդիր է արձանագրվելու նաև հայտարարատու պաշտոնատար անձի **«ոչ առևտրային կազմակերպություններին անդամակցության, ինչպես նաև դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածության»** տվյալների հավաստիության ստուգման մասով: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ի 4-րդ մասով Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից «անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման,

վարչական կամ վերահսկողական մարմիններում բաժնում, պահանջում է հայտարարագրել «4. ոչ առևտրային կազմակերպության անվանումը, որին հայտարարատու պաշտոնատար անձն անդամակցում է կամ ներկայացված է դրա կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, կազմակերպությունում անձի կարգավիճակը» տվյալները: Այս տվյալների հավաստիությունը նույնպես կարող է ստուգվել իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի տվյալների միջոցով: Մասնավորապես, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի 14 և 15-րդ մասերում նշվում է, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ սույն հոդվածով նախատեսված տեղեկատվությունը գրառվում է՝ հաշվի առնելով սույն օրենքով և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող առանձին օրենքներով նախատեսված առանձնահատկությունները: Հասարակական միավորումների և հիմնադրամների վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառման ենթակա չեն սույն հոդվածի 1-ին մասի 13-րդ և 14-րդ կետերով սահմանված տեղեկությունները»: Արդյունքում ունենք նույն պատկերը ինչ իրավաբանական անձանց ընդհանուր գրանցումների դեպքում, այսինքն՝ ոչ առևտրային կազմակերպությունների դեպքում էլ գրանցամատյանում արձանագրվելու են միայն կազմակերպության տնօրենի կամ նրա պաշտոնակատարի տվյալները: Մինչդեռ, ոչ առևտրային կազմակերպության «կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» ներկայացվածության վերաբերյալ տվյալները հնարավոր չի լինելու բացահայտել:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասում հայտարարատու պաշտոնատար անձից պահանջվում է հայտարարագրել «կուսակցության անվանումը, որին հայտարարատու պաշտոնատար անձն անդամակցում է կամ ներկայացված է դրա կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում և կուսակցությունում անձի կարգավիճակը»: Հայտարարատու պաշտոնատար անձի **«Անդամակցությունը կուսակցություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում»** շահերի բախման բացահայտման տվյալների արժանահավատության ստուգման համար նույնպես կիրառվելու է իրավաբանական անձանց միասնական գրանցամատյանում առկա տվյալները: Մասնավորապես, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի 16-րդ մասում սահմանված է, որ «16. Կուսակցությունների վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանում գրառման ենթակա չեն սույն հոդվածի 1-ին մասի 10-րդ (հիմնադիրների կազմի), 11-րդ (մասնակիցների կազմի) և 12-րդ (մասնակցության չափի և մասնակցությունը դադարեցնելու) կետերով նախատեսված տեղեկությունները, և գրառվում են **մշտական գործող ղեկավար մարմնի անդամների վերաբերյալ տեղեկությունները** (անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի համարը, սերիան, ում կողմից և երբ է տրվել, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին և համապատասխան տեղեկանքի համարը)»: Այս

պայմաններում նույնպես, իրավաբանական անձանց միասնական գրանցամատյանի միջոցով հնարավոր չի լինելու ստուգել հայտարարատու պաշտոնատար անձի կուսակցական մարմինների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածության ու անդամակցության վերաբերյալ տվյալները:

ՀՀ ԱԺ-ում քննարկման է ներկայացված «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,<sup>47</sup> որի փաթեթում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է ԿԿՀ-ին վերապահել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով կուսակցությունների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների, դրանց աղբյուրների և ծախսերի, ինչպես նաեւ գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ), **կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի կազմի վերաբերյալ տեղեկատվության ստուգումը**»: Նույն օրենսդրական փոփոխություններով նախատեսվում է «**կուսակցությունների ղեկավար մարմինների անդամների** կողմից ներկայացվող հայտարարագրերի» ներկայացումը կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Այս պայմաններում կարևորվում է հստակություն մտցնել առանձին օրենքներով սահմանված «**կուսակցության ղեկավար մարմինների անդամների**», «**կուսակցությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածության**», ինչպես նաև «**կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի անդամների**» եզրույթների շրջանակի միջև, քանի որ շահերի բախման բացահայտման և դրանց հավաստիության ստուգման տեսանկյունից անհրաժեշտ է, որ այդ երեք եզրույթները իմաստավորեն կուսակցության ներսում նույն պաշտոնների ցանկը:

## Առաջարկություններ

2.2.1 ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին» որոշման պահանջներին համապատասխան, ապահովել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և կենտրոնական դեպոզիտարիայի կողմից վարվող էլեկտրոնային շտեմարանների տվյալների փոխգործակցելիությունը՝ այն հաշվով, որ ապահովվի բաժնետիրական ընկերություններում ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված

---

<sup>47</sup> «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» խ-7505-30.09.2020-պի-011/0 Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=59881>: Դիտվել է 05.10.2020 թվականին:

պաշտոն զբաղեցնող անձանց տվյալների առցանց փոխանակումը և հասանելիությունը ԿԿՅ-ին.

- 2.2.2 «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի 1-ին մասի 21-րդ կետում «տեղեկություններ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնակատարի մասին (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները)», բառերը շարադրել «տեղեկություններ իրավաբանական անձի ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված պաշտոն զբաղեցնող անձանց (անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալները, ՀԾՀ) տվյալները» խմբագրությամբ.
- 2.2.3 «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով կամ ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերով՝ ընդլայնել «Կենտրոնական դեպոզիտարիայից և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման պատասխանատու կազմակերպությունների կողմից» բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմիններում ներգրավված ներկայացուցչական, կառավարման և կարգադրիչ գործառույթների համար պատասխանատու պաշտոնների ցանկը՝ ներառելով Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային բաժնետիրական ընկերությունների կառավարման խորհրդի անդամների, լիազոր ներկայացուցիչների վերաբերյալ ամբողջական տվյալները.
- 2.2.4 «Կուսակցությունների մասին» ՀՀ Սահմանադրական օրենքում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքներում հստակեցնել «կուսակցության ղեկավար մարմինների անդամների», «կուսակցությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացվածության», ինչպես նաև «կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի անդամների» եզրույթների շրջանակը՝ այն հաշվով, որ դրանք իմաստավորեն կուսակցության ներսում նույն պաշտոնների ցանկը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից **ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու անհամատեղելիության պահանջի** պահպանման նկատմամբ վերահսկողության գործիք է իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված իրավաբանական անձի մասնակցի և հիմնադրի վերաբերյալ համապատասխան տվյալները: Նույն գործիքի միջոցով ԿԿՅ-ը հնարավորություն ունի բացահայտելու «առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքերի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման: Առևտրային կազմակերպությունում մասնակցության (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հավատարմագրային կառավարմանը հանձնելու հավաստիության ստուգումը մասնակիորեն կարող է իրականացվել «Իրավաբանական անձանց պետական

գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի 12-րդ մասով նախատեսված կարգավորմամբ, որտեղ նշվում է, որ «եթե իրավաբանական անձը հավատարմագրային կառավարման պայմանագրի, կոնցեսիոն պայմանագրի կամ որևէ այլ հիմքով հանձնվել է կառավարման, ապա սույն հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով նախատեսված տեղեկության փոխարեն նշվում են **կառավարող անձի տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի համարը, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի հաշվառման համարը՝ անհատ ձեռնարկատեր հաշվառված անձանց համար կամ անվանումը և պետական գրանցման համարը՝ իրավաբանական անձանց համար**»։ Նշված օրենքի հոդված 1-ի 21-րդ կետը վերաբերում է իրավաբանական անձի գործադիր տնօրենի վերաբերյալ տվյալներին։ Հետևաբար, իրավաբանական անձանց պետական գրանցման գրանցամատյանը նախատեսում է միայն իրավաբանական անձի հավատարմագրային կառավարման հանձնման գրանցման մեկ մասնակի դեպք, երբ իրավաբանական անձի կառավարումը ամբողջությամբ հանձնված է մեկ այլ անձի կառավարմանը՝ ի դեմս գործադիր տնօրենի։ Մինչդեռ, չի դիտարկվում այն դեպքերը, երբ իրավաբանական անձի մասնակիցներից մեկն է իր բաժնեմասը հանձնում հավատարմագրային կառավարման, իսկ գործընկերոջ բաժնեմասը շարունակում է գործել և նշանակված տնօրենը իրականացնում է իր պարտականությունները։ Նման դեպքերում բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ի 3-րդ մասի՝ շահերի հայտարարագրի «կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որում հայտարարատու պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման կամ հավատարմագրային կառավարչի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, պայմանագրի գործողության ժամկետը», տվյալների մասով ԿԿՀ-ը հնարավորություն չի ունենալու հավաստիանալ դրանց արժանահավատության մեջ։ Նկատի ունենալով, որ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի հոդված 30-ի մաս 6-ով առևտրային կազմակերպությունների ներդրումային ծառայությունների մատուցումը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից չի տարածվելու «այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի վրա, որն իրականացնում է միայն հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարումը», հետևաբար ինդրահարույց է մնում նաև բաժնետիրական ընկերությունների մասնակցության՝ բաժնետոմսերի հավատարմային կառավարման վերաբերյալ հայտարարագրի տվյալների հավաստիության ստուգումը ԿԿՀ-ի կողմից։

## **Առաջարկություններ**

**2.2.5 «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հոդված 26-ի 1-ին մասի 12-րդ կետում հավատարմագրային կառավարման մասով գրանցման ենթակա տվյալները**

համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ի 3-րդ մասի՝ շահերի հայտարարագրի «կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որում հայտարարատու պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասը հանձնված է հավատարմագրային կառավարման կամ հավատարմագրային կառավարչի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, պայմանագրի գործողության ժամկետը» տվյալներին.

2.2.6 «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով նախատեսել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագրերի վերաբերյալ տվյալների գրանցումը և ռեեստրի վարումը:

Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անդամների մասնակցությամբ կազմակերպությունների ներգրավվածությունը պետական կամ համայնքային գնումներին սահմանափակելու վերաբերյալ արգելքի բացահայտման նպատակով խնդրահարույց է ՀԾՄ օրենքի հոդված 42-ի 6-րդ մասով շահերի հայտարարագրի «Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրեր» բաժնում ներառված՝ «պայմանագրերը, որոնց գինը (արժեքը) գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, պայմանագրի տեսակը, կողմերը, նրանց հասցեները, տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին, պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, ինչպես նաև գինը (արժեքը)» տվյալների արժանահավատության ստուգումը: Նման սահմանափակման կիրառումը հնարավորություն է տալիս չեզոքացնել գնումների գործընթացում պոտենցիալ շահերի բախման հնարավորությունները՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների մասնակցությամբ կազմակերպությունների ազդեցությունները:

ԿԿՀ-ը՝ հայտարարագրման համակարգով, ստանալով պետական կամ համայնքային մարմինների գնումների գործընթացում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների մասնակցությամբ կազմակերպությունների ներգրավվածության վերաբերյալ տվյալները դրանց արժանահավատության ստուգումը պետք է իրականացնի ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների ARMEPS էլեկտրոնային գրանցամատյանի<sup>48</sup> և ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային գրանցամատյանի տվյալներով: Չնայած պետական գնումների ARMEPS էլեկտրոնային գրանցամատյանը ունի բավականին

---

<sup>48</sup> ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների էլեկտրոնային համակարգը <https://www.armeeps.am/epps/home.do>

զարգացած որոնողական համակարգ, այդուհանդերձ այն չի համապատասխանում ԿԿՅ-ի կողմից համապատասխան հանրային պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամի ՅԾՅ-ով որոնում իրականացնելու հնարավորություններին:

## **Առաջարկություններ**

- 2.2.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով հոդվածներ 23 և 24-ում ԿԿՅ-ին վերապահել՝ պետական և համայնքային գնումների գործընթացում ներգրավված կազմակերպություններում հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի մասնակցությամբ գնումների գործընթացների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործառույթ: Այդ գործառույթի շրջանակներում ԿԿՅ-ին լիազորել կասեցնելու կամ առոչինչ ճանաչելու պետական կամ համայնքային գնումների գործընթացում կնքվելիք կամ կնքված այն պայմանագրերը, որոնցում կողմ հանդիսացող կազմակերպություններում ներգրավված են հայտարարատու պաշտոնատար անձը կամ նրա ընտանիքի անդամը.**
- 2.2.8 ԿԿՅ-ի հայտարարագրման էլեկտրոնային համակարգը փոխկապակցել ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների էլեկտրոնային գրանցամատյանի (ARMEPS) հետ և ծրագրային ապահովման միջոցով հնարավորություն ստեղծել ARMEPS էլեկտրոնային գրանցամատյանից ինքնաշխատ եղանակով դուրս բերելու հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի մասնակցությամբ կազմակերպությունների հայտերը:**

ԿԿՅ-ի կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից իրենց կարգավիճակով չպայմանավորված պետական կամ ՏԻ այլ մարմիններում պաշտոնների զբաղեցման անհամատեղելիության պահանջի վերահսկման գործիք է ծառայելու ՅԾՄ ՀՀ օրենքի հոդված 17-ով սահմանված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակը: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակի վարման առանձնահատկությունները՝ համաձայն ՅԾՄ օրենքի հոդված 55-ի պահանջների, սահմանված են ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանելու մասին» որոշմամբ (այսուհետ՝ փոխվարչապետի որոշում): Նույն որոշմամբ էլեկտրոնային հարթակում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողի «անձնական գործը վարում է հանրային իշխանության մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը: Հանրային պաշտոն զբաղեցնող անձի անձնական գործը վարում է այն մարմինը, որտեղ հանրային պաշտոն զբաղեցնող անձն զբաղեցնում է պաշտոն: Արգելվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար մեկից ավելի անձնական գործ վարելը: Հանրային



պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործի էլեկտրոնային վարումն իրականացվում է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում»:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակը գտնվում է գործարկման փուլում: Հարթակի շահագործումից հետո, ԿԿՀ-ի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների **կողմից իրենց կարգավիճակով չպայմանավորված պետական կամ ՏԻՄ այլ պաշտոնների զբաղեցման** անհամատեղելիության պահանջի պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը կարող է դառնալ ոչ արդյունավետ, քանի որ էլեկտրոնային հարթակում համակարգը ինքնաշխատ եղանակով արգելելու է այլ հանրային պաշտոնում կամ ծառայության պաշտոնում գրանցելու հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ ծառայողի անձնական գործը և համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանման աշխատակիցը անմիջապես տեղեկանալու է այլ հանրային պաշտոնում կամ ծառայության պաշտոնում տվյալ անձի կողմից պաշտոնի զբաղեցման մասին: Այդուհանդերձ, ԿԿՀ-ը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակին պետք է ունենա առցանց հասանելիություն, որտեղ իրականացնի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնների անհամատեղելիության պահանջների հավաստիության ստուգում:

## Առաջարկություններ

**2.2.9 ԿԿՀ-ի հայտարարագրման էլեկտրոնային համակարգը փոխկապակցել ՀՀ Վարչապետի աշխատակազմի «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու էլեկտրոնային հարթակ»-ին՝ ապահովելով հայտարարատու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների պաշտոնի ստանձնման և դադարեցման վերաբերյալ տեղեկատվության ստացման, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների ու այլ սահմանափակումների մասով պահանջվող տվյալների ստացումը:**

## 2.3 Հանրային ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակ

ՀԾՄ օրենքի հոդված 17-ի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակը ոչ միայն ուղղակիորեն ծառայում է հայտարարատու **«պաշտոնատար անձանց և ծառայողների կողմից իրենց կարգավիճակով չպայմանավորված պետական կամ ՏԻ այլ մարմիններում պաշտոնների զբաղեցման»** անհամատեղելիության պահանջի պահպանման հավաստիության ստուգման գործիք, այլև կարող է ծառայել, հայտարարագրման պարտականություն ունեցող, սակայն շահերի հայտարարագիր չներկայացնող և ընդհանրապես հայտարարագրման պարտականություն չունեցող հանրային ծառայողների շահերի բախման բացահայտման և հավաստիության ստուգման միջոց:

ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն որոշման հավելվածի 7-րդ կետում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և ծառայողի «Անձնական գործը ձևավորվում է պաշտոնում նշանակելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում և պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1. անունը, ազգանունը, հայրանունը.
2. պաշտոնի նշանակվելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, պաշտոնի նշանակելու մասին իրավական ակտի համարը, ընդունման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, փորձաշրջանի սկիզբը և ավարտը (լրացվում է ըստ անհրաժեշտության).
3. ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ծննդյան վայրը, քաղաքացիությունը, սեռը, անձնագրի կամ նույնականացման քարտի համարը՝ դրանք տալու և վավերականության տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ում կողմից է տրվել, հանրային ծառայության համարանիշը, հաշվառման վայրը, բնակության վայրը (լրացվում է այն դեպքում, եթե տարբեր է հաշվառման վայրից).
4. կրթությունը (բարձրագույն, միջնակարգ, ուսումնական հաստատության անվանումը, ուսման սկիզբը, ուսման ավարտը, մասնագիտությունը, որակավորումը և (կամ) կրթական աստիճանը, դիպլոմի կամ վկայականի սերիան, համարը և դրանք տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը).
5. գիտական աստիճանը, գիտական կոչումը (շնորհելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը).
6. աշխատանքային գործունեությունը (սկիզբը, ավարտը, աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը և (կամ) կատարած աշխատանքը, տեղափոխությունը, փոխադրումը, գործուղումը).
7. պետական պարգևները, պատվավոր և հատուկ կոչումները, պետական մրցանակները (շնորհելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը).
8. զինապարտությունը (զինվորական կոչումը, զորքի տեսակը, կազմը).
9. համատեղ ապրող ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը.
10. հեռախոսահամարը (բնակարանային, աշխատանքային, բջջային), էլեկտրոնային փոստի հասցեն.
11. օտար լեզուն (տիրապետման աստիճանը).
12. դիմումը.
13. հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունը.
14. պաշտոնի նշանակելու մասին իրավական ակտը (ժամկետային աշխատանքային պայմանագիրը).
15. հանրային ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը).
16. առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասին տեղեկությունը.
17. դատվածության բացակայության մասին տեղեկությունը.
18. հայտարարություն՝ համաձայն ձևի.
19. լուսանկար 3 x 4 չափի»:

ՀՀ Փոխվարչապետի նույն որոշման 9-րդ կետով նախատեսվում է անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակի համակցում ՀՀ պետական որոշ տեղեկատվական բազաների հետ՝ պահանջվող տվյալների ներբեռնման և առկա տվյալների արժանահավատության ստուգման հնարավորությամբ: Մասնավորապես, «Անձնակազմի կառավարման ստորաբաժանումը հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի վերաբերյալ սույն հավելվածի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված տեղեկությունները և անձնագրի համարը (հանրային ծառայության համարանիշը) մուտքագրում է անձնական գործ և ապահովում նշված կետի՝

1. 3-րդ ենթակետով նախատեսված տեղեկությունների ներբեռնումը Հայաստանի Հանրապետության ոստիկանության էլեկտրոնային պահոցից՝ բացառությամբ բնակության վայրի.
2. 6-րդ ենթակետով նախատեսված աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունների ներբեռնումը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայից, իսկ տվյալների բացակայության դեպքում՝ մուտքագրում աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթերից (բացառությամբ առաջին անգամ աշխատանքի ընդունվելու դեպքի).
3. 12-15-րդ, 18-րդ և 19-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերի ներբեռնումը տեղեկատվական հարթակից կամ դրանց էլեկտրոնային լուսապատճեններից.
4. 16-րդ ենթակետով նախատեսված տեղեկության ստուգումը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրից հարցում կատարելու միջոցով.
5. 17-րդ ենթակետով նախատեսված տեղեկության ստուգումը՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության տվյալների էլեկտրոնային պահոցից հարցում կատարելու միջոցով»:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակում մուտքագրված տվյալները և առցանց հասանելիությունը պետական որոշ մարմինների տեղեկատվական բազաներին հնարավորություններ է ստեղծում նույնականացնելու և բացահայտելու հայտարարագրման պարտականություն չունեցող հանրային ծառայողների շահերի բախման, մասնավորապես անհամատեղելիության պահանջների խախտումների կամ առկայության վերաբերյալ ռիսկերը: Այսպես, **«հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում»** անհամատեղելիության պահանջի խախտման առկայության վերաբերյալ տվյալները անձնակազմի կառավարման ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը ի հայտ է բերելու տվյալ պաշտոնյայի անձնական գործը էլեկտրոնային հարթակում գրանցման փուլում, երբ համակարգը ինքնաշխատ եղանակով արգելելու է այլ հանրային պաշտոնում կամ ծառայության պաշտոնում գրանցելու հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ ծառայողի անձնական գործը:

Հայտարարագրման պարտականություն չունեցող հանրային ծառայողների «**որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում**» զբաղեցնելու անհամատեղելիության պահանջի խախտման առկայության մասով, անձնակազմի կառավարման ստորաբաժանման աշխատակիցը տեղեկատվությունը ստանալու է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային գրանցամատյանից: Մինչդեռ, կարևոր է հիշատակել, որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային գրանցամատյանում գրանցված են առևտրային կազմակերպությունների ոչ բոլոր կազմակերպա-իրավական տեսակները, իսկ գրանցված առևտրային կազմակերպությունների մասով, առկա է միայն ընկերության գործադիր տնօրենի պաշտոնի վերաբերյալ տեղեկատվությունը: Արդյունքում, հայտարարագրման պարտականություն չունեցող հանրային ծառայողների մասով նույնպես հնարավորություն չի լինելու անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակի միջոցով ամբողջությամբ ի հայտ բերել և հավաստիանալ հանրային ծառայողի կողմից «առևտրային կազմակերպությունում պաշտոնների զբաղեցման» անհամատեղելիության պահանջի խախտումների առկայության վերաբերյալ:

Համանման ինդիք է առաջանում նաև «**զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ**» անհամատեղելիության պահանջի խախտումների բացահայտման կամ առկայության վերաբերյալ տվյալների ստացման մասով: Նախ, ՀՀ փոխվարչապետի որոշման 7-րդ կետի 16-րդ ենթակետով անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակում գրանցվելու է «առևտրային կազմակերպություններում որևէ պաշտոն զբաղեցնելու կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասին տեղեկությունը»: Ինչպես երևում է շարադրանքից «առևտրային կազմակերպությունում որևէ պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու» երկու առանձին անհամատեղելիության պահանջների փոխարեն որոշմամբ պահանջվում է ստուգել և գրանցել կամ առևտրային կազմակերպությունում պաշտոնի զբաղեցման մասին, կամ էլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասին տեղեկատվությունը: Մինչդեռ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 31-ի 1-ին մասով «զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ և առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելը» սահմանված են որպես անհամատեղելիության ինքնուրույն պահանջներ:

Հայտարարագրման պարտականություն չունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձը և ծառայողը «**չեն կարող կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից**» անհամատեղելիության պահանջի խախտումների առկայության մասով, փոխվարչապետի որոշման 7-րդ կետի 18-րդ ենթակետով պահանջվում է ներկայացնել «հայտարարություն», որի ձևը սահմանված է նույն որոշման հավելվածում: Հայտարարության ձևաթղթի 3-րդ կետով հանրային ծառայողից պահանջվում է գրավոր հայտարարել «այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից» իրականացնելու կամ չիրականացնելու վերաբերյալ: Մինչդեռ, նույն որոշման 9-րդ կետի 2)-րդ ենթակետով էլեկտրոնային համակարգը կարող է հանրային ծառայողի աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկությունները ներբեռնել Հայաստանի Հանրապետության պետական

եկամուտների կոմիտեի եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման տեղեկատվական բազայից: «Այլ վճարովի աշխատանքը» իրենից ներկայացնում է եկամտային հարկով, շահութահարկով և սոցիալական վճարի տեսքով գործունեության տեսակ, որը արձանագրվում է ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (ՀՀ ԿԱ ՊԵԿ) անձնավորված տեղեկատվական բազայում: Հետևաբար, հանրային ծառայողից պաշտոնի ստանձնման պահին պահանջել հայտարարություն այլ վճարովի աշխատանքով զբաղվելու մասին նպատակահարմար չէ՝ ավելորդ տեղեկատվություն է և առաջարկվում է այն դուրս բերել հայտարարության ձևաթղթից:

Այսպիսով, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակը, այլ պետական մարմինների էլեկտրոնային գրանցամատյաններին հասանելիության պայմաններում, հնարավորություն է ընձեռում ի հայտ բերելու կամ նույնականացնելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների պահպանման պայմանները:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակում գրանցվող տեղեկատվությունը հնարավորություն է տալիս նաև նույնականացնելու ՀԾՄ օրենքի հոդված 32-ի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված **«համատեղ աշխատել իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ,** եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ» սահմանափակման պահանջների խախտման ռիսկերը: Այսպես, փոխվարչապետի որոշման 7-րդ կետի 15-րդ ենթակետի «հանրային ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը)», ինչպես նաև հայտարարության ձևաթղթի 4-րդ կետով պահանջվող՝ «անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր)» տվյալների համադրությամբ կարող են նույնականացվել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց հետ համատեղ աշխատանքի սահմանափակման պահանջների պահպանման պայմանները: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ փոխվարչապետի որոշման հավելվածի 7-րդ կետի 9-րդ ենթակետով պահանջվում է գրանցել «համատեղ ապրող ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը» տվյալները: Մինչդեռ, հայտարարության ձևաթղթով պահանջվում է արձանագրել «մերձավոր ազգակցական կամ խնամիական կապով պայմանավորված անմիջական ենթակայության կամ վերահսկողության ներքո գտնվելու կամ չգտնվելու» վիճակը: Նման տվյալների շրջանակով անձնակազմի կառավարման ստորաբաժանման աշխատակիցը հնարավորություն է չի ունենալու ստուգել հայտարարության հավաստիությունը, քանի որ բացակայում են մերձավոր ազգակցությամբ (քույր, եղբայր, ծնող) և խնամիությամբ (ամուսնու քույր, եղբայր, ծնող) կապված անձանց տվյալները: Ելնելով վերոնշյալից անհրաժեշտ է փոխվարչապետի որոշման 7-րդ կետի 9-րդ ենթակետը լրացնել նաև մերձավոր ազգակցությամբ և խնամիությամբ կապված անձանց տվյալներով՝ մասնավորապես, «անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ՀԾՀ-ը» բառերով, իսկ հայտարարության ձևաթղթի 4-րդ կետից հանել «մերձավոր ազգակցական կամ խնամիական կապով պայմանավորված անմիջական

ենթակայության կամ վերահսկողության ներքո գտնվելու կամ չգտնվելու» վերաբերյալ հայտարարության պահանջը: Միաժամանակ, ընտանիքի անդամների, այդ թվում համատեղ ապրող, ինչպես նաև մերձավոր ազգակցությամբ ու խնամփութությամբ կապված անձանց ազգակցական կապի վերաբերյալ արժանահավատության ստուգումը կարող է իրականացվել, եթե անձնական գործերի վարման էլեկտրոնային համակարգը հասանելիություն ունենա ՅՅ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (ԶԿԱԳ) էլեկտրոնային գրանցամատյանին:

## **Առաջարկություններ**

- 2.3.1 ՅՅ փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն «Յանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանելու մասին» որոշման հավելվածի 7-րդ կետի 16-րդ ենթակետում «կամ» բառը փոխարինել «և» բառով: Նույն հավելվածով սահմանված «Յայտարարության» ձևաթղթի 3-րդ ենթակետը հանել:
- 2.3.2 ՅՅ փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն «Յանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանելու մասին» որոշման հավելվածի 7-րդ կետի 9-րդ ենթակետը լրացնել «մերձավոր ազգակցությամբ և խնամփութությամբ կապված անձանց անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ՅԾՅ-ը» բառերով:
- 2.3.3 ՅՅ փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն «Յանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանելու մասին» որոշման հավելվածի 7-րդ կետի 15-րդ ենթակետը՝ «հանրային ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) համալրել «տվյալ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի անմիջական ղեկավարի կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող պաշտոնյայի վերաբերյալ տվյալներով՝ պաշտոնի, կազմակերպության, ստորաբաժանման անվանումը, պաշտոնյայի Ա.Ա.Յ-ը»:
- 2.3.4 հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային համակարգը առցանց հասանելիություն ապահովել ՅՅ արդարադատության նախարարության ԶԿԱԳ էլեկտրոնային շտեմարանին՝ համապատասխան լրացում կատարելով ՅՅ փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն որոշման հավելվածում:

## **2.4 Շահերի բախման հայտարարություններ և գրանցամատյաններ**

Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիրը, ինչպես նաև հանրային ծառայողների անձնական գործերի վարման էլեկտրոնային հարթակը քաղաքական և վարչական

որոշումների կայացման, պետական և համայնքային գնումների իրականացման, պաշտոնատար անձանց և անձնակազմի թափուր պաշտոններում նշանակման, լիցենզիաների, առանձին թույլտվությունների տրամադրման գործընթացներում շահերի բախման բացահայտման համար կիրառելի չեն: Վերոնշյալ վարչական գործընթացներում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից շահերի բախման իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության բացահայտման կարևորագույն գործիք է դրանց առկայության մասին հայտարարությունները: Ի տարբերություն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից գույքի, եկամուտների և շահերի ամենամյա հայտարարագրի, որի դեպքում արձանագրվում են պոտենցիալ շահերի բախման իրավիճակները, շահերի բախման հայտարարությունների դեպքում՝ ուղղակիորեն նկարագրվում կամ բացահայտում են շահերի բախման փաստացի իրավիճակները: Այսպես, եթե հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի գույքի, եկամուտների հայտարարագրում գրանցվում է օրինակ նրա մասնակցությունը որևէ շինարարական կազմակերպությանը, ապա դրա միջոցով վերահսկող մարմինների և հանրության համար բացահայտվում կամ ի հայտ են բերվում պաշտոնատար անձի պոտենցիալ շահերը: Մինչդեռ, նշված պոտենցիալ շահերի բախումը վերաժվում են «փաստացի»-ի՝ ճիշտ այն պահին, երբ տվյալ շինարարական կազմակերպության գործը մակագրվում է այն պաշտոնատար անձին, որի ընտանիքի անդամը մասնակցություն ունի տվյալ շինարարական ընկերությունում: Այս դեպքում կոնկրետ պաշտոնատար անձը պետք է կիրառի շահերի բախման բացահայտման հայտարարությունների գործիքը:

ՀԾՄ օրենքի հոդված 33-ի 5-րդ մասով օրենսդրորեն կարգավորված է իրավիճակային շահերի բախման բացահայտման հայտարարությունների գործիքի կիրառման պայմանները, որի հիմնական պատասխանատու ճանաչված է կոնկրետ պաշտոն զբաղեցնող անձը: Իր լիազորությունների իրականացման, որոշումների կայացման իրավիճակում պաշտոն զբաղեցնող անձը «պետք է խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց: Եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) **ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ: Նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը ստանալը անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց»:

Այդուհանդերձ, իրավիճակային շահերի բախման վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը չի վերաբերում միայն մեկ անհատի: Հաճախ, պահանջվում է տեղեկատվությունը բացահայտել մի քանի շահագրգիռ կողմերի՝ մասնավորապես կոլեգիալ կառավարման մարմիններում որոշումների ընդունման գործընթացներում պաշտոնատար անձի կողմից շահերի բախման առկայության մասին տեղեկատվության բացահայտումը իրականացվում է ոչ միայն իր անմիջական ղեկավարին կամ մարմնի ղեկավարին, այլև այն

կոլեգիալ կառավարման մարմին, որի շրջանակներում կայացվելու է որոշումը, ինչպես նաև մասնագիտացված կամ առանձնացված այն կառույցին, որը պետք է արձագանքի շահերի բախման իրավիճակներին: Օրինակ, դատավորի դեպքում շահերի բախման առկայության տեղեկատվության բացահայտումը կարող է կատարվել ինչպես դատավարության կողմերին, այնպես էլ դատարանների խորհրդի անդամներին: Կամ գնումների գործընթացում ներգրավված հանրային ծառայողը մրցույթային փաթեթների գնահատման ժամանակ շահերի բախման առկայության տեղեկատվությունը՝ կապված շահերի բախման ի հայտ գալու իրավիճակով կարող է բացահայտել ինչպես մրցույթային հանձնաժողովի անդամներին, հանձնաժողովի նախագահին, այնպես էլ իր անմիջական ղեկավարին

Նույն հոդվածի 6-րդ մասով կարգավորված է նաև վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձանց կողմից շահերի բախման իրավիճակների բացահայտման գործիքակազմը, այն է «վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը կարող է **այդ մասին գրավոր հայտարարություն** ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ»:

Իրավիճակային շահերի բախման կարգավորումները ՀԾՄ օրենքի հոդված 33-ի 7-րդ մասով չեն տարածվում պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի նկատմամբ:

**Պատգամավորների մասով** «Աժ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված են պատգամավորի լիազորությունների իրականացման գործընթացում իրավիճակային շահերի բախման կարգավորումների գործիքները: Այդ գործիքներն են **պատգամավորի կողմից շահերի բախման վերաբերյալ գրավոր կամ բանավոր հայտարարությունները**: Մասնավորապես, «շահերի բախում առաջանալու դեպքում պատգամավորը պարտավոր է Ազգային ժողովի կամ իր անդամակցած հանձնաժողովի նիստում ելույթից կամ քվեարկությունից առաջ **հանդես գալ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ**, իսկ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալիս, Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծ ներկայացնելիս, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելիս՝ **համապատասխան փաստաթղթերի հետ ներկայացնել շահերի բախման վերաբերյալ իր գրավոր հայտարարությունը՝ նկարագրելով շահերի բնույթը**»: Նույն հոդվածի 4-րդ մասում սահմանվում է, որ «4. Եթե պատգամավորն Ազգային ժողովի կամ իր անդամակցած հանձնաժողովի նիստում հանդես է գալիս շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ, **ապա հարցի քվեարկությունից նրա բացակայությունը համարվում է հարգելի**»:

Այդուհանդերձ, պատգամավորի կողմից շահերի բախման բացահայտման հայտարարությունների (գրավոր և բանավոր) գործիքակազմերի կիրառման ընթացակարգերի բացակայությունը հնարավորություն չեն տալիս չեզոքացնելու շահերի բախման ռիսկերը, վերլուծելու շահերի բախման իրավիճակները, սահմանելու որոշումների կայացման



գործընթացում պատգամավորի մասնակցության ձևը, ինչպես նաև վերջինիս կողմից դրսևորվելիք վարքագիծը:

«ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքով կամ «ԱԺ աշխատակարգով» կանոնակարգված չէ նաև պատգամավորի՝ Ազգային ժողովի կամ իր անդամակցած հանձնաժողովի նիստում ելույթից կամ քվեարկությունից առաջ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու վերաբերյալ գործընթացը, մասնավորապես շահերի բախման վերաբերյալ հայտարարությունը չի գրանցվում կամ արձանագրվում:

Նույն կերպ, կանոնակարգված չէ «...օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու, Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծ ներկայացնելու, Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկ ներկայացնելու» գործընթացի ժամանակ պատգամավորի կողմից շահերի բախման վերաբերյալ գրավոր հայտարարության (սկարագրված շահերի բնույթով), իրականացման հետևանքները: Այդ հայտարարությունները չեն գրանցվում, չեն ենթարկվում վերլուծության, չեն ներկայացվում պատգամավորական էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի քննությանը, կամ բարեվարքության հարցերով կազմակերպչին, իսկ շահերի բախման գրավոր հայտարարությունում շահերի բախման բնույթի հարցի վերաբերյալ չի պահանջվում պատգամավորական էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը՝ պատգամավորի շահերի բախման տեսակի և փաստի վերաբերյալ:

## **Առաջարկություններ**

**2.4.1 «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումների և փոփոխությունների միջոցով սահմանել՝ ԱԺ պատգամավորի կողմից իր լիազորությունների իրականացման գործընթացներում շահերի բախման հայտարարությունների (գրավոր կամ բանավոր) վերաբերյալ պատգամավորական էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի (կամ պատգամավորի բարեվարքության հարցերով կազմակերպչի) կողմից եզրակացությունների տրամադրման, դրանց հիման վրա ԱԺ Նախագահի կողմից որոշումների կայացման, հանձնաժողովին դիմելու գործընթացները.**

**2.4.2 նույն օրենքում կամ ենթաօրենսդրական այլ ակտով կանոնակարգել պատգամավորի շահերի բախման հայտարարությունների տրամադրման եղանակները, ժամկետները, դրանց արձանագրման և գրանցման կարգը:**

**Դատավորների մասով** «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «Դատավորի ինքնաբացարկը» վերտառությամբ հոդված 71-ում կանոնակարգված է դատավորի մասնավոր շահերի հայտարարությունների առանձնահատուկ տեսակի՝ ինքնաբացարկ ներկայացնելու հիմքերը, դատարանի կողմերի հետ քննարկման ու որոշման կայացման ընթացքը, մասնավորապես հոդված 71-ի 4-րդ մասով արձանագրված է, որ «4.Դատավորը պարտավոր է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը, որը ենթակա է արձանագրման: Տվյալ գործով անաչառ լինելու վերաբերյալ համոզմունք ունենալու դեպքում դատավորը կարող է

դիմել կողմերին՝ առաջարկելով իր բացակայությամբ քննարկելու ինքնաբացարկի անտեսման հարցը: Եթե կողմերը դատավորի բացակայությամբ որոշում են կայացնում դատավորի ինքնաբացարկն անտեսելու մասին, ապա այդ որոշումն արձանագրելուց հետո դատավորն իրականացնում է գործի քննությունը»:

**Դատախազների, քննիչների** մասով «Դատախազության մասին», «Քննչական կոմիտեի մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքները ոչ մի դրույթ չեն պարունակում դատախազի և քննիչի կողմից իրավիճակային շահերի բախման հայտնվելու պայմաններում հայտարարությունների ներկայացման կամ այլ ձեռնարկվելիք քայլերի մասին:

**Համայնքի ղեկավարի և ավագանու** մասով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 21-ի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված է, որ համայնքի ավագանու անդամը պարտավոր է « 6) չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) շահերին.,7) անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին»: Համայնքի ղեկավարի մասով իրավիճակային շահերի բացահայտման հայտարարությունների մեխանիզմը նույնպես բացակայում է:

**Կառավարության անդամների մասով** «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-L որոշումը կարգավորումներ չեն պարունակում կառավարության անդամի իրավիճակային շահերի բախման հայտարարությունների և դրանց գրանցման ընթացակարգերի վերաբերյալ:

**Քաղաքացիական, հարկային, մաքսային, փրկարար, քրեակատարողական, հարկադիր, դիվանագիտական, համայնքային, ոստիկանությունում և ազգային անվտանգության մարմիններում ծառայողների** մասին ՀՀ օրենքներով իրավիճակային շահերի բախման հայտարարությունների վերաբերյալ կարգավորումներ ընդհանրապես չեն սահմանված: Նշված հանրային ծառայողների համար գործում են «Հանրային ծառայության մասին» օրենքի հոդված 33-ի 5-րդ մասով սահմանված ընդհանուր դրույթները:

Վերոնշյալ դրույթները քաղաքացիական ծառայողների մրցույթային հանձնաժողովների անդամների մասով «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ կանոնակարգված և տեղայնացված չեն:

Հանրային ծառայողների իրավիճակային շահերի բախման առկայության հայտարարությունների վերաբերյալ որոշակի օրենսդրական կարգավորումներ են սահմանված «**Գնումների մասին**» ՀՀ օրենքում, որի հոդված 33-ի 7-րդ մասով՝ գնահատող հանձնաժողովի անդամին պարտավորեցնում է «ստորագրել շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող

առաջին աշխատանքային օրը հրապարակվում է տեղեկագրում»: Իսկ եթե հայտերի բացման նիստին պարզվում է, որ «հանձնաժողովի անդամի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրեն մերձավոր ազգակցությամբ կամ խնամփութությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ», ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից:

Այդուհանդերձ, պետական և ՏԻՄ մարմինների գնումների գնահատող հանձնաժողովների անդամների կողմից ներկայացրած հայտարարությունները չեն ստուգվում, չեն ենթարկվում վերլուծության, չեն ներկայացվում էթիկայի հանձնաժողովին կամ բարեվարքության հարցերով կազմակերպչին՝ հանրային ծառայողի շահերի բախման տեսակի և փաստի վերաբերյալ եզրակացություն կայացնելու համար:

Այսպիսով, օրենսդրորեն ամբողջությամբ կանոնակարգված չեն պատգամավորի, կառավարության անդամների, դատախազների, դատավորների, համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների, հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց ու ծառայողների շահերի բախման առկայության վերաբերյալ բանավոր և գրավոր հայտարարությունների գրանցման ընթացակարգը, հրապարակայնացման պայմանները և կարգը:

## **Առաջարկություններ**

### **2.4.3 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ու լրացումների միջոցով կամ համապատասխան ոլորտային օրենքներով ՀԾՄ օրենքի հոդված 33-ի շահերի բախման հայտարարությունների վերաբերել դրույթները կիրառելի դարձնել դատախազների, քննիչների, համայնքների ղեկավարների ու ավագանու անդամների համար:**

Շահերի բախման առկայության մասին հայտարարությունների գործիքի կիրառման անհրաժեշտությունը կարևորվում է նաև միջազգային կազմակերպությունների կողմից մշակված շահերի բախման կառավարման ուղեցույցներով և առանձին երկրների փորձով: Այսպես, ՏՀԶԿ «Հանրային ծառայողների շահերի բախման կառավարման ուղեցույց»-ի» 16-րդ կետով հանձնարարվում է, որ «շահերի բախման նկատմամբ անհանդուրժողականության և կազմակերպչական մշակույթի ձևավորումը, այդ թվում կազմակերպության ընթացակարգերը պետք է խրախուսեն պաշտոնատար անձանց բացահայտելու և քննարկելու շահերի բախման իրավիճակները՝ ապահովելով բացահայտված տեղեկատվության նպատակային օգտագործումը: Միաժամանակ, պաշտոնավարման ընթացքում, շահերի բախման առկայության վերաբերյալ հայտարարությամբ պաշտոնատար անձինք պարտավոր են բացահայտել շահերի բախման իրավիճակի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը, հատկապես, երբ պաշտոնը ստանձնելուց հետո տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն

կամ ի հայտ են եկել նոր հանգամանքներ, որոնք առաջ են բերել շահերի բախման նոր իրավիճակ: Պաշտոնական գրանցման (արձանագրման) միջոցով շահերի բախման առկայության վերաբերյալ հայտարարություններում պարունակվող տեղեկատվությունը պարտադիր չէ, որ հանրայնացվի ողջ հանրության համար, բավարար է, որ այն հրապարակվի տվյալ կազմակերպության ներսում»:<sup>49</sup>

Սերբիայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 42-ը սահմանում է, որ «Չանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ պաշտոնի ստանձնման և դադարեցման դեպքերում և պաշտոնավարման ընթացքում, իր կամ իր հետ փոխկապակցված անձանց շահերի բախման առկայության ցանկացած կասկածի վերաբերյալ, անհապաղ և ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, գրավոր տեղեկացնում է իր անմիջական ղեկավարին կամ գործակալությանը (Կոռուպցիայի կանխարգելման): Չանրային պաշտոն զբաղեցնող անձը, շահերի բախման կասկածի պայմաններում ձեռնպահ է մնում հարցի վերաբերյալ որևէ գործողություն կատարելուց, եթե չկա հետաձգման վտանգ»:<sup>50</sup>

Մոնտենեգրոյի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 8-ը նախատեսում է, որ «այն մարմնում, որտեղ պետական պաշտոնատար անձը իրականացնելով իր լիազորությունները, (մասնակցում է հարցի քննարկմանը կամ որոշումների կայացմանը), որում ինքը կամ իր հետ փոխկապակցված անձը ունի անձնական շահ, նախքան քննարկման կամ որոշումների կայացման գործընթաց սկսելը, շահերի բախման առկայության մասին հայտարարության միջոցով, պետք է այդ մասին տեղեկացնի քննարկման և որոշումների կայացման մյուս մասնակիցներին»:<sup>51</sup>

Լիտվայի «Չանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի համաձայնեցման մասին» օրենքի հոդված 11-ը սահմանում է, որ «Պետական ծառայության մեջ գտնվող անձը, պարտավոր է որոշումների ընդունման, քննարկման և նախապատրաստման գործընթացներում շահերի բախման գոյության մասին տեղեկացնել իր անմիջական ղեկավարին կամ մարմնի ղեկավարի կողմից լիազորված անձին, ինչպես նաև որոշումների ընդունման, քննարկման և նախապատրաստման գործընթացի բոլոր մասնակիցներին՝ հայտնելով այդ գործընթացներում մասնակցության ինքնաբացարկ»:<sup>52</sup>

Շահերի բախման առկայության մասին հայտարարությունների հայաստանյան և միջազգային փորձի համադրությունը ցույց է տալիս, որ «Չանրային ծառայության մասին» օրենքի հոդված 33-ի 5-րդ մասի օրենսդրական կարգավորումը ապահովում է իրավիճակային շահերի բախման բացահայտման գործիքի կիրառման ընդհանրական դրույթները: Այդուհանդերձ, բաց է մնում իրավիճակային շահերի բախման բացահայտման հայտարարությունների գործիքի կիրառման

<sup>49</sup> OECD, «Recommendation of the council on guidelines for managing conflict of interest in the public service», 2003, p. 7, <http://www.oecd.org/gov/ethics/2957360.pdf>

<sup>50</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Չանրապետության օրենք: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

<sup>51</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Մոնտենեգրոյի օրենքը, հոդված 8, [http://www.antikorupcija.me/media/documents/law\\_on\\_prevention\\_of\\_corruption.pdf](http://www.antikorupcija.me/media/documents/law_on_prevention_of_corruption.pdf)

<sup>52</sup> «Պետական ծառայությունում հանրային և մասնավոր շահերի համաձայնեցման մասին» Լիտվիայի օրենքը: [https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Lithuania\\_Conflict%20of%2](https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Lithuania_Conflict%20of%2)

ընթացակարգերը, շահերի բախման արձանագրման կամ գրանցման եղանակներն ու վարման կարգը, պատասխանատուները, այդ ռեգիստրներից տեղեկատվության հրապարակման պայմանների օրենսդրական կարգավորումները:

Մի շարք երկրներում շահերի բախման հայտարարությունների մասին տեղեկատվությունը **փաստաթղթավորվում և գրանցվում է առանձին ռեեստրում**: Այսպես, օրինակ, Ալբանիայի «Հանրային ծառայությունում շահերի բախման կանխարգելման մասին» օրենքի հոդված 11-ը նախատեսում է «պաշտոնատար անձի շահերի բախման յուրաքանչյուր դեպքի արձանագրում և գրանցում՝ ներառյալ պաշտոնատար անձի, նրա անձնական շահերի, շահերի բախման ծագման պատճառների ու բովանդակության, շահագրգիռ կողմերի, ստացման եղանակի ու աղբյուրների, ստուգման միջոցների վերաբերյալ տվյալները, ինչպես նաև այդ տվյալներից բխող, այդ թվում վերադաս մարմնի կամ պաշտոնատար անձի կամ դատարանի կողմից կայացված որոշումները»:<sup>53</sup>

Ավստրալիայի «Նյու սաութ ուելս»-ի անկախ հակակոռուպցիոն մարմնի կողմից 2019թ. հաստատած «ՆՍՈՒ հանրային ոլորտում շահերի բախման կառավարման» ուղեցույցը նույնպես արձանագրում է, որ «կոռուպցիայի կանխարգելման մարմինները վարում են շահերի բախման կենտրոնացված ռեեստրներ: Այդ ռեեստրները գործնականում կիրառում են շահերի բախման հայտարարությունների գրանցման և կառավարման համակարգչային ծրագրեր: Որպես կանոն, յուրաքանչյուր մարմնում բացահայտված իրավիճակային շահերի բախման փաստաթղթավորված դեպքերը արձանագրվում են էլեկտրոնային համակարգում և ներկայացվում այն վարող մարմնին կամ պատասխանատու կառույցին՝ կոռուպցիայի կանխարգելման միավորին կամ բարեվարքության հարցերով կազմակերպչին: Շահերի բախման կենտրոնացված ռեեստրում կուտակված տեղեկատվությունը հնարավորություն է տալիս կենտրոնական կամ մասնագիտական մարմնին կամ բարեվարքության հարցերով պատասխանատուին հեշտությամբ վերլուծել կամ աուդիտի ենթարկել արձանագրված շահերի բախման դեպքերը և դրանց հիման վրա կատարել ուսումնասիրություններ, հանրային ծառայողներին ներկայացնել խորհրդատվություն շահերի բախման իրավիճակների չեզոքացման վերաբերյալ և մշակել առաջարկություններ շահերի բախման կանխարգելման ուղղությամբ: Այն նաև կոռուպցիայի կանխարգելման գործակալություններին հնարավորություն է ընձեռում համոզվելու, որ առանձին պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում շահերի բախումը կառավարվում է հետևողականորեն, օրենսդրական կարգավորումներին համապատասխան»:<sup>54</sup>

Այս տեսանկյունից, միջազգային փորձը նույնպես նույնական է հայաստանյան օրենսդրական կարգավորումներին: Այսպես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 24-ի 25-րդ կետը ԿԿԻ-ին վերապահել է լիազորություն «ամփոփելու վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, **ինչպես նաև**

<sup>53</sup> «Հանրային ծառայությունում շահերի բախման կանխարգելման մասին» Ալբանիայի օրենքը, [https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Albania\\_Conflict\\_of\\_Interest\\_Law%209367\\_2005\\_EN.pdf](https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Albania_Conflict_of_Interest_Law%209367_2005_EN.pdf)

<sup>54</sup> Managing-conflicts-of-interest-in-the-nsw-public-sector\_June-2019 էջ, 18 <https://www.icac.nsw.gov.au/ArticleDocuments/232/>.

իրավիճակային շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման պրակտիկան, ներկայացնել դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկություններ»։ Մինչդեռ, շահերի բախման առկայության մասին հայտարարությունների արձանագրման ընթացակարգերի ու գրանցման ռեեստրի բացակայությունը պետական և ՏԻՄ մարմիններում ԿԿՅ-ին հնարավորություն չեն տալու ամփոփել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից իրավիճակային շահերի բախման ձևավորված պրակտիկան և ներկայացնել առաջարկություններ դրանց բարելավմանն ուղղությամբ։

## Առաջարկություններ

- 2.4.4 «Չանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների, համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների գործունեությունը կանոնակարգող համապատասխան ոլորտային օրենքներով կանոնակարգել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման առկայության վերաբերյալ բանավոր և գրավոր հայտարարությունների տրամադրման եղանակները, ժամկետները, դրանց արձանագրման և գրանցման կարգը, հրապարակայնացման պայմանները, պատասխանատու մարմինները (բարեվարքության հարցերով կազմակերպիչներ), այդ ռեգիստրներից տեղեկատվության հրապարակման պայմանները։
- 2.4.5 «Չանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքներով ԿԿՅ-ին և պետական և ՏԻՄ-երի բարեվարքության հարցերով կազմակերպիչներին վերապահել լիազորություն՝ վերլուծելու և ստուգելու իրավիճակային շահերի բախման հայտարարություններում ներառված տեղեկատվությունը և դրա հիման վրա խորհրդատվություն և առաջարկություններ ներկայացնել համապատասխան պետական կամ ՏԻ մարմնի ղեկավարին և պաշտոնատար անձին։

Շահերի բախման առկայության մասին հայտարարության գործիքի կիրառման առանձնահատուկ ոլորտ է **պաշտոնեական պարտականություններով պայմանավորված նվերների ստացման գործընթացը**։ Նվերների գրանցման և հաշվառման վերաբերյալ հայտարարությունների օրենսդրական կարգավորումը սահմանված է ՀԾՄ օրենքի հոդված 30-ով, այն է՝ «Չանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են **Կառավարության սահմանած կարգով հայտնել** սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված թույլատրելի նվերների ստացման մասին։ Նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանում է Կառավարությունը»։ ՀՀ կառավարությունը «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2019 հոկտեմբերի 3-ի N 1332-Ն որոշման հավելված 2-ի 19-րդ միջոցառումը, այն է՝ «Չանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում», նախատեսում է միայն 2021 թվականին մշակել և գործարկել նվերների ռեեստրը, իսկ 2020թ. համար՝ «մշակել և ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնել հանրային պաշտոն

զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագիծ»։ Վերոնշյալ օրենսդրական կարգավորումները դեռևս կյանքի չեն կոչվել, քանի որ ՀՀ կառավարությունը չի մշակել ու հաստատել «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից թույլատրելի նվերների ստացման մասին հայտնելու, նվերների հաշվառման և հանձնման կարգը հաստատելու մասին» որոշումների նախագծերը:

Պաշտոնեական (Ծառայողական) պարտականություններով պայմանավորված նվերների ընդունման մասին գրավոր հայտարարությունների գործիքի կիրառումը առանձին երկրներում ինստիտուցիոնալացված է: Այսպես, Ալբանիայի «Հանրային ծառայությունում շահերի բախման կանխարգելման մասին» օրենքի հոդված 23-ը նախատեսում է «պաշտոնատար անձին առաջարկված կամ տրված նվերի (լավության, խոստման կամ արտոնյալ վերաբերմունքի) ցանկացած դեպքի վերաբերյալ անհապաղ տեղեկացնել (հայտնել) իր անմիջական վերադասին կամ վերադաս հաստատությանը՝ նույնականացնելով նվիրատուին, նշելով՝ նվերի ստացման առիթը, կոնկրետ իրադարձության և հնարավոր պատճառների վերաբերյալ սեփական դատողությունները, պաշտոնատար անձի պարտականությունների հետ կապված հանգամանքները»:<sup>55</sup>

Սերբիայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 62-ը սահմանում է, որ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնեական պարտականություններով պայմանավորված նվեր ընդունելու մասին պարտավոր է նվերը ստանալու օրվանից (և / կամ երկիր վերադառնալու օրվանից) տասնօրյա ժամկետում գրավոր ծանուցել այն պետական մարմնին, որում նա պաշտոն է զբաղեցնում»: Ավելին, նույն հոդվածով սահմանված է պաշտոնեական պարտականություններով պայմանավորված նվերի ստացման գրավոր հայտարարության մեջ ներառվելիք կամ պահանջվող տեղեկատվության բովանդակությունը, հայտարարության ձևաթղթի, նվերների ընդունման արձանագրման և գրանցամատյանի վարման, հրապարակման կարգի ու պատասխանատուի շրջանակը: Մասնավորապես, նվերի ստացման հայտարարության մեջ պահանջվում է նշել «1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի անուն, ազգանուն, հայրանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը; 2. Նվիրատուի անուն, ազգանուն, հայրանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում այն կազմակերպության անվանումը և գրանցման հասցեն, որի անունից նվերը տրվել է; 3. նվերի ստացման օրը; 4. նվերը տալու կամ ստանալու առիթը կամ պատճառը; 5. նվերի նկարագրությունը; 6. նվերի գինը կամ տեղեկատվություն դրա գնահատման գործընթացի վերաբերյալ; 7. տեղեկատվություն այն մասին թե նվերը «արարողակարգային» է, թե «պատահական»; 8. տեղեկատվություն այն մասին թե արարողակարգային կամ պատահական նվերը դարձել է հանրային պաշտոն զբաղեցնող անձի սեփականություն, թե այն հանձնվել է պետությանը: Նվերի ստացման մասին հայտարարության ձևաթուղթը և ներկայացման կարգը մշակում է

<sup>55</sup> «Հանրային ծառայությունում շահերի բախման կանխարգելման մասին» Ալբանիայի օրենքը, [https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Albania\\_Conflict\\_of\\_Interests\\_Law%209367\\_2005\\_EN.pdf](https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Albania_Conflict_of_Interests_Law%209367_2005_EN.pdf)

Կոռուպցիայի կանխարգելման գործակալությունը»: Սերբիայի նույն օրենքի 63-67 հոդվածներով կանոնակարգված է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից պաշտոնետեական պարտականություններով պայմանավորված նվերների ստացման արձանագրությունների և գրանցամատյանի վարման կարգերը: Մասնավորապես, նվերների ստացման հայտարարությունների հիման վրա յուրաքանչյուր մարմին վարում է տվյալ մարմնի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նվերների ռեեստրը, իսկ դրանց պատճենները տրամադրվում են Սերբիայի կոռուպցիայի կանխարգելման գործակալությանը: Գործակալությունը ստացված նվերների ռեեստրներից տեղեկատվությունը հրապարակում է իր կայքէջում, ինչպես նաև իրականացնում է ստացված տեղեկատվության հավաստիության ստուգում մասնավորապես լրացված հայտարարությունների տվյալների ամբողջականության տեսանկյունից, ինչպես նաև պաշտոնետեական պարտականություններով պայմանավորված ստացված նվերների ազդեցությունը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անաչառ վարքագծի ու նվերների ընդունման արգելքի պահանջների խախտումների տեսանկյունից, որի առկայության դեպքում կարող է սկսել վարույթ:<sup>56</sup>

Պաշտոնետեական պարտականություններով պայմանավորված նվերների ստացման հայտարարությունների գրանցման ու դրանց ռեեստրի վարման համանման պրակտիկա է ձևավորված նաև Մոնտենեգրոյում և Սլովենիայում: Մոնտենեգրոյի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդվածներ 18-19-ը նախատեսում են, որ «այն մարմնում, որտեղ պետական պաշտոնատար անձը իրականացնում է իր լիազորությունները, ստացված նվերները և դրանց արժեքը մուտքագրվում են նվերների գրանցամատյանում, որոնք պահվում են տվյալ մարմնում: Գործակալությունը պատրաստում է նախորդ տարվա ընթացքում հանրային պաշտոնյաների կողմից ստացած նվերների կատալոգ և այն հրապարակում է իր կայքում»: Նույն Սերբիայի օրինակով, Մոնտենեգրոյի կոռուպցիայի կանխարգելման գործակալությունը ստուգում է առանձին մարմիններից ստացված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նվերների հայտարարությունները, դրանցում արձանագրված տվյալների ամբողջականության և նվերների ընդունման արգելքի պահանջներին համապատասխանության տեսանկյունից և ըստ անհրաժեշտության իրականացնում վարույթ:<sup>57</sup>

Սլովենիայի «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 32 և 33-ով Սերբիայի, Մոնտենեգրոյի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքների համարժեք դրույթներով, կանոնակարգված է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից պաշտոնետեական պարտականություններով պայմանավորված նվերների ընդունման հայտարարությունների գրանցման գործընթացը, առանձին պետական և ՏԻՄ-երի կողմից այդ հայտարարությունների պատճենների փոխանցումը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, հանձնաժողովի կողմից նվերների գրանցամատյանի և հանրային

---

<sup>56</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենք: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

<sup>57</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Մոնտենեգրոյի օրենքը, [http://www.antikorupcija.me/media/documents/law\\_on\\_prevention\\_of\\_corruption.pdf](http://www.antikorupcija.me/media/documents/law_on_prevention_of_corruption.pdf)



կատալոգի վարումը, հայտարարությունների տվյալների արժանահավատության ստուգումը և վերլուծությունը:<sup>58</sup>

Այսպիսով, պաշտոնական պարտականություններով պայմանավորված նվերների ընդունման հայաստանյան և միջազգային փորձի համադրումը ցույց է տալիս, որ նվերների հաշվառման, գրանցման կարգերը վերաբերելի պետք է լինեն բոլոր հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների համար, օրենսդրորեն պետք է սահմանվեն նվերների ընդունման հայտարարության ձևաթուղթը, դրանում ներառվող տվյալները, նվերների գրանցամատյանի և հանրային կատալոգ վարող պատասխանատու մարմինների շրջանակը:

Նվերների և շահերի բախման հայտարարությունների ռեեստրները նպատակահարմար է ունենալ միասնական էլեկտրոնային հարթակում, որտեղ յուրաքանչյուր պետական մարմին ՅՅ կառավարության կողմից սահմանված ձևաչափով և կարգով կտեղադրի տվյալ կազմակերպության հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների պաշտոնական պարտականություններով պայմանավորված նվերների ու իրավիճակային շահերի բախման առկայության վերաբերյալ հայտարարությունները: Այս էլեկտրոնային միասնական հարթակը կարող է կառավարել ու վարել ԿԿՅ-ը և միաժամանակ ապահովել նվերների ռեեստրից տվյալների հրապարակայնացումը:

## **Առաջարկություններ**

- 2.4.6** ՅՅ կառավարության կողմից մշակվելիք «Յանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից թույլատրելի նվերների ստացման, նվերների հաշվառման և հանձնման կարգը հաստատելու մասին» որոշման նախագծերում նախատեսել նվերների ընդունման հայտարարության ձևաթուղթ, դրանում ներառվող տվյալների, նվերների գրանցամատյանի և հանրային կատալոգ վարող պատասխանատու մարմինների շրջանակը.
- 2.4.7** ստեղծել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նվերների և շահերի բախման հայտարարությունների ռեեստրների միասնական էլեկտրոնային հարթակ.
- 2.4.8** «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՅՅ օրենքով նվերների և շահերի բախման հայտարարությունների գրանցամատյանների էլեկտրոնային միասնական հարթակի վարման ու շահագործման լիազորությունը վերապահել ԿԿՅ-ին, իսկ տեղերում՝ համապատասխան պետական և ՏԻՄ աշխատակազմերի անձնակազմի կառավարման ստորաբաժանումներին.
- 2.4.9** ԿԿՅ-ի կայքէջում ապահովել պաշտոնական պարտականություններով պայմանավորված նվերների և շահերի բախման հայտարարությունների ռեեստրներից տվյալների հրապարակումը:

---

<sup>58</sup> «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքը, <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>

## 2.5 Ազդարարներ, անանուն հաղորդումներ կամ «թեժ գծեր», լրատվամիջոցների հրապարակումներ

Շահերի բախման իրավիճակների բացահայտման եղանակներից է քաղաքացիական հասարակության միավորումների և առանձին քաղաքացիների կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ հայտնի դարձած փաստերի ու հանգամանքների, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործությունների մասին տեղեկատվության ներկայացումը (ազդարարումը) պետական և ՏԻՄ-երին, հակակոռուպցիոն մասնագիտացված կառույցներին:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ը ազդարարման ներքո հասկանում է «ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական հիմնարկներում և կազմակերպություններում, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններում **կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ** Էթիկայի կանոնների կամ **անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների** կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ **տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում** սույն օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին»: Նույն օրենքի հոդված 3-ը ազդարարման նպատակներից առանձնացրել է «բացահայտել կոռուպցիոն բնույթի դեպքերը, **շահերի բախման, Էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների**, հայտարարագրման **հետ կապված խախտումները**, հանրային շահերին ուղղված այլ վնասները»: Օրենքը տարբերակում է **ներքին և արտաքին ազդարարման** տեսակները: Ներքին ազդարարում է համարվում «հաղորդումը ներկայացնելն իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին»: Արտաքին ազդարարում է համարվում «իրավասու մարմին (պետական և տեղական ինքնակառավարման մարմին, պետական հիմնարկ և կազմակերպություն, հանրային նշանակության կազմակերպություն) հաղորդում ներկայացնելը»: Ներքին ազդարարումը սկսվում է «ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին հաղորդում ներկայացնելով», իսկ արտաքինի դեպքում՝ «ազդարարի կողմից իրավասու մարմին հաղորդում ներկայացնելով»: Երկու դեպքում էլ «իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը՝ ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը. իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է վարույթի հարուցումը. ապահովում է հարուցված վարույթի գաղտնիությունը. իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունը ստուգելու նպատակով. իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունը ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է

Հայաստանի Հանրապետության դատախազություն. իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով. ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ. ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը. հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ»:

Ներքին և արտաքին ազդարարման դեպքերում հաղորդումների հաշվառման, ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանված է ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15 N 272-Ն որոշմամբ: Արտաքին և ներքին ազդարարման ժամանակ, եթե հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի աշխատակցին, ապա ազդարարումը կատարվում է իրավասու մարմնի ղեկավարին: Եթե հաղորդումը վերաբերում է իրավասու մարմնի ղեկավարին, ապա այն ներկայացվում է իրավասու մարմնի վերադաս մարմնի ղեկավարին: Իրավասու մարմնի վերադաս մարմնի բացակայության դեպքում հաղորդումը ներկայացվում է համապատասխան մարմնի հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով (առկայության դեպքում), իսկ բարձրաստիճան պաշտոնատար անձանց դեպքում՝ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում լիազոր մարմին:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 41-րդ հոդվածով ԿԿՀ-ը վերոնշյալ ընթացակարգով շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների առերևույթ խախտումների վերաբերյալ հաղորդումների հիման վրա իրականացնում է «ազդարարման վարույթ»:

Ազդարարման գործընթացի կազմակերպումը համաձայն «Ազդարարման համակարգի մասին» օրենքի հոդված 8-ի իրականացվում է ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի՝ **հանցագործության մասին** անանուն եղանակով հաղորդումների (տեղեկություններ) ներկայացման միջոցով: Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը: Միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատված է ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն որոշմամբ: Նույն որոշման հավելված N 2-ով, միասնական էլեկտրոնային հարթակում հաղորդումների հետագա ընթացքի համար պատասխանատու անձանց միասնական էլեկտրոնային հարթակին հասանելիության տրամադրում և դրանից զրկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը:

Այսպիսով, միասնական էլեկտրոնային հարթակն ապահովում է հասանելիություն միայն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը, որը ապահովում է բացառապես **հանցագործությունների վերաբերյալ** էլեկտրոնային միասնական հարթակ մուտքագրված յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների

շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում համապատասխան ակտի ընդունումը: ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն որոշման հավելված 2-ի 9.1. կետով կանոնակարգվում է հանցագործություն չհամարվող հաղորդումների վերահասցեագրման գործընթացը, համաձայն որի «եթե ներկայացված հաղորդումը հանցագործության մասին չէ, ապա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը եռօրյա ժամկետում հաղորդումը փաստաթղթային տարբերակով վերահասցեագրում է իրավասու մարմին՝ ծանուցելով ազդարարին»:

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի և ՀՀ կառավարության 5. 03. 2018թ.-ի N 272-Ն որոշման Հավելված N1-ի 1-ին և 2-րդ կետերի հիման վրա Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահի 26.03.2019թ. Հ-6<sup>59</sup> [հրամանով](#) Հանձնաժողովի իրավաբանական և վարույթների վարչության պետի պաշտոնակատարը նշանակվել է ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ:<sup>60</sup> Այդուհանդերձ, ԿԿՀ-ի կայքէջում բացակայում է ազդարարի կողմից հաղորդում ներկայացնելու պահանջները, ձևաթուղթը, չի ապահովված ազդարարի պաշտպանությունը, նրա հետ հետադարձ կապի անվտանգ եղանակը:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 27-35-ով կանոնակարգված է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի) վարույթների իրականացման գործընթացներում հաղորդումների ստացման աղբյուրներն ու եղանակները: Մասնավորապես, հոդված 27-ում վարույթ հարուցելու համար հիմք են հանդիսանում **«յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումը, 2) լրատվամիջոցների հրապարակումները, 3) Հանձնաժողովի նախաձեռնությունը՝** հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելիս»: Շահերի բախման բացահայտման գործիքների կիրառման տեսանկյունից ՀԾՄ օրենքը առանձնահատուկ կարգավորում է նախատեսել ԿԿՀ-ի կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց իրավիճակային շահերի բախման առնչությամբ: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթ հարուցվում է նաև **նրանց կողմից ներկայացրած գրավոր հայտարարության հիման վրա:**

---

<sup>59</sup> [cpcarmenia.am/u\\_files/file/Order.pdf](http://cpcarmenia.am/u_files/file/Order.pdf)

<sup>60</sup> Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքէջը՝ <http://cpcarmenia.am/hy/notification/>

Շահերի բախման բացահայտման գործիքներից՝ **լրատվամիջոցների հրապարակումները**, կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ իրավիճակային շահերի բախման դեպքի առերևույթ հատկանիշներ: Բացի այդ ԿԿՅ-ին լիազորություն է վերապահված շահերի բախման դեպքերում վարույթ հարուցել սեփական նախաձեռնությամբ «... երբ հարցն ունի հանրային մեծ հետաքրքրություն կամ խախտումը կրում է համակարգային բնույթ»:

Այսպիսով, «կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման բացահայտման գործում չի նախատեսում քաղաքացիների կողմից անսնուն հաղորդումների, թե՛ գծերով զանգերի կամ սոցիալական ցանցերում առկա տեղեկատվության վերլուծության գործիքների կիրառման հնարավորությունը՝ անսնուն տեղեկատվության ստացման աղբյուր ճանաչելով միայն ազդարարման էլեկտրոնային համակարգից՝ գլխավոր դատախազության կողմից թղթային տարբերակով վերահասցեագրված հաղորդում- դիմումները:

**Պատգամավորների մասով** «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքով կամ «ԱԺ աշխատակարգով» կանոնակարգված չեն պատգամավորի կողմից շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ստացման արգելքի, իրավիճակային շահերի բախման առերևույթ խախտումների վերաբերյալ տեղեկատվության ստացումը քաղաքացիներից, քաղաքացիական հասարակության միավորումներից՝ անսնուն կամ նույնիսկ գրավոր դիմումների ձևաչափով:

**Դատավորների մասով** «Դատական օրենսգիրք» սահմանադրական ԶԶ օրենքի հոդված 146-ի 2-րդ մասով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթների շարքում «Անսնուն հաղորդումները բննարկման ենթակա չեն»:

**Դատախազների մասով** «Դատախազության մասին» ԶԶ օրենքի հոդված 56-ի 1-ին մասով դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցել գլխավոր դատախազը «իր նախաձեռնությամբ կամ դատախազների միջնորդությունների հիման վրա կամ **Ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա**, պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով գլխավոր դատախազին դիմելու մասին դատարանի սանկցիայի հիման վրա»:

**Քննիչների մասով** «Քննչական կոմիտեի մասին» ԶԶ օրենքի հոդված 31-ը նախատեսում է, որ քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ «Կարգապահական խախտման փաստի առթիվ կարգապահական վարույթ կարող է հարուցվել կարգապահական հանձնաժողովի որոշմամբ՝ **քննչական կոմիտեի նախագահի, նրա տեղակալի կամ կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի միջնորդությամբ**» իսկ «Հատուկ քննչական ծառայության մասին» ԶԶ օրենքի

հողված 22-ի 5-րդ մասով հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ «կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա», իսկ ծառայողական քննություններ նշանակում կամ դադարեցնում է, փոխում է ծառայողական քննություն կատարողին ՅՅ հատուկ քննչական ծառայության պետը:

**Յամայնքի ղեկավարի** մասով գործում է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՅՅ օրենքի հողված 27-ի դրույթները, մինչդեռ համայնքի ավագանու մասով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՅՅ օրենքը ոչ մի կարգավորում չի պարունակում:

**Քաղաքացիական ծառայողների մասով** «Քաղաքացիական ծառայության մասին» ՅՅ օրենքի հողված 4-ի 13-րդ կետով «քաղաքացիական ծառայողների ծառայողական պարտականությունների և (կամ) բարեվարքության և (կամ) նրա գործունեությանն առնչվող և (կամ) աշխատանքային հարաբերությունների հետ կապված հարցերի ուսումնասիրությունը իրականացվում է ծառայողական քննությունների միջոցով»: Նույն օրենքի հողված 22-ի 3-րդ մասով «Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ **այլ անձի դիմումի և (կամ) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա** ծառայողական քննություն նշանակում է գլխավոր քարտուղարը:

**Յարկային և մաքսային ծառայողների մասով** համապատասխան ծառայությունների մասին ՅՅ օրենքներով ծառայողական քննությունները իրականացվում են ՅՅ ԿԱ ՊԵԿ-ի ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովը՝ «ղեկավարի որոշմամբ, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում»:

**Փրկարար, քրեակատարողական և հարկադիր կատարողների մասով** «Փրկարար ծառայության մասին» (հողված 60), «Քրեակատարողական ծառայության մասին» (հողված 55.3) և «Յարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (հողված 36) ՅՅ օրենքներով «Փրկարար, քրեակատարողական և հարկադիր ծառայողների էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության, փրկարար, քրեակատարողական և հարկադիր ծառայողների վարքագծի կանոնները խախտելու և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով»:

Այսպիսով, պատգամավորների, դատավորների, քննիչների, համայնքի ավագանի հանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շահերի բախման բացահայտման գործընթացում օրենսդրորեն նախատեսված չեն ազդարարի, անանուն հաղորդումների, լրատվամիջոցների հրապարակումների միջոցով նշված խմբի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների,

նվերների ստացման արգելքի առերևույթ խախտումների վերաբերյալ հաղորդումների ստացման հնարավորությունները:

Քաղաքացիական հասարակության միավորումների և առանձին քաղաքացիների կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքի խախտումների վերաբերյալ հայտնի դարձած փաստերի ու հանգամանքների վերաբերյալ ազդարարման, անանուն հաղորդումների ներկայացման, լրագրողական հրապարակումների գործիքների կիրառման անհրաժեշտությունը կարևորվում է նաև միջազգային կազմակերպությունների և առանձին երկրների փորձով: Այսպես, ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի հոդված 8-ի 4-րդ մասով հանձնարարվում է, որ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է քննարկի նաև այնպիսի միջոցներ և համակարգեր սահմանելու հնարավորությունը, որոնք նպաստում են այն բանին, որ պաշտոնատար անձինք համապատասխան իրավասու մարմիններին հայտնեն իրենց գործառույթների իրականացման ժամանակ իրենց հայտնի դարձած կոռուպցիոն դեպքերի մասին»:

Սերբիայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 78-ը ամբողջությամբ կանոնակարգում է Սերբիայի կոռուպցիայի կանխարգելման գործակալության կողմից « ի պաշտոնե» վարույթ սկսելու գործընթացը՝ հիմք ընդունելով պետական և ՏԻՄ-երի, պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող այլ մարմինների ու կազմակերպությունների, ինչպես նաև իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, գույքի և եկամուտների հայտարարագրերում խախտումների առկայության կամ կասկածի վերաբերյալ հաղորդումները: Վարույթի սկսման համար հիմք են հանդիսանում «իրավաբանական և ֆիզիկական անձի կողմից գործակալությանը ներկայացված գրավոր հաղորդումը, որը պետք է պարունակի հետևյալ տվյալները. 1) տեղեկատվություն տրամադրողի անուն, ազգանունը, հաշվառման հասցեն, իրավաբանական անձի դեպքում կազմակերպության անվանումը, գրանցման հասցեն, 2) **Հանրային պաշտոն զբաղեցնող անձի անունը, ազգանունը, կազմակերպության անվանումը, որտեղ պաշտոն է զբաղեցնում հանրային պաշտոնյան և զբաղեցրած պաշտոնը, 3) փաստական հանգամանքներ, որոնցով ողջամտորեն հիմնավորվում է առերևույթ խախտումը կամ դեպքը, առկայության դեպքում՝ այդ հանգամանքների հիմնավորվածությունը հավաստող ապացույցները (փաստաթղթեր, նյութեր), 4) դիմողի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ դրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը: Անանուն հաղորդում ներկայացնելու դեպքում, սույն հոդվածի 4-րդ կետի պահանջը պարտադիր չէ: Անանուն դիմումը պետք է պարունակի սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերում պահանջվող տեղեկատվությունը»:<sup>61</sup>**

---

<sup>61</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենք: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

Անանուն հաղորդում ներկայացնելու համանման կարգավորում է պարունակում Նաև Մոնտենեգրոյի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 31-ը, որով «Գործակալությունը կարող է ..... հաղորդումների հիման վրա «ի պաշտոնե» նախաձեռնել վարույթ՝ **սեփական նախաձեռնությամբ կամ անանուն հաղորդումների հիման վրա**», իսկ նույն օրենքի հոդված 32-ը պահանջում է, որ «օրենքի 31-րդ հոդվածում նշված պահանջներով հաղորդումները գործակալությանը ներկայացվում են գրավոր, անմիջապես էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային եղանակով: Հաղորդումները կարող են ներկայացվել նաև բանավոր (թեժ գծերով զանգեր), որոնք արձանագրվում են Գործակալության կողմից»:<sup>62</sup>

Սլովենիայի «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդված 23-ով կանոնակարգված է ազդարարների կամ կոռուպցիոն դեպքերի մասին հաղորդում ներկայացնող անձանց պաշտպանության հարցերը, որով, մասնավորապես, նախատեսվում է, որ «**ցանկացած անձ կարող է հանձնաժողովին հաղորդում ներկայացնել** կոռուպցիոն առերևույթ դեպքերի մասին, ինչպես նաև պետական մարմնում կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ պետական լիազորություններով օժտված կազմակերպությունում կամ պետական կամ մասնավոր օրենսդրությամբ կարգավորվող այլ իրավաբանական անձանց կամ ֆիզիկական անձի կողմից իրականացվող ցանկացած գործունեության մասին, որը նրա կարծիքով պարունակում է կոռուպցիայի փաստացի ռիսկեր»:<sup>63</sup>

Ազդարարի, անանուն հաղորդողների, լրատվամիջոցների հրապարակումների միջոցով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ստացման արգելքի առերևույթ խախտումների վերաբերյալ հաղորդումների ստացման հնարավորությունների միջազգային փորձի և հայաստանյան օրենսդրության կարգավորումների համադրությունը ցույց է տալիս, որ արտերկրում բավականին հաջողությամբ կիրառվում են կոռուպցիոն ռիսկեր պարունակող դեպքերի, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի առերևույթ խախտումների վերաբերյալ անանուն հաղորդումների, լրատվամիջոցների, պաշտոնատար անձանց հաղորդումների ներկայացման մեխանիզմները: Այդ հաղորդումներում պարունակվող տեղեկատվությունը, որոշակի չափորոշիչների կամ հայտանիշների կիրառման պայմաններում, հիմք է հանդիսանում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների նկատմամբ վարույթների հարուցման կամ ծառայողական քննություն սկսելու համար:

## Առաջարկություններ

### 2.5.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների, ՏԻՄ-ում

<sup>62</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Մոնտենեգրոյի օրենքը, հոդված 8,

[http://www.antikorupcija.me/media/documents/law\\_on\\_prevention\\_of\\_corruption.pdf](http://www.antikorupcija.me/media/documents/law_on_prevention_of_corruption.pdf)

<sup>63</sup> Սլովենիայի «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքը, <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>



պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների գործունեությունը կանոնակարգող ոլորտային առանձին օրենքներում՝ օրենսդրական փոփոխությունների ու լրացումների միջոցով, սահմանել շահերի բախման, անհամատեղելիության և այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի պահանջների առերևույթ խախտումների վերաբերյալ անանուն հաղորդումների կամ դիմումների ստացման հնարավորություն՝ կիրառելով «թեժ գծերի», էլեկտրոնային փոստի կամ էլեկտրոնային այլ հարթակների միջոցները.

2.5.2 ԿԿԳ-ի էլեկտրոնային համակարգը առցանց եղանակով համակցել ՀՀ ԱՆ ազդարարման էլեկտրոնային միասնական հարթակին՝ ապահովելով հասանելիություն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների վերաբերյալ անանուն էլեկտրոնային հաղորդումների ստացմանը.

2.5.3 ԿԿԳ-ում ստեղծել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, էթիկայի կանոնների առերևույթ խախտումների վերաբերյալ շուրջօրյա անանուն զանգերի (թեժ գիծ) և առցանց նամակների ստացման կապուղիներ՝ սահմանելով ստացված տեղեկությունների ուսումնասիրության ընթացակարգ և մեթոդիկա, հաստատելով պատասխանատուի հաստիք:

### III . ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒԹՅՈՒՆԱԿԸ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

#### 3.1 Շահերի բախման կառավարման գործիքները

Շահերի բախման (իրավիճակային, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների արգելքի) բացահայտումը և գրանցումը դեռևս բավարար չէ շահերի բախման իրավիճակների լուծման համար: Դրանք պահանջում են շահերի բախման կարգավորման գործիքների միջոցով լուծում կամ մեղմում՝ այլ խոսքով՝ կառավարում:

ՏՀԶԿ-ի կողմից մշակված «Հանրային ծառայողների շահերի բախման կառավարման ուղեցույց»-ը<sup>64</sup> առաջարկում է կիրառել շահերի բախման կառավարման չորս խումբ գործիքներ՝

---

<sup>64</sup> «Annex to the recommendation of the council on OECD guidelines for managing conflict of interest in the public service», էջ, 8-9.  
<http://www.oecd.org/governance/ethics/2957360.pdf>

- պաշտոնից հեռացում (ժամանակավորապես կամ հիմնական),
- ինքնաբացարկ կամ սահմանափակում,
- փոխատեղում (ռոտացիա) կամ վերադասավորում,
- պաշտոնից հրաժարում:

Նույն ուղեցույցը առաջարկում է շահերի բախման լուծման կամ դրանց կառավարման մի շարք եղանակներ, որոնք կարող են կիրառվել շահերի բախման ի հայտ գալու հանգամանքների, տեսակներին ու բնույթին համապատասխան: Այսպես, շահերի բախման դրական լուծման, ինչպես նաև շահերի բախման ի հայտ գալու շարունակականության և ընդլայնման վտանգի տեսանկյունից կարող են կիրառվել ներքոշարադրյալ գործիքները.

- Պաշտոնատար անձի կողմից մասնավոր շահերից հրաժարում կամ իր կողմից դրա վերացում,
- Շահերի բախման ներքո գտնվող պաշտոնատար անձին որոշումների կայացման գործընթացից մասնակցության հրաժարում,
- Շահերի բախման մեջ ներքաշված պաշտոնատար անձին կոնկրետ տեղեկատվության մատչելիության սահմանափակում,
- Պաշտոնատար անձին շահերի բախումից զերծ պաշտոնի փոխատեղում կամ գործուղում,
- Պաշտոնատար անձի գործառույթների, պատասխանատվության ու լիազորությունների շրջանակի փոփոխություն և վերանայում,
- Շահերի բախման իրավիճակի լուծում՝ «լիարժեք հավատարմագրային կառավարման» հանձնելու վերաբերյալ համաձայնության հիման վրա,
- Պաշտոնատար անձին, որպես մասնավոր անձ զբաղեցրած պաշտոնից հեռացում, և/կամ պաշտոնատար անձի կողմից պետական կամ ՏԻ մարմնում զբաղեցրած պաշտոնից հրաժարում:

Շահերի բախման կառավարման վերոնշյալ «**Սահմանափակում և հրաժարում**» գործիքները կիրառվում են այն դեպքերում, երբ շահերի բախման կոնկրետ իրավիճակների ի հայտ գալու հավանականությունը փոքր է և նպատակահարմար է պաշտոնատար անձին հնարավորություն ընձեռել պահպանելու գործող պաշտոնը, սակայն այդ դեպքում, նա չպետք է մասնակցի այն հարցերի շուրջ որոշումների կայացմանը, որի վերաբերյալ ունի շահերի բախում: Մեկ այլ դեպքում, պաշտոնյան կարող է հրաժարվել որոշումների կայացման քվեարկության փուլից կամ շահերի բախմամբ պայմանավորված հարցերի վերաբերյալ առաջարկությունների կամ նախագծերի քննարկումներից, կամ էլ շահերի բախմանը վերաբերելի հարցի մասով ստանալու կոնկրետ փաստաթղթեր ու տեղեկատվություն: Այս պայմաններում ուղեցույցը նաև առաջարկում է նախատեսել շահերի բախում ունեցող պաշտոնատար անձի կոնկրետ լիազորությունների կամ գործառույթների պատվիրակում մեկ

այլ պաշտոնյայի՝ երբ շահերի բախման իրավիճակը ունի շարունակականություն կամ կրկնվելու բարձր հավանականություն: Այս գործիքակազմը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ անհնարին է կամ պաշտոնատար անձը ժամանակավորապես չի կարող հրաժարվել մասնավոր շահերից: Առանձնահատուկ ուշադրություն է պահանջում այն հանգամանքը, որ շահերի բախմանը մասնակից կողմերը և որոշում կայացնողները տեղեկացված լինեն շահերի բախման կառավարման կիրառվելիք գործիքներից ու մասնավոր շահերի հրաժարման եղանակներից:

Շահերի բախման կառավարման «**պաշտոնից հեռացման**» գործիքակազմը կիրառվում է եթե բախումը հնարավոր չէ լուծել վերոնշյալ միջոցներից մեկի կամ մի քանիսի կիրառման պայմաններում: Եթե շահերի բախումը լուրջ է (կամ ունի պոտենցիալ բնույթ) այսինքն՝ կարող է հանգեցնել անհամատեղելիության պահանջի, այլ սահմանափակումների կամ նվերների ընդունման արգելքի խախտումների, և եթե պաշտոնատար անձը ցանկանում է պահպանել զբաղեցրած պաշտոնը պետական կամ ՏԻ մարմնում, ապա նա պարտավոր է հրաժարվել այն մասնավոր շահերից, որոնք առաջ են բերում շահերի բախում: Այն դեպքերում, երբ արգելքի և հատկապես, պոտենցիալ շահերի բախման բնույթ ունեցող լրջագույն շահերի բախումը հնարավոր չէ լուծել այլ հնարավոր կառավարման միջոցներով, ապա պաշտոնատար անձը պետք է թողնի իր զբաղեցրած պաշտոնը պետական կամ ՏԻ մարմնում:

Ավստրալիայի «Նյու սաութ ուելս»-ի անկախ հակակոռուպցիոն մարմնի կողմից 2019թ. հաստատած «ՆՍՈՒ հանրային ոլորտում շահերի բախման կառավարման» ուղեցույցը<sup>65</sup> շահերի բախման կառավարման գործիքակազմերի կիրառման նպատակով առաջարկում է «Այն դեպքերում, երբ շահերի բախումը **բարձր ռիսկային է (կարող է հանգեցնել կոռուպցիոն դրսևորումների, հովանավորչության, ֆավորիտիզմի և այլն)**, ապա պետական կամ ՏԻՄ-ը նման իրավիճակներում միշտ պետք է քննարկի պաշտոնատար անձին համապատասխան հանրային գործունեությունից հեռացնելու հարցը»: Եվ քանի որ գործնականում միշտ չէ հնարավոր դա ապահովել կարճ ժամկետում, ապա, որպես կանոն, կիրառվում են շահերի բախման կառավարման այլընտրանքային գործիքակազմեր կամ լուծումներ: Որպես այլընտրանքային լուծումներ, ուղեցույցը առաջարկում է պաշտոնատար անձին շահերի բախման իրավիճակում հայտնվելու պայմաններում կիրառել շահերի բախման կառավարման հետևյալ 4 գործիքակազմերը՝

1. պաշտոնյայի կողմից հետագա գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալը կամ գործողություն չձեռնարկելը,
2. փոխել պաշտոնյայի համապատասխան լիազորությունների կամ գործողությունների շրջանակը,

---

<sup>65</sup> “Managing conflicts of interest in the nsw public sector” 2019, p. 20, <https://www.icac.nsw.gov.au/prevention/corruption-prevention-publications>.

3. փոխել պաշտոնյայի անձնական շահերի շրջանակը,
4. փոխել (ամրապնդել, բարելավել) սահմանված գործող ընթացակարգերը կամ գործընթացները:

Բնականաբար, վերոնշյալ 4 խումբ գործիքակազմերի կիրառումը մեկուսացված ձևով չի իրականացվում, այլ ելնելով պաշտոնյայի կողմից իրականացվող գործունեության շրջանակներից, դրանք կիրառվում են համատեղ կամ հաջորդաբար:

Շահերի բախման իրավիճակում **պաշտոնյայի կողմից հետագա գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալու կամ «հետագա քայլ չձեռնարկելու»** գործիքակազմը արդյունավետ կերպով կիրառելի է ցածր ռիսկային կամ շահերի բախման ոչ լուրջ դեպքերի բացահայտման համար, երբ պատշաճ կերպով իրականացվում է դրանց արձանագրումը և հետևում է շահերի բախման իրավիճակի վերաբերյալ անմիջական ղեկավարի կամ համապատասխան պատասխանատու մարմնի որոշումը: Այնուամենայնիվ, «հետագա քայլերից զերծ մնալու» գործիքը արդյունավետ աշխատում է այն պետական և ՏԻՄ-երում, որտեղ ներդրված է շահերի բախման ինքնազեկուցման մշակույթ, կիրառվում են շահերի բախման բացահայտման փաստաթղթավորման կամ արձանագրման միջոցներ, իսկ պաշտոնատար անձինք և նրանց անմիջական ղեկավարները կամ բարեվարքության հարցերով կազմակերպիչներն ու պատասխանատուները զինված են բարեվարքության պատշաճ գիտելիքներով և ունակություններով, պարբերաբար ստանում են մասնագիտական հմտություններ:

**«Պաշտոնյայի համապատասխան լիազորությունների կամ գործողությունների շրջանակի փոփոխության»** գործիքակազմը, շահերի բախման կառավարման հիմնական բաղադրիչն է: Շահերի բախման իրավիճակներում, այս գործիքի կիրառումը իրականացվում է երկու ճանապարհով, մի կողմից նվազեցվում է պաշտոնյայի ներգրավվածությունը կոնկրետ գործընթացում, իսկ մյուս կողմից՝ վերջինիս ազդեցությունը իրականացվող գործընթացի նկատմամբ: Սովորաբար, շահերի բախման իրավիճակի կառավարման առավել արդյունավետ միջոցը պաշտոնյային կոնկրետ գործընթացից դուրս բերելն է: Տրամաբանությունն այն է, որ եթե նրանք ներգրավվածություն չունեն կոնկրետ գործընթացում, ապա այդ քայլով նվազագույնի է հասցվում, պաշտոնական դիրքը չարաշահելու ունակությունը կամ հնարավորությունը: Հաճախ, շահերի բախման իրավիճակում պաշտոնյային կոնկրետ գործընթացից դուրս բերելը կարող է հանգեցնել պաշտոնյայի լիազորությունների վերաբաշխմանը: Այն դեպքերում, երբ պաշտոնյային կոնկրետ գործընթացից դուրս բերելը գործնականում հնարավոր չէ, ապա պետք է քննարկվեն պաշտոնյայի ներգրավվածությունը նվազեցնելու այլ ուղիներ: Դրանց շարքում դիտարկվում են, օրինակ,

- սահմանափակել պաշտոնյայի ներգրավվածությունը կոնկրետ գործընթացի որոշակի հատվածներում կամ նրա լիազորություններից առանձնացնել կոնկրետ գործողություններ և սահմանափակել նրա ներգրավվածությունը այդ գործողությունների կատարմանը,

- սահմանափակել կոնկրետ գործընթացում պաշտոնյայի ներգրավվածությունը, որպես ղեկավար կամ կրճատել պաշտոնյայի ղեկավար դերակատարումը որոշումներ կայացնելու գործում,
- ուժեղացնել պաշտոնյայի նկատմամբ վերահսկողությունը՝ ներգրավվելով կողմնակի անձանց,
- բացառել պաշտոնյայի մասնակցությունը կոնկրետ հարցերով քննարկումներին կամ հանդիպումներին,
- պաշտոնատար անձին որոշում կայացնելու գործառույթից փոխադրել խորհրդատուի կարգավիճակի՝ առանց որոշումներ կայացնելու կամ ֆինանսական պատասխանատվության լիազորությունների,
- պաշտոնատար անձին բացառել մասնակցելու կարևորագույն որոշումների կայացման արձանագրությունների կազմման գործընթացին,
- կանխել կամ սահմանափակել պաշտոնատար անձի գործարքները արտաքին գործընկերների հետ, օրինակ՝ գնումների մրցույթի մասնակիցների հետ,
- հաշվետվություն ներկայացնելու մասով, փոխել պաշտոնատար անձի անմիջական ղեկավարին,
- սահմանափակել պաշտոնատար անձի հասանելիությունը կարևորագույն էլեկտրոնային համակարգերին ու տեղեկատվությանը,
- ապահովել, որ շահերի բախման գործընթացում ներգրավված լինեն հավասար կամ առավելապես պաշտոնական բարձր դիրք զբաղեցնող վստահելի անձինք,
- իրականացվող գործառույթները վերապահել անկախ փորձագետի,
- շահերի բախման գործընթացում ներգրավված պաշտոնյայի աշխատանքը վերազնահատելու համար, ներգրավել համարժեք, տվյալ ոլորտի գիտակ փորձագետի:

Որպես կանոն շահերի բախման իրավիճակում պաշտոնյայի նկատմամբ կիրառված **«ներգրավման սահմանափակման»** գործիքների արդյունքում, ամբողջությամբ չեն փարատվում շահերի բախման իրավիճակները, քանի որ կարող են պահպանվել դրանց առկայության վերաբերյալ ընկալումները: Պաշտոնատար անձը, հնարավոր է պահպանի իր ազդեցությունը ինչպես որոշումների կայացման գործընթացում, այնպես էլ իր գործընկերների միջոցով, տիրապետել և հասանելիություն ունենալ կարևորագույն տեղեկատվությանը: Այդ իսկ պատճառով, **«գործընթացում ներգրավվածության սահմանափակմանը»** զուգահեռ կիրառվում են նաև **«գործընթացի նկատմամբ ազդեցության սահմանափակման»** գործիքներ, ինչպիսիք են՝

- գործի տեղափոխումը պաշտոնատար անձի հետ կապ չունեցող մեկ այլ ստորաբաժանում կամ թիմ, (այս քայլով ապահովվում է պաշտոնատար անձի ազդեցության չեզոքացումը իր թիմի անդամների նկատմամբ, և փոխելով որոշումներ կայացնողներին ու հաղորդակցության ուղիներն ու զեկուցողներին՝ հնարավորություն է ստեղծվում չեզոքացնել, այլ միջնորդավորված ազդեցությունները),
- պաշտոնատար անձի փոխադրումը (ռոտացիան) ժամանակավոր կամ մշտական հիմունքներով այլ ստորաբաժանում կամ խումբ,

- շահերի բախման մեջ գտնվող պաշտոնատար անձանց և որոշում կայացնողների միջև ֆիզիկական տարանջատման կիրառում,
- էլեկտրոնային և ֆիզիկական գրառումներին պաշտոնյայի հասանելիության արգելում,
- շահերի բախման գործընթացում ներգրավված այլ ծառայողներին ու պաշտոնյաներին տեղեկացում շահերի բախման իրավիճակի վերաբերյալ և նրանց հրահանգավորում նման իրավիճակից դուրս գալու ուղիների մասին:

**«Պաշտոնյայի անձնական շահերի շրջանակի փոփոխություն»** գործիքը կիրառվում է այն դեպքերում, երբ պաշտոնյայի նկատմամբ չեն կարող կիրառվել լիազորությունների սահմանափակման կամ գործառույթների շրջանակի փոփոխության գործիքակազմերը: Նման դեպքերում առավել արդյունավետ է դառնում պաշտոնատար անձի անձնական շահերի շրջանակի փոփոխությունների միջոցով շահերի բախման իրավիճակների լուծումը: Հատկապես, վերոնշյալ գործիքը կիրառվում է նյութական շահերի բնույթի փոփոխություններ կազմակերպելու ժամանակ, երբ պաշտոնատար անձի համար շահերի բախում առաջացնող օրինակ՝ բաժնետոմսերի կամ գույքային միավորների օտարումը կամ «կույր հավատարմագրային կառավարիչներին հանձնելը» հետագա օտարման իրավունքով, կարող է դառնալ պոտենցիալ շահերի բախման չեզոքացման գործիք: Որպես կանոն, պետական կամ ՏԻՄ-ը ի վիճակի չի լինում ուղղորդելու աշխատակցին շահերի բախում առաջացնող գույքային շահերի տիրապետման կամ տնօրինման հարցերով, սակայն նա կարող է բանակցել շահերի բախում ունեցող պաշտոնատար անձի հետ ձերբազատվելու շահերի բախում առաջացնող նյութական շահերից: Առավել դժվար է ոչ նյութական շահերի (օրինակ ազգակցական կապով կապված անձինք) տեսքով շահերի բախման չեզոքացումը, քանի որ պաշտոնյան պետք է պարտավորություն ստանձնի զերծ մնալու հաղորդակցվել նման անձանց հետ՝ օրինակ՝ թափուր հաստիքների կամ գնումների գործընթացի մրցույթներում:

**«Սահմանված ընթացակարգերի կամ գործընթացների ամրապնդման»** գործիքը հնարավորություն է տալիս առանց պաշտոնյայի պաշտոնեական լիազորությունների շրջանակի կամ նրանց մասնավոր շահերը փոխելու, չեզոքացնել շահերի բախման ի հայտ գալու հավանականությունը՝ ամրապնդելով գործող ընթացակարգի ընդհանուր կանոնները: Այս գործիքի միջոցով փորձ է կատարվում շահերի բախում առաջանալու ռիսկերի բացառման նպատակով, օրինակ՝ բարելավել հաշվապահական հաշվառման ընթացակարգերը կամ լրացուցիչ վերահսկողական ու մոնիտորինգի բաղադրիչներով համալրել գնումների ու թափուր հաստիքների մրցույթների գործընթացները: Չնայած, վերահսկողական կամ մոնիտորինգի լրացուցիչ բաղադրիչները կարող են ոչ ամբողջությամբ չեզոքացնել պաշտոնատար անձի կողմից անձնական կամ մասնավոր շահերի առաջխաղացումը, այդուհանդերձ նման քայլերը հնարավորություն են տալիս բացահայտելու և արձանագրելու շահերի բախման ռիսկերը: Շահերի բախման իրավիճակների չեզոքացման սահմանված ընթացակարգերի կամ գործընթացների ամրապնդման միջոցառումներից են՝

- գործընթացի վերաբերյալ սահմանված ընթացակարգով պահանջել ավելի մանրամասն փաստաթղթավորման և արձանագրման պահանջներ,

- որոշումների կայացման գործընթացում կրճատել սուբյեկտիվ և հայեցողական որոշումների շրջանակը կամ մակարդակը,
- ընդունված որոշումների փաստաթղթավորում և հիմնավորումներով հրապարակում,
- շահերի բախման կամ ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ հաղորդումների ներկայացման անհրաժեշտության մասին աշխատակազմին իրազեկում,
- առանցքային որոշումների կայացման գործընթացի տեսաձայնային գրառում և գրանցում,
- հետաշխատանքային գործընթացի վերաբերյալ աուդիտի կամ վերահսկողական զեկուլյցի պատրաստում,
- առանցքային տեղեկատվական տեխնոլոգիական համակարգերին հասանելիության և մուտքի գաղտնաբառերի աուդիտ և դրանց վերակողավորում,
- տեղեկատվական համակարգերին չարտոնված աղբյուրներից տեղեկատվության օգտագործումից կամ բացահայտումից պաշտպանելու միջոցառումների իրականացում,
- ընթացակարգով սահմանված գործընթացից շեղումների բացահայտման նպատակով ներքին վերահսկողության մեխանիզմների սահմանում,
- սահմանված առաջադրանքների կատարման նկատմամբ «հավատարմագրված» խորհրդատուների կամ աուդիտորների նշանակում,
- աշխատակազմի և պաշտոնատար անձանց համար լրացուցիչ վերապատրաստումների ու իրազեկման միջոցառումների իրականացում:

Շահերի բախման կարգավորման վերոնշյալ գործիքակազմերի կիրառման համար, անհրաժեշտ է, որ հանրային կառավարման, մասնավորապես մարդկային ռեսուրսների կառավարման հայաստանյան օրենսդրական կարգավորումները հնարավորություններ ստեղծեն պետական և ՏԻՄ-երի ղեկավարներին կոնկրետ ընթացակարգերի միջոցով կիրառելու շահերի բախման կառավարման գործիքները:

ՀԾՄ օրենքը, պոտենցիալ շահերի բախման իրավիճակների կառավարման, մասնավորապես, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների պահպանման տեսանկյունից, հոդվածի 31-ի 6-րդ մասում թույլատրում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ Հայաստանի Հանրապետության նախագահի, պատգամավորի, Կառավարության անդամի, ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի) կամ հանրային ծառայողին ընդգրկվել 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում, եթե դա ուղղակիորեն առնչվում է իր պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ` **առանց վարձատրության կամ որևէ այլ ձևով փոխհատուցում ստանալու կամ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ ոչ հանրային ծառայողների համար նախատեսված սոցիալական երաշխիքներից կամ այլ ծառայություններից կամ արտոնություններից օգտվելու իրավունքի**»:

«Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական

ինքնակառավարման այլ մարմիններում» անհամատեղելիության պահանջի կառավարման մասով, ՅԾՄ օրենքը կարգավորման ուղղակի գործիքներ չի նախատեսում, այլ սահմանում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, **պարտավոր են ապահովել անհամատեղելիության պահանջների կատարումը: Սա նշանակում է, որ հանրային պաշտոն կամ ծառայության պաշտոն զբաղեցրած անձը պարտավոր է հրաժարվել պետական կամ ՏԻ մարմնում այլ պաշտոններ զբաղեցնելուց:**

Նույն օրենքի հոդված 31-ի 10 և 11-րդ մասերում կիրառվում է շահերի բախման կառավարման «բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու» գործիքակազմը՝ այն է «Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են **պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:** Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող է լինել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող քաղաքացին կամ ոչ առևտրային կազմակերպությունը»:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից այլ վճարովի աշխատանք՝ բացառությամբ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի անհամատեղելիության պահանջի կառավարման գործիքների շարքում ՅԾՄ օրենքի հոդված 31-ի 15 և 16-րդ մասերում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային **ծառայողի լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունները գերակա են ճանաչվում նրա կողմից իրականացվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի հանդեպ, իսկ գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, պաշտոնատար անձ չհանդիսացող անձը կարող էր հավակնել:**

Այսպիսով, ՅԾՄ օրենքի օրենսդրական կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ անհամատեղելիության պահանջների տեսքով շահերի բախման կառավարման գործիքակազմեր են՝ պաշտոնից հրաժարումը, բաժնեմասը, հավատարմագրային կառավարման հանձնելը, ծառայողի հիմնական գործունեության գերակայությունը գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքի նկատմամբ, ինչպես նաև պաշտոնների համատեղումը, եթե այն բխում է իր լիազորությունների իրականացումից:

Այդուհանդերձ, ՅԾՄ օրենքով այլ սահմանափակումների պահանջների պահպանման մասով շահերի բախման կառավարման գործիքակազմեր նախատեսված չեն: Դրանք դիտարկվում են իրավիճակային շահերի բախման ներքո, որի համար ՅԾՄ օրենքի հոդված 33-ի 5 և 6-րդ մասերով նախատեսում է, որ «պաշտոն զբաղեցնող անձը պետք է **խուսափի շահերի բախման հանգեցնող գործողություններից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում**



**գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց:** Եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա պաշտոն զբաղեցնող անձը **պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ: Նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնություն ստանալը անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց: **Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարը ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր:** Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարն իրավունք ունի տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարելու պաշտոն զբաղեցնող այլ անձի, եթե դա օրենքով արգելված չէ: **Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող** պաշտոն զբաղեցնող անձը կարող է **այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ**»:

Ինչպես ցույց է տալիս ԶԾՄ օրենքի վերլուծությունը՝ իրավիճակային շահերի բախման կառավարման օրենսդրական կարգավորումը ներառում է շահերի բախման իրավիճակի առկայության կամ ի հայտ գալու պայմաններում «ձեռնպահ մնալու» գործիքի կիրառումը: Միաժամանակ, շահերի բախման լուծման կամ կառավարման ողջ պատասխանատվությունը փոխանցվում է վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին, իսկ դրա բացակայության դեպքում՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Թե հետագայում, շահերի բախման կառավարման ինչպիսի գործիքակազմեր կառաջարկվեն վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի կողմից, մնում է անհայտ: Եթե նկատի ունենանք, որ վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձինք նույնպես չեն տիրապետում բարեվարքության, այդ թվում շահերի բախման կառավարման գործիքներին, ապա կարող ենք եզրակացնել, որ ԶԾՄ օրենքով կամ ենթաօրենսդրական այլ ակտերով շահերի բախման կառավարման գործիքակազմերի բացակայությունը, ըստ էության չի խրախուսելու գործնականում իրավիճակային շահերի բախման կառավարման մշակույթի ներդրմանը: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոնատար անձանց մասով ԶԾՄ օրենքը սահմանում է, որ ԿԿԶ-ը **«առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ**»: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ԶԶ օրենքի հոդված 24-ի 1-ին մասով հանձնաժողովին լիազորություն է վերապահված «2) իրավասու մարմին կամ պաշտոնատար անձին ներկայացնել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, **ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ** (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ)»:

Սա նշանակում է, որ ԿԿԶ-ը պետք է մշակի շահերի բախման կառավարման այն գործիքակազմը, որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է տրամադրվի համապատասխան պետական, ՏԻՄ պաշտոնատար անձանց՝ կիրառության համար:

ՀԾՄ օրենքի հոդված 33-ի շահերի բախման կառավարման դրույթները չեն տարածվում պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի նկատմամբ:

**Պատգամավորների մասով** «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի 4-րդ մասով նկարագրված է պատգամավորի լիազորությունների իրականացման գործընթացում իրավիճակային շահերի բախման կառավարման գործիքները: Այդ գործիքներն են պատգամավորի կողմից շահերի բախման վերաբերյալ գրավոր կամ բանավոր հայտարարությունները: Մասնավորապես, «Եթե պատգամավորն Ազգային ժողովի կամ իր անդամակցած հանձնաժողովի նիստում հանդես է գալիս շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ, **ապա հարցի քվեարկությունից նրա բացակայությունը համարվում է հարգելի**»: Այդուհանդերձ, պատգամավորի կողմից շահերի բախման կառավարման գործիքակազմերի կիրառման ընթացակարգերի բացակայությունը հնարավորություն է չեն տալիս չեզոքացնելու շահերի բախման ռիսկերը, վերլուծելու շահերի բախման իրավիճակները, սահմանելու որոշումների կայացման գործընթացում պատգամավորի մասնակցության ձևը, ինչպես նաև վերջինիս կողմից դրսևորվելիք վարքագիծը:

**Դատավորների մասով** «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի «Դատավորի ինքնաբացարկը» վերտառությամբ հոդված 71-ում կանոնակարգված է դատավորի մասնավոր շահերի կառավարման առանձնահատուկ տեսակի՝ **ինքնաբացարկ ներկայացնելու** հիմքերը, դատարանի կողմերի հետ դրանց քննարկման ու որոշման կայացման ընթացքը: Մասնավորապես, հոդված 71-ի 1-ին մասով արձանագրված է, որ «Դատավորը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի հանգամանքների մասին, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անաչառության մեջ»:

**Դատախազների, քննիչների** մասով «Դատախազության մասին», «Քննչական կոմիտեի մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքները ոչ մի դրույթ չեն պարունակում դատախազի և քննիչի կողմից իրավիճակային շահերի բախման հայտնվելու պայմաններում դրանց կառավարման գործիքների կամ այլ ձեռնարկվելիք քայլերի մասին:

**Համայնքի ղեկավարի և ավագանու** մասով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 21-ի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված է, որ համայնքի ավագանու անդամը պարտավոր է « 6) **չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը**, որն առնչվում է իր, իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր) շահերին, 7) անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ համայնքի ղեկավարին»: Եթե, իրավիճակային շահերի բախման կառավարման գործիքները, համայնքի ղեկավարի մասով ՀԾՄ օրենքի հոդված 33-ի դրույթներով կարող են կիրառվել վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոնատար անձանց համար (ԿԿՀ-ի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա) սահմանված կանոններով, ապա համայնքի ավագանու, ինչպես նաև համայնքային պաշտոն զբաղեցնող այլ անձանց մասով շահերի բախման

կառավարման գործիքները, ըստ էության բացակայում են: Համայնքի ավագանու մասով միայն նախատեսվում է «բվետարկությանը չմասնակցելու» գործիքակազմը, որի վերաբերյալ որոշման կայացումը թողնված է հենց ավագանու անդամին: Ներկայացված շահերի բախման իրավիճակների վերաբերյալ բացակայում են դրանց գրանցման, քննության եզրակացությունների կայացման ընթացակարգերը:

**Կառավարության անդամների մասով** «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-Լ որոշումը կարգավորումներ չեն պարունակում կառավարության անդամի իրավիճակային շահերի բախման կառավարման գործիքակազմերի և դրանց գրանցման ընթացակարգերի վերաբերյալ:

**Քաղաքացիական, հարկային, մաքսային, փրկարար, քրեակատարողական, հարկադիր, դիվանագիտական, համայնքային, ոստիկանությունում և ազգային անվտանգության մարմիններում ծառայողների** մասին ՀՀ օրենքներով իրավիճակային շահերի բախման կառավարման կարգավորումներ ընդհանրապես սահմանված չեն: Նշված հանրային ծառայողների համար գործում են «Հանրային ծառայության մասին» օրենքի հոդված 33-ի 5-րդ մասով սահմանված ընդհանուր դրույթները: Այդուհանդերձ, վերոնշյալ դրույթները քաղաքացիական ծառայողների մրցույթային հանձնաժողովների անդամների մասով «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ կանոնակարգված և տեղայնացված չեն:

Հանրային ծառայողների իրավիճակային շահերի բախման կառավարման գործիքների վերաբերյալ որոշակի օրենսդրական կարգավորումներ են սահմանված «**Գնումների մասին**» **ՀՀ օրենքում**, որի հոդված 33-ի 6-րդ և 7-րդ մասերով՝ գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը **չի կարող մասնակցել գնահատող հանձնաժողովի աշխատանքներին** «եթե հայտերի բացման նիստին պարզվում է, որ «հանձնաժողովի անդամի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրեն մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ», ապա «հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ **շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից**»: Ի լրումն շահերի բախման կառավարման ինքնաբացարկի գործիքի, «Գնումների մասին» օրենքի նույն հոդվածի 8-րդ մասում գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի համար նախատեսվում է նաև «շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող **առաջին աշխատանքային օրը հրապարակվում է տեղեկագրում**», իսկ «պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված

արձանագրությունը **հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին»:**

Այսպիսով, օրենսդրորեն ամբողջությամբ կանոնակարգված չեն պատգամավորի, կառավարության անդամների, դատախազների, դատավորների, համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների, հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձանց ու ծառայողների իրավիճակային շահերի բախման կառավարման ընթացակարգերը, դրանց հրապարակայնացման պայմանները և կարգը: Միակ, բացառությունը այս շղթայում կարել է վերագրել գնումների գործընթացի կազմակերպմանը, որի ժամանակ օրենսդրորեն նախատեսված է շահերի բախման կառավարման բազմափուլ գործիքների կիրառման գործընթաց՝ գնումների «գործընթացից դուրս թողնելուց» մինչև «շահերի բախման բացակայության հայտարարությունների հրապարակում» կամ «գնումների գործընթացին մասնակից կողմերին շահերի բախման բացակայության մասին պատշաճ տեղեկացում» միջոցները:

### **Առաջարկություններ**

- 3.1.1 հիմք ընդունելով ՏՀԶԿ-ի «Հանրային ծառայողների շահերի բախման կառավարման հանձնարարականների» պահանջները, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև պատգամավորների, դատախազների, քննիչների, ՏԻՄ պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների գործունեությունը կանոնակարգող ոլորտային առանձին օրենքներով սահմանել իրավիճակային շահերի բախման կառավարման գործիքակազմեր և դրանց կիրառման ընթացակարգերը.
- 3.1.2 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև հանրային ծառայության ոլորտային առանձին օրենքներով, պետական և ՏԻՄ ղեկավարների կոնկրետ ընթացակարգերի միջոցով, հնարավորություն ստեղծել շահերի բախման կառավարման գործընթացում կիրառել մարդկային ռեսուրսների կառավարման գործիքների՝ փոխատեղում (ռոտացիա), կադրերի ռեզերվ փոխադրում, գործուղում, լիազորությունների վերաբաշխում, պաշտոնի անձնագրերում փոփոխությունների իրականացում և այլ կարգավորումները.
- 3.1.3 համայնքի ավագանու, համայնքային պաշտոն զբաղեցնող այլ անձանց ու ծառայողների մասով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանել իրավիճակային շահերի բախման գրանցման, քննության և կառավարման գործիքները և դրանց կիրառման ընթացակարգերը.
- 3.1.4 կառավարության անդամների մասով՝ «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-L որոշմամբ՝ սահմանել կառավարության անդամի իրավիճակային շահերի բախման կառավարման գործիքակազմերը և դրանց գրանցման ընթացակարգը.

- 3.1.5 քաղաքացիական ծառայողների մասով՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանել քաղաքացիական ծառայողների իրավիճակային շահերի բախման կառավարման գործիքակազմեր և դրանց գրանցման ընթացակարգը.
- 3.1.6 Ավստրալիայի «Նյու սաութ ուելս»-ի անկախ հակակոռուպցիոն մարմնի 2019թ. հրապարակած «Նյու սաութ ուելս հանրային ոլորտում շահերի բախման կառավարման ուղեցույցի», ինչպես նաև այլ երկրների համանման փաստաթղթերի օրինակով, ԿԿՀ-ի կողմից մշակել և հաստատել՝ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների շահերի բախման բացահայտման և կառավարման ուղեցույց»: Ուղեցույցով սահմանել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, իրավիճակային շահերի բախման դեպքերում շահերի բախման բացահայտման, կառավարման գործիքակազմերը և դրանց կիրառման եղանակներն ու պրակտիկան.
- 3.1.7 ԿԿՀ-ը՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի, ինչպես նաև դատավորների, դատախազների, քննիչների և հանրային ծառայության այլ ոլորտային պատասխանատու պետական և ՏԻՄ-ի հետ, մշակել ու կազմակերպել «վերադաս անձ կամ անմիջական ղեկավար» հանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների «շահերի բախման բացահայտման և կառավարման» թեմայով վերապատրաստման դասընթացներ:

### 3.2 Շահերի բախման կառավարման մարմիններ

Շահերի բախման կառավարման գործիքների կիրառման համար պետական և ՏԻՄ ղեկավարները, շահերի բախման իրավիճակներում որոշումներ կայացնելիս կարիք ունեն համապատասխան կառուցվածքային միավորների կամ այդ հարցերով լիազորված պաշտոնատար անձանց խորհրդատվության կամ մասնագիտական աջակցության: Ինչպես վկայում է միջազգային փորձը, ՏՀԶԿ երկրների պրակտիկայում առկա են տարաբնույթ ինստիտուցիոնալ մոտեցումներ շահերի բախման իրավիճակների կառավարման գործում: Մասնավորապես, անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ ոչ միայն վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձինք են խորհրդատվություն տրամադրում շահերի բախման իրավիճակների լուծման ուղղությամբ կամ կազմակերպության բարեվարքության հարցերով պատասխանատուներն են (օրինակ Էթիկայի հարցերով պաշտոնյա, մարդկային ռեսուրսների կառավարման հարցերով պաշտոնյա կամ իրավաբանական բաժնի աշխատակից և այլն) դրանք լուծում, այլև շատ դեպքերում շահերի բախման կառավարման գործում ներգրավված են արտաքին կազմակերպություններ, ինչպիսիք են անկախ հակակոռուպցիոն կամ Էթիկայի հանձնաժողովները, Էթիկայի հարցերով կառավարության հանձնակատարը, արհմիությունները, մարդու իրավունքների պաշտպանը և

այլն (Կանադա, Ճապոնիա, Ֆրանսիա, Դանիա, Ամերիկայի միացյալ Նահանգներ): ՏՀԶԿ երկրների մեծ մասում արտաքին մասնագիտացված կազմակերպությունները պատասխանատու են շահերի բախման կառավարման քաղաքականության իրականացման համար՝ ներառյալ պետական և ՏԻՄ ներկայացված կառույցների (վերադաս անձ կամ անմիջական ղեկավար, բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, էթիկայի հանձնաժողովներ) աշխատանքի համակարգման գործառույթը, որի արդյունքում այդ օղակներից ստանում են շահերի բախման կառավարման վերաբերյալ հաշվետվություններ և ամփոփ քաղաքականության արդյունքը ներկայացնում հանրությանը, կառավարությանը կամ պառլամենտին:<sup>66</sup>

### **Էթիկայի հանձնաժողովներ**

Թիլման Ջոպպը և Վալց Կալինշը գտնում են, որ «շահերի բախման կառավարման տեսանկյունից էթիկայի հանձնաժողովների ապակենտրոնացված գործունեությունը հանրային կառավարման առանձին ոլորտներում առավել օգտակար է, քանի որ նրանց հայտնի է, թե տվյալ ոլորտին բնորոշ ինչ տեսակի և բնույթի շահերի բախման իրավիճակներ կամ երևույթներ են ի հայտ գալիս կամ տեղի ունենում, ինչպիսի հետևանքների դրանք կարող են հանգեցնել և, վերջապես, շահերի բախման կառավարման ինչպիսի գործիքակազմեր կարող են կիրառվել այդ իրավիճակներում»:<sup>67</sup>

Հանրային պաշտոնյաների ու ծառայողների վարքագծի կանոնների կամ սահմանված վարքագծի կանոնադրերի պահանջների պահապանման լիազորության իրականացումը պետական և ՏԻՄ-ում կազմակերպվում է համապատասխան ոլորտային էթիկայի հանձնաժողովների ձևավորման ճանապարհով: Այսպես, ՅՄՄ օրենքի հոդվածներ 44 և 45-ով նախատեսվում է «հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, **ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելման ու վերացման..»** նպատակով պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության համար էթիկայի առանձին հանձնաժողովների ստեղծում: Ինչպես երևում է ՅՄՄ օրենքի հիմնական գաղափարախոսությունից, էթիկայի հանձնաժողովները ձևավորվում են համապատասխան պետական և համայնքային ծառայության առանձին տեսակների համար: Իսկ հանրային պաշտոնյաների որոշ խմբերի՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների և իրավիճակային շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելու

<sup>66</sup> OECD (2003), *Managing Conflict of Interest in the Public Service, OECD Guidelines and Country Experiences*, էջ, 81-84, [Managing Conflict of Interest in the Public Service | READ online \(oecd-ilibrary.org\)](http://www.oecd-ilibrary.org)

<sup>67</sup> «Legislative Toolkit on Conflict of Interest», Prepared by: Tilman Hoppe, Project Long-Term Adviser with inputs and reviews from: Valts Kalnins, Council of Europe Consultant, Vera Devine, Council of Europe Consultant, José Igreja Matos, Council of Europe Expert, Vice President International Association of Judges Jelena Jolić, Council of Europe Secretariat. CoE/EU Eastern Partnership Programmatic Co-operation Framework (PCF) “Fight against Corruption and Fostering Good Governance/Fight against Money-Laundering” (EaP-2). 2015 էջ-52-53, [http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit\\_REG\\_-2\\_2015.pdf](http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit_REG_-2_2015.pdf) :

համար էթիկայի հանձնաժողովի լիազորությունները վերապահված են կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

**Աժ պատգամավորների** մասով էթիկայի հանձնաժողովի ձևավորման խնդիրը սահմանված է ՀՀ Սահմանադրության հոդված 107-ով, որտեղ նշված է, որ «... պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ»: Պատգամավորական էթիկայի հանձնաժողովի ստեղծման, գործունեության և ընթացակարգին վերաբերելի հիմնական պահանջները, հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի լիազորությունների շրջանակի, լիազորությունների ավարտի,ինչպես նաև պատգամավորական էթիկայի հանձնաժողովի աշխատակարգի սահմանման պայմանները սահմանված են «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի հոդվածներ 16,17,18,19-ի ներքո: Հանձնաժողովի աշխատակարգը, Աժ Խորհրդի սահմանած օրինակելի աշխատակարգին համապատասխան, հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ:

**Դատավորների** մասով «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հոդված 77-ով սահմանված են դատավորների ընդհանուր ժողովի կողմից էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ձևավորման պայմանները: Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է ութ անդամից, որոնցից վեցը՝ դատավոր անդամներ, իսկ երկուսը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Դատավոր անդամներից երկուսն ընտրվում են մասնագիտացված դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուր մասնագիտացված դատարանից՝ մեկ դատավոր, երկուսը՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներից՝ համապատասխանաբար քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից: Նույն օրենքի հոդված 78-ով սահմանված են էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործառնությունը ու գործունեությունը կանոնակարգող հարցերը՝ «Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը՝ դատավորի նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ, իրականացնում է սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ գործառնություններ»: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն՝ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, Լիազոր մարմինը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (հոդված 145):

**Դատախազների** մասով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ով «Գլխավոր դատախազին առընթեր գործում են էթիկայի և որակավորման հանձնաժողովներ»: Դատախազների էթիկայի հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, երեք իրավաբան-գիտնական և գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի՝ էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալների, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, Երևան քաղաքի դատախազի, մարզերի դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների

դատախազների և կայազորների զինվորական դատախազների կողմից ձայների մեծամասնությամբ ընտրված երեք դատախազ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը: «Դատախազության մասին» օրենքով սահմանված կարգապահական տույժը գլխավոր դատախազի տեղակալների և դատախազների նկատմամբ գլխավոր դատախազը նշանակում է Էթիկայի հանձնաժողովի համապատասխան դրական եզրակացության հիման վրա:

**Քննիչների մասով** «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ը սահմանում է, որ «Քննչական կոմիտեում գործում են կարգապահական և որակավորման» հանձնաժողովներ: Քննչական կոմիտեի քննիչների կարգապահական հանձնաժողովը բաղկացած է 8 անդամից: Հանձնաժողովի կազմում են քննչական կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, քննչական կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող 3 ծառայող և Կառավարության նշանակած չորս ներկայացուցիչ: Կարգապահական հանձնաժողովի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով և չեն կարող միաժամանակ լինել որակավորման հանձնաժողովի անդամներ: Կարգապահական հանձնաժողովում Նոր անդամների նշանակումները կատարվում են կարգապահական հանձնաժողովի գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան նախորդող օրը»:

«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի 5-րդ մասով հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ «կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա», իսկ ծառայողական քննություններ նշանակում կամ դադարեցնում է, փոխում է ծառայողական քննություն կատարողին ՀՀ հատուկ քննչական ծառայության պետը:

**Համայնքի ղեկավարի** մասով գործում է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 27-ի դրույթները, մինչդեռ համայնքի ավագանու մասով՝ թե՛ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», թե՛ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները ոչ մի կարգավորում չեն պարունակում:

**Քաղաքացիական ծառայողների մասով** «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 33-ով սահմանվում է **քաղաքացիական ծառայողների Էթիկայի հանձնաժողովի** ձևավորման պայմանները, կազմը և գործունեության պահանջները: Քաղաքացիական ծառայողների Էթիկայի հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար համապատասխան մարմինների գլխավոր քարտուղարները քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում լրացնում են համակարգող փոխվարչապետի սահմանած պահանջները բավարարող երկու քաղաքացիական ծառայողի թեկնածություն: Գլխավոր քարտուղարը չի կարող լինել Էթիկայի հանձնաժողովի անդամ: Քաղաքացիական ծառայողների Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից: Յուրաքանչյուր դեպքի համար ձևավորվում է քաղաքացիական ծառայողների Էթիկայի առանձին հանձնաժողով: Քաղաքացիական ծառայողների Էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնի բարեվարքության հարցերով



կազմակերպիչը էլեկտրոնային ծրագրի միջոցով պատահականության սկզբունքով ձևավորում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով՝ կազմում պարտադիր ընդգրկելով տվյալ մարմնի՝ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուներից մեկին: Էլեկտրոնային ծրագիրը պատահականության սկզբունքով պաշտոնով ավելի բարձր քաղաքացիական ծառայողին ընտրում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ: Տվյալ մարմնի ներկայացուցիչը չի կարող լինել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ:

**Հարկային և մաքսային ծառայողների մասով** համապատասխան ծառայությունների մասին ՀՀ օրենքներով ծառայողական քննությունները իրականացվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովը՝ «ղեկավարի որոշմամբ, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում»:

**Փրկարար, քրեակատարողական և հարկադիր կատարողների մասով** «Փրկարար ծառայության մասին» (հոդված 60), «Քրեակատարողական ծառայության մասին» (հոդված 55.3) և «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (հոդված 36) ՀՀ օրենքներով, փրկարար, քրեակատարողական և հարկադիր ծառայողների **էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության,** փրկարար, քրեակատարողական և հարկադիր ծառայողների վարքագծի կանոնները խախտելու և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) **շահերի բախման կանոնները,** նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով»:

**Ոստիկանության ծառայողների** մասով «ՀՀ Ոստիկանության ծառայողական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի հոդված 43.1-ով սահմանված է, կարգապահական հանձնաժողովի ձևավորման, կազմի, գործունեության և որոշումների ընդունման պայմանները: Մասնավորապես, կարգապահական կոպիտ խախտումների առիթով իրականացված ծառայողական քննության նյութերը քննության են առնվում կարգապահական հանձնաժողովում, իսկ ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում, բացի ոստիկանության ծառայողներից, ընդգրկվում են նաև պետական այլ մարմինների, ինչպես նաև հասարակական միավորումների ներկայացուցիչներ: Ընդ որում, ոստիկանության կարգապահական հանձնաժողովում ընդգրկված ոստիկանության ծառայողների թիվը չի կարող գերազանցել ոստիկանության կարգապահական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսը: Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կողմից կայացվող որոշումները հրապարակային են: Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության «ՀՀ Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» 2012թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1672-Ն որոշմամբ:

**Ազգային անվտանգության մարմինների ծառայողների** մասով «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ով «Ազգային անվտանգության

մարմինների ծառայողներին խրախուսելու և կարգապահական տույժի ենթարկելու կարգը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքով:

**Համայնքային ծառայողների** մասով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով «Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում օրենքով սահմանված կարգով համայնքային ծառայողի նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժերը», իսկ կարգապահական տույժերը համայնքային ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Նույն օրենքի հոդված 35.2-ով համայնքային ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով ծառայողական քննությունները վարում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Այսպիսով, Հայաստանի հանրային ծառայության ոլորտում էթիկայի հանձնաժողովների ստեղծման օրենսդրական կարգավորումների համադրումը և վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀԾՄ օրենքով հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, **ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացման** նպատակով պետական ծառայության առանձին տեսակների, ինչպես նաև համայնքային ծառայության համար էթիկայի հանձնաժողովներ օրենսդրորեն ձևավորված չեն: Մասնավորապես, էթիկայի հանձնաժողովներ չեն գործում համայնքի ավագանու համար, իսկ համայնքային ծառայողների, քննիչների, ոստիկանների, զինվորական ու ազգային անվտանգության ծառայողների համար ձևավորված կարգապահական հանձնաժողովները չեն իրականացնում վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և **շահերի բախման իրավիճակների կանխարգելմանը ու վերացմանը** միտված գործառնություններ:

#### ***Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով***

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովները, որպես կանոն հանդես են գալիս որպես բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախման իրավիճակների կանխարգելման ու վերացման արտաքին մարմիններ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովները գործում են որպես բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովներ, քանի որ պաշտոնյաների այդ խմբի համար բացակայում են վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հիերարխիկ աստիճանակարգումը, ինչպես նաև շահերի բախման իրավիճակները ի տարբերություն հանրային ծառայողների ստորին օղակների, այդ պաշտոնյաների կողմից կարող են ստեղծել լուրջ տնտեսական և քաղաքական հետևանքներ: Այդ իսկ պատճառով, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովները, որպես շահերի բախման ինստիտուցիոնալ կառույցներ իրականացնում են ինչպես հանրային պաշտոն զբաղեցնող առանձին խումբ անձանց համար էթիկայի հանձնաժողովների գործառնություններ, այնպես էլ՝ հանդես են գալիս,

որպես կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգի մեթոդական ղեկավարման ու խորհրդատվական մարմիններ՝ իրականացնելով բարեվարքության համակարգի հարցերով համակարգման գործառույթներ:

«Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ի 1-ին մասով հանձնաժողովին է վերապահված «պետական պաշտոն զբաղեցնող անձանց (**բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի**), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների **պաշտոն զբաղեցնող անձանց** վարքագծի կանոնների և **իրավիճակային շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը**», իսկ հոդված 27-ով՝ «անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և **իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ**» իրականացնելու գործառույթները: Նշված գործառույթները իրականացնելու նպատակով, հանձնաժողովը նույն օրենքի հոդված 24-ով օժտված է՝ «**քննելու ու լուծելու իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները**, ներկայացնելու իրավասու մարմին կամ պաշտոնատար անձին ... **շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ) առաջարկություններ**, պետական պաշտոն զբաղեցնող անձանց **ներկայացնելու առաջարկություններ շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ, վարելու շահերի բախման դեպքերի վիճակագրություն և հրապարակելու տվյալներ, ամփոփելու իրավիճակային շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման պրակտիկան և դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկություններ ներկայացնելու**» լիազորություններով:

Ինչպես ցույց է տալիս կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի շահերի բախման իրավիճակների կանխարգելման ու վերացման մասով գործառույթների տարանջատումն ու համադրումը, այն հիմնականում հանդես է գալիս, որպես պետական պաշտոն զբաղեցնող անձանց՝ (բացառությամբ պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների,) համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների **պաշտոն զբաղեցնող անձանց իրավիճակային շահերի բախման կանխարգելմանն ու վերացման հարցերով**: Մինչդեռ, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների մասով՝ միայն օժտված է **վարելու շահերի բախման դեպքերի վիճակագրություն և հրապարակելու տվյալներ, ամփոփելու իրավիճակային շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման պրակտիկան և դրա միասնականության ապահովմանն ուղղված ներկայացնելու առաջարկություններ**:

Այնուամենայնիվ, շահերի բախման կանխարգելման ու վերացման մասով ԿԿՀ-ին վերապահված գործառույթները բավարար չեն շահերի բախման կառավարման խիստ ապակենտրոնացված համակարգը միասնական մեթոդական ու ղեկավարման սկզբունքներով ու չափանիշներով կառավարելու տեսանկյունից: Այսպես, պատգամավորների, դատավորների, դատախազների էթիկայի ու կարգապահական հարցերի, ինչպես նաև քննիչների

կարգապահական հանձնաժողովները ընդհանրապես չեն քննում ու լուծում շահերի բախման իրավիճակներին վերաբերող դեպքերը: Հանրային ծառայողներից՝ ոստիկանական, ազգային անվտանգության, զինվորական, համայնքային ծառայության ծառայողների համար գործող կարգապահական հանձնաժողովները նույնպես չեն քննում էթիկայի և շահերի բախման իրավիճակներին վերաբերելի դեպքերը: Զաղաքացիական, հարկային, մաքսային, փրկարար, քրեակատարողական, հարկադիր ծառայությունների էթիկայի հանձնաժողովները, չնայած «Զաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով օժտված են քննելու և լուծելու էթիկայի և շահերի բախման իրավիճակների դեպքերը, այդուամենայնիվ այդ հանձնաժողովները չունեն մեթոդական նյութեր և առաջնորդող ուղեցույցներ նման գործընթաց իրականացնելու համար:

Լիտվայի «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի մասին» օրենքը սահմանում է, որ Հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» օրենքի դրույթների կիրարկման նկատմամբ, ինչպես նաև խորհրդատվություն է տրամադրում պետական և ՏԻՄ էթիկայի հանձնաժողովներին հանրային և մասնավոր շահերի, լրբֆստական գործունեության, պաշտոնական էթիկայի քաղաքականության ձևավորման և իրականացման վերաբերյալ»:<sup>68</sup>

Սերբիայի Հանրապետության «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով, Սերբիայի կոռուպցիայի կանխարգելման գործակալությանը հանրային պաշտոն զբաղեցնող բոլոր պաշտոնյաների մասով պատասխանատու է «շահերի բախման առկայության մասին որոշում կայացնելու համար»: Այս գործառույթի իրականացման ժամանակ, Սերբիայի կոռուպցիայի կանխարգելման գործակալությունը պաշտոնյայից ստանալով շահերի բախման վերաբերյալ հայտարարություն/հայտարարագիրը, որոշում է կայացնում շահերի բախման առկայության մասին և դիմում է համապատասխան պաշտոնատար անձին և այն մարմին, որտեղ պաշտոնյան պաշտոն է զբաղեցնում՝ քայլեր ձեռնարկելու շահերի բախման իրավիճակի կառավարման կամ վերացման ուղղությամբ՝ միաժամանակ ներկայացնելով այդ շահերի բախման կառավարման վերաբերյալ առաջարկություններ:<sup>69</sup>

«Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքով կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հիմնական խնդիրներից է «բարեվարքության ոլորտի հիմնարար փորձագիտական աշխատանքի իրականացումը, հանրային ոլորտի առանձին հաստատությունների բարեվարքության ամրապնդմանը միտված խորհրդատվության տրամադրումը, հանրային հաստատությունների, մասնավոր և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ տվյալ կազմակերպությունների բարեվարքության պլանների մշակումը, Սլովենիայի Հանրապետությունում կոռուպցիայի

---

<sup>68</sup> «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի մասին» Լիտվայի օրենք, հոդված 17, կետ 1 և 12: <https://www.vtek.lt/index.php/en/>:

<sup>69</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենք, հոդված 6, կետ 4 և հոդված 42 կետ 6: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>:

կանխարգելման քաղաքականության մշակման և իրականացման ինդիքների ու արդյունքների վերահսկողությունը և վերլուծությունը»:<sup>70</sup>

Այսպիսով, շահերի բախման կառավարման գործում միջազգային փորձը հուշում է, որ կոռուպցիայի կանխարգելման կամ էթիկայի արտաքին մասնագիտացված կառույցները լիազորված են բարեվարքության ոլորտի քաղաքականության մշակման ու վերահսկողության, այդ թվում շահերի բախման կառավարման մասով՝ համակարգման, մեթոդական խորհրդատվության տրամադրման և շահերի բախման առկայության վերաբերյալ որոշումների կայացման ու դրանց հանգուցալուծման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու գործառնություններով ու լիազորություններով:

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2019թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1333-Ն որոշման հավելված 1-ով հաստատված հակակոռուպցիոն ռազմավարության 68-րդ կետով նախատեսվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օրենքով վերապահված գործառնություններից զատ վերապահել նաև «բարեվարքության հարցերով կազմակերպիչների աշխատանքների համակարգման» գործառնությոը:

### ***Բարեվարքության հարցերով կազմակերպիչ***

ՀԾՄ օրենքի հոդված 46-ում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումներում նախատեսում է ներդրել հանրային ծառայողների բարեվարքության համակարգի ինստիտուցիոնալ նոր միավոր՝ **բարեվարքության հարցերով կազմակերպիչ պաշտոն**: ՀԾՄ օրենքի նույն հոդվածի 2-րդ մասում շարադրված են բարեվարքության հարցերով կազմակերպիչ գործառնությունները, մասնավորապես, «Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1. **հանրային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.**
2. իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

---

<sup>70</sup> «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենք, հոդված 12: <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>

3. համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, Էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.
4. մշակում է հանրային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում տվյալ մարմնում հաստատման.
5. **վարում է հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն»:**

Ինչպես ցույց է տալիս բարեվարքության հարցերով կազմակերպչի գործառույթների վերլուծությունը, վերջիններս իրենց գործառույթները, **այդ թվում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ տրամադրելը**, իրականացնելու են միայն տվյալ պետական կամ ՏԻՄ հանրային ծառայողների նկատմամբ: Նկատի ունենալով, որ պետական և ՏԻՄ-ում գործունեություն են իրականացնում ոչ միայն հանրային ծառայողներ, այլ նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձինք, ապա համաձայն ԶԾՄ օրենքի հոդված 46-ի 1-ին կետի պահանջների, բարեվարքության հարցերով կազմակերպչի աջակցությունից չեն կարողանալու օգտվել՝ մասնավորապես, պատգամավորները, կառավարության անդամները, քաղաքական, վարչական ու հայեցողական պաշտոն զբաղեցնող այլ անձինք, դատավորները, քննիչներն ու դատախազները: Միաժամանակ, նկատի ունենալով, որ հանրային ծառայության առանձին տեսակները, օրինակ՝ ոստիկանության, ազգային անվտանգության, զինվորական, դիվանագիտական ծառայողները իրենց գործունեությամբ պայմանավորված ունեն իրավիճակային շահերի բախման ուրույն դրսևորումներ, ապա նման ծառայությունների համար պահանջվելու է տվյալ ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված բարեվարքության հարցերով պատասխանատուների առկայություն:

#### ***Վերադաս անձ կամ անմիջական ղեկավարներ***

ԶԾՄ օրենքի հոդված 33-ի 5 և 6-րդ մասերով նախատեսում է, որ «եթե պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա պաշտոն զբաղեցնող անձը **պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին (եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունի) ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ: Նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը ստանալը անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց: **Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարը ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր: Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարն իրավունք ունի տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարելու պաշտոն զբաղեցնող այլ անձի, եթե դա օրենքով արգելված չէ:** Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը կարող է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի

**կանխարգելման հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ»:**

Ինչպես վկայում է վերջին տարիների վիճակագրությունը,<sup>71</sup> վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց կողմից, իրենց պրակտիկ գործունեության ընթացքում դեռևս չեն արձանագրվել շահերի բախման բացահայտման և կառավարման դեպքեր: Նման իրավիճակը արդյունք է վերադաս անձ և անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց կողմից շահերի բախման կառավարման վերաբերյալ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների բացակայության: Արդյունքում, ՀԾՄ օրենքով կամ այլ ենթաօրենսդրական ակտերով շահերի բախման կառավարման գործառույթի կիրարկումը վերադաս անձ և անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց կողմից չի ապահովելու գործնականում իրավիճակային շահերի բախման կառավարման մշակույթի ներդրումը պետական և ՏԻՄ-ում: Միաժամանակ, պետական և ՏԻՄ-երի թե՛ բարեվարքության հարցերով պատասխանատուները և թե՛ առավելապես վերադաս անձ և անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձինք, առանց համակարգման գործառույթով օժտված մարմնի կողմից մեթոդական ու խորհրդատվական աջակցության, հնարավորություն չեն ունենալու ապահովել շահերի բախման կառավարման գործիքների ներդրումը առանձին պետական և ՏԻՄ-ում: Արդյունքում, առաջնահերթ խնդիր է դառնում պետական և ՏԻՄ բարեվարքության հարցերով կազմակերպիչների և վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց համար շահերի բախման բացահայտման և կառավարման մեթոդական նյութերի մշակումը և համակարգված վերապատրաստումների իրականացումը:

Շահերի բախման կառավարման գործում ՀՀ ինստիտուցիոնալ մարմինների, այդ թվում հանրային ծառայության ոլորտային էթիկայի հանձնաժողովների, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, բարեվարքության հարցերով պատասխանատուների, վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց գործառույթների համադրումը և վերլուծությունը ցույց է տալիս, որ ձևավորված բարեվարքության ապակենտրոնացված ինստիտուցիոնալ համակարգի պայմաններում առկա է նշված մարմինների կողմից գործառույթների կրկնություն, սուբյեկտային առումով շահերի բախման կառավարման գործառույթների տարանջատման անհստակություններ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելման և վերացման ուղղությամբ մեթոդական ղեկավարման, խորհրդատվության տրամադրման և ուղղորդման բացակայություն: Այսպես, շահերի բախման կանոնների պահպանման հարցերի քննությամբ և լուծմամբ զբաղվում են հանրային ծառայության ոլորտային էթիկայի հանձնաժողովները, իսկ բարեվարքության հարցերով կազմակերպիչներն ու վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձինք՝ **«ձեռնարկում կամ ներկայացնում են շահերի բախման իրավիճակի**

<sup>71</sup> ԿԿՀ-ի <http://cpcarmenia.am/hy/> կայքէջում բացակայում է պետական և ՏԻՄ-ում շահերի բախման իրավիճակների բացահայտման և կառավարման դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները:

**լուծմանն ուղղված քայլեր»:** Արդյունքում, մինևույն կազմակերպության շրջանակում 3 ինստիտուցիոնալ մարմիններ իրականացնում են իրավիճակային շահերի բախման նույն գործառնությունները: Եվ այդ պայմաններում, նրանք զուրկ են կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից, որևէ մեթոդական օժանդակության և համակարգման աջակցությունից:

Շահերի բախման կառավարման գործում ինստիտուցիոնալ կառույցների միջազգային փորձի օրինակների համադրումը ՀՀ բարեվարքության համակարգի կառավարման կառույցների վերապահված գործառնություններին ցույց է տալիս, որ ԿԿՀ-ի գործառնությունները շահերի բախման կառավարման գործում կարիք ունեն հստակեցման և ընդլայնման, մասնավորապես շահերի բախման բացահայտման ու կառավարման քաղաքականության մշակման, պետական և ՏԻՄ բարեվարքության հարցերով կազմակերպիչներին մեթոդական ու ուղեցույցային խորհրդատվության տրամադրման, առանձին դեպքերում ԿԿՀ-ին շահերի բախման առկայության վերաբերյալ որոշումների կայացման լիազորության վերապահում:

### **Առաջարկություններ**

- 3.2.1 հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով՝ համայնքային, ոստիկանական, զինվորական, քննչական, ազգային անվտանգության մարմիններում ծառայողների կարգապահական հանձնաժողովներին վերապահել վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ կամ եզրակացություններ ներկայացնելու լիազորություն:
- 3.2.2 «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով համայնքի ավագանու և համայնքային պաշտոն զբաղեցնող այլ պաշտոնատար անձանց համար սահմանել էթիկայի հանձնաժողով ձևավորելու պահանջ՝ սահմանելով էթիկայի հանձնաժողովի ստեղծման, գործունեության և ընթացակարգին վերաբերելի հիմնական պահանջները, հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի լիազորությունների շրջանակը, ինչպես նաև էթիկայի հանձնաժողովի աշխատակարգը:
- 3.2.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով հանձնաժողովին վերապահել հանրային ծառայության ոլորտային, այդ թվում պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների, վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց կողմից բարեվարքության ոլորտի քաղաքականության մշակմանն ու վերահսկողության, այդ թվում շահերի բախման կառավարման մասով՝ համակարգման, մեթոդական խորհրդատվության (մեթոդական նյութերի և առաջնորդող ուղեցույցների) տրամադրման և շահերի բախման առկայության վերաբերյալ որոշումների կայացմանն ու դրանց հանգուցալուծման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու գործառնություններ ու լիազորություններ:



- 3.2.4 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով պետական և ՏԻՄ բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից իրականացվող «շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ տրամադրելու» գործառույթը տարածել սաև տվյալ մարմնում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Միաժամանակ, օրենսդրորեն բարեվարքության հարցերով կազմակերպիչ հաստիքներ նախատեսել ԱԺ պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների, համայնքի ավագանու և համայնքային այլ պաշտոն զբաղեցնող անձանց համար:
- 3.2.5 օրենսդրորեն հստակեցնել և տարանջատել պետական և ՏԻՄ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների, վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց կողմից շահերի բախման կառավարման, կանխարգելման և վերացման գործառույթները՝ բացառելով դրանց կրկնությունը:
- 3.2.6 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ՀՀ Վարչապետի քաղաքացիական ծառայության գրասենյակի, ինչպես սաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների մասնագիտական վերապատրաստում իրականացնող ուսումնական և ակադեմիական կառույցների հետ համատեղ՝ մշակեն շահերի բախման բացահայտման և կառավարման մեթոդական նյութեր ու ուղեցույցներ, կազմակերպեն ու իրականացնեն համակարգված վերապատրաստումներ, պետական և ՏԻՄ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովների անդամների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների, վերադաս անձ կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց համար:

#### IV. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Շահերի բախման (իրավիճակային, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի) բացահայտումը և կառավարումը կմնան թղթի վրա որպես դատարկ հայտարարություններ կամ ցանկություններ, եթե դրանց խախտումների կամ պահանջների պահպանման համար չսահմանվեն պատասխանատվության միջոցներ:

Շահերի բախման իրավիճակների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պահպանման նկատմամբ ՀԾՄ օրենքը նախատեսում է պատասխանատվության միջոցների կիրառման տարբերակված մոտեցում: ՀԾՄ օրենքի հոդված 31-ի 17-րդ մասով «17. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելը **Նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է**»: Այլ սահմանափակումների մասով՝ ՀԾՄ օրենքի հոդված 32-ի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով սահմանված է, որ «այլ սահմանափակումները **չպահպանելը առաջացնում է կարգապահական պատասխանատվություն**: Կարգապահական պատասխանատվության

վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից սույն հոդվածով նախատեսված սահմանափակումը խախտելու մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը **եռօրյա ժամկետում հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում**: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման վերաբերյալ **ներկայացնել հրապարակային պարզաբանում, որը ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի պաշտոնական կայքէջում**, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում: Սույն հոդվածի 4-րդ մասը կիրառելի է վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ»: ԶԾՄ օրենքի հոդված 33-ի 9-ից 11-րդ մասերում, ճիշտ նույն կարգավորումներն են սահմանված իրավիճակային շահերի բախման համար: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նույն հոդվածի 7-րդ մասով իրավիճակային շահերի բախման համար նախատեսված կարգապահական պատասխանատվության միջոցների պահանջը կիրառելի չէ պատգամավորի, դատավորի, դատախազի, քննիչի պաշտոն զբաղեցնող անձանց համար:

**ԱԺ պատգամավորների** մասով «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի հոդված 52-ի 3-րդ մասով սահմանված են պատգամավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մի շարք միջոցներ (սիստը նախագահողի կողմից պատգամավորի նկատմամբ կարող են կիրառվել **նախազգուշացում, խոսափողի անջատում, մեկ նիստում խոսափողից հանդես գալու իրավունքից զրկում, նիստերի դահլիճից հեռացում, ԱԺ նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից մինչև յոթ օրով զրկում**), սակայն դրանք կիրառելի չեն պատգամավորի վարքագծի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պայմանների խախտման դեպքերի համար: Պատգամավորի կողմից ԶԾՄ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտումների համար գործում է ԶԾՄ օրենքի հոդված 31-ի 17-րդ մասով սահմանված **«նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է»** պատասխանատվության միջոցը: Պատգամավորի կողմից այլ սահմանափակումների պահանջները չպահպանելը ԶԾՄ օրենքի հոդված 32-ի 3-րդ մասով նախատեսում է կարգապահական պատասխանատվություն: Մինչդեռ, նույն հոդվածի նույն կետով սահմանված է, որ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Զետևաբար, ԱԺ պատգամավորները հանդիսանալով քաղաքական պաշտոն զբաղեցնող անձիք, նրանց նկատմամբ այլ սահմանափակումների պահանջների խախտումների դեպքում չեն կարող կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ: Այդուհանդերձ, ԶԾՄ օրենքի հոդված 32-ի 4-րդ մասով պատգամավորի համար կարգապահական պատասխանատվության փոխարեն նախատեսում է՝ «ԿԿԳ-ի եզրակացությունը եռօրյա ժամկետում **հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում**: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է ԿԿԳ-ի եզրակացությամբ արձանագրված խախտման

վերաբերյալ **ներկայացնել հրապարակային պարզաբանում**, որը ստացվելու պահից եռօրյա ժամկետում **հրապարակվում է այն մարմնի պաշտոնական կայքէջում, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում»** կարգավորումը:

Իրավիճակային շահերի բախման մասով՝ ՀԾՄ օրենքի հոդված 33-ի դրույթները, թեև նույնական են «այլ սահմանափակումների» պահանջների խախտման համար ՀԾՄ օրենքի հոդված 32-ի 3-րդ մասով սահմանված կարգավորումներին, այդուհանդերձ, դրանք չեն տարածվում պատգամավորների վրա: Հետևաբար, պատգամավորների կողմից իրավիճակային շահերի բախման խախտումների համար, ինչպես ՀԾՄ օրենքով, այնպես էլ «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքով ընդհանրապես որևէ պատասխանատվության միջոց սահմանված չէ:

**Դատավորների** մասով ՀԾՄ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտումների համար գործում է ՀԾՄ օրենքի հոդված 31-ի 17-րդ մասով սահմանված **«նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է»** կարգապահական տույժը: Դատավորի կողմից այլ սահմանափակումների պահանջները չպահպանելը ՀԾՄ օրենքի հոդված 32-ի 3-րդ մասով նախատեսում է կարգապահական պատասխանատվություն: Մինչդեռ, նույն հոդվածի նույն կետով սահմանված է, որ «ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում»: ՀԾՄ օրենքով դատավորները հանդիսանում են ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, հետևաբար նրանց նկատմամբ այլ սահմանափակումների և իրավիճակային շահերի բախման պահանջների պահպանման համար գործում են «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով դատավորին կարգապահական պատասխանատվության (կարգապահական տույժի) ենթարկելու վերաբերյալ դրույթները: «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի հոդված 142-ով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի շարքում թվարկված է նաև դատական օրենսգրքի հոդվածներ 69-ով և 70-ով սահմանված «դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտավորյալ կամ կոպիտ անփութությամբ»: Դատավորի վարքագծի կանոնների խախտումների համար դատական օրենսգրքի հոդված 149-ով սահմանված են նաև դատավորին կարգապահական տույժերի հետևյալ տեսակները՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելու արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը. 1) նախազգուշացում, 2) նկատողություն, 3) խիստ նկատողություն, 3.1) առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական և արտահերթ համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք՝ մեկ տարի ժամկետով, 3.2) դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատում, 4) Էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժերը:

**Դատախազների** մասով ՀԾՄ օրենքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների խախտումների համար գործում է ՀԾՄ

օրենքի հոդված 31-ի 17-րդ մասով սահմանված «**Նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է**» կարգապահական տույժը: Դատախազի կողմից այլ սահմանափակումների պահանջները չպահպանելը ՀԾՍ օրենքի հոդված 32-ի 3-րդ մասով նախատեսվում է կարգապահական պատասխանատվություն: Մինչդեռ, Նույն հոդվածի Նույն կետով սահմանված է, որ «Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում»: ՀԾՍ օրենքով դատախազները հանդիսանում են ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, հետևաբար նրանց նկատմամբ այլ սահմանափակումների և իրավիճակային շահերի բախման պահանջների պահպանման համար գործում են «Դատախազության մասին» օրենքի հոդված 53-ով դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժի) վերաբերյալ դրույթները: Նույն օրենքի հոդված 55-ով դատախազների անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների հիմքով կարգապահական տույժ նշանակվում է «Գլխավոր դատախազի կողմից՝ միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած եզրակացության հիման վրա՝ եզրակացությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում»: «Դատախազության մասին» օրենքի հոդված 53-ով դատախազին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի շարքում թվարկված է նաև դատախազության մասին օրենքի հոդվածներ 72-ից 74-ով սահմանված «2) դատախազի վարքագծի կանոնները խախտելը»: Նշված վարքագծի կանոնների խախտումների համար դատախազության մասին օրենքի հոդված 54-ով նախատեսվում է, որ «դատախազի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ կարգապահական տույժերը՝ 1) նկատողություն, 2) խիստ նկատողություն, 3) դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, 4) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, 5) պաշտոնից ազատում» կարգապահական տույժերը:

**Քննիչների** մասով «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 29-ով քննչական կոմիտեի ծառայողը կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել՝ «...անհամատեղելիության կանոնները խախտելու դեպքում»: Նույն օրենքի հոդված 30-ով «քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ 1) զգուշացում, 2) նկատողություն, 3) խիստ նկատողություն, 4) դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, 5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, 6) պաշտոնից ազատում»: Քննիչների վարքագծի կանոնների, շահերի բախման իրավիճակների, այլ սահմանափակումների համար օրենքը կարգապահական տույժեր չի սահմանում:

«Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ով հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնից ազատվում է՝ « 8) Նույն օրենքով հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառվող սահմանափակումները խախտելու դեպքում»: Հատուկ քննչական ծառայության մասին օրենքի հոդված 11-ով հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար սահմանված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումները, ինչպես նաև «Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հատուկ քննչական ծառայությունում

ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը յուրաքանչյուր պարագայում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն» սահմանափակումները: Նույն օրենքի հոդված 21-ով հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ 1) զգուշացում, 2) նկատողություն, 3) խիստ նկատողություն, 4) դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, 5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, 6) պաշտոնից ազատում»: Հատուկ քննչական ծառայության քննիչների վարքագծի կանոնների, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների պահանջների չպահպանման համար օրենքը պատասխանատվության միջոցներ չի նախատեսում:

**Համայնքի ղեկավարի** մասով անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահանջների չպահպանման դեպքերում գործում է ՀԾՄ օրենքի հոդվածներ 31-ի և 32-ի վերադաս անձ և անմիջական ղեկավար չունեցող, ինչպես նաև քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 27-ի «Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթների և դրանց հարուցման հիմքերի» վերաբերյալ դրույթները: Մինչդեռ համայնքի ավագանու, համայնքային պաշտոն զբաղեցնող այլ անձանց մասով՝ թե՛ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», թե՛ «Հանրային ծառայության մասին», թե՛ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման և դրանց խախտման համար պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ ոչ մի կարգավորում չեն պարունակում:

**Կառավարության անդամների** մասով անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահանջների չպահպանման դեպքերում գործում է ՀԾՄ օրենքի հոդվածներ 31-ի և 32-ի վերադաս անձ և անմիջական ղեկավար չունեցող, ինչպես նաև քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի հոդված 27-ի «Անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վարույթների և դրանց հարուցման հիմքերի» վերաբերյալ դրույթները: Մինչդեռ «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքը և դրանից բխող «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-L որոշումը, կառավարության անդամների այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման և դրանց խախտման համար պատասխանատվության միջոցներ սահմանված չեն:

**Քաղաքացիական ծառայողների** մասով «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 21-ով քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կարող են կիրառվել «Ծառայողական

պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու և (կամ) ծառայողական լիազորությունները վերազանցելու և (կամ) աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու և (կամ) **քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում**»։ Նույն հոդվածի 2-րդ մասով քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվում են «1) թեթև կարգապահական տույժեր՝ ա. նախազգուշացում, բ. նկատողություն, 2) խիստ կարգապահական տույժեր՝ ա. խիստ նկատողություն, բ. հիմնական աշխատավարձի իջեցում մինչև 20 տոկոսով, բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը, գ. ծառայության դադարեցում» կարգապահական տույժերի տեսակները։

**Հարկային և մաքսային ծառայողների մասով** «Հարկային ծառայության մասին» և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքների համապատասխանաբար հոդվածներ 25 -ով և 44-ով հարկային և մաքսային ծառայողների նկատմամբ կիրառվում են ««Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով սահմանված կարգապահական տույժերը»։ Միաժամանակ, հարկային և մաքսային ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը։

**Փրկարար, քրեակատարողական և հարկադիր կատարողների մասով** «Փրկարար ծառայության մասին» (հոդված 58), «Քրեակատարողական ծառայության մասին» (հոդված 36) և «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (հոդված 35) ՀՀ օրենքներով, փրկարար, քրեակատարողական և հարկադիր ծառայողների նկատմամբ կիրառվում են ««Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով սահմանված կարգապահական տույժերը»։ Միաժամանակ, հարկային և մաքսային ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը։

**Համայնքային ծառայողների մասով** «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 32-ով համայնքային ծառայողի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կարող են կիրառվել «Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում»։ Նույն հոդվածով համայնքային ծառայողի նկատմամբ կիրառվում են «ա) նախազգուշացում, բ) նկատողություն, գ) խիստ նկատողություն, գ1) համայնքային ծառայողին նույն պաշտոնում աշխատելու ժամանակահատվածում շնորհված ավելի բարձր դասային աստիճանի իջեցում մեկ աստիճանով, դ) զբաղեցրած պաշտոնից ազատում» կարգապահական տույժերի տեսակները։

**Դիվանագիտական ծառայողների մասով** «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 39-ով դիվանագետների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական

պատասխանատվության միջոցներ «ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ անպատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները գերազանցելու, աշխատանքային կարգապահության կանոնները և **դիվանագետի էթիկայի կանոնները** խախտելու դեպքում»: Նույն հոդվածով դիվանագետի նկատմամբ կիրառվում են «1) նախազգուշացում, 2) նկատողություն, 3) խիստ նկատողություն» կարգապահական տույժերի տեսակները:

**Ոստիկանության ծառայողների** մասով «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 42-ով ոստիկանի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառվում են «ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունների սահմանն անցնելու դեպքերում»: Նույն հոդվածի 2-րդ մասով ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառելի են «1) նկատողություն, 2) խիստ նկատողություն, 3) 10-50 տոկոսով պաշտոնային դրույթաչափի իջեցում՝ մինչև 3 ամիս ժամանակով, 6) պաշտոնի իջեցում մեկ աստիճանով, 7) կոչման իջեցում մեկ աստիճանով, 8) ոստիկանությունից ազատում» կարգապահական տույժերի տեսակները:

**Ազգային անվտանգության մարմինների ծառայողների** մասով «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ով «Ազգային անվտանգության մարմինների ծառայողներին խրախուսելու և **կարգապահական տույժի ենթարկելու կարգը** սահմանվում է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Այսպիսով, Հայաստանի հանրային ծառայության ոլորտում անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման պահանջների և դրանց խախտումների համար կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման օրենսդրական կարգավորումների համադրումը և վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՃՄ օրենքով հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների պահանջների, **ինչպես նաև իրավիճակային շահերի բախման խախտումների համար** կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման միասնական համակարգը բացակայում է:

**Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների խախտումների համար սահմանված է բացառապես պաշտոնից ազատման կարգապահական միջոց, մինչդեռ, այլ սահմանափակումների ու իրավիճակային շահերի բախման պայմանների չբացահայտման կամ խախտումների համար ՀՃՄ օրենքով կարգապահական պատասխանատվության կոնկրետ միջոցներ սահմանված չեն:** ՀՃՄ օրենքով հանրային պաշտոն զբաղեցնող քաղաքական խմբի պաշտոնյաների համար այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման դեպքերում կարգապահական պատասխանատվության միջոցները կիրառելի չեն համարում: Իսկ «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական և «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքներով՝ ԱԺ պատգամավորների և կառավարության անդամների համար այլ

սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման և դրանց խախտման համար ընդհանրապես պատասխանատվության միջոցներ սահմանված չեն: Համայնքի ավագանու, համայնքային պաշտոն զբաղեցնող այլ անձանց մասով՝ թե՛ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», թե՛ «Հանրային ծառայության մասին», թե՛ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման և դրանց խախտման համար պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ կարգավորումներ չեն պարունակում:

ՀԾՄ օրենքով ինքնավար պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց խմբի համար «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը և «Դատախազության մասին» ՀՀ օրենքը լիովին կարգավորել են դատավորի և դատախազի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և իրավիճակային շահերի բախման խախտումների համար կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման գործընթացները: Թեև, «Ձևնչական կոմիտեի մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքներով, քննիչների համար նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցներ, այդուհանդերձ դրանք կիրառելի չեն քննիչների այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման պահանջների խախտումների դեպքերում:

Հանրային պաշտոն զբաղեցնող վարչական և հայեցողական խմբերի պաշտոնատար անձանց այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման պահանջների խախտումների համար օրենսդրությամբ ընդհանրապես սահմանված չեն կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Հանրային ծառայողների առանձին խմբերի՝ քաղաքացիական, հարկային, մաքսային, փրկարար, քրեակատարողական, հարկադիր կատարման ծառայողների մասով, օրենսդրորեն ամբողջովին կարգավորված են անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման պահանջների խախտումների դեպքերը և սահմանված են դրանց խախտման համար կարգապահական պատասխանատվության միջոցներ: Չնայած, համայնքային, դիվանագիտական, ոստիկանական, զինվորական, ազգային անվտանգության մարմիններում ծառայությունների մասին ոլորտային օրենքներով նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցներ, այդուհանդերձ այդ կարգապահական տույժերը կիրառելի չեն այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման պահանջների խախտումների համար:

Ինչպես վկայում է վերոնշյալ վերլուծությունը, օրենսդրությամբ սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցները նախատեսված են կոնկրետ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողներին՝ վերջիններիս կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, իրավիճակային շահերի բախման պահանջների խախտումների համար: Առանձին դեպքերում կապված հայտարարագրման պարտականություն ունեցող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և



ծառայողների և նրանց ընտանիքի անդամների շահերի հայտարարագրման պարտականությունների կատարման, ինչպես նաև հայտարարագրման ենթակա տվյալների հավաստիության ու ամբողջականության ապահովման հետ, օրենսդրությամբ սահմանված են նաև վարչական պատասխանատվության միջոցներ: Մասնավորապես, «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի հոդված 169.28-ով սահմանված են հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով **սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ հայտարարագրերի** լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու դեպքերում կոնկրետ վարչական պատասխանատվության միջոցներ: Այսպես, հայտարարատուների կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով **սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարագիրը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում**՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ հայտարարագրի **լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելը՝ առաջացնում է նախազգուշացում**: «Նախազգուշացում» վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, հայտարարատուի կողմից հայտարարագիրը՝ դրա լրացման նկատմամբ ներկայացվող պահանջներին կամ ներկայացման կարգին համապատասխան չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Եվ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով»:

«Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան» ողջունելով կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային փոխըմբռնման ու համագործակցության հետագա բարելավման, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Միջազգային արժույթային հիմնադրամի, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Ամերիկյան պետությունների կազմակերպության, ՏՀԶԿ-ի և Եվրոպական միության գործողությունները, պաշտոնատար անձի կողմից անձնական, մասնավոր շահերը հանրային շահից վեր դասելու դեպքերում, որպես առաջնությունն դիտարկում է պաշտոնատար անձանց գործողությունները քրեականացնելու պահանջ՝ սահմանելով ակտիվ և պասիվ կաշառակերության դեպքերը: Այս իմաստով, ՀՀ «Քրեական օրենսգրքը»՝ հոդվածներ 308, 309 և 310-ից 313-ը, քրեականացվել է պաշտոնատար անձի կողմից կաշառքի, պաշտոնական դիրքի չարաշահման, պաշտոնի ազդեցության օգտագործումը անձնական շահադիտական նպատակներով օգուտներ ստանալը: Մասնավորապես, քրեական օրենսգրքով սահմանված են «Ազդեցության չարաշահում», «Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը», «Պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը», «Ապօրինի հարստացման», «Կաշառք ստանալու», «Կաշառք տալու», «Կաշառքի միջնորդության», «Իրական կամ ենթադրյալ ազդեցության օգտագործման» հանցատեսակները: Դրա հետ մեկտեղ, «Քրեական օրենսգրքի» հոդվածներ 314.2-ով և 314.3-ով քրեականացվել են նաև հայտարարագրման

պարտականություն ունեցող անձանց կողմից հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելը և հայտարարագրերում դիտավորյալ կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը երևույթները: Ընդհանուր առմամբ, «Քրեական օրենսգրքի»-ի հավելված 6-ում սահմանված են կոռուպցիոն հանցագործությունների ցանկը:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, իրավիճակային շահերի բախման պայմանների խախտումների համար հանրային ծառայության ոլորտային օրենսդրությամբ սահմանված կարգապահական պատասխանատվության տեսակների համադրումը ցույց է տալիս, որ միայն քաղաքացիական և ոստիկանական ծառայողների համար է նախատեսված նյութական տույժի՝ այն է, «հիմնական աշխատավարձի իջեցում մինչև 20 տոկոսով, բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը» և «0-50 տոկոսով պաշտոնային դրույթաչափի իջեցում՝ մինչև 3 ամիս ժամանակով» տեսակները: Մինչդեռ, հանրային ծառայության մյուս ոլորտներում կիրառվում են այսպես կոչված ոչ նյութական պատասխանատվության միջոցներ, ինչպիսիք են՝ «նախազգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, կոչման իջեցում մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում և ծառայության դադարեցում» կարգապահական տույժերի տեսակները:

Առանձնահատուկ քննարկման է ենթակա, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների «պաշտոնից ազատում կամ լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի տեսակը: ՀԾՄ օրենքի հոդված 31-ի 17-րդ կետով «Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է»: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից 2019-2020թթ. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների խախտումների վերաբերյալ ձևավորած պրակտիկան<sup>72</sup> ցույց է տալիս, որ հանրային պաշտոն զբաղեցրած անձանց կողմից անհամատեղելիության պահանջների խախտումների վերաբերյալ եզրակացությունները պահանջում են դեպքի ուսումնասիրություն և խախտման հանգամանքների բացահայտում, որի պայմաններում ի հայտ են գալիս ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հանգամանքներ, որոնք երևույթի հետևանքների գնահատման տեսանկյունից բարդացնում են հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջի խախտման վերաբերյալ միանշանակ և միատեսակ եզրակացությունների կազմմանը՝ միասնական պրակտիկայի ձևավորմանը: Այս իմաստով, հանձնաժողովի կաշկանդվածության և միևնույն երևույթի վերաբերյալ տարաբնույթ եզրակացություններ ձևավորելու պայման է հանդիսանում նաև ՀԾՄ օրենքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների խախտման համար

---

<sup>72</sup> Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված Աժ պատգամավոր Գագիկ Կոյայի Ծառուկյանի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելու վերաբերյալ 2020թ. հոկտեմբերի 26-ի թիվ 03/2020 եզրակացությունը, ինչպես նաև Երևանի քաղաքապետ, Հայկ Մարությանի նկատմամբ 2019թ. դեկտեմբերի 9-ին հարուցված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ թիվ 06/2019 եզրակացությունը: <http://cpcarmenia.am/files/legislation/350.pdf>

«պաշտոնից ազատման և լիազորությունների դադարեցում» պատասխանատվության միջոցի բացառիկությունը:

Շահերի բախման իրավիճակների պահանջների խախտումների կամ չպահպանման համար պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ մշակված միջազգային ուղեցույցային փաստաթղթերը բացակայում են: Այդուհանդերձ, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարքագծի կանոնագրերին վերաբերող որոշ միջազգային փաստաթղթեր նախատեսում են վարքագծի կանոնների, այդ թվում նաև շահերի բախման իրավիճակների պահանջների պահպանման համար պատասխանատվության միջոցների կիրառման անհրաժեշտություն: Այսպես, ԵԽ-ի «Հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթի հավելված 2-ի հոդված 28-ի 2-ից 4-րդ կետերով սահմանվում է, որ «2. Սույն կանոնագրի Հոդված 2 պարբերություն 2-ի դրույթները կազմում են հանրային պաշտոնյայի աշխատանքի պայմանների բաղկացուցիչ մասը: **Դրանց խախտումը կարող է հանգեցնել կարգապահական վարույթի:** 3. Աշխատանքի պայմանների կողմ հանդիսացող հանրային պաշտոնյան դրանում պետք է ներառի դրույթ առ այն, որ սույն կանոնագիրը պետք է պահպանվի և կազմում է նրա աշխատանքային պայմանների բաղկացուցիչ մասը: 4. **Այլ հանրային պաշտոնյաներին և ծառայողներին վերահսկող կամ ղեկավարող հանրային** պաշտոնյան պատասխանատու է հետևել, որ վերջիններս հետևում են սույն կանոնագրին կամ ձեռնարկի կամ առաջարկի համապատասխան կարգապահական վարույթ այդ դրույթների խախտման համար»:<sup>73</sup>

Համանման պահանջ արձանագրված է նաև ԵԽ նախարարների կոմիտեի «Կոռուպցիայի դեմ պայքարի 20 ուղեցույցային սկզբունքների մասին» (97) 24 բանաձևի 10-րդ սկզբունքի ներքո, այն է՝ «10. ապահովել, որ հանրային պաշտոնյաների իրավունքներին և պարտականություններին վերաբերող կանոնները հաշվի են առնում կոռուպցիայի դեմ պայքարի պահանջները և **նախատեսում են համապատասխան և արդյունավետ կարգապահական միջոցներ**»:<sup>74</sup>

ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա»-ի հոդված 30-ի 1-ին և 8-րդ կետերով առաջարկվում է մասնակից պետություններին «1..... նախատեսել սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործության համար համապատասխան պատժամիջոցներ՝ հաշվի առնելով հանցագործության ծանրության աստիճանը: 8. Սույն հոդվածի 1-ին կետը վնաս չի պատճառում **իրավասու մարմինների կողմից քաղաքացիական ծառայողների նկատմամբ կարգապահական լիազորությունների իրականացմանը**»:

---

<sup>73</sup> CE «Recommendation No. R (2000) 10 of the Committee of Ministers to Member states on codes of conduct for public officials». Appendix to Recommendation No. R (2000) 10. Model code of conduct for public officials. Interpretation and application. <https://rm.coe.int/16805e2e52>

<sup>74</sup> Council of Europe Resolution (97) 24 on the Twenty Guiding Principles for the Fight Against Corruption. Adopted by the Committee of Ministers on 6 November 1997 at the 101st session of the Committee of Ministers. [Council of Europe Resolution \(97\) 24 on the Twenty Guiding Principles for the Fight Against Corruption | OSCE POLIS](#).

Այսպիսով, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարքագծի կանոնների, այդ թվում շահերի բախման իրավիճակների պահանջների խախտումները միջազգային ուղեցույցային փաստաթղթերով դասվում են կարգապահական պատասխանատվության միջոցների շարքին: Այդուհանդերձ, միջազգային փաստաթղթերը չեն կոնկրետացնում թե ինչպիսի կարգապահական պատասխանատվության միջոցներ պետք է կիրառվեն շահերի բախման իրավիճակների պահանջների չպահպանման կամ խախտումների համար:

Թիլման Յոպպը և Վալց Կալինշը գտնում են, որ «Կախված երկրների օրենսդրական սովորույթներով, կարգապահական պատասխանատվության միջոցների շրջանակը տարբեր կերպ է մեկնաբանվում, այդ իսկ պատճառով, որպես կանոն, երկրներին առաջարկվում է շահերի բախման պահանջների խախտումները ուղղակիորեն ներառել կարգապահական պատասխանատվության միջոցների ցանկում՝ առանց դրանք կապելով ծառայողական պարտականությունների չկատարման հանգամանքների հետ: Կարևոր է նաև հաշվի առնել կարգապահական պատասխանատվության միջոցների ցանկով նախատեսված տույժերի կիրառելիության հանգամանքը, այդ թվում պաշտոնից հեռացումը կամ արձակումը»:<sup>75</sup>

Սերբիայի Հանրապետության «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 12-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պայմանների խախտումների համար պատասխանատվության միջոցներին: Օրենքի՝ 101-ից 105-րդ հոդվածները կարգավորում և սահմանում են հայտարարատու պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված ժամկետում հայտարարագրերի չներկայացման, կամ հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու կամ կեղծելու դեպքերին, ինչպես նաև հանրային պաշտոնյաների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, շահերի բախման իրավիճակների պայմանների խախտման, պետական և ՏԻՄ ղեկավար և պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից Սերբիայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով սահմանված լիազորությունները չկատարելու, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից նույն օրենքով սահմանված պարտականությունները չկատարելու համար կիրառվող պատասխանատվության միջոցներին: Մասնավորապես, Սերբիայի կոռուպցիայի կանխարգելման գործակալությունը, հանրային պաշտոն զբաղեցնող բոլոր պաշտոնյաների նկատմամբ, իրավասու է կիրառելու 50-150 հազար սերբիական դինարի չափով տուգանքներ՝ օրենքով սահմանված ժամկետում՝ 1. շահերի բախման առկայության կամ շահերի բախման իրավիճակում փոխկապակցած անձանց առկայության մասին չտեղեկացնելու, 2. հանրային ոլորտում այլ պաշտոն զբաղեցնելու կամ գործունեություն ծավալելու, 3. առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու, 4. ֆիզիկական և իրավաբանական անձանց

---

<sup>75</sup> «Legislative Toolkit on Conflict of Interest», Prepared by: Tilman Hoppe, Project Long-Term Adviser with inputs and reviews from: Valts Kalnins, Council of Europe Consultant, Vera Devine, Council of Europe Consultant, José Igreja Matos, Council of Europe Expert, Vice President International Association of Judges Jelena Jolić, Council of Europe Secretariat. CoE/EU Eastern Partnership Programmatic Co-operation Framework (PCF) “Fight against Corruption and Fostering Good Governance/Fight against Money-Laundering” (EaP-2). 2015 էջ 83, [http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit\\_REG\\_-2\\_2015.pdf](http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit_REG_-2_2015.pdf) :

խորհրդատվություն տրամադրելու, 5. առևտրային կազմակերպության ներկայացուցչական, կառավարման կամ վերահսկողական գործառույթներ իրականացնելու, 6. ոչ առևտրային կազմակերպությունների և միավորումների ներկայացուցչական և կառավարման մարմիններին մասնակցելու, 7. սահմանված ժամկետում գույքը և բաժնեմասերը հավատարմագրային կառավարման չհանձնելու, 8. սահմանված ժամկետում ծառայողական պարտականություններով պայմանավորված ստացված նվերները սահմանված կարգով պետությանը չփոխանցելու, 9. ծառայողական պարտականություններով պայմանավորված նվերների նկատմամբ սեփականության իրավունքի պահպանման, 10. սահմանված կարգով և ժամկետում ստացված նվերների մասին հանրային մարմին չձանուցելու մասին տեղեկատվությունը գործակալությանը չհայտնելու համար: Քաղաքական գործունեություն ծավալելու, կուսակցության ղեկավար և վերահսկողական մարմիններում պաշտոն զբաղեցնելու դեպքերում օրենքով սահմանված է 100-150 հազար սերբիական դինար տուգանք, իսկ ակտիվների և եկամուտների հայտարարագիրը օրենսդրորեն սահմանված ժամկետում չներկայացնելու իրավախախտման համար, բացի պաշտոնից հեռացում կարգապահական տույժից, կիրառվում է նաև 100-150 հազար սերբիական դինարի չափով տուգանք:<sup>76</sup>

«Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի և «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Մոնտենեգրոյի օրենքները, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պայմանների խախտումների համար սահմանել են պատասխանատվության միջոցների սերբիական մոդելին համապատասխանող վարչական տուգանքների համակարգ: Սլովենիայի «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հոդվածներ 77 և 78-ով վարչական պատասխանատվության միջոցներ են նախատեսված 400-1200 եվրոյի սահմաններում ֆիզիկական անձ համարվող հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների պայմանների խախտումների համար, իսկ 400-4000 եվրո տուգանք է նախատեսված իրավաբանական անձանց, պետական և ՏԻՄ պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված պահանջների խախտումների համար:

Մոնտենեգրոյի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 6-րդ գլխի հոդված 102-ը ամբողջովին նվիրված է իրավաբանական անձանց, իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների, պետական և ՏԻՄ պատասխանատու պաշտոնատար անձանց նկատմամբ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պահպանման նկատմամբ ունեցած լիազորությունների չկատարման դեպքերին, որի համար օրենքով սահմանված են 1000-20000 եվրո վարչական տուգանքներ, իսկ հոդված 103-ը՝ ուղղակիորեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից օրենքով

---

<sup>76</sup> «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը հոդված 103, 104, 105: <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>

սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պայմանների չպահպանման համար, սահմանված է 500-2000 եվրո տուգանք: Նույն օրենքի հոդված 104-ով 1000-2000 եվրո վարչական տուգանքներ են սահմանված նախկին կամ պաշտոնը դադարեցրած պաշտոնատար այն անձանց նկատմամբ, ովքեր պաշտոնը դադարեցնելուց հետո երկու տարվա ընթացքում խախտել են օրենքով սահմանված հետաշխատանքային սահմանափակումները»:<sup>77</sup>

Ալբանիայի «Չանրային ծառայությունում շահերի բախման կանխարգելման մասին» օրենքի 7-րդ գլխի հոդվածներ 43-ից 45-ում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների կողմից շահերի բախման իրավիճակների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի պայմանների խախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումը սահմանված է «դեպք առ դեպք սկզբունքով»: Օրենքում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների և դրանց պահպանման պայմանների խախտումների, ինչպես նաև հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց կողմից հայտարարագրերը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ուշ ներկայացնելու, դրանցում վրիպակներ կամ սխալ տվյալներ ներառելու դեպքերում նախատեսված են վարչական և կարգապահական պատասխանատվության միջոցներ: Օրինակ, Ալբանիայի «Չանրային ծառայությունում շահերի բախման կանխարգելման մասին» օրենքի հոդված 44-ը սահմանում է հայտարարատու պաշտոնատար անձի կողմից հայտարարագիրը սահմանված կարգի պահանջների խախտումով ներկայացնելու դեպքում կիրառել 5000-10000 ալբանական լեկ տուգանք, կամ պաշտոնատար անձի կողմից պայմանագրերի կնքման, նվերների ընդունման արգելքի, ընտանիքի անդամի կամ մերձավոր ազգականի հետ համատեղ աշխատանքի սահմանափակումների դեպքերում 10000-100000 ալբանական լեկ տուգանք: Համանման միջակայքերով վարչական պատասխանատվության միջոցներ են նախատեսված նաև պաշտոնյանի կողմից շահերի բախման գործընթացում գտնվելու ընթացքում միջոցներ չձեռնարկելու, պաշտոնյայի կամ նրա հետ փոխկապակցված անձի կողմից վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձի կողմից շահերի բախման իրավիճակների չեզոքացման միջոցառումների չկատարման կամ չպահպանման դեպքերում: Կարգապահական պատասխանատվության մասով օրենքի հոդված 45-ը սահմանում է, որ պաշտոնատար անձանց կողմից Ալբանիայի «Չանրային ծառայությունում շահերի բախման կանխարգելման մասին» օրենքով սահմանված պարտավորությունների յուրաքանչյուր

---

<sup>77</sup> «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքը, հոդվածներ 77-78: <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>: «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Մոնտենեգրոյի օրենքը, հոդվածներ 102-104: [http://www.antikorupcija.me/media/documents/law\\_on\\_prevention\\_of\\_corruption.pdf](http://www.antikorupcija.me/media/documents/law_on_prevention_of_corruption.pdf):

խախտում կարգապահական խախտում է՝ անկախ քրեական կամ վարչական պատասխանատվությունից»:<sup>78</sup>

Լատվիայի «Չանրային պաշտոնյաների գործունեության շահերի բախման կանխարգելման մասին» օրենքի հոդված 32-ի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսվում է «հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների խախտումների, ինչպես նաև հանրային պաշտոնյաների կողմից իրենց լիազորությունների իրականացման ժամանակ շահերի բախման իրավիճակների պայմանների չպահպանման դեպքերում կիրառել 40-140 տուգանային միավոր (1 տուգանային միավորը հավասարեցված է 5 եվրոյի) տուգանք՝ մինչև երկու տարի ժամկետով սահմանափակելով հանրային պաշտոնյայի լիազորությունների իրականացումը: Մինչև յոթանասուն տուգանային միավորի չափով տուգանք է կիրառվում հանրային պաշտոնյաների կողմից շահերի բախման կանխարգելման կամ չեզոքացման համար օրենքով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքերում՝ պաշտոնատար անձանց լիազորությունների իրականացումը սահմանափակելով մինչև երկու տարով կամ առանց դրա»:<sup>79</sup>

Չանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, շահերի բախման իրավիճակների պայմանների խախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառման առանձին երկրների փորձի, միջազգային կազմակերպությունների ուղեկիշային փաստաթղթերի և Չայաստանի հանրային ոլորտի օրենսդրական կարգավորումների համադրումը և վերլուծությունը ցույց են տալիս, որ անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների սահմանված պայմանների խախտումների համար միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվում են ինչպես կարգապահական, այնպես էլ վարչական պատասխանատվության միջոցներ՝ տուգանքների տեսքով: Մինչդեռ, Չայաստանի դեպքում, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց քաղաքական, վարչական, հայեցողական, և ինքնավար պաշտոն զբաղեցնող առանձին խումբ պաշտոնյաների, ինչպես նաև հանրային ծառայողների (բացառությամբ՝ քաղաքացիական ծառայողների) համար անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների պայմանների խախտման համար կարգապահական կամ վարչական պատասխանատվության միջոցները բացակայում են:

Միջազգային պրակտիկայում վարչական պատասխանատվության միջոցներ են կիրառվում ոչ միայն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, շահերի բախման իրավիճակների

---

<sup>78</sup> «Չանրային ծառայությունում շահերի բախման կանխարգելման մասին» Ալբանիայի օրենքը, հոդվածներ 43-45: [https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Albania\\_Conflict\\_of\\_Interests\\_Law%209367\\_2005\\_EN.pdf](https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Albania_Conflict_of_Interests_Law%209367_2005_EN.pdf)

<sup>79</sup> «Չանրային պաշտոնյաների գործունեության շահերի բախման կանխարգելման մասին» Լատվիայի օրենքը: <https://likumi.lv/doc.php?id=61913>

սահմանված պայմանների խախտման դեպքերում, այլև պետական և ՏԻՄ ղեկավարների, վերադաս կամ անմիջական ղեկավար անձ հանդիսացող պաշտոնյաների, բարեվարքության հարցերով պատասխանատուների (կազմակերպիչների), բարեվարքության գործառույթների համար պատասխանատու այլ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ թերակատարման դեպքերում: Մինչդեռ, Հայաստանի դեպքում պետական և ՏԻՄ ղեկավարների, վերադաս կամ անմիջական ղեկավար պաշտոնատար անձ հանդիսացող պաշտոնյաների, բարեվարքության հարցերով պատասխանատուների (կազմակերպիչների), բարեվարքության գործառույթների համար պատասխանատու այլ պաշտոնատար անձանց նկատմամբ օրենքով իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ թերակատարման համար թե՛ կարգապահական և թե՛ վարչական պատասխանատվության միջոցներ սահմանված չեն:

Միջազգային պրակտիկայում կիրառվող պատասխանատվության միջոցները հիմնականում նյութական են՝ տույժերի ու տուգանքների տեսքով, որոնք տարբերակված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների, բարեվարքության սահմանափակումների ու արգելքների պահանջների խախտումների, պետական և ՏԻՄ ղեկավարների ու վերադաս անձ հանդիսացող պաշտոնատար անձանց կողմից բարեվարքության պահանջների պահպանման մասով իրենց վերապահված լիազորությունների չկատարման, ինչպես նաև երրորդ կողմ հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների ու քաղաքացիների համար: Մինչդեռ, Հայաստանի պարագայում հանրային պաշտոն զբաղեցնող որոշ խմբերի (դատավորներ, դատախազներ) և հանրային ծառայողների (բացառությամբ՝ քաղաքացիական և ոստիկանական ծառայողների) համար կիրառելի է միայն կարգապահական պատասխանատվության ոչ նյութական միջոցներ՝ դիտողություն, նկատողություն և այլն, իսկ վարչական պատասխանատվության միջոցները բացակայում են:

#### **Առաջարկություններ**

- 4.1.1 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների համար սահմանել անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, իրավիճակային շահերի բախման պայմանների խախտումների համար կարգապահական և վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթներ.**
- 4.1.2 հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով հանրային ծառայողների կարգապահական պատասխանատվության միջոցների շարքում նախատեսել «...վարքագծի կանոնները խախտելու և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում» կարգապահական և վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթները.**
- 4.1.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների համար նախատեսել նրանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ**



ընդունելու արգելքի, իրավիճակային շահերի բախման պայմանների պահպանման կանոնների խախտման դեպքերում վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթներ՝ տուգանքների տեսքով.

- 4.1.4 «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, հանրային ծառայության առանձին ոլորտային օրենքներով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով, կարգապահական և վարչական պատասխանատվության միջոցներ սահմանել պետական և ՏԻՄ ղեկավարների, վերադաս կամ անմիջական ղեկավար հանդիսացող պաշտոնատար անձանց, հանրային ծառայության ոլորտային էթիկայի հանձնաժողովների անդամների, բարեվարքության հարցերով կազմակերպիչների և բարեվարքության հարցերով պատասխանատու այլ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, իրավիճակային շահերի բախման պայմանների պահպանման կանոնների խախտման վերաբերյալ իրենց վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ լիարժեք կատարման համար:

**Օրենքներ**

1. ՀՀ Սահմանադրություն, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>
2. «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենք, ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=110824>
3. «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, ընդունված է 2018 թվականի փետրվարի 7-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=119531>
4. «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք», ընդունված է 1999թ.մայիսի 5-ին <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74658>
5. «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք, Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին <https://www.arlis.am/documentview.aspx?docID=110534>
6. «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք, ընդունված է 2016 թվականի մայիսի 25-ին <https://www.arlis.am/documentview.aspx?docid=105967>
7. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=105967>
8. ՀՀ Քրեական օրենսգիրք, ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=69646>
9. ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիա, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021>
10. «ԱԺ պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=110819>
11. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2003 թվականի ապրիլի 11-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=106482>
12. «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2007թվականի հոկտեմբերի 11-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=80072>
13. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2015թ. մայիսի 18-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=98338>
14. «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2017 թվականի հունիսի 9-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114364>
15. «Գնումների մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114364>
16. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=804>
17. «Դատախազության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2017թ. նոյեմբերի 17-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=117713>
18. «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2001 թվականի հոկտեմբերի 24-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75809>
19. «Զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2017 թվականի նոյեմբերի 15-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633>
20. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2012 թվականի մարտի 19-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75138>
21. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենք, ընդունված է 2017 թվականի հունիսի 9-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=114355>
22. «Կրթության մասին» ՀՀ օրենքը, ընդունված է 1999 թվականի ապրիլի 14-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299>

23. «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենք, (վերնագիրը խմբ. 23.03.18 ՀՕ-281-Ն), ընդունված է 2004 թվականի փետրվարի 18-ին, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150161>
24. «Հատուկ բննչական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=91075>
25. «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 3-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=42592>
26. «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2002 թվականի հուլիսի 3-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=43686>
27. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832>
28. «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=66221>
29. «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120915>
30. «ՀՀ Ոստիկանության ծառայողական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2005 թվականի ապրիլի 11-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=75037>
31. «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենք, ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75199>
32. «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2002 թվականի հուլիսի 3-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=64613>
33. «Սշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2002 թվականի նոյեմբերի 20-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=69109>
34. «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2002 թվականի հուլիսի 3-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=58297>
35. «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2014 թվականի նոյեմբերի 20-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=94427>
36. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=87706>
37. «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 1996 թվականի դեկտեմբերի 3-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=26193>
38. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2002 թվականի մայիսի 7-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271>
39. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2003 թվականի սեպտեմբերի 23-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1372>
40. «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենք, (վերնագիրը փոփ. 08.12.11 ՀՕ-305-Ն), ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին, <https://www.arlis.am/>
41. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120807>
42. «Բննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2014 թվականի մայիսի 19-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=90848>
43. «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=55538>

### **ՀՀ կառավարության որոշումներ**

44. ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» որոշում,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=13471>
45. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի եւ նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» որոշում,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=57089>
46. ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1672-Ն «ՀՀ Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=104654>
47. ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 145-Ն «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին պետական կառավարման առանձին մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված անհատական տվյալների տեղեկատվական բազաներից տվյալների տրամադրման կարգը հաստատելու մասին» որոշում, <https://www.e-gov.am/gov-decrees/item/25405/>
48. ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին» որոշում,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=110384>
49. ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15 N 272-Ն «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» որոշում,  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120659>
50. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 439-Ն «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130444>
51. ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 667-Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» որոշում,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=123193>
52. ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի N 1554-Ն «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=127407>
53. ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի N 1130-Ն «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագիրը հաստատելու մասին» որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=133737>

54. ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1332-Ն «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876>
55. ՀՀ կառավարության 2020թ. մարտի 12-ի թիվ 306-Ն «Հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում ներառված՝ հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=140372>
56. ՀՀ փոխվարչապետի 2019 թվականի մարտի 11-ի N 97-Ն «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անձնական գործը վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանելու մասին» որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128832>:

### Միջազգային փաստաթղթեր և օրենսդրական ակտեր

57. Morris S., Forms of Corruption, CESifo DICE Report 2/2011, [www.cesifo-group.de](http://www.cesifo-group.de), <https://www.econstor.eu/bitstream/10419/167031/1/ifo-dice-report-v09-y2011-i2-p10-14.pdf>
58. Reed Q. (2010), Regulating conflict of interest in challenging environments, U4 Issue 2010:2, <https://www.cmi.no/publications/file/3622-regulating-conflicts-of-interest-in-challenging.pdf>
59. Hoppe T. (2014), A study on the feasibility of a Council of Europe legal instrument on the legal regulation of lobbying activities, prepared for the Council of Europe's European Committee on Legal Co-operation (CDCJ), at no. B.12/, <https://rm.coe.int/16807095fd>
60. «Annex to the recommendation of the council on OECD guidelines for managing conflict of interest in the public service», <http://www.oecd.org/governance/ethics/2957360.pdf>
61. CoE «Recommendation No. R (2000) 10 of the Committee of Ministers to Member states on codes of conduct for public officials». Appendix to Recommendation No. R (2000) 10. Model code of conduct for public officials. Interpretation and application. <https://rm.coe.int/16805e2e52>
62. Council of Europe Resolution (97) 24 on the Twenty Guiding Principles for the Fight Against Corruption. Adopted by the Committee of Ministers on 6 November 1997 at the 101st session of the Committee of Ministers. [Council of Europe Resolution \(97\) 24 on the Twenty Guiding Principles for the Fight Against Corruption | OSCE POLIS](https://www.osce.org/polis).
63. EUROSAI (2013), Survey on the Independence of Supreme Audit Institutions, [https://www.eurosai.org/handle/404?exporturi=/export/sites/eurosai/content/documents/training/training-events/InSem2014/3.-Survey-on-the-Independence-of-SAIs\\_final.pdf](https://www.eurosai.org/handle/404?exporturi=/export/sites/eurosai/content/documents/training/training-events/InSem2014/3.-Survey-on-the-Independence-of-SAIs_final.pdf)
64. «Legislative Toolkit on Conflict of Interest», Prepared by: Tilman Hoppe, Project Long-Term Adviser with inputs and reviews from: Valts Kalnins, Council of Europe Consultant, Vera Devine, Council of Europe Consultant José Igreja Matos, Council of Europe Expert, Vice President International Association of Judges Jelena Jolić, Council of Europe Secretariat. CoE/EU Eastern Partnership Programmatic Co-operation Framework (PCF) “Fight against Corruption and Fostering Good Governance/Fight against Money-Laundering” (EaP-2). 2015, [http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit\\_REG\\_-2\\_2015.pdf](http://tilman-hoppe.de/ECCU-PCF-Toolkit_REG_-2_2015.pdf)

65. Managing-conflicts-of-interest-in-the-nsw-public-sector\_June-2019  
<https://www.icac.nsw.gov.au/ArticleDocuments/232/>.
66. OECD (2007), «Managing Conflict of Interest in the Public Sector. A TOOLKIT»,  
[https://read.oecd-ilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector\\_9789264018242-en#page33](https://read.oecd-ilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector_9789264018242-en#page33) կամ <https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf>
67. OECD (2003) «Recommendation of the council on guidelines for managing conflict of interest in the public service», <http://www.oecd.org/gov/ethics/2957360.pdf>
68. OECD (2003), Managing Conflict of Interest in the Public Service, OECD Guidelines and Country Experiences, [Managing Conflict of Interest in the Public Service | READ online \(oecd-ilibrary.org\)](http://www.oecd.org/gov/ethics/2957360.pdf)
69. OECD (2011), Fighting Corruption in Eastern Europe and Central Asia. Asset Declarations for Public Officials: A Tool to Prevent Corruption.  
<http://www.oecd.org/daf/anti-bribery/47489446.pdf>
70. Western Australia, Integrity Coordinating Group, *Conflicts of interest – Guidelines for the WA public sector*, <https://icg.wa.gov.au>, <https://www.wa.gov.au/sites/default/files/2020-05/Conflicts%20of%20interest%20-%20Guidelines%20for%20the%20WA%20public%20sector.pdf>
71. «Հանրային ծառայությունում շահերի բախման կանխարգելման մասին» Ալբանիայի օրենքը, [https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/library-files/Albania\\_Conflict\\_of\\_Interests\\_Law%209367\\_2005\\_EN.pdf](https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/library-files/Albania_Conflict_of_Interests_Law%209367_2005_EN.pdf)
72. «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» Սլովենիայի օրենքը, <https://www.kpk-rs.si/en/wp-content/uploads/sites/3/2020/04/EN-2011-01-3056-2010-01-2226-npb3.pdf>
73. «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Սերբիայի Հանրապետության օրենքը, <http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/>
74. «Հանրային պաշտոնյաների գործունեության շահերի բախման կանխարգելման մասին» Լատվիայի օրենքը, <https://likumi.lv/ta/en/en/id/61913-on-prevention-of-conflict-of-interest-in-activities-of-public-officials>
75. «Հանրային ծառայությունում հանրային և մասնավոր շահերի մերձեցման մասին» Լիտվայի օրենքը,  
<https://eseimas.lrs.lt/portal/legalActPrint/lt?fwid=rivwzvpvg&documentId=TAIS.46177&category=TAD>,
76. «Կոռուպցիայի կանխարգելման մասին» Մոնտենեգրոյի օրենքը,  
[http://www.antikorupcija.me/media/documents/law\\_on\\_prevention\\_of\\_corruption.pdf](http://www.antikorupcija.me/media/documents/law_on_prevention_of_corruption.pdf)

## Այլ կյուբեր

77. «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց շահերի բախումը: Օրենսդրություն և պրակտիկա» ուսումնասիրություն, էջ 16:  
[http://cpcarmenia.am/u\\_files/file/news/11.06.2018.pdf](http://cpcarmenia.am/u_files/file/news/11.06.2018.pdf)
78. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահի 26.03.2019թ. Հ-6 [հրաման](#)
79. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. հունիսի 17-ի N 23-Ն «Թեկնածուի գույքի և եկամուտների էլեկտրոնային ձևաթուղթը հաստատելու մասին» որոշում, <https://www.elections.am/edocuments/>

80. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի ռեգիստր,  
<http://cpcarmenia.am/hy/declarations-registry/>
81. ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների էլեկտրոնային համակարգ,  
<https://www.armeps.am/epps/home.do>
82. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված ԱԺ պատգամավոր  
Գագիկ Կոլյայի Ծառուկյանի կողմից անհամատեղելիության պահանջները խախտելու  
վերաբերյալ 2020թ. հոկտեմբերի 26-ի թիվ 03/2020 եզրակացությունը, ինչպես նաև  
Երևանի քաղաքապետ, Հայկ Մարությանի նկատմամբ 2019թ. դեկտեմբերի 9-ին  
հարուցված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ  
թիվ 06/2019 եզրակացությունը: <http://cpcarmenia.am/files/legislation/350.pdf>: